

Գ Բ ՋԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՑ
ՀԱՅՈՑ ԼԵԶԱՆ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Г. Б. ДЖАУКЯН

**СЕМАНТИКА
И СЛОВООБРАЗОВАНИЕ
СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1989

809 198.1
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԾԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

**ժԱՄԱՆԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԻՄԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԲԵՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ**

A II
79879

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԾԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆ 1989

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱԾԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆ 1989



Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Իսնասիրական գիտությունների դոկտոր Ն. Ա. Պառնասյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Բ. Աղալյանը
և Իսնասիրական գիտությունների ինկնածու Լ. Ս. Հովսեփյանը

Ձախուկյան, Գ. Բ.

Ջ 229

Ժամանակակից հայոց լեզվի իմաստարանություն և բա-
ռակազմություն [Պատ. խմբ.՝ Ն. Ա. Պառնասյան] ; ՀԽՍՀ ԳԱ
Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ.— Եր. : ՀԽՍՀ ԳԱ հրատ.,
1989.—319 էջ :

Գիրքը բաղկացած է ներածությունից և երկու մասից։ Առաջին մասում
քննվում են հայերենի արմատների արտահայտության և բովանդակու-
թյան պլանների առանձնահատկությունները, կատարվում է արմատների
իմաստային վերլուծությունը ըստ հեղինակի մշակած համընդհանուր լեզ-
վաբանական կադապարի։ Երկրորդ մասում քննվում են ժամանակակից
հայերենի բառակազմական կադապարների երկու հիմնական դրսևորում-
ները՝ բառածանցումը և բառաբարդումը։ Որպես հավելվածներ ներկա-
յացվում են հայերենի արմատների և ածանցների ցանկերը։

Նախատեսվում է լեզվաբանների, հայոց լեզվի ուսուցիչների և ընդ-
հանրապես հայոց լեզվով հետաքրքրվողների համար։

4602010000

Ջ ————— 76—88

703 (02) —89

ISBN 5—8080

ԳՄԴ 81. 2 Հ—2

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա աշխատությունը կառուցված է հիդրինակի մշակած համընդհանուր լեզվաբանական տեսության (ՀԼՏ) հիման վրա և հետապնդում է երկու կարգի նպատակ. մի կողմից՝ պարզել, թե ի՞նչ հնարավորություններ ունեն և ի՞նչ չափով են իրենց արդարացնում համընդհանուր տեսության մշակած կաղապարները կոնկրետ կիրառության մեջ, մյուս կողմից՝ տալ ժամանակակից հայոց լեզվի բառակազմության և բառակազմական իմաստաբանության ամբողջական շարադրանքը տեսական միասնական սկզբունքների հիման վրա:

Ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության սկզբունքների՝ նրա մշակած կաղապարները կիրառելի են ինչպիսի արտահայտության, այնպես էլ բովանդակության պլանների նկատմամբ: Հետևողական քննության դեպքում պետք է տարբերել լեզվաբանության բաժինների երկու խումբ. առաջին խմբի բաժինների մեջ արտահայտության և բովանդակության պլանները պետք է առնվեն զիջյունկտիվ (կա՛մ—կա՛մ), երկրորդ խմբի բաժինների դեպքում՝ կոնյունկտիվ (և՛—և՛) հարաբերություններ:

Առաջին խմբի բաժիններն են՝ արտահայտաբանությունը և բովանդակաբանությունը. արտահայտաբանությունն ավելի շատ հայտնի է, ըստ արտահայտման միջոցների բնույթի, հնչաբանություն, զրաբանություն և շաբաբանություն (կիներսիկա) մասնակի անուններով, բովանդակաբանությունը՝ իմաստաբանություն անունով: Արտահայտաբանությունը և իմաստաբանությունը, այսպիսով, ունեն այն առանձնահատկությունը, որ մեկի ուսումնասիրության առարկան առնվում է մյուսից անկախ. արտահայտության միջոցները քննելիս վերացարկում է կատարվում նրանց արտահայտած իմաստներից և ընդհակառակը:

Երկրորդ խմբի բաժինների մեջ քննության են առնվում երկպլանային միավորները, ընդ որում բաժիններն առանձնացվում են ըստ այդ միավորների ներառական հարաբերության: Այլ կերպ ասած՝ այստեղ քննության առարկա են այն միավորները, որոնք ունեն թե՛ արտահայտություն, թե՛ բովանդակության պլաններ, և որոնցից ստորին մակար-

դակի միավորը մտնում է ավելի բարձր մակարդակի միավորի մեջ: Այս բաժինների փոխհարաբերությունը կտրվի ներածության մեջ. այստեղ նշենք միայն, որ քննությունը կսկսվի արմատներից և կավարտվի տեր-ստի ինքնապարփակ այնպիսի միավորով, ինչպիսին է բարդ նախադա-սությունը: Մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում (Երևան, 1974) քննված են ձևաբանական և շարահյուսական մա-կարդականները. բառակազմական հարցերը արժարժվել են միայն անցողա-կի կերպով՝ կապված ձևաբանական հիմքակազմության և փոխակազ-ապարման հետ: Ներկա գրքում մեր ուշադրության կենտրոնում հենց այդ հարցերն են:

Ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության՝ խստորեն պետք է տարբերել ընդհանուր լեզվաբանության խնդիրները առանձին լեզու-ների ուսումնասիրության խնդիրներից և, հետևաբար, դրանք կառուցել տարբեր ձևով: Ընդհանուր լեզվաբանության հիմնական բաժինները պետք է լինեն հենց արտահայտաբանությունը և իմաստաբանությունը: Ընդհանուր լեզվաբանությունը պետք է կառուցված լինի համընդհանուր լեզվաբանական կազապարի ընդհանուր նկարագրությունից՝ նրա մաս-նավորմամբ իմաստաբանության ու արտահայտաբանության նկատ-մամբ, և ընդհանուր ախպաբանությունից, որտեղ պետք է տրվեն իմաստների ու աբտահայտամիջոցների միացման հնարավոր տեսակ-ներն ու եղանակները: Առանձին լեզուների ուսումնասիրության մեջ ուշադրության կենտրոնում պետք է լինեն երկպլանային միավորներին նվիրված բաժինները, և արտահայտաբանական ու իմաստաբանական կոնկրետ տեղեկությունները պետք է տրվեն մասամբ ներածական բաժնում, մասամբ էլ. այն բաժիններում, որտեղ պետք է քննվեն միա-վորների արտահայտության պլանը, բովանդակության պլանը և սրանց փոխհարաբերությունը: Այստեղ նկարագրված սկզբունքներին համապա-տասխան ներկա աշխատությունը պետք է կոչվեր ժամանակակից հա-յոց լեզվի «Արմատագիտություն և բառակազմություն», որովհետև նրա հիմնական խնդիրն է արմատների և բառակազմական միջոցների ու ձևերի արտահայտության և բովանդակության պլանների ուսումնասի-րությունը: Եվ, իրոք, դիրքն, այդպես էլ կառուցված է. սլաստիզ, բացի ներածությունից, առանձնացված են «Արմատագիտություն» և «Բառա-կազմություն» բաժինները. սրանցից առաջինում քննվում են արմատ-ները և արմատահիմքերը (բառակազմության մեջ դործող արմատա-հիմքերը), երկրորդում՝ ածանցավոր և բարդ բառերը՝ երկու դեպքում էլ իրենց արտահայտության և բովանդակության պլաններով: Սակայն, նկատի ունենալով, որ լեզվաբանության մեջ առաջիմ չկա «արմատա-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Եթե կառուցվածքային լեզվաբանության բուռն զարգացման շրջանում և սերող քերականության զարգացման վաղ փուլում ուշադրության կենտրոնում քերականության ու, հատկապես, շարահյուսության հարցերն էին, և իմաստաբանական հարցերը ուշադրության քիչ էին արժանանում, ապա ժամանակակից լեզվաբանության մեջ դրանք մղվել են առաջին պլան։ Ժամանակակից իմաստաբանության համար ընդունվել է մի կողմից՝ կիրառվող սկզբունքների ու մեթոդների բաղմազանությունը, մյուս կողմից՝ իմաստաբանության սահմանների ընդլայնումը, բառային իմաստների հետ միասին քերականական իմաստների լայն ուսումնասիրությունը։

Ժամանակակից իմաստաբանության սկզբունքներն ու մեթոդները ձևավորվել են մասամբ այլ գիտությունների մշակած մեթոդների և սկզբունքների օգտագործմամբ, մասամբ լեզվաբանության մեջ հանդես եկած սկզբունքների ու մեթոդների կիրառմամբ իմաստաբանության բնագավառում։ Առաջին դեպքում մենք նկատի ունենք մի կողմից՝ իմաստի տրամաբանական տեսությունների ձևեր բերած արդյունքների օգտագործումը և լեզվական երևույթների պրագմատիկական ուսումնասիրությունը, մյուս կողմից՝ ժամանակակից մաթեմատիկական-քանակական մեթոդների, կիբեռնետիկայի և ինֆորմացիայի տեսության սկզբունքների ու գաղափարների կիրառումը իմաստաբանական քննության մեջ։ Նրկրորդ դեպքում մենք նկատի ունենք մասնավորապես, այսպես կոչված, սերող իմաստաբանության և բաղադրական վերլուծության մշակած իմաստաբանական ուսումնասիրության սկզբունքները։ Մեր նպատակներից դուրս համարելով իմաստաբանական տեսությունների հանգամանալից քննությունը՝ համառոտալի կանգ առնենք միայն տրամաբանական տեսությունների, սերող իմաստաբանության և բաղադրական վերլուծության ընդհանուր բնութագրման վրա։

Ժամանակակից տրամաբանական տեսություններն ընդհանրապես մեծ տեղ են տալիս լեզվական հարցերին, մասնավորապես բառերի և նա-

խաղասությունների իմաստային վերլուծությանը: Նշենք լեզվաբանական առումով կարևոր մի քանի գաղափար:

Գ. Ֆրեգեն և հետագա մի շարք տրամաբաններ կարևոր են համարում տարբերակել անվան նշանակությունը (Bedeutung) և իմաստը (Sinn): Առաջինը անվան և նշանակվող առարկայի (դենոտատի, ռեֆերենտի) հարաբերությունն է, երկրորդը՝ առարկայի ներկայացման եղանակը, այսինքն՝ նախ՝ այն, թե անունն ի՞նչ է անվանում, և երկրորդ՝ թե ի՞նչ է արտահայտում. միևնույն առարկան կարող է արտահայտվել տարբեր կերպ: Տարածելով այս գաղափարը նախադասության նկատմամբ՝ Գ. Ֆրեգեն գտնում է, որ սրա համար նույնպես պետք է տարբերել արտահայտվող միտքը և նրա ճիշտ կամ սխալ լինելը:

Բ. Ռասելը խստորեն տարբերակում է հատուկ և հասարակ անունները. առաջինները, ի տարբերություն երկրորդների, թերի սիմվոլներ են և վերաբերում են որոշակի առարկաների՝ ռեֆերենցիա ստանալով նախադասության կազմում. սրանից դուրս նրանք առարկայական դենոտատային բովանդակություն չունեն: Միաժամանակ Ռասելն առաջ է քաշում պրոպոզիցիայի և պրոպոզիցիոնալ հարաբերության գաղափարները. առաջինը «հավաստի բովանդակությունն» է՝ ճիշտ կամ սխալ լինելը, երկրորդը՝ բայական բովանդակությունը, որ զուգորդվում է առաջինի հետ:

Ռասելից և, հատկապես, Լ. Վիտգենշտայնից հետո տարածվում է այն համոզմունքը, որ միայն նախադասությունն իմաստ ունի, իսկ բառային իմաստն անցնում է նախադասության իմաստից: Սրանից էլ անցում է կատարվում դեպի նոր մոտեցում. եթե նախկինում նախադասության ըմբռնումը հենվում էր բառի ըմբռնման վրա, ապա այժմ կատարվում է հակառակը, ընդ որում նախադասության քննությունն էլ ավելի շատ հենվում է նախադասության հաղորդակցական նպատակադրման և խոսքի մեջ նրա կատարած դերի վրա: Այս մոտեցումն ունենում է այն հետևանքը, որ բառը քննվում է նախադասության նպատակադրման հետ կապված, և առաջին պլան է մղվում իմաստաբանական հարցերի, այսպես կոչված, պրագմատիկական քննությունը: Ուշադրությունը կենտրոնացվում է խոսքային ակտի վրա որպես հաղորդակցման միավորի [հմտ. Аргумента, «Лinguistics...», 1976, 119]: Այս նոր ուղղության հետ կապված՝ լայն կիրառության մեջ է դրվում, այսպես կոչված, կանխենթադրման (պրեսուպոզիցիայի) գաղափարը, որի տակ հասկացվում է լեզվական երևույթների հարաբերությունը առտաքին փաստերին, այն պայմանների ամբողջությունը, որոնք որոշում են նախադասության ճիշտ հասկացումը. սրանից էլ անցում է

կատարվում դեպի նախադասության մեջ ենթադրվող «Խաբնված» իմաստների՝ ենթատեքստերի բացահայտումը:

Բուն լեզվաբանական իմաստաբանական ուսմունքների մեջ ժամանակակից փուլում պետք է առանձնացնել հատկապես սերող իմաստաբանությունը և բաղադրական (կոմպոնենտային) վերլուծությունը:

Սերող իմաստաբանությունը հանդես է եկել սերող քերականության հիմքի վրա՝ անցնելով դարգացման որոշ աստիճաններ: Ինքը սերող քերականությունը նույնպես միանգամից չի ձևավորվել, և նրա սկզբնական խմբագրությունը նշանակալից փոփոխություններ է կրել ն. հոմակու և նրա հետևորդների աշխատություններում: Բնդհանրացված մեկնաբանությամբ՝ սերող քերականությունը գործ ունի, այսպես կոչված, խորքային կառույցի և նրանից փոխակերպական կանոններով ըստացվող մակերեսային կառույցի հետ: Խորքային կառույցը կազմում է սերող քերականության հիմնային (բազիսային) բաղադրիչը, և նրա էությունը փաստորեն որոշվում է անմիջական բաղադրիչների կանոններով: Այն բաղկացած է նախադասության բաղադրիչների փոխհարաբերությունը որոշող 1) սահմանափակ թվով ոչ եղրային (ոչ տերմինալ) կարգային (կատեգորիական) սիմվոլներից՝ S (նախադասություն), NP (անվանական խումբ), VP (բայական խումբ), N (անուն), V (բայ), Det (որոշիչ հոդ), Aux (եղանակի ու ժամանակի օժանդակ կազմիչներ), և անսահմանափակ թվով եղրային (տերմինալ) սիմվոլներից՝ բառեր ու քերականական ձևույթներ, 2) սրանց փոխարինման կանոններից: Խորքային կառույցը կարող է լավ ձևավորված չլինել. ձևավորումը ձեռք է բերվում փոխակերպման կանոններով՝ վերախմբավորում, միացում, խնդրառացում կամ համաձայնեցում, ներդրում կամ բացթողում: Սկզբնական (հիմնային) բաղադրիչները, ինչպես տեսնում ենք, հենվում են խոսքիմասային հասկացությունների վրա. հետագայում՝ հոմակու նշում է, որ համապատասխան գործառական կարգերը (ենթակա, ստորոգյալ, խնդիր և այլն) կարող են սահմանվել մեկնաբանությամբ: Այսպիսով, առաջ է քաշվում նոր սկզբունք, ըստ որի սերման գործողությունը կարող է լրացվել մեկնաբանական գործողություններով: Այստեղից մի քայլ էր մնում մինչև իմաստաբանական մեկնաբանության լրացուցիչ գործողությունների զաղափարը, որ առաջարկվում է Զ. Զ. Կացի և Զ. Ա. Ֆոգորի կողմից: Նրանք առաջ են քաշում բառերի իմաստային կախվածության գաղափարը և բառային միավորների տարբեր իմաստների բացահայտման (նկարագրության) համար առաջարկում իմաստային այնպիսի հատկանիշների ներմուծում, ինչպիսիք են նշորդները (մարկերներ) և տարբերիչները: Այսպես, բաղմիմաստ բառի շարահյուսական նշորդն է զոյական անուն լինելը, իմաս-

տային նշորդները՝ 1) էակ [— ոչ էակ], 2) մարդ [— ոչ մարդ], 3) արական [— ոչ արական], սրանց մեջ էլ հանդես եկող տարբերիչները՝ 1) երբեք չամուսնացած = ամուրի (bachelor₁), 2) այլ ասպետի հովանավորության տակ գտնվող երիտասարդ ասպետ (bachelor₂), 3) գիտական ստորին աստիճան ունեցող (bachelor₃), և 4) առանց էգի երիտասարդ փոխ (ծովաշուն) (bachelor₄):

Ն. Խոմսկին, հենվելով Կացի և Ֆոգորի վրա, ի տարբերություն նրանց, լրացնում է սերող քերականության իմաստային հատկանիշները ոչ սահմանային կարգերին (կատեգորիաներին) հարող ենթակարգային (ենթակատեգորիական) հատկանիշներով. այսպես, դոյական անվան համար հենց սկզբից նշվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հասարակ, հաշվական, վերացական, շնչավոր լինելը և այլն: Սրանով իսկ իմաստային տարբերակման միջոցները արդեն ներառվում են բաղիսային բաղադրիչի մեջ, և հիմք է ստեղծվում սերող իմաստաբանության համար:

Հաջորդ քայլը կատարվում է Ու. Վայնռայի կողմից, որ փորձում է լուծել մի կողմից՝ սերվող «ոչ ճիշտ» նախադասությունների, մյուս կողմից՝ բաղադրիչների իմաստից չբխող դարձվածային իմաստների մեկնաբանության հարցերը:

Իսկ սերող քերականության բաղային վրա, որ սերման մեջ հիմնական տեղը տալիս էր շարահյուսությանը, առաջանում է մի ուղղություն, որի ներկայացուցիչները՝ Զ. Լակովը, Զ. Դ. Մակ-Կոլին, Դ. Զ. Ֆիլմորը, խոսում են իսկական սերող քերականության մասին, որի մեջ իմաստաբանությունը ոչ թե պետք է միայն մեկնաբանող լինի և սահմանափակվի կառուցված սահմանային միավորի իմաստի ճնշողությամբ, այլ նախորդի այդ կառուցմանը, լինի իսկական սերող իմաստաբանություն: Իմաստային ներկայացումը պարունակում է; բացի նախադասության կառուցվածքային սխեմայից կամ Ֆրազային ցուցիչից (անմիջական բաղադրիչների ծառից), այնպիսի տվյալներ, ինչպիսիք են կանխենթադրումների հավաքածուն, նախադասության թեման, կենտրոնը (ֆոկուսը) և այլն: Սակայն միանշանակ լուծում չի ստանում իմաստային խորքային կառուցվածքի հարցը: ըստ Մակ-Կոլիի՝ այստեղ պետք է օգտագործվեն արամաբանության տարրերը՝ բնական լեզուների մեջ դրանց ունեցած տարբերությունների հաշվառմամբ:

Սերող իմաստաբանության յուրատեսակ տարբերակներն են «իմաստաբան» կաղապարը և հարակցային սերող կաղապարի իմաստային ածանցյալը:

Այսպես կոչված, բաղադրական վերլուծությունը կապված է առաջին հերթին հնչյվաբանական վերլուծության սկզբունքները իմաստա-

բանության բնագավառը տեղափոխելու հետ: Բնականաբար, արտահայտության պլանում հնչույթի և նրա տարբերակիչ հատկանիշների առանձնացումը բերում է այն զաղափարին, որ բովանդակության պլանում էլ կարելի է տարբերակել իմաստային համապատասխան միավոր և առանձնացնել միավորի տարբերակիչ հատկանիշներ: Ինչպես որ, օրինակ, է. Բենվենիստը տարբերակում է հնչույթային (ֆոնեմատիկ) և տարբերակիչ հատկանիշների (մերիզմատիկ) մակարդակներ, այնպես էլ փորձ է արվում որոշելու համապատասխան մակարդակներ իմաստաբանության մեջ (հմմտ., օրինակ, Բ. Պոտին): Իմաստային այսպիսի վերլուծության առաջին փորձերից են ազգակցական տերմինների դասակարգման մեջ համապատասխան զաղափարների կիրառումը՝ մի կողմից և հոլովական իմաստների բացահայտման մեջ Ռ. Յակոբսոնի կիրառած հատկանիշային նկարագրությունը՝ մյուս կողմից: Իմաստային տարրերի բացահայտման զանազան այլ փորձերի հետ միասին տեղի է ունենում համապատասխան տերմինների որոնում: Վերջիվերջո ամենից ավելի լայն տարածում են ստանում՝ իմաստային վերլուծության այս նոր մեթոդիկայի համար «բաղադրական վերլուծություն» [տե՛ս հատկապես Nida, 1975] և իմաստային նվազագույն միավորի համար՝ «սեմա» տերմինները: Բնականաբար ծագում է սեմայի (իմակ) և սեմեմայի (իմույթ) զաղափարների փոխհարաբերության հարցը, որ տարբեր հեղինակների կողմից տարբեր լուծում է ստանում: Ոմանք սրանց հարաբերությունը համեմատում են հնչույթի տարբերակիչ հատկանիշի և հնչույթի, երկրորդները՝ հնչյունի և հնչույթի հարաբերության հետ, երրորդները դիտում են որպես բաղադրիչի և բաղադրյալի (վերջինս նույնացվում է բառույթի իմաստի հետ) հարաբերություն և այլն: Միաժամանակ, ինչպես որ հնչույթը դիտվում է որպես տարբերակիչ հատկանիշների փունջ, այնպես էլ համապատասխան հարաբերություն է հաստատվում սեմեմայի և սեմայի միջև: Բաղադրական վերլուծության մեթոդիկան լայնորեն կիրառվելով բառերի նկատմամբ՝ աստիճանաբար ընդգրկում է ձևաբանության բոլոր կողմերը. փորձեր են արվում այն կիրառելու նաև շարահյուսության նկատմամբ [այս նոր միտումների մասին տե՛ս Гулыга-Шендельс, «Принципы...», 1976, 299—312]:

Ժամանակակից իմաստաբանական ուսմունքների համառոտակի քննությունը ցույց տվեց հետևյալը.

1. Չնայած իմաստաբանության բնագավառում տեղի ունեցած առաջընթացին՝ դեռևս ոչ մեկի կողմից հարց չի դրվել որոշելու իմաստային բաղադրիչների և իմաստային տարրական հատկանիշների այն կոնկրետ շրջանակը, որ հնարավորություն կտա ընդգրկելու լեզվական բոլոր կարգի միավորները: Տրամաբանական ուսմունքների մեջ այդ-

պիսի խնդիր ընդհանրապես չի դրվում, սերող իմաստաբանություն մեջ, այսպես կոչված, կարգերի ու ենթակարգերի, նշորդների ու տարբերիչների որոշակի համակարգված քանակ չի նշվում, և բերվածները հենվում են ավանդական սլատկերացումների վրա՝ առանց դրանց ներքին կապի բացահայտման. բաղադրական վերլուծության դեպքում էլ ամեն մի ենթահամակարգի համար կիրառվում են նրա համար առանձնացված «բաղադրիչներ» (հատկաձեռններ), ընդ որում ընտրված «բաղադրիչներն» ամենապարզ իմաստները չեն:

2. իմաստաբանական տարբեր ուղղությունները միանշանակ կերպով չեն լուծում իմաստային նվազագույն տարրի՝ սեմայի (իմակի) բնույթի և սեմեմայի (իմույթի) հետ նրա ունեցած փոխհարաբերության հարցերը:

3. իմաստաբանական բոլոր կարգի ուսմունքներին հատուկ է այն թերությունը, որ նրանք փորձում են լեզվականը լուծել լեզվականով, լեզվական իմաստների բնույթի հետ կապված բոլոր հարցերը պարզել՝ մնալով լեզվի սահմաններում, մինչդեռ լեզուն ստեղծված է արտալեզվական աշխարհի առարկաները, երևույթներն ու հարաբերությունները արտահայտելու համար: Կանխենթադրման և ճշմարտականության դադափարները մնում են հարցի լուծման կես ճանապարհին՝ բոլոր դեպքերում էլ քննությունն սկսելով լեզվականից: Ընդհանրապես հնարավոր է լեզվական հարցերի քննության երկու եղանակ՝ սկսել կամ հաղորդակցական ակտի քննությունից և, այն դիտելով որպես կենտրոնական հարց, փորձել բացատրելու լեզվական երևույթների էությունը, կամ ընդհանուր հոյաբանական ու իմացաբանական հարցերից և, լեզվական հարցերը դիտելով որպես այդ հարցերի մի ածանցյալը, փորձել բացատրելու վերջիններս առաջինների միջոցով. եթե առաջին մոտեցումը կոչենք իմանհետային-ետակենտրոնական, երկրորդը՝ օբյեկտիվ-սուբստանցիոնալ, ապա հարկ կլինի ընտրություն կատարել հօդուտ երկրորդի:

4. Վերջապես, հնչույթաբանական և իմաստաբանական դադափարների միջև անցկացվող անալոգիան մնում է լուկ մեթոդական եղանակ՝ առանց դառնալու միևնույն սկզբունքներով լեզուն նկարագրելու հնարավորության մեթոդաբանական ընդհանուր սկզբունք:

2. ՀԱՄԲՆԻՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԲՆԻՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկա աշխատության մեջ մենք հենվում ենք, ինչպես առաջաբանում նշվել է, համընդհանուր լեզվաբանական տեսության, մասնավորապես նրա մշակած համընդհանուր լեզվական կաղապարի և իմաստաբանական հարցերի քննության սկզբունքների վրա: Կիրառելով լեզվի տարբեր կողմերի նկատմամբ և իրեն հիմնականում արդարացնելով հանդերձ՝ այդ համակարգը ժամանակի ընթացքում մասնակի փոփոխություններ է կրել, և չի բացառվում նրա հետագա կատարելագործման հնարավորությունը:

Համընդհանուր լեզվաբանական տեսության ստեղծման դադափարը մեր մեջ ծագել է դեռևս ուսանողական տարիներին, 1930-ական թվականների վերջերից՝ սերող իմաստաբանության և բաղադրական վերլուծության հիմնական գաղափարների ձևավորումից շատ առաջ: Նյութի ավելի ռացիոնալ բաշխման ուղղությամբ կատարելիք որոնումների համար հիմք տվեցին, մասնավորապես, մի կողմից՝ լեզվաբանության բաժինների ու լեզվաբանական գիտակարգերի դասակարգման և դրանց մեջ լեզվական նյութի բաշխման անհետևողականությունները, մյուս կողմից՝ լեզվական տարբեր միավորների մեջ միևնույն կարգի իմաստների առկայության փաստերը՝ և միանգամայն տարբեր բաժինների պատկանող միավորների դասակարգման մեջ գործող սկզբունքների որոշ նմանությունները: Մենք նկատելինք, որ, օրինակ, ժամանակի հետ կապված իմաստները հանդես են գալիս միանգամայն տարբեր մակարդակային միավորների մեջ, բաշխվում ըստ տարբեր խոսքի մասերի և բառակազմական ու բառահարաբերական ձևովների. հմտ. ժամանակ, տարի, ամիս, օր, առավոտ, երեկո (գոյականներ), նախորդ, հաջորդ (ածականներ), նախորդել, հաջորդել (բայեր), այսօր, երեկ, վաղը (մակբայներ), առաջ, նախքան, հետո, անց (ադգիբներ՝ կապեր), երբ (որ), մինչև որ, քանի դեռ (շաղկապներ), նախա(պատրաստել), էքս(չեմպիոն), (հալսն)ացու, (գր)ած, (գր)ող, (գր)ելու, (գր)ելիս և այլն: Այստեղից, բնականաբար, ծագեց այն գաղափարը, որ կարելի է առանձնացնել միևնույն իմաստների որոշակի խմբեր՝ կարգեր (կատեգորիաներ)՝ անկախ նրանց լեզվական դրսևորման տարբերություններից. մնում էր կատարել նոր քայլ՝ առանձնացնել տարբեր լեզուների մեջ հանդես եկող միևնույն կարգի լեզվական իմաստները, իսկ ըստ տարբեր լեզուների նրանց բաշխման առանձնահատկությունների քննությունը համարել լեզվաբանական տիպաբանության և առանձնակի լեզվաբանությունների խնդիրը: Համանման գաղափար հետադաշում երևան է գա-

չիս տարբեր լեզվաբանների մոտ, տարբեր նպատակներով՝ կապված իմաստաբանական՝ «կոնկրետ ուսումնասիրությունների, «իմաստ→ տեքստ» կադապլարի ստեղծման, իմաստաբանական բառարանների կազմման հետ և այլն, սակայն այն բոլոր դնպքերում չի կատարվում համապատասխան լայն ընդհանրացում և արդյունքների տարածում տարբեր լեզուների ուսումնասիրության վրա:

Համընդհանուր լեզվաբանական տեսության ստեղծման ուղղությամբ մեր կատարած հաջորդ քայլերի համար վճռական եղավ այն համանմանությունը (անալոգիան), որ մենք նկատեցինք շարահյուսական և հընչյունարանական դասակարգումների միջև. ինչպես որ շարահյուսության մեջ տարբերում են տեղի, ձևի, շափի և այլ պարագաներ, այնպես էլ հընչյունաբանության մեջ հընչյունների դասակարգումը կատարվում է ըստ արտաբերության տեղի, արտաբերման եղանակի, արձագանքարանի շափի և այլն: Այստեղից էլ բխում է, որ առանձնացված կատեգորիաները կարող են հիմք ծառայել ոչ միայն բովանդակության պլանի՝ իմաստաբանության, այլև արտահայտության պլանի, տվյալ դեպքում՝ հընչյունաբանության գաղափարների բնության համար, այսինքն՝ կարելի է ստեղծել լեզվի տարբեր կողմերի նկարագրության միասնական սկզբբունքներ:

Համընդհանուր լեզվաբանական տեսության ստեղծման ուղղությամբ կատարված հետադա քայլը կապված էր այն բանի հետ, որ մենք նկատեցինք տարբեր կարգերի (կատեգորիաներ) զրոստորմների միջև եղած ընդհանուր դժերը. միևնույն կամ նման գաղափարները հաճախ նկատելի կերպով հանդես են գալիս տարբեր կարգերի պատկանող իմաստներն արտահայտելու համար. այսպես, տեղի կարգին հատուկ առջևում, հետևում (տան առջևում կամ տան առջև, տան հետևում) իմաստներին հարաբերակից են ժամանակի կարգին հատուկ առաջ, հետո (ուտելուց կամ հաշից առաջ, ուտելուց կամ հաշից հետո) իմաստները. դասի կարգին հատուկ առաջին, վերջին (առաջին մարդը, վերջին մարդը կամ մարդկանցից առաջինը, մարդկանցից վերջինը) իմաստներին՝ կերպի կարգին հատուկ սկիզբ, վերջ (հաշի սկզբին, հաշի վերջին) իմաստները. թվի կարգին հատուկ մեկ, շատ, քիչ (մեկ մարդ, շատ մարդ, քիչ մարդ) իմաստներին՝ հաճախանության կարգին հատուկ մեկ անգամ, շատ անգամ, քաղմիցս, քիչ անգամ, որոշ դեպքերում, երբեմն իմաստները (մեկ անգամ տեսնել, բազմիցս տեսնել, երբեմն տեսնել) և այլն: Այստեղից բնական էր անել այն եզրակացությունը, որ հարկավոր է հիմնել առանձնացված կարգերի (կատեգորիաների) միջև ներքին կապեր, հասկանալ նրանց փոխհարաբերությունը, այսինքն՝ կատարել համապատասխան դասակարգում, ստանալ որոշակի միաս-

նական համակարգ: Վերևում բերված և համանման այլ օրինակների հիման վրա պարզ դարձավ, որ առանձնացված կարգերի (կատեգորիաների) մի որոշակի խումբ (տեղ, թիվ, դաս և այլն) բնորոշ է առարկաների, մի այլ խումբ՝ գործընթացների (պրոցեսների) նշանակումների համար:

Երկարամյա կշռագատումներից հետո 1974 թ. մենք լեզվաբանական հանրությանը ներկայացրինք համընդհանուր լեզվաբանական տեսության հիմնական բաղադրիչի՝ համընդհանուր լեզվական կաղապարի (ՀԿ) առաջին խմբագրությունը [Джагкян, 1974]: Այս կաղապարին առաջադրվում էին հետևյալ պահանջները՝ 1) առավելագույն խնայողականություն (խնայողության սկզբունք), 2) իսկական համընդհանրություն (կիրառելիություն բոլոր լեզուների նկատմամբ), 3) միասնականություն (բոլոր դեպքերի համար նկարագրության միևնույն սկզբունքների կիրառում՝ մոնիզմի սկզբունք) և 4) առավելագույն ամբողջականություն (լեզվի բոլոր կողմերի ընդգրկում՝ լիավարտության սկզբունք. հետագայում սա վերանվանվում է ամբողջականության՝ ինտեգրալության սկզբունք):

Համընդհանուր լեզվական կաղապարի մեջ տարբերվում էին շոքս տեսակի կարգեր (կատեգորիաներ)՝ սուբստանցիոնալ-գոյաբանական, տրամաբանական-իմացաբանական, իրադրական, լեզվագործառական: Սուբստանցիոնալ-գոյաբանական հիմնական (առարկաներին հատուկ) կարգերը դասակարգվում էին երեք հատկանիշի հիման վրա՝ նյութականություն, բաղկացականություն և որակայնություն (ի հակադրություն քանակականության կամ հաշվականության). որպես արդյունք ստացվեցին, 1) կադմի, 2) քանակի (թվի), 3) կախման, 4) դասի, 5) ձևի, 6) չափի, 7) ուղղության և 8) տեղի (դիրքի) կարգերը: Առարկաների տարբեր վիճակները բնութագրվում էին հետևյալ կարգերով՝ 1) առկայության/բացակայության, 2) բաղմակատարության/միակատարության, 3) պատճառայնության, 4) «կիրպի», 5) ընթացքի, 6) տևողության, 7) նպատակի և 8) ժամանակի: Հոգեկան երևույթների նկարագրության համար ներմուծվում էր նշանայնության հատկանիշը, որի համար առանձնացված կարգերը թվարկվում էին հատուկ կերպով: Նշվում էր, որ արտահայտության պլանի նկարագրման համար գործում են միևնույն գոյաբանական կարգերը՝ գրանշանների համար առաջին ութը, հնչանշանների համար՝ բոլոր տասնվեցը:

Իրադրական (գերանունների, հոգերի, իրադրական ժամանակի և այլն) իմաստների համար առանձնացվում էին համապատասխան իրադրական կարգեր՝ առանց հատուկ անվանումների՝ նշանային կարգերի հիման վրա:

Հիստ 214-ի առաջին խմբագրություն՝ տարբերվում էին տրամաբանական-խմայբանական երեք տիպի կարգեր՝ 1) համեմատություն՝ երկու դրսևորմամբ՝ համընկում = և տարբերություն՝ $\neq$, 2) հակասություն՝ նույնպես երկու դրսևորմամբ՝ առկայություն կամ դրականություն + և ժխտում —, 3) հակադրություն՝ հինգ դրսևորմամբ՝ առանց համապատասխան անվանումների՝ $\rightarrow$, $\leftarrow$, $\Rightarrow$, $\Leftarrow$ և $\equiv$:

Լեզվագործառական կարգի համար ընդունվում էր երեք դրսևորում՝ անկախ անդամ, կախյալ անդամ և երկրորդ անդամի կախյալ անդամ: Նշվում էր, որ եթե նախորդ կարգերը կարելի է ներկայացնել որպես յուրատեսակ «նախադասության» աջակողմյան մաս, որ բնութագրում է ենթական իր տարբեր հարաբերություններով, ապա լեզվագործառական կարգերը կարելի է դիտել որպես յուրատեսակ ենթակայական «բառակապակցություն», ընդ որում նախ՝ «նախադասության» աջակողմյան անդամները կարող են փոխակերպվել ենթակայական «բառակապակցության» անդամների և ընդհակառակն, երկրորդ՝ «բառակապակցության» անդամները կարող են փոխանցվել իրար ըստ $M_1 \rightarrow M_2$ բանաձևի:

Վերջապես, բացի ընդհանուր կաղապարից, տարբերվում էին մենալեզվական կաղապարներ՝ 1) ընդհանուր և մասնակի, 2) մեծ և փոքր (մանր), 3) համասեռ և տարասեռ:

Համընդհանուր լեզվական կաղապարի երկրորդ խմբագրության մեջ [Джаукян, 1978] կատարվում են ճշտումներ, ներմուծվում նոր գաղափարներ, ստեղծվում է տերմինային ավելի կոռ համակարգ: Նախ՝ միավորվում են, այսպես կոչված, սուբստանցիոնալ-գոյաբանական, իրադրական և լեզվագործառական կարգերը մեկ ընդհանուր համակարգի մեջ՝ ըստ հինգ ընդհանուր՝ գոյաբանական-խմայբանական հատկանիշների (նյութականություն, բաղկացականություն, որականություն, ընթացականություն, նշանայնություն) և երկու հիմնականում լեզվական հատկանիշների (իրադրականություն և նյութական, այդ թվում՝ լեզվական, արտահայտություն). այսպիսով, տարբերվում են ընդհանուր (գոյաբանական-խմայբանական) բնույթի հիմնական կամ գոյորոշ (առաջին երեք հատկանիշներով առարկաները որոշող), գործընթացային կամ առգոյորոշ (առարկաների հարաբերությունները որոշող), նշանային (հոգեկան գործընթացները հատկանշող) և հիմնականում լեզվական բնույթի իրադրական ու նյութաարտահայտչական կարգեր՝ որպես ամենաբարձր ընդհանրացման արդյունք: Երկրորդ՝ այսպես կոչված, տրամաբանական-խմայբանական կարգերը դիտվում են որպես հիշյալ կարգերի անբաժանելի տարրերի՝ եղրերի (տերմերի) դասեր կամ խմբեր, ընդ որում հակադրության եղրերի թիվը հասցվում է վեցի՝ հասուկ անվանումներով՝ հիմնական՝ $\rightarrow$, հակադիր՝ $\leftarrow$, միջին՝ $\Rightarrow$,

	կարգ	Դասերի	Թիվ	Պատ	Ձև	Ուղղոր. Բյուր	Զտփ	Տեղ (շիրք)
→	հավելյալական	գերազատական	բարձրավելյալական	սուսական	հետադարձական	ուղղորդական	չափանցական	նախորդային → առանձնորոշման
←	բացասական	ստորագոյնական	առկալական	զերիչական	մեղմական	անհասական	մեղմական	→ առանձնորոշման վերադարձական → հետադարձական → ձախակողմնային
+	հույսական	հնթադրական	կիսական	միջական	ուղղական	միջակայական	չափազանցական	↓ ներքնադարձական միջական → ներքնական → ներքնական
+	փոխարինական	փոխարկական	հարկական	կարգական	անկյունային	փոխարկական	առանձնական	→ ներքնական → կողմնական → վերաներքնական
→	ամբողջական	կենտրոնական	անհատական (հոմանիստ)	կենտրոնական (հոմանիստ)	կարական	հավասարական	կենտրոնական (կենտրոնական)	պարփական → կարգական → շրջական → շրջական
→	տարբերական	անկախական	կարգական	անհատական	անհատական	ուղղարկական	չափարկական	ժողովրդական
	Համեմատություն	Պատկերացում - Բյուր	Համեմատություն (պատկերացում)	Կերպ	Բնագրական	Փոփոխություն (ձրգրական)	Տեղափոխություն	Ժամանակ
→	առավելական	պատկերացում	համեմատական	սխալական	դարձական	վերածական	կարգական	նախադասական
←	սակավական	հետադարձական	հարկական	սակավական	նախական	հետադարձական	հարձակական	հետադարձական
+	համաստիքական	հնթադրական	միջական	հնթադրական	հարկական	միջական	միջական	համեմատական
+	փոխարկական	փոխարկական	փոխարկական	կենտրոնական	հարկական	փոփոխական	ստեղծական	համեմատական
→	զերիական	անհատական	կենտրոնական	կենտրոնական	կարգական	կենտրոնական (պարփական)	կենտրոնական	պարփական
→	զերական	հնթական	միջական	կենտրոնական	հարկական	անփոփոխական	անփոփոխական	անփոփոխական

վում է, որ թվի բերականական կարգն ունի եզակի. քիվ, երկակի քիվ, հոգնակի քիվ եզրերը. մեզ մնում էր կամ նույն օրինակով տալ Լզրերի ածականական անվանումներ՝ նկատի ունենալով եզր գոյականը, կամ դիմել գոյականական տերմինների. վերջին ձևից մենք հրաժարվեցինք՝ նախնական փորձից հետո տեսնելով արհեստական և դժվարակամ տերմինների առատությունը և զոյություն ունեցող տերմիններից դրեթի լիովին հրաժարվելու՝ վստահը. այս առումով Լզրերի՝ ստորեկ գրված անվանումների մոտ ապետք է նկատի ունենալ եզր բառը՝ ազդուտակի ձախ կողմում դրված Եղբերի նշաններին համապատասխան:

Նկի-ի առաջին տասնվեց (գոյորոշ և առգոյորոշ) էությունի և նրանց հատուկ եզրերի փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (տես աղ. 1).

3. ՄԵՆԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ՄԻՍՎՈՐՆԵՐ

Ամեն մի կառուցվածք ներկայացնում է մակարդակների սրոշ ամբողջություն. եթե առայժմ մի կողմ թողնենք լայն տեղատի (ամբողջական խոսքի) լեզվաբանական ուսումնասիրության հարցերը և սահմանափակվենք նախադասության քննությամբ, նպատակով, բոլոր մեր մշակած համընդհանուր լեզվաբանական տեսության (ՀԼՏ), կարելի է տարբերել կառուցվածքային չորս մակարդակ՝ չորս քանակների մեջ առանձնացնելով երկուական ենթամակարդակ [հմտ. Джаукая, 1978].

1. արմատային 3. շարունակային

1.1. բուն արմատային 2.1. ենթաշարունակային

1.2. արմատահիմքային 3.2. յիաշարունակային

2. բառային 4. նախադասական (ստորոգական)

2.1. բառակազմական 4.1. սղաբ նախադասության

2.2. բառաթերական 4.2. բաբ նախադասության

Ըստ այս կամ այն լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների (1) մակարդակային և ենթամակարդակային տարբերությունները կարող են արտահայտված լինել ավելի կամ պակաս հստակությամբ, և միջոցների ու եղանակներով տարբեր դրսևորումներով. 2) ենթամակարդակների մեջ կարող են տարբերակվել համապատասխան քանակություններ իրար ստորադասվող (ենթանթա-, ենթանթանթա-, ենթանթանթանթա-...) մակարդակներ, որոնք, սակայն, մնում են այդ

ենթամակարդակների սահմաններում և նոր ենթամակարդակներ չեն կազմում:

Նշված մակարդակները և ենթամակարդակները բնեն իրենց համապատասխան միավորները.

1. արմատ

1. 1. բուն արմատ

1. 2. արմատահիմք (արմատական հիմք)

2. բառ

2. 1. քառույթ

2. 2. բառածև

3. շարույթ

3. 1. ենթաշարույթ

3. 2. լիաշարույթ

4. նախադասություն

4. 1. պարզ նախադասություն

4. 2. բարդ նախադասություն

Մակարդակների և մակարդակային միավորների ուսումնասիրության համար համապատասխանորեն առանձնացվում են լեզվաբանական հետևյալ բաժինները.

1. արմատագիտություն

1. 1. բուն արմատագիտություն

1. 2. արմատահիմքի ուսմունք

2. բառագիտություն

2. 1. բառակազմության ուսմունք

2. 2. ձևաբանություն

3. շարույթաբանություն (քառադասակցության ուսմունք)¹

3. 1. ենթաշարույթի ուսմունք

3. 2. լիաշարույթի ուսմունք

4. շարահյուսություն

4. 1. պարզ նախադասության ուսմունք

4. 2. բարդ նախադասության ուսմունք

Մակարդակային և ենթամակարդակային միավորների միջև ընդհանրապես առկա է ներառման հարաբերություն, այսինքն՝ յուրաքանչյուր ստորին մակարդակի ու ենթամակարդակի միավոր ներառվում է ավելի բարձր մակարդակի ու ենթամակարդակի միավորի մեջ, և, համապատասխանաբար, յուրաքանչյուր վերին մակարդակի ու ենթամակարդակի միավոր ներառում է ստորին մակարդակի ու ենթամակարդակի միավորը: Սակայն այս դեպքում հարկավոր է նկատի առնել երկու լեզրաբանություն:

Առաջին՝ ընդհանրապես յուրաքանչյուր մակարդակային և ենթամակարդակային միավոր բաղկացած է լինում միջուկից և առմիջուկային բաղադրիչից կամ բաղադրիչներից. այսպես, արմատական հիմքը կառուցվում է բաղկացած լինել բուն արմատից (որպես միջուկից) և այնպիսի

¹ «Բառակազմություն» բառն անհաջող է, որովհետև շարույթը կարող է բաղկացած լինել մեկ բառից:

հաշվելից տարրերից (որպես առմիջուկային բաղադրիչներից), ինչպիսիք են՝ ածականները (հմմտ. բեկա-(ել)՝ ի տարբերություն բեկ-(ել)-ի), հնչեփոխությունները (հմմտ. լուս-(ավոր)՝ ի տարբերություն լույս-ի), հատուկ հիմքակազմ տարրերը (հմմտ. երեկոյ-(անալ)՝ ի տարբերություն երեկո-ի)։ Բուն բառը բաղկացած է լինում արմատական հիմքից և մեկ կամ մի քանի ածանցից և այլն։ Սակայն տվյալ մակարդակային միավորը կարող է բաղկացած լինել նաև միայն միջուկից, այսինքն՝ ունենալ դրո առմիջուկային տարր։ այս դեպքում ներառման հարաբերությունը ներկայանում է որպես հավասարության հարաբերություն։ Նման պայմաններում կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ, օրինակ, արմատը ներկայանա միաժամանակ որպես արմատական հիմք, բուն բառ, բառաձև, ենթաշարույթ, շարույթ (հմմտ. սլաւ արմատը «պատ կա» նախադասության մեջ)։

Երկրորդ՝ եթե առաջին, երկրորդ և երրորդ մակարդակային միավորների հարաբերությունը կարելի է ներկայացնել որպես ներառության կամ հավասարության հարաբերություն, ապա նույնը չէ վիճակը չորրորդ՝ նախադասական մակարդակին, անցնելիս, եթե, իհարկե, նախադասությունը շառններ անկախ սառքողումից. այս դեպքում նախադասությունը ոչ միայն ներառում է շարույթ կամ շարույթներ, այլև բուն այնպիսի մի հատուկ տարբերակիչ հատկանիշ, ինչպիսին ստորոգումն է. այսինքն՝ եթե նախադասությունը բաղկացած է մեկ շարույթից, ապա այս դեպքում էլ հավասար չէ նրան. այսպիսի հավասարություն կարող է լինել միայն այն դեպքում, եթե կամ տարրերնք բոլոր մակարդակների համար ստորոգական ու ոչ ստորոգական դրսևորումներ, կամ նախադասության մակարդակային քննության համար հիմք ընդունենք նախադասության ոչ ստորոգական (փոխակերպված) ձևը (հմմտ. «Իմ բարեկամ Հակոբի՝ քաղաք գնալը»)։

Կարևոր ենք համարում նաև նշել, որ պարզ նախադասության բուն տիպը մենք համարում ենք զոյորոշ հարաբերություններ, բարդ նախադասությունների բուն տիպը՝ առգոյորոշ հարաբերություններ արտահայտող սեռականները։

Ըստ համընդհանուր լեզվաբանական հարաբերակցության սկզբունքի մակարդակ կարող են ստեղծել միայն թե՛ արտահայտության պլան (հնչյունական կողմ կամ արտահայտության համապատասխան այլ միջոցներ) և թե՛ բովանդակության պլան (իմաստ) ունեցող միավորները։ Սրանց քննությունը, այսպիսով, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ 1) նրանց կառուցվածքային բոլոր տիպի կաղապարների սահմանում՝ ըստ առմիջուկային բաղադրիչների քանակի, հաջորդականության և պարտադրականության, 2) իրացման բոլոր հնարավոր միջոցների (արտահայտու-

թյան պլան), արտահայտած իմաստների (բովանդակության պլան) և սրանց փոխհարաբերության եղանակների (բովանդակության ու արտահայտության պլանների փոխհարաբերություն, այդ թվում՝ համանունություն, 3) կաղապարների ներքին ու արտաքին հարաբերությունների ու անցումների բոլոր հնարավոր տիպերի որոշում: Դժվար չէ ասածներից եզրակացնել, որ մակարդակային միավորների քննությունը փաստորեն սահմանափակվում է առմիջուկային բաղադրիչների քննությամբ. միջուկային բաղադրիչների քննությունը կատարվում է ավելի ստորին մակարդակում (ենթամակարդակում):

Եթե մենք պայմանականորեն ընդհանրացնենք յուրաքանչյուր մակարդակային միավորի կաղապարները՝ վերանալով բաղադրիչների դիրքային տարբերություններից, պարտադրականության ղեպքերից ու կաղապարային փոխանցումներից, ապա մակարդակային միավորների կառուցվածքը կարելի է ներկայացնել $A(a_1)(a_2) \dots (a_n)$ բանաձևով, որտեղ A -ն արտահայտում է միջուկը, a -ն՝ առմիջուկային բաղադրիչները: Մակարդակների առմիջուկային բաղադրիչները արտահայտելով փակագծերով՝ մենք համապատասխանաբար կունենանք մակարդակային միավորների փոխհարաբերության հետևյալ բանաձևը ըստ առանձնացված շորս մակարդակների՝ $A(na) \subseteq A_1(na_1) \subseteq A_2(na_1(na_2)) \subseteq A_3(na_1(na_2(na_3)))$, որտեղ $\subseteq$ նշանը ցույց է տալիս ներառահաստատության հարաբերություն: Կառուցվածքի կոնկրետ քննությունը բացահայտում է Ո-ի իսկական՝ աիժեքը յուրաքանչյուր մակարդակի համար, ընդհանուր կաղապարային բանաձևի մասնակի զրոնորոշումները, տարասեռ կաղապարները և յուրաքանչյուր կաղապարի բաղադրիչների՝ բուն իրացումները:

Ներկա աշխատության մեջ, ինչպես նշվել է, ուշադրության կենտրոնում են բուն արմատագիտությունը և բառագիտության առնչին ենթամակարդակը՝ բառակազմությունը: Սրանով իսկ նպատակ է դրվում ամբողջական դադափածր տալու ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի մասին, որ ոչ ոչ ինչ է, եթե ոչ 1) արմատական ձևությունների, 2) ածանցական ձևությունների և 3) նրանց՝ զանազան համակցությունների ամբողջություն:

4. ՄԵՆԱԼԵԶՎԱԿԱՆ ԿԱԼԱՊԱՐՆԵՐ ԵՎ ՓՈԽԱՆԱԿԱՊԱՐՈՒՄ

Բացի համընդհանուր լեզվական կաղապարից, որ մենալեզվական կաղապարների ընդհանրացումն է, ամեն մի կոնկրետ լեզվի համար տարբերում են կառուցվածքային կաղապարներ, որոնք հատուկ են տրվ-

յլալ լեզվով խոսողների լեզվական ունակություններին և բացահայտվում ու նկարագրվում են լեզվաբանների կողմից: Այդ կադապարները լինում են նրկու տեսակ՝ համասեռ և տարասեռ: Համասեռ կադապարներն իրենց հերթին լինում են համամակարդակային և միջմակարդակային:

Համամակարդակային կադապարները բնորոշում են միևնույն մակարդակին պատկանող միավորների կառուցվածքային փոխհարաբերությունը: Դրանք լինում են ընդհանուր (ընդհանրացված) և մասնակի կադապարներ կամ լիակադապարներ և մասնակադապարներ: Ընդհանուր կադապարը կամ լիակադապարը տվյալ մակարդակի միավորների հնարավոր բոլոր կադապարների ընդհանրացումն է: Նվն մասնակի կադապարները ներկայացվում են կոնկրետ օրինակներով (նմուշներով), ապա ընդհանուր կադապարը կարող է ոչ մի կոնկրետ օրինակ չունենալ, այլ ներկայացվել պայմանականորեն կառուցված օրինակով: Այսպես, հայերենի գոյականի հոլովման լիակադապարը կարելի է արտահայտել $\Phi(\beta)(\epsilon)(\zeta)(\omega)$ բանաձևով, որի β -ն արտահայտում է թվանիշ (—նր, —ներ, —իկ), ϵ -ն՝ դասահոլովանիշ (—ոք, —վա(ն) և այլն), ζ -ն՝ հոլովանիշ (—ից, —ով և այլն), ω -ն՝ առկայացուցիչ (—ըն, —ս, —լ) վերջավորություն: Սակայն այս կադապարը չունի կոնկրետ իրացում և, համապատասխանաբար, օրինակ (նմուշ), այլ հանգես է գալիս միայն մասնակադապարների միջոցով. տարածված են եռամասնիկ (եռավորջավուր) $\Phi(\rho)(\delta)(\omega)$ (օրինակ՝ ծով—նր—ի—ն), $\Phi(\eta)(\delta)(\omega)$ (օրինակ՝ ընկեր—սք—ից—ս) մասնակադապարները. բառամասնիկ (բառավերջավոր) մարդ—կ—ունց—ից—ս օրինակը ունի $\Phi(\eta(\beta))(\zeta)(\omega)$ մասնակադապարը, այսինքն՝ տարրերվում է լիակադապարից առաջին երկու անդամի պարտադրականությւնն զրոսկորմամբ, հանդես գալիս միայն —իկ—ի առկայությւնն զնայրում:

Միջմակարդակային կադապարները բնորոշում են տարբեր մակարդակների և ենթամակարդակների պատկանող միավորների կառուցվածքային փոխհարաբերությունը: Դրանք լինում են մեծակադապարներ (макромоделл) և մանրակադապարներ (микромоделл) կամ, այլ կերպ ասած, ներառող և ներառվող կադապարներ: Յուրաքանչյուր վիրին մակարդակի՝ կամ ենթամակարդակի միավորի կադապար մեծակադապար է ավելի ստորին մակարդակի կամ ենթամակարդակի միավորի համար: Տվյալ մակարդակի կամ ենթամակարդակի միավորի բաղադրիչները վերլուծելի են միայն ավելի ստորին մակարդակում կամ ենթամակարդակում: Այսպես, բառափեքական ենթամակարդակի միավորի՝ բառաձևի կադապարի միջուկային բաղադրիչը կարող է վերլուծվել միայն բառակազմական ենթամակարդակում. տնակից բառաձևը իր մակարդակում ունի Գն մասնակադապարը (գոյական + հոլովական վերջավորություն). այդ բառաձևի տնակ միջուկը վերլուծվում է բառա-

կաղմական ենթամակարդակում՝ ըստ Գգ կաղապարի (գոյական + գոյականակերտ ածանց): Երկու կաղապարների փոխհարաբերությունը, ինչպես նշվել է, ներառական է և կարող է ներկայացվել $\mathcal{G}(g(h))$ բանաձևով:

Տարասեռ կաղապարները համասեռ կաղապարների մեջ և զրանց միջև կատարված փոփոխությունների ու տեղաշարժերի կամ, մեր առաջարկած տերմինով, փոխկաղապարման արդյունք են: Համասեռ կաղապարների քննության դեպքում լուսյայն ենթադրվում է, որ լիովին պահպանվում է մակարդակների և ենթամակարդակների ներառական-ենթադասական փոխհարաբերությունը, մակարդակային և ենթամակարդակային միավորների բաղադրիչները արտաձայնվում են միայն այդ բաղադրիչների համար նախատեսված միավորներով, կաղապարների ներքին տեղաշարժեր, միացումներ և ներթափանցումներ չեն լինում, այսինքն՝ դրանց քննության մեջ մենք վերանում ենք փոխկաղապարման երևույթներից: Սակայն իրականում կաղապարների միջև հաստատվում են ամենաբազմազան հարաբերություններ, և տեղի ունենում ներքին ու արտաքին անցումներ: Եթե վերապահորեն ընդունենք ն. խոմսկու տերմինները, ապա կարելի է ասել, որ համասեռ կաղապարները ներկայացնում են խորքային, տարասեռ կաղապարներ՝ մակերեսային կառուցվածքները: Այս անվանումներն, իհարկե, անհաշող են. թե՛ համասեռ և թե՛ տարասեռ կաղապարները աշխարհի հարաբերությունների և հատկությունների հոգեկան ընկալումների արտաձայնության որոշակի եղանակներ են:

Կարելի է տարբերել տարասեռ կաղապարների չորս տեսակ, որոնցից երկուսը կապված են լիակաղապարների և մասնակաղապարների, երկուսը՝ մեծակաղապարների և մանրակաղապարների փոխկաղապարման հետ:

Նախ՝ տարասեռ կաղապարներ առաջանում են միևնույն մակարդակի կամ ենթամակարդակի միավորների կաղապարների մեջ միջուկի և առմիջուկային բաղադրիչների անցումներով, այսինքն՝ փոխվում է դերադաս և ստորադաս անդամների (կախորդի և կախյալի, լրացյալի և լրացման) հարաբերակցությունը. այսպես, գոյականական բառակապակցության մեջ ածականը կարող է հանդես գալ որոշյալի և գոյականը՝ որոշչի գործառույթով՝ մեծ (տուն)→մեծը, բառ→բառ (սիրտ). նախադասության մեջ ենթական կարող է դառնալ ստորոգելի կամ խնդիր և վերջիններս՝ ենթակա՝ Հակոբյանը նախագահն է→նախագահը Հակոբյանն է. Հակոբյանը պատժել է Գրիգորյանին→Գրիգորյանը պատժվել է Հակոբյանի կողմից:

Երկրորդ՝ տարասեռ կաղապարներ առաջանում են միեւնույն մակարդակի կամ ենթամակարդակի միավորների կաղապարների ամբողջական կամ մասնակի միացման հետեանքով. Հակոբը գնաց, Գրիգորը եկավ→ Հակոբը գնաց և Գրիգորը եկավ. Հակոբը գնաց, Գրիգորը գնաց→ Հակոբը և Գրիգորը գնացին:

Երրորդ՝ տարասեռ կաղապարներ կարող են առաջանալ և առաջանում են մակարդակների և ենթամակարդակների ներառական հարաբերության, մեծակաղապարների և մանրակաղապարների սովորական հարաբերական, խախտման հետեանքով: Ըստ սովորական հարաբերության, ինչպես նշվել է, ստորին մակարդակի և ենթամակարդակի միավորը կարող է մտնել (ներառվել) վերին մակարդակի կամ ենթամակարդակի միավորի մեջ որպես միջուկ: Սակայն լինում են դեպքեր, երբ միջուկ է դառնում նույն մակարդակի կամ ավելի վերին մակարդակի միավորը: Այսպես, հայերենում սեռական-տրական հոլովածը կարող է ստանձնել միջուկի գործառույթուն և հոլովվել, այսինքն՝ որպես բառակերպ միջուկ հանդես է գալիս բառակերպ՝ Հակոբ-ի-(ն)-ի. այնուհետև, որոշ կարգի բառակերպ կարող են ստանձնել բառակազմական միջուկի գործառույթ, այսինքն՝ որպես բառի միջուկ հանդես է գալիս բառակերպ՝ ԲՐՈՂ-ական:

Չորրորդ՝ տարասեռ կաղապարներ են առաջանում մակարդակների ու ենթամակարդակների մեծակաղապարների անցումով մանրակաղապարների և ընդհակառակն: Այսպես, բարդ նախադասությունը կարող է փոխվել պարզ նախադասության և հակառակը, պարզ նախադասությունը կարող է փոխվել բառակաղապարության և հակառակը և այլն. ես գնացի տուն, որովհետև աղջիկս հիվանդ էր→ ես գնացի տուն աղջկաս հիվանդությամբ պատճառով. Գրիգորը հիվանդացավ→ Գրիգորի հիվանդանալը (Գրիգորի հիվանդությունը) և այլն:

Տարասեռ կաղապարները բնորոշվում են միավորի գործառույթը փոխող կամ իրենց համար ոչ բնորոշ գործառույթուն (լրացում→լրացյալ, լրացյալ←լրացում և այլն) ունեցող տարրերով. վերջինիս հետ կապված՝ կարող են նույն կաղապարում հանդիպել կրկնվող, իմաստային նույն կարգին սլատկանող և միագործառույթ տարրեր: Այս տարասեռ կաղապարների կրկնվող տարրերը չպետք է շփոթել միեւնույն միջուկի (հիմքի) այն լրացական տարրերի հետ, որոնք 1) կաղապարի մեջ ունեն իրենց կայուն տեղերը և 2) իմաստային տարրեր խմբեր են կազմում: Այսպես, թվականը և ածականը գոյականի նկատմամբ լրացական դիրք են զբաղում, բայց 1) գոյականական շարույթի մեջ ունեն

իրենց կայուն տեղերը (Երկու մեծ տուն, բայց ոչ մեծ երկու տուն) և 2) կազմում են իմաստային միանգամայն տարբեր խմբեր՝ քանակական և որակական լրացումներ, այսինքն՝ գործառական արժեքին միանում է իմաստահավելական արժեքը: Ինչպես կտեսնենք, այսպես են նաև մի շարք ածանցներ, որոնք գործառական նույնական են և հիմքի գործառական փոփոխություն չեն առաջացնում:

ԱՐՄԱՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՁեվՈՒՅԹ ԵՎ ԱՐՄԱՏ

Երկալանային (թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պը-
լաններ ունեցող) նվազագույն միավորը լեզվաբանության մեջ հայտնի
է ձևույթ անունով: Ոմանք ընդհանրացնելով այս տերմինը՝ ձևույթի ան-
վան տակ ներառում են ոչ միայն գծային տարրեր ունեցող բուն ձևույթ-
ները, այլև ոչ գծային տարրերով (հնչերանգով, շեշտով, հրկարությանը,
կցույթով և սրա մի դրսևորումը ներկայացնող դադարով) բնութագրվող
(առողանական) միավորները, այսպես կոչված, մակաձևույթները: Բա-
ցի բուն ձևույթներից, հիմքերի կառուցվածքում կարող են լինել այնպի-
սի գծային տարրեր, որոնք, զուրկ լինելով բուն իմաստից, արժեքավոր-
վում են լեզվական գործածության մեջ և սովորաբար հանդես գալիս
որպես ձևույթի կազմիչներ. այդպիսիք են, օրինակ, լծորդ ձայնավոր-
ները, հոգակապը, որոշ հիմքակազմ տարրեր. կոչենք սրանք ձևաառ-
բեր կամ ձևակազմիչներ:

Բուն ձևույթները արմատային, բառակազմական և բառաթնքալան
ենթամակարդակներում հանդես են գալիս որպես մակարդակային և հն-
թամակարդակային միավորների կազմիչներ: Շարույթային մակարդա-
կում այդպիսի կազմիչներ են բառերը, պարզ նախադասության ենթա-
մակարդակում՝ շարույթները և բարդ նախադասության ենթամակար-
դակում՝ պարզ նախադասությունները:

Բուն արմատային ենթամակարդակի հիմնական միավորը «մաքուր»
արմատն է, որ, ի տարբերություն ավելի բարձր մակարդակների միա-
վորների, զուրկ է գծային բնույթի երկալանային կազմիչներից: Այլ
կերպ ասած՝ եթե արմատահիմքը կազմված է բուն արմատից և ձևա-
առներից, բուն բառը՝ արմատական հիմքից և բառակազմական ձևույթ-
ներից, բառաձևը՝ բուն բառից և վերաբերական ձևույթներից, ապա
բուն արմատը իմաստակիր գծային տարրերից չի կազմված: Այստեղ
գծային միավորների վերլուծության ժամանակ հասնում ենք սահմա-
նային միավորի՝ արմատական ձևույթի աստիճանին, որ կարող է վեր-
լուծվել կա՛մ միայն ըստ արտահայտության, կա՛մ միայն ըստ բովան-

դակույթյան պլաններին կազմիչներին: Այսպիսով, եթե մյուս ենթամակարդակների քննությունն ժամանակ մենք կարող ենք բացահայտել և բացահայտում ենք այնպիսի կադավարներ, որոնց կազմիչները ինքնին իմաստակիր են, ապա արմատական հիմքի դեպքում միայն միջուկն է իմաստակիր, իսկ բուն արմատային մակարդակի դեպքում մակարդակային միավորը չի կարող բաժանվել իմաստակիր գծային միավորների (և՛ն աճականները հասկացնենք արմատական հիմքին):

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅՆՐԵՆԻ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԻՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի արմատների ցանկը տրված է ներկա աշխատության վերջում որպես հավելված: Քանի որ այն մեր քննության ելակետն է, ուստի ամենից առաջ խոսենք նրա կազմության սկզբունքների մասին:

Ժամանակակից հայերենի արմատների ցանկը կազմելիս աղբյուրներ են ծառայել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» [Աճառյան, 1—4, 1971—1979], ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» [1—4, 1969—1980], է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» [Աղայան, 1976] և Հ. Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» [Բարսեղյան, 1973]: Նաև, Հ. Աճառյանի բառարանից դուրս են գրվել ժամանակակից հայերենում գործածական արմատներն ու արմատների տարբերակները (որոնց թիվը շուրջ չորս հազար է), ապա դրանք լրացվել են մյուս բառարաններից առնված բառերով, որոնք գերազանցապես ժողովրդախոսակցական բառեր և նոր փոխառություններ են (օտարալզի բառեր): Ընտրության հարցում կողմնորոշվել են մասնավորապես է. Բ. Աղայանի բառարանային նշումները: Սրանով իսկ ցանկում ընդգրկված արմատների թիվը հասել է շուրջ յոթ հազարի:

Ինչպես ցույց է տալիս այդ արմատացանկը, արմատի մեր ըմբռնումը բավականաչափ լայն է. այստեղ մտցված են ոչ միայն սովորական արմատները, այլև փոխառություններն ու փոխառությունների հիմնատարրերը և բաղադրիչների մթադնման հետևանքով որպես պարզ միավորներ զիտակցվող նախկին բաղադրությունները: Հետևողական պատմական մոտեցման դեպքում արմատի այսպիսի լայն ըմբռնումը միանգամայն արդարացված է: Լեզվի զարգացման ամեն մի փուլում մենք ունենում ենք արմատների նոր կազմ: Հայերենում, ինչպես այլ

լեզուներում, տեղի է ունենում ոչ միայն ընդհանրապես բառակազմի (բառապաշարի), այլև արմատակազմի (արմատապաշարի) նորացում. նոր բառերի կազմման ու փոխառման հետ միասին տեղի է ունենում հին փոխառությունների յուրացման (հայացման) ու բաղադրյալ բառերի պարզման (արմատացման) գործընթաց, և արմատի ըմբռնումը դառնում է որոշ չափով սլայմանական: Այս կապակցությամբ մասնավորապես նշենք, որ փոխառյալ բառերի դեպքում արմատների առանձնացման մեր սկզբունքը զգալիորեն տարբերվում է տարածված սկզբունքից. այստեղ ինքնուրույն արմատներ են համարվել ոչ թե բոլոր փոխառյալ բառերն առանձին առնված, այլ նաև քիչ թիվ շատ դիտակցվող ածանցներով միավորված հիմքերը: Հայտնի է, որ, այսպես կոչված, միջազգային բառերի մեծաքանակության պայմաններում նրանց որոշ բաղադրիչներ ոչ միայն դիտակցվում են հայերեն խոսողների կողմից, այլև տարածվում հայերեն և հայացած հիմքերի վրա. հմտ. օլտու-մունու-շակագույն, քառ-իստ: Այս հանդուժանքի հաշվառման դեպքում անհրաժեշտ է դառնում նախ՝ հայերեն ածանցների հետ միասին քննարկել որոշ օտարազգի ածանցներ, երկրորդ՝ վերանայել հայերեն արմատների շրջանակը:

Արմատադանիք կազմելիս մենք առաջնորդվել ենք մասնավորապես հետևյալ սկզբունքներով.

1. արմատացանկում տեղ չեն գտել հապավումները, նեղ բարբառային ու նեղ մատենագիտական բառերը և ակնհայտ հնարանությունները: Մասնավորապես նշենք, որ չեն բերված նեղ գործածության բուսանունները (հմտ. ածծպա) և հին ամասնունները (աւաց, աւեգ և այլն): «Ժողովրդախոսակցական» նշումն ունեցող բառերին տեղ է տրված որոշ ընտրությունով:

2. Հատուկ անունները և ժողովրդանունները (ասորի, սուր, ևայ, վրացի և այլն) ցանկի մեջ չեն ներմուծված:

3. Բառային տարբերակներից սովորաբար տրվում է ամենից ավելի տարածվածն ու նորմավորվածը, և մյուսները չեն բերվում:

4. Ինքնուրույն գործածություն չունեցող արմատները բերվում են գծիկով, որ դրվում է արմատի վերջից, եթե այն բուն ձևով սովորաբար գործածվում է որպես առաջին բաղադրիչ (հմտ. շեմն-, կաւր- և այլն), և սկզբից, եթե այն բուն ձևով սովորաբար գործածվում է որպես երկրորդ բաղադրիչ (հմտ. -սլաղաղ և այլն):

5. Արմատների մոտ, փակագծերի մեջ բերվում են նրանց դիրքային տարբերակները, ընդ որում իբրև ազգայինների դիտվում են սովորաբար շեշտազուրկ ձևերը (հմտ. կց-՝ կից ձևի մոտ), հազվագիպ նաև

շեշտակիր ձևերը, եթե դրանք հազվադեպ են գործածվում շեշտազուրկ ձևերի համեմատությամբ (հմմտ. —խից՝ խցի մոտ):

6. Լիակատար համանունները տրվում են մեկ անգամ՝ դրանց բանակի ցուցիչով՝ ական² (ական «փորանցք» և ական «արկ»), մասնակի համանունները բերվում են առանձին. մասնակի համանուններ են համարվել որևէ տարբերիչ հատկանիշ ունեցող արմատները՝ չհնչյունափոխվող կամ հնչյունափոխվող (սեռ «կաթի սեր» և սեռ/սիր— «սիրելը»), որպես առաջին բաղադրիչ լրացուցիչ հիմքատարր ունեցող կամ շունեցող (ափ «ձեռքի ափ» և ափ/ափն «ջրի ափ»), ինքնուրույն գործածություն ունեցող կամ շունեցող (գործ և գործ— «հյուսել»), պարտադրաբար շեշտակիր կամ ոչ պարտադրաբար շեշտակիր (ախ— ձայնարկություն և ախ «նիզ»):

7. Կրկնակի գրութիւն ունեցող արմատների հավելական տառերն առնվում են փակագծերի մեջ (ախ(ա)ւ, անտանտ(ա)), տարբերակային տառերը անջատվում են թեք գծով (ագատ/ւ, ազար/ւ):

8. Որոշ վերապահությամբ արմատների շարքում են դրված այն ծառքաղզի (նոր փոխառված) բառամասերը, որոնք ունեն հայերի կողմից դիտակցվող ածանցական ձևեր (կոորդինատ/ց— կոորդինատոր և կոորդինացիա բառերում). եթե օտարաղզի բառը հանդիպում է միայն մեկ ձևով կամ այնպիսի ձևով, որից ածանցված էլ չի համարվել մյուս բառակազմական ձևերը (բոլշև— բոլշևիկ, բոլշևիզմ), այն բերվում է անփոփոխ:

Այս օրենքները կարող են լրացվել և փոփոխվել:

Յ. ԱՐԻԱՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶԱՊԱՐԱՆՈՐԸ

Վերևում նշվեց, որ արմատները կարող են վերլուծվել կամ միայն ըստ արտահայտության, կամ միայն ըստ բովանդակության՝ պլանիֆիկացիաների (բաղադրիչների, բաղադրատարրերի): Կանգ առնենք նախ արմատի արտահայտության պլանի կազմիչներին (բաղադրիչներին): Հարցի վրա և փորձենք պարզել այդ պլանի կազմարարները, ապա անցնենք արտահայտության պլանի կազմարարներին: Եթե ժամանակակից հայերենի արմատը լինի հիմնականում միասնակ, աստիճանա՝ կազմարար՝ կազմված կլինի հնչույթային բաղադրիչներից, որոնց համար միջուկայիններ ձայնավորը, առմիջուկային բաղադրիչներ՝ բաղաձայնները: Այսպես՝ արդի վիճակով արմատի սահմանները չեն համընկնում վանկի սահմանների հետ. նշանակալից թիվ են կազմում մեկից ավելի վանկ պարունակող բաղմավանկ արմատները: Այս պայմաններում մենք կունենանք արմատի արտահայտության պլանի երկու կարգի կազմարարներ:

միավորանկ արմատները դեպքում արտահայտության պլանի կողապարբ
կլինի միավորման՝ կազմված հնչույթներից, բազմավանկ արմատների
դեպքում՝ երկարորեն կազմված վանկերից, որոնք իրենց հնչյուն
կազմված են հնչույթներից:

Միավանկ արմատները չլիտերալորական ինքնուրույն միավորներ՝
մենք նրանց արտահայտության պլանը կարող ենք բնորոշել վանկի սո-
վորական կաղապարային բանաձևով, որ բերված է մեր «Ժամանա-
կակից հայերենի տեսության հիմունքները» գրքում [Ջամուկյան, 1974,
87]: Հայերենի վանկը ունի հետևյալ ընդհանուր կաղապարը (սրա սո-
վորական մասնակաղապարներով):

$$(P)(P)(Q)(Q)(P)(P)(P):$$

որտեղ P-ն նշանակում է բաղաձայնը, Q-ն՝ կիսաձայնը, Ձ-ն՝ ձայնավո-
րը: Բաղաձայնների ոչ բոլոր տիպերը կարող են հանդիպել վանկի սկզբո-
նային և վերջնային կապակցություններում: Եթե նկատի առնենք, որ
բաղասկզբնային սպ, ստ, սկ, շպ, շտ, շկ, գբ, գղ, գգ բաղաձայնական
կապակցությունները կարող են արտասանվել սկզբնային բախական
ուժիղ P-ով, այսինքն՝ առանձին վանկ կազմել (հատկապես տտանալոր-
ներում՝ ըստ պահանջվող շափի), ապա կարելի է տալ երկրորդ բանա-
ձևը, որտեղ բացառված են այդ կապակցությունները:

$$(P)(Q)(Q)(P)(P)(P):$$

Եթե բաղաձայնական սկզբնային դիրքը սահմանափակ չէ, այսինքն՝
այդ դիրքում կարող են հանդիպել բոլոր բաղաձայնները (հաճախա-
նության տարբեր աստիճաններով), ապա նույնը չի կարելի ասել վերջ-
նային հերթի դիրքերի մասին, որտեղ գոյություն ունի բաղաձայնի որո-
շակի կարգ: Տարբերակելով այս բաղաձայնների բաղաձայնի երեք կար-
գերը՝ կունենանք:

$$(P)(Q)(Q)(P_1)(P_2)(P_3)$$

բանաձևը, որտեղ P₁-ը ձայնորդներն են, P₂-ը՝ շփականներն ու կիսա-
շփականները, P₃-ը՝ պայթականները: Այս դեպքում էլ հարկավոր է
նկատի առնել հետևյալը: Նախ՝ կան իրացման սահմանափակումներ.
այսպես, երեք կարգի բաղաձայնների միաժամանակյա առկայությունը
հազվադեպ է, այն էլ միայն Բ վերջաձայնի դեպքում (հմմտ. անցք).
երկրորդ փոխառությունների և որոշ մթազնված կաղմությունների դեպ-
քում կարող է խախտվել շփականների և պայթականների սովորական
հաջորդականությունը. այսպես, կարող են հանդիպել իրար հետևից եր-

կու շփական (հմմտ. վաշխ) համ երկու պայթական (հմմտ. պակտ), պայթականից հետո կարող է հանդիպել շփական (հմմտ. վոփս):

Արմատների ամբողջության արտահայտության պլանի համար իբրև հիմնական միավոր ընդունելով վանկը՝ մենք կունենանք արմատների վանկային կազմի հետևյալ կաղապարային բանաձևը, որտեղ Ա-ն նշանակում է արմատը, Վ-ն՝ վանկը.

$$A_{\alpha_1 \dots \alpha_n} = (A_1)(A_2) \dots A_n:$$

Խնչ կարելի է առել արմատների ունեցած վանկերի հնարավոր ռեպլի մասին: Բուն հայերեն արմատների մեջ այն սովորաբար 3-ից ավելի չի լինում, հին փոխառությունների դեպքում հազվադեպ է անցնում 4-ից, իսկ նոր փոխառությունների դեպքում տեսականորեն կարող է լինել այնքան, որքան վանկ կարող է ունենալ օտարազգի որևէ բառ:

Հարց է առաջանում. այս պայմաններում ինչով են տարբերվում արմատների արտահայտության պլանի կաղապարները բառի արտահայտության պլանի կաղապարներից: Կարելի է ասել, որ այս տարբերությունները հիմնականում իրացման, շարակալության ձևափոխության և սահմանային աղղանշման տարբերություններ են:

Նախ՝ եթե բառը գործածության անկախություն ունի, ապա արմատների զգալի մասը կամ գուրկ է այդպիսի ինքնուրույնությունից (հանդես է գալիս միայն վերին մակարդակների ու ենթամակարդակների ձևվերի մեջ), կամ ինքնուրույնաբար հազվադեպ է հանդիպում. ընդհանրապես հարկավոր է նկատի ունենալ, որ արմատը ավելի բարձր վերացություն է, քան բառը, և արմատի սահմանների որոշումը միայն՝ ըստ արտահայտության պլանի է՝ և ավելի մեծ դժվարություն է ներկայացնում. դեռ ավելին, բովանդակության պլանին դիմելն էլ ոչ միշտ է աներկբայորեն լուծում հարցը. արմատի կապված գործածության պայմաններում լինում են դեպքեր, երբ հնարավոր չէ պարզել արմատի իսկական կալմը. այսպես, զալ բայաձևի արմատը մեր ցանկում տրված է գ(ա)-ձևով, որտեղ ա-ի պատկանելությունն արմատին թե հիմքին դժվար է որոշել:

Երկրորդ՝ բառերի գերակշռող մեծամասնության համար բնորոշ է շեշտափոխությունը, մի բան, որ արմատի համար պարտադիր չէ. այսպիսով, եթե բառի վանկակազմի համար միջուկային արժեք ունի շեշտակից վանկը, ապա արմատի համար այդպիսի միջուկային վանկ դժվար է առանձնացնել (եթե, իհարկե, արմատը որպես բառ հանդես չի գալիս, այսինքն՝ արմատական բառ չէ). սրա հետ կապված՝ հայերենի բառերի գերակշռող մեծամասնության համար միջուկային արժեք

տնի շեշտակիր վերջնավանկը, և առմիջուկային վանկերը նախորդում են նրան. մինչդեռ արմատների դեպքում չկա միջուկային վանկ, և վերևում տրված $U_{արմատ} = (v_1)(v_2) \dots (v_n)$ բանաձևը կարելի է արտահայտան նաև $U_{արմատ} = v((v_1)(v_2) \dots (v_n))$ ձևով:

Երրորդ՝ շեշտափոխական հնչյունափոխության կանոններին համապատասխան բառերը, հաղվադեպ բացառություններով (ընդ, ըստ), ունենում են լիաձայն աստիճանի դրսևորումներով շեշտակիր վանկեր, մինչդեռ արմատները հաճախ կարող են ներկայացված լինել միայն ոչ լիաձայն աստիճանի վանկերով, ընդ որում բավական թիվով դեպքերում նրանց լիաձայն աստիճանն ընդհանրապես չի վերականգնվում. հմմտ. գն-(ալ), ևր-(ել) և այլն:

Չորրորդ՝ սահմանային հատուկ աղդանշանի բացակայության սլայմաններում արմատի վերջին բաղաձայնը կարող է անցնել հաջորդ վանկին և առաջ բերել արմատի ու վանկի սահմանների շահմընկում, մինչդեռ բառի համար հայերենում այգպիսի անցումը բնորոշ չէ¹:

Հինգերորդ՝ բառի վանկերի հնարավոր թիվը տեսականորեն միշտ էլ գերազանցում է արմատի վանկերի հնարավոր թիվը. բոլոր դեպքերում էլ կարելի է ենթադրել արմատի վրա ածանցի կամ մի այլ արմատի հավելում, և արմատի ու բառի հարաբերությունը միշտ էլ ներառական չնույթի է:

4. ԱՐՄՍԱՍԱԻՄՔԻ ԿԱՂԱՊԱՐԸ

ա. Արմատանիմֆի տարրերը

Արմատահիմքը «մաքուր» արմատից ունի երկու կարգի տարբերություն: Առաջին՝ նա կարող է ստանալ այնպիսի լրացուցիչ տարրեր, որոնք, ի տարբերություն ածանցների, արմատին դործառական կամ իմաստային նոր արժեք չեն հաղորդում և լեզվաբանության մեջ հայտնի են անակաճնեռ անունով. ածականների առկայության դեպքում էլ արմատը շարունակում է մնալ արմատի սահմաններում: Երկրորդ՝ նա կարող է ենթարկվել լրացուցիչ այնպիսի փոփոխությունների կամ ստանալ այնպիսի լրացուցիչ տարրեր, որոնք հնարավոր են դարձնում նրա գործառությունը որպես ինքնուրույն բառ կամ բառի բաղադրիչ, այսինքն՝ որպես բառակազմական հիմք. առավելապես հնչաներդաշնակային արժեք ունեցող ձևահնչույթաբանական այդ փոփոխիչներն ու տարրերը կոչենք բառակազմական արմատանիմֆի կազմիչներ: Եթե մենք

¹ Որոշ լեզուներում, ինչպես, օրինակ, սանսկրիտում, բառերի սահմանները ավելի քիչ են որոշակի:

«մաքուր» հիմքը դիտենք որպես արմատահիմքի միջուկ և նշանակենք R-ով, իսկ ածականը և բառակազմական հիմքակազմիչը որպես առմիջակային տարրեր՝ a-ով (augmentum-ի սկզբնատարը) և t-ով (the ma-ի սկզբնատարը), ապա արմատահիմքի (R^t) կազմապարը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

$$R^t = R(a)(t):$$

Ածականները գերազանցապես բաղաձայններ են, բառակազմական հիմքակազմիչները՝ բաղաձայններ, ձայնավորներ, հնչյունափոխումներ:

բ. Անականներ

Հստ դիրքի ածականները կարող են լինել միջադրական և հետադրական:

Միջադրական ածականները հանդես են գալիս գերազանցապես բնաձայնական արմատների մեջ և նրանց սովորաբար սաստկական արժեք են հաղորդում. համառ. ր ածականը դժնգ-(ալ) (զնգ-(ալ)-ից), քրթխկ (քթխկ-ից), շրթխկ (շրթխկ-ից), լ ածականը՝ կլանչ-(ել) (կանչ(ել)-ից) արմատներում: Ածականով և առանց ածականի ձևերը հաճախ կարող են գործածվել միասին, որպես տարբերակված կրկնողներ՝ քրթխկ-քրթխկ, շրթխկ-շրթխկ: Որպես միջադրական ածականով ոչ բնաձայն արմատ կարելի է բերել քլնդ-(ել)-ը՝ բնդ-(ել)-ից:

Հետադրական ածականները կարող են հանդես գալ ինչպես ոչ բնաձայնական, այնպես էլ բնաձայնական արմատներում: Առաջին դեպքում նրանք գերազանցապես արխաիկ ու ոչ գործուն բնույթ ունեն և հանդիպում են պատրաստի կերպով ժառանգված որոշ բառերի մեջ (սովորաբար իմաստային հատուկ նրանգով)՝ իրենց հնությամբ նրբամիտ հասնելով մինչև հնդեվրոպական շրջանը: Որոշ դեպքերում ածականով արմատները հակադրվում են անաճական արմատներին՝ գաղ-ջ՝ գոլ-ի կողքին, ոլուր՝ ոլուր-ի կողքին, ուծկ-(ալ)՝ ուծ-(ալ)-ի կողքին, ֆերք-(ել), ֆերծ-(ել)՝ ֆեր-(ել)-ի կողքին և այլն. այլ դեպքերում նրանք կազմում են իրար հակադրվող շարքեր. համառ. լպիւրշ—լպիւրծ—լպրուտ-(ել): Ժամանակակից հայերենում առանձնապես հաճախադեպ են տ և կ ածականները, որոնք սովորաբար գալիս են ժողովրդախոսակցական լեզվից և բառարաններից. բեկ-տ-(ել)—բեկ-(ել), բզկ-տ-(ել)—բզկ, բզկ-բբ-զկ անել, լկռ-տ-(ել)—լկռ(ա)-նաչ, ձգ-տ-(ել)—ձգ-(ել), սահմոկ-տ-(ել)—սահմոկ-(ել), պխտ-կ-(ել)—զխտ-(վել), լխլխ-կ-(ալ)—լխլխ-(ալ), լալ-կ-(վել)—լալ «համր», ծեծ-կ-(ել)—ծեծ-(ել), շարչ-կ-(ել)—շար-

չաւր-(ել) և ալլն: Որպես աճականներ հանդիպում են նաև ալլ բաղա-
 ձայններ՝ ժայր-բ-(ել), նեղ-բ-(ել) (հմմտ. նղ-(ել)), մազլ-ց-(ել) (հմմտ.
 մագիլ), շլ-ղ-(իկ) (հմմտ. շիլ) և ալլն: Եթե աճականների թիվն անց-
 նում է մեկից, ապա դժվար է լինում որոշել դրանց և բուն ածանցների
 սահմանը, մասնավանդ որ երկբաղաձայն և եռաբաղաձայն աճական-
 ներն այս դեպքում արմատին հաղորդում են որոշ սաստկություն և կըրկ-
 նավորություն՝ մո-լտ-(ալ), մո-լնգ-(ալ), զնգ-բա-(ալ) և ալլն: Ինչպես
 վերևում տեսանք, որոշ աճականներ հանդես են գալիս կրկնավոր ար-
 մատների մեջ (հմմտ. շաւրչ-կ-(ել)) և այս դեպքում ուժեղացնում հիմ-
 քային իմաստը: Դժվար է որոշակի սահման անցկացնել աճականների
 և ածանցների միջև նաև ալլալիսի մասնիկների դեպքում, ինչպիսիք
 են, օրինակ, լ-ն և ո-ն, որոնք զրոկելով որոշ արմատների հետ՝ վերա-
 բերմունքային հակադիր երանգ են արտահայտում՝ լ-ի դեպքում մեղմա-
 կան և փաղաքշական, ո-ի դեպքում՝ կոշտական և արհամարհական.
 այս իմաստներն ի հայտ են գալիս հատկապես լիկ ածանցի հետ զու-
 դակցվելու դեպքում. հմմտ. մի կողմից՝ բկ-լ-իկ, քմբ-լ-իկ, կախ-լ-իկ,
 ֆալ-լ-իկ, կեռ-լ-իկ, հաստ-լ-իկ, նեղ-լ-իկ, շեկ-լ-իկ, շաղ-լ-իկ, ցած-լ-
 իկ և մյուս կողմից՝ հաստ-ո-իկ. իմաստային նման երանգներ առկա
 են նաև համապատասխան բայական հիմքերի մեջ՝ շանգ-լ-ել և շանգ-ո-
 ել (շտնկ-ռ-ել), նմ-լ-ել և նմ-ո-ել, ալլ և նկ-ո-ել, նոթ-ո-ել:

գ. Բառակազմական արմատնիմի կազմիչներ

Ինչպես նշվել է, բառակազմության մեջ հանդես եկող արմատական
 հիմքը (արմատահիմքը) միշտ չէ, որ համընկնում է արմատի հետ: Ար-
 մատի համեմատությամբ արմատահիմքը կարող է լինել, մասնավորա-
 չես, 1) հնչյունափոխված, 2) հավելատարրային, 3) հնչյունափոխված-հա-
 վելատարրային և 4) սղատարրային: Արմատի՝ այս կամ այն տիպի
 հիմք ունենալը կապված է այն բանի հետ, թե՞ 1) ի՞նչ վանկարար տարր
 ունի արմատի վերջավանկը. 2) ձայնավորով է վերջանում, թե՞ բա-
 ղաձայնով. 3) անկախորեն գործածվում է, թե՞ ոչ: Կանգ առնենք այս
 դեպքերի վրա ալլելի հանդամանորեն:

Ալլելորդ չհնք համարում նշել, որ արմատների և արմատական
 հիմքերի տարբերությունները որոշելի են ՀԼԿ կազմի կարգի եզրերով.

→՝ հավելական.

←՝ նվազական կամ սղական.

→—՝ անփոփոխ-նույնական.

←→՝ փոխարինական (հնչյունափոխական):

Հնչյունափոխված արմատահիմքը հաճախ կապված է շեշտի դիրքի հետ. շեշտակիր արմատավանկը լինում է լիաձայն, անշեշտակիրը կարող է լինել թուլացած: Այլ կերպ ասած՝ եթե արմատացանկում արմատը բերված է շեշտակիր-լիաձայն տեսքով, ապա բառակազմական արմատահիմքը կարող է լինել նաև անշեշտակիր-թուլացած տեսքով և ընդհակառակն: Սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ շեշտակիր-լիաձայն և անշեշտակիր-թուլացած արմատավանկերի հակադրությունն անցկացվում է ոչ բոլոր ձայնավորների և երկբարբառակերպների («յ կիսաձայն + ձայնավոր» կամ «ձայնավոր + կիսաձայն» կապակցությունների) դեպքում: Տարբերվում են այսպիսի հնչյունափոխությունների ընդհանուր կամ կանոնավոր և առանձին կամ անկանոն տիպեր:

Ընդհանուր կամ անկանոն տիպերն ընդգրկում են հետևյալ դեպքերը. 1) ամենավերին բարձրացման շեշտակիր ի և ու ձայնավորների համապատասխանում են անշեշտակիր ր կամ զրո՝ ի/(ր), ո՛/(ր). հմմտ. զի՛ր-զ(ր)ալա՛ն, երկի՛ր-երկրա՛յի՛ն և չո՛ւր-չ(ր)առա՛տ, ամո՛ւր-ամրակա՛զմ. 2) հին հայերենի է (=եյ), ոյ, եա երկբարբառներից եկող ե (e) ձայնավորին և ույ, յա երկբարբառակերպներին համապատասխանում են ի, ու, ե ձայնավորները. հմմտ. սն՛ւր (<սե՛ւր)—սիրալի՛ր, հո՛ւյս (<յոյս)—հուսադո՛ւղ, մատլա՛ն (<մատեա՛ն)—մատենագի՛ր: Շեշտակիր վանկերը և արմատները կոչենք լիաձայն (աստիճանի), ոչ շեշտակիրները՝ քուլացած (աստիճանի): Հարկավոր է նկատի ունենալ, որ 1) հին հայերենից եկող այս հնչյունափոխությունները ավելի հետևողականորեն հանդես են գալիս բառակազմության, քան հոլովման ժամանակ, 2) նորագույն մի շարք կազմությունների և փոխառությունների մեջ արմատական լիաձայն տիպերը մնում են անփոփոխ. համաձայն—համանիշային, բռնխիտ—բռնխիտային:

Վերևում մենք նկարագրեցինք այն դեպքերը, երբ լիաձայն արմատներին համապատասխանում են թուլացած արմատահիմքեր: Սակայն կան դեպքեր, երբ արմատների համար սովորական են թուլացած ձևերը, և լիաձայն հիմքեր կամ առանձին գործածված չեն հանդիպում, կամ հանդիպում են միայն շեշտակիր վերջնագիրքում՝ հազվադեպ գործածությամբ: Այդպիսի արմատները մեր ցանկում բերված են վերջից օժտված գծիկով. հմմտ. սն— (սն—ունդ), պատմ— ((-)պատում) և այլն:

Առանձին կամ անկանոն տիպերը սակավադեպ են: Այդպիսիք են, օրինակ, սովորաբար չհնչյունափոխվող ա, ո ձայնավորների հնչյունափոխության դեպքերը. այսպես, ֆաղաֆ արմատը սովորական անհնչյունափոխ բառակազմական հիմքաձևի հետ միասին (ֆաղաֆական) ունի նաև ֆաղֆ— հիմքաձևը (ֆաղֆենի). արմատ-ը բաղադրությունների մեջ հանդիպում է նաև արմտ— ձևով (արմտիֆ), պատատ-ը՝ բայարմատային

պատու- ձեռով՝ իմաստային կապի որոշ խզումով. ոսկոր, որկոր արմատ- ները բաղադրությունների մեջ հանդես են գալիս սովորաբար ոսկր-, որկր- ձևերով. օրոր-ը (հին կրկնավոր ձև) օրոր հիմքաձևի հետ միասին (օրոր-ել) ունի նաև օրբ- հիմքաձևը (օրբան): Մի շարք բառերում սովորական գրական ձևերի կողքին հանդես են գալիս բարբառային հնչյունափոխության ձևեր. այսպես, ալյուր արմատը սովորական ալյուր-ի հետ միասին ունի նաև ալբ- հիմքաձևը (հին ալիւր > բրբո. ալիւր կամ ալուր, բրեկդից, ի-ի կամ ու-ի սովորական սղումով՝ ալբ-աղաց). կլեպ-ը ունի կլալ- հիմքը կլալի բայի մեջ: Հաղվազեպ են հին հայերենի ե-ից եկող ե-ի հնչյունափոխության դեպքերը՝ մասամբ շեշտափոխության մը՝ դե — դիւլակա՛ն, մասամբ տառնց գրա՝ ածելի — ածիլել, քեկնա-ծու — քիկնավետ: Հաղվազեպ է նաև ի/վ հնչյունափոխությունը ո-ից առաջ գտնված դիրքում՝ բարի — բարվոմ:

Բացի ձայնավորների և երկբարբառակերպների հնչյունափոխությանից, կարող են լինել նաև բաղաձայնների, հատկապես ձայնորոշների հնչյունափոխության դեպքեր: Այսպես, —ո-ով վերջացող արմատների կրկնության դեպքում առաջին կրկնորդում ուն փոխարինում է բ-ով՝ բարբառ, գրգիռ և այլն: Բառն—(ալ) և դառն—(ալ) արմատահիմքերը կարող են ունենալ բարձ- և դարձ- հիմքային ձևերը: Դանդաղ և մառախուղ բառերը դանդաղուշ և մառախլապատ բառերում ենթարկվել են դ/լ հնչյունափոխության:

Հավելատարրային արմատահիմքերը լինում են մի քանի տեսակ:

Հայերենում ամենից ավելի տարածված հավելատարրային հիմքերը բնութագրվում են —ա- հոդակապի առկայությամբ, որ բաղադրությունների մեջ հանդես է գալիս որպես ոչ վերջնային բաղադրիչների (այսինքն՝ երկրադարիչ բառերի դեպքում՝ որպես առաջին բաղադրիչի, եռաբաղադրիչների դեպքում՝ որպես առաջին և երկրորդ բաղադրիչների) վերջահար տարր՝ մալբա—մաղաբ, լրա—գրա—վանառ: Որոշ վերջածանցների դեպքում ա-ն այնքան սերտորեն է կապում երկու բաղադրիչները, որ վերջածանցները գրեթե չեն բնկավում առանց հոդակապի: Այս դեպքերում, բնականաբար, դժվար է խոսել հոդակապի՝ արմատահիմքի հավելատարր լինելու մասին: Հայտնի է, որ ա-ն նախադրային շրջանում հանդես է եկել որպես բառի ողջ հոլովումը բնութագրող հիմքատարր և ուղղականում նրա անկումից հետո բնկավել որպես յուրատեսակ հոդակապ ու տարածվել նաև ոչ ա-ով հիմքերի վրա. հմմտ. մեծա—գործ (մեծա=հուն. μεγ-) և Զորովոր— Զորավոր:

Երկրորդ տիպի հավելատարրը հին հայերենի ձայնորդահանգ հիմքերը բնութագրող ն-ն է, որ ընկել է վերջնային դիրքում և պահպանվել ոչ վերջնայինում, այդ թվում՝ որպես բաղադրությունների ոչ վերջ-

նախին բաղադրիչ հանդես եկող բառերի վերջում՝ երբեմն նույնիսկ թեք հոլովների կազմիչ ա ձայնավորի հետ միասին. հմմտ. մի կողմից՝ հին հայ. ակն «աղբյուրի ակ» > ժամ. հայ. ակ և հին հայ. ակնաղբիւր > ժամ. հայ. ակնաղբյուր, մյուս կողմից՝ ակն «թանկագին քար» > ժամ. հայ. ակ և հին հայ. > ժամ. հայ. ակնակիտ: Դեռ ավելին. նույն համաբանությամբ ժամանակակից հայերենում և բարբառներում կազմվել են նոր բառեր, ինչպես զառ (<հին հայ. զառն) և զառնարած:

Երկրորդ տիպի հավելատարր ունեցող շատ արմատներ բաղադրության մեջ ստանում են նաև առաջին տիպի հոլովատարր՝ ա հոդակապը, այսինքն՝ հանդես գալիս որպես կրկնահավելատարրային հիմքեր՝ ակնա-վանառ:

Երրորդ տիպի հավելատարրային հիմքերը ներկայացնում են հին կամ միջին հայերենի համապատասխան անվանական հիմքերը՝ ներանց բնորոշ հիմքակազմիչ և նույնիսկ հոլովական տարրերով, ընդ որում սրանց էլ, ինչպես հին -ն-ով հիմքերի դեպքում, կարող է միանալ ա հոդակապը. հին Է-ով և դ-ով կանոնավոր հոլովման հիմքերի դեպքում հավելատարրը կարող է լինել այդ հնչյուններին նախորդող ե-ն (աստղ—աստեղագարդ՝ աստղագարդ-ի կողքին, կայսր—կայսերական), փոյր (<հին հայ. փոյր) և կին բառերի դեպքում՝ ոչ տարրը (փռչա-կան, կնոջական), ցուղ (<հին հայ. գիղ) բառի դեպքում՝ -շ-ն (գեղ-ջուկ), այր «տղամարդ» բառի դեպքում՝ ն-ն (առնական) և այլն. վերջին տիպի, այսպես կոչված, անկանոն հիմքերի դեպքում տեղի են ունենում նաև զանազան կարգի ոչ սովորական հնչյունափոխություններ՝ փոյր—փռչ-, այր—առն-: Հաղվադես է հին հոգնակիի ձևով հիմքը, ինչպես բարցաց-ա-կամ բառի մեջ: Հանդիպում են հին հայցականի ձև ունեցող -ս-ով հիմքեր՝ մեղսագործ, բանսարկու և այլն:

Չորրորդ տիպի հավելատարրային հիմքերը համընկնում են հին հայերենի բայերի կատարյալ կոչված հիմքերի հետ և հանդիպում սովորաբար առանձին չգործածվող արմատների դեպքում: Ի տարբերություն հավելատարրային այլ հիմքերի՝ այս հիմքերը հանդես են գալիս գերադանցապես վերջնային դիրքում, թեև հաղվադես կարող են լինել նաև ոչ վերջնային դիրքում: Որպես հավելատարրեր հանդես են գալիս կատարյալի -աց, -(յ)աց, -ույց տարրերը, անկանոն բայերի դեպքում՝ նաև այլ տարրեր. հմմտ. հեռագնաց, երկարակյաց, ինֆնուսույց, այլև վերամբարձ (բառնալ բայից), մեծագիր (ղնել բայից) և այլն:

Եթե նկատի առնենք բայական և դերբայական ձևերի բաղադրականությունը, ապա հիմքային հատուկ ձևեր պետք է համարել նաև -ան-,

—և—, —շ— մասնիկներով կազմությունները, որոնք սովորաբար քննվում են որպես թեքական ձևեր:

Վերջապես հինգերորդ տիպի հավելատարրային հիմքեր ունեն և և ո ձայնավորներով վերջացողները, որոնք այլ ձայնավորներից առաջ կարող են ստանալ չ տարրը՝ առկայ-ուրյուն, երեկոյ-անալ և այլն:

Որոշ վերապահությամբ հավելատարրային կարելի է համարել ցածր- հիմքը, որի ցած- տարբերակը հաղվադեպ է, և որի դիմաց ան- կախորեն գործածվում են և՛ ցած, և՛ ցածր արմատական ձևերը:

Հավելատարրային պետք է համարել նաև այն բնաձայնական արմատների սաստկական ձևերը, որոնք կրկնվելիս կարող են հանդի- պել ոչ կրկնավոր բաղաձայնով՝ զոռ- և զոզո-(ալ):

Հնչյունափոխված-հավելատարրային հիմք ունեն ու-ով վերջացող շատ արմատներ, որոնք, օժտվելով ա հոդակապով, ունենում են -վա- ու վերջացող հիմքեր՝ լեզու-լեզվաբան, կատու-կատվասեւ և այլն: Երդում-երդվել ձևերի մեջ առկա ու/վ հնչյունափոխությունն այլևս չի գիտակցվում, որովհետև ու-ն դիտվում է որպես ում-ի, վ-ն՝ որպես կրավորականի տարր:

Այս տիպի հիմք ունի նաև բարի արմատը բարյացակամ բառի մեջ՝ ի>յ հնչյունափոխությամբ, այց հին հոլովական վերջավորությամբ ու ա հոդակապով: Ավելի հաճախադեպ են ի-ով վերջացող արմատների այնպիսի հիմքերը, որոնց դեպքում ի-ն միանալով հաջորդ ա-ի հետ առկա է նախ յա (<եա), ապա սրա սովորական շեշտական հնչյու- նափոխությամբ՝ ե՝ բարի-բարեգործ (յա>ե անցման համար հմտ. մատյան-մատենագիր):

Սղատարրային են, եթե այս անվան տակ չհասկանանք ու-ի և ի-ի շեշտափոխական հնչյունափոխության հետ կապված սղման դեպքերը, ի-ով վերջացող այն արմատներից կազմված հիմքերը, որոնց մեջ ի-ն ընկնում է՝ քնամի-քնամուրյուն: Այս կարգի հիմքերը մասամբ սղա- տարրա-հավելատարրային են, եթե ի-ի անկումն ուղեկցվում է ա հոդա- կապի հավելումով: Նման վիճակ առկա է նաև ի-ա-ով վերջացող երկ- րանունների դեպքում, որոնց այդ երկու ձայնավորները սղվում են՝ Խոլանիա-խոլանաբնակ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ -ի-ով վերջացող արմատ- ների դեպքում հնարավոր է բառակազմական հիմքերի մեջ ի-ի չորս տիպի փոփոխություն՝ 1) ի>յ, ինչպես բարյացակամ բառում (բարի- ից), 2) ի>զրո, ինչպես քնամական բառում (քնամի-ից), 3) ի>ի, ինչպես ամուրիական բառում (ամուրի-ից) և 4) ի+ա>(յա>)ե, ինչպես բարեգործ (բարի-ից), այգեգործ (այգի-ից) բառերում:

Նշենք, որ որոշ բառեր ի-ով չեն վերջանում, բայց համարանու-

թյամբ ա հոգեկապի փոխարեն ստանում են ե տարրը՝ հաշվետաւ, ամսեկան (փոխանակ *հաշվատաւ-ի, ամսական-ի):

Սղատարրային են նաև արհ-ը արհունի բառում (արհա արմատական ձևից) և բալ-ը բալիկ բառում (բալա արմատական ձևից):

5. ԱՐՄԱՏՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ (ԻՄԱՍՏԱՅԻՆ) ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հասնողհանուր լեզվաբանական կաղապարի քննության ժամանակ մենք տարբերեցինք բուն գոյաբանական-իմացաբանական կարգերը, այսպես կոչված, լեզվապարզամտիկ կարգերից: Առաջին դեպքում քննելով են իմաստները՝ անկախ նրանց իրադրա-կոնտեքստային և լեզվաարտահայտական արժեքից: Այլ կերպ ասած՝ նախ բացառվում են իրադրական (դերանվանա-ցուցական) իմաստները և երկրորդ՝ նկատի չեն առնվում իմաստների բառային և բառազուգորդային զրսեւորումների առանձնահատկությունները: Մասնավորելով մեր խոսքը «ղուտ» իմաստաբանական քննության նկատմամբ՝ մենք այս դեպքում պետք է փաստորեն բացատենք նրանց գործառական արժեքները՝ խոսքիմասային գործածությունները: Եվ իսկապես. բառիմաստների այդպիսի քննությունը պետք է նկատի ունենա, որ միևնույն իմաստները կարող են արտահայտվել միանգամայն տարբեր խոսքի մասերով և լեզվական կախման տարբեր (լրացյալի, լրացման, ենթալրացման) տիպերով: Ինչպես կտեսնենք բառակազմության բաժնում, լեզվում գոյություն ունեն հատուկ ածանցներ (այդ թվում՝ դրո ածանց), որոնք կարող են մի խոսքի մասից մի այլ խոսքի մաս կերտել առանց բուն իմաստի փոփոխության. հմտ. քնկեր—քնկերական—քնկերաբաւ, մեծ—մեծուքյուն—մեծապես և այլն: Սակայն լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում առկա արմատական ձևերը կարող են լինել նախկին բաղադրյալ ձևերի պարզեցված զրսեւորումներ, այլ լեզուներից փոխառված բաղադրյալ կազմություններ, որոնք դժվարացնում են բուն իմաստների վերլուծությունն ու իմաստային տարրական բջիջներին հասնելը՝ մի կողմից, և բառերի բուն իմաստային ու գործառական արժեքների տարբերակումը՝ մյուս կողմից: Սրան միանում են նաև երկու այլ հանգամանք՝ արմատային համանիշության առկայությունը և բառակազմության մեջ արմատների խոսքիմասային արժեքների խաղացած դերը: Քննել հայերենի արմատների «ղուտ» իմաստային կողմը՝ նշանակում է թվարկել մեր համընդհանուր լեզվաբանական կաղապարի բոլոր կարգերի բոլոր եզրերը և տալ դրանց հնարավոր բոլոր գոյգորդումները հայերենում: Այս տեսակետից մենք նպատակահար-

մար ենք համարում ժամանակակից հայերենի իմաստային քննությունը կատարել ըստ նրանց գործառական (խոսքիմասային) հիմնական արժեքների՝ համընդհանուր կարգերի կոնկրետ դրսևորումներն ավելի լավ պարզելու և բառակազմական քննության համապատասխան լեզվաբանական հիմք ստեղծելու համար:

Բառերի իմաստային վերլուծությունը և համադրությունը ենթադրում են որոշ սկզբնական անվերլուծելի տարրեր, որոնց հանդեպում են իմաստները, և որոնցից համադրվում են բաղադրյալ իմաստներ: Եթե օգտվենք ժամանակակից իմաստաբանության տերմիններից և սևմ(ա)-ն հայերեն թարգմանենք իմակ և սևմսմ(ա)-ն՝ իմույթ, ապա հարկ կլինի դրանք համապատասխանության մեջ դնել համընդհանուր լեզվաբանական տեսության հասկացությունների և տերմինների հետ: Այս դեպքում մենք առաջնորդվում ենք հետևյալ ընդհանուր սկզբունքներով: Նախ՝ իմակի և իմույթի միջև հաստատում ենք նույն հարաբերությունը, ինչ հնչյունի (որպես մարդկային լեզվի հնչական տարրի և ոչ թե անհատական խոսքի դրսևորման) և հնչույթի (որպես տվյալ լեզվում տարբերակվող հնչյունի) միջև, այսինքն՝ իմակը համարում ենք իմաստի ընդհանուր տարր, որ առանձին լեզվի համակարգում հանդես է գալիս որպես իմույթ և հակադրվում այլ իմույթների: Երկրորդ՝ իմակն ընդհանրապես և իմույթը այս կամ այն լեզվում ոչ այլ ինչ է, եթե ոչ համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ առանձնացվող եզրի՝ բովանդակության պլանում հանդես եկող գոյականացված դրսևորումը:

Վերևում ասվածների հիման վրա կարելի է տարբերել բառերի պարզ կամ մենիմույթ և բաղադրյալ կամ բազմիմույթ իմաստներ: Պարզ կամ մենիմույթ է այն իմաստը, որ պարունակում է ՀԼԿ-ի որևէ կարգի (կատեգորիայի) որևէ եզրի իմաստ. բաղադրյալ կամ բազմիմույթ է այն իմաստը, որ պարունակում է տարբեր կարգերի պատկանող մեկից ավելի եզրերի իմաստներ: Վերլուծել բառային իմաստները՝ նշանակում է բացահայտել նրանց պարունակած իմույթները կամ, որ նույնն է, նրանց հատուկ եզրային իմաստները: Լեզվի բառապաշարի, այդ թվում՝ արմատներին հատուկ բոլոր իմաստների բացահայտումը իմաստային բառարանի գործն է: Խոսքիմասային տարբեր արժեք ունեցող արմատներին՝ ստորև տրվող իմաստային վերլուծության ժամանակ մենք հանդամանորեն կանգ կառնենք հատկապես հայերենի մեհիմույթ և երկիմույթ արմատական ձևերի վրա՝ ավելի շատ իմույթներ պարունակող բառերի մասին տալով միայն ընդհանուր տեղեկություններ:

Ընդհանուր առմամբ նշենք, որ, այսպես կոչված, սպասարկու բառերի (այդ թվում՝ մանավանդ սրանց արմատական ձևերի) մեջ գերա-

կշռում են մենիմուլթ և երկիմուլթ արիպերը, լիանշանաւէնէրի մեջ՝ բաղմիմուլթնէրը: Որքան շատ իմուլթներ է պարունակում բառը, այնքան կոնկրետ է նրա իմաստը. ամենաընդհանուր և վերացական իմաստները մենիմուլթ բառերի իմաստներն են: Ածանցական իմաստները, բնականաբար, նույնպէս գերազանցապէս մենիմուլթ և երկիմուլթ են:

Համառոտակի կանգ առնենք տարբեր խոսքի մասերի իմաստային վերլուծության այն սկզբունքների վրա, որոնցով մենք առաջնորդվելու ենք ստորև կատարվող վերլուծության ժամանակ:

1) Քննությունից հանվում են այնպիսի խոսքի մասեր, ինչպիսիք են ձայնարկութունը և վերաբերականը, որոնք կարելի է դիտել որպէս համապատասխան նախադասությունների փոխկաղապարային (փոխակերպական) դրսևորումներ: Վերլուծել ձայնարկությունների իմաստները՝ նշանակում է վերլուծել համապատասխան զգացական և կամային բայերի իմաստները՝ ցավ, վիշտ, դարմանք, վախ, զղջում և հորդոր, հրաման և այլն. այսինքն՝ ախ←ես ցավ եմ զգում, վախ←ես զաւմանում եմ, օխա՛յ←ինձ համար հաճելի է, ես հաճույ՛լ եմ զգում, քու՛ն←ես զգլում եմ, է՛յ←յսի՛ր և այլն: Նույն ձևով վերաբերականների իմաստները գերազանցապէս իմացական բնույթի են և արտահայտում են խոսողի իմացության, զնահատման և վերաբերմունքի տարբեր աստիճանները՝ իհարկե←ես համոզված եմ, (որ), քեհւ←ես կասկածում եմ, (որ), անհրաժեշտաբար←անհրաժեշտ է, (որ) և այլն: Ընդհանուր առմամբ նշենք, որ այս դեպքերում մենք գործ ունենք նշանային պատճառականության տարբեր դրսևորումների հետ՝ սրանց համապատասխան բնութագրերով հանդերձ: Դրանց վերլուծությունը կտրվի բայերի քննության մեջ:

2) Ամեն մի գոյականական իմաստ վերջիվերջո կարելի է հանշէցնել հատկանիշային բառերի՝ ածականական և բայահիմքային իմաստների, դիտել որպէս ածականների և բայերի փոխկաղապարման արդյունք, այսինքն՝ բոլոր գոյականական իմաստները վերջին հաշվով հանգում են վերջիններիս իմաստներին: Եվ իրոք. անվանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ առարկայի հատկանիշի առանձնացում որպէս անվանման հիմք. անվանել որեւէ առարկա՝ նշանակում է առանձնացնել նրա որեւէ հատկանիշ՝ ֆիզիկական բնույթի (կազմի, թվի, կախման, կարգի, ձևի, շափի, ուղղության, տեղի) կամ հատկության, վիճակի ու գործառության (համեմատության, հաճախանության, պատճառայնության և այլն), այսինքն՝ Ըստ այն բնութագրերի, որոնք նշվում են ՀԼԿ-ի կարգերի ու եզրերի մեջ: Այս բոլոր դեպքերում հնարավոր են անվանման միջնորդված օղակներ, որոնք ինքնին ենթակա են վերլուծության: Բացահայտել գոյականական իմաստների հիմքում ընկած հատկանիշ-

ները՝ նշանակում է կատարել ստուգարանական վերլուծություն, որն էլ ոչ բոլոր դեպքերում է հասցնում համապատասխան արդյունքների. մի կողմից՝ ոչ բոլոր բնիկ բառերի սկզբնական իմաստներն են հայտնի, մյուս կողմից՝ կան փոխառյալ բառեր, որոնց իմաստային-ստուգարանական վերլուծությունը դուրս է տվյալ լեզվի մասնագետի ձեռնհասությունից:

3) Եթե տարբերներ հատկանիշային և հարաբերային իմաստներ, ապա կարելի է ասել, որ բուն հատկանիշային իմաստները արտահայտվում են ածականների ու բայահիմքերի, ենթահատկանիշային իմաստները՝ մակբայների միջոցով, իսկ բուն հարաբերային իմաստներն արտահայտվում են առդիրների (կապերի), ենթահարաբերային իմաստները՝ շաղկապների միջոցով. սակայն հարկավոր է նկատի ունենալ, որ նախ՝ ածականները և բայահիմքերը, մասնավորապես վերջիններս, արտահայտում են նաև հարաբերություններ (այսպես կոչված, խնդրառու ածականների և բայերի դեպքում), այսինքն՝ իմաստապես հաճախ հարաբերակից են կապերին. այստեղից հիմա, օրինակ, համապատասխան բառի դործածությունը որպես ածական, բայահիմք և կապական բառ. երկրորդ՝ բայական դիմավոր ձևերի փոխկապակցումամբ շաղկապային իմաստները կարող են հանդես գալ առդիրների (կապերի) որոշ տիպերի միջոցով, ընդ որում որոշ դեպքերում միևնույն բառերը կարող են լինել երկգործառույթ. հիմա, մի կողմից՝ երբ զա—գալու դեպքում և մյուս կողմից՝ մինչև տուն—մինչև կգար: Ընդհանուր առմամբ առաջնային ածականները և բայահիմքերը կապերի հետ միասին արտահայտում են գոյորոշ կամ հիմնական կարգերի (կազմ, կախում և այլն), առաջնային մակբայները շաղկապների հետ միասին՝ առգոյորոշ և հատկապես ընթացային իմաստներ (համեմատություն, հաճախայնություն, պատճառայնություն և այլն): Եթե մենք ածականական, բայահիմքային և կապային իմաստներին միացնենք գոյականական ածանցների և քերականական կարգերի (սեռ, թիվ, հոլով) իմաստները, ապա կունենանք իմաստների այն շրջանակը, որոնք ներկայացված են ՀԼԿ-ի՝ հիմնական առարկաները որոշող՝ գոյորոշ կամ ատրիբուտիվ կարգերի միջոցով: Այս նույն ձևով, եթե մենք մակբայական և շաղկապային իմաստներին միացնենք տծականական և բայական ածանցների ու քերականական կարգերի իմաստները, ապա կունենանք իմաստների այն շրջանակը, որոնք ներկայացված են ՀԼԿ-ի երկրորդային (առգոյորոշ կամ հատկանշաբանացային՝ ենթատրիբուտիվ) կարգերի միջոցով: Վերջապես, եթե այս երկու տիպի կարգերի դեպքում նկատի առնենք նաև նշանայնությունամբ, իրադրայնությունամբ և լեզվաարտահայտությունամբ բնութագրվող իմաստները, ապա կունենանք առանձնացվող

իմաստների սպառիչ շրջանակը և՛ հատկանիշների, և՛ հարաբերությունների համար:

4) Մենք նշել ենք, որ նախադասության հիմքում ընկած է որևէ հարաբերություն: Սակայն ամեն մի կոնկրետ դեպքում խոսողի ուշադրության կենտրոնում հարաբերության մի կողմն է (ենթական՝ սուբյեկտը), որի համար մյուս էողմը հանդես է գալիս որպես հատկանշող (ստորոգյալ՝ պրեդիկատ): Ենթակայի և ստորոգյալի միջև տեսնելով ֆունկցիոնալ հարաբերություն՝ $x = \bar{v}(x)$, որտեղ x -ի բովանդակությունը սպառվում է x -ի բոլոր արժեքների թվարկմամբ, դժվար չէ հասկանալ, որ ենթակայի բովանդակությունը կարելի է ստանալ աջակողմյան՝ ստորոգյալի մասի, փոխկապարտմամբ (փոխակերպմամբ): Եթե մենք ունենանք այլ կողմում մի հենակետային միավոր որպես յուրատեսակ ստորոգելի և թվարկենք ՀՀԿ-ի բոլոր կարգերը իրենց եզրերով որպես նրա լրացում, ապա ձախակողմյան մասի (ենթակայի) բովանդակությունը կարողաճացտվի ստորոգելիով + համադատասխան կարգի (կարգերի) եզրի (եզրերի) իմաստ: Բուն տեղեկությունը, այսպիսով, տրվում է աջակողմյան մասով: Սրանով էլ բացատրվում է այն փաստը, որ ենթական կարող է չարտաճացտվել, մինչդեռ աջակողմյան (ստորոգյալային) մասի բառային արտաճացտությունը պարտադիր է: Գոյականական իմաստի բացահայտման դեպքում որպես ենթակա հանդես է գալիս որևէ գոյական (իր լրացումներով հանդերձ՝ որպես գոյականական շարույթ)՝ ամենաբնորոշանուր ձևով՝ գոյակ (առաջիկա) բառը, խիստ ածականական և բայական իմաստների դեպքում՝ դրանց գոյականացված ձևը, ամենաբնորոշանուր ձևով՝ հատկություն բառը (հմտ. մարդը մահկանացու է = մահկանացու գոյակ է և սպիտակը քանձը է = քանձը հատկությունն ունի): Սա նշանակում է, որ մեզ համար էական է ինչպես աջակողմյան կադասարի անդամների (բաղադրիչների) թվարկումը, այնպես էլ նրանց փոխկադասարումը ձախակողմյան մասի: Նախադասությունը մեկնարանելով որպես մտածողական փաստ, դժվար չէ եզրակացնել, որ ենթակայի դեպքում մենք ունենք մտածողական ակտի փոխկադասարված (փոխակերպված) նստվածք որպես գիտակցության փաստ: Վերջինս դարձյալ մտնում է նախադասության մեջ և հիմք տալիս մի այլ ենթակայի բովանդակության բացահայտման համար: Այսպիսով, գիտակցությունը և մտածողությունը, սրանց կապված լեզվական կադասարները փոխկադասացված են և միացված փոխհաջորդական ակտերով. գիտակցությունը հիմք է մտածողության, մտածողությունը՝ գիտակցության համար. գոյականական բառակադակցությունը և նախադասությունը կապված են փոխկադասարման ակտով:

5) ՀՀԿ-ն հնարավորություն է տալիս ոչ միայն վերլուծել և համադ-

րել իմաստները համաժամանակյա քննության դեպքում, այլև բացահայտել իմաստային դանդաղան անցումների հիմքերը:

Ամենից առաջ՝ այն հանգամանքը, որ բերականական կարգերը տրվում են ոչ թե պատահական ցուցակով, այլ համակարգությամբ, հարավորություն է բաշխել բացահայտելու և հասկանալու բառիմաստների անցման հիմքերը. այսպես, գոյություն կամ հիմնական կարգերի նկատմամբ առգոյություն կամ հատկաբնականացված և նշանային կարգերը յուրատեսակ ածանցական հարաբերության մեջ են, կարող են ածանցվել նրանցից, ուստի և հատկանալի են դարձնում առարկայական (գոյություն) իմաստներից անցումը ոչ առարկայական (առգոյություն) իմաստներին. հմտ. տեղային իմաստից անցումը ժամանակային (սեղանի առաջ (առջև) — նախից առաջ) և ոչ նշանային («ֆիզիկական») իմաստներից նշանայիններին (հմտ. բուն-ել — բնութս-ել, նուրբ բել — նուրբ զգայություն):

Երկրորդ՝ փոխկադապրման գաղափարը իր տարրեր զրոհորումներով ցույց է տալիս բառերի զործառական և իմաստային անցումների հիմքերը, մասնավորապես հարաբերիչի միջոցով հարաբերության կողմերի արտահայտման և բառակապակցության մեջ դրանց զործառական անցման փաստերը. հմտ. գր-(ել) → գրալ/գրիչ/գրվածք:

Երրորդ՝ կիրառելով փոփոխության կարգի եղբիք ՀԼԿ-ի նկատմամբ՝ մենք կարող ենք ցույց տալ իմաստային անցումների դինամիկան՝ ոչ միայն կարգային, այլև կարգանկարային անցումները:

6) Հետագա քննության մեջ համապատասխան խոսքի մասերի ցանկերից մենք բացառելու ենք այն նորագույն փոխառությունները, որոնք դերագանցապես նեղ տերմինային արժեք ունեն (բաղմիմայի են) և կարող են բացատրվել հայերեն բառերի համապատասխան իմաստներով:

6. ԲԱՅԱՐՄԱՏՆԵՐԻ ԻՄԱՍՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Բայարմատների առանձնացման սկզբունքներ

Հայոց լեզվի բայերի ընդհանուր ածարկական իմաստային դասակարգում չի կատարվել: Միս հայտնի իմաստային դասակարգումները կամ ելնում են դերագանցապես բերականական իմաստներից, կամ բնագրկում են բայերի իմաստային առանձին խմբեր՝ ասացական, շարժման, զգայական և այլն:

Ինչպես այլ դեպքերում, այնպես էլ այս դեպքում իմաստային վերլուծության համար հարկավոր է ունենալ արմատական բայերի մի ցանկ

և պարզել դրանց փոխհարաբերությունը այլ խոսքի մասերի հետ: Հայերենի արմատական բայերի՝ հավելվածում տրված ցանկը կազմվել է երկու համապատասխան ցանկերի հիման վրա: Դրանցից մեկը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից» մեր հանած այն արմատների ցանկն է, որոնք գործածվում են արդի արևելահայ գրական լեզվում. այդ ցանկը չի հրատարակված: Երկրորդը Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքին [Բարսեղյան, 1953] կցված՝ բայերի ընդհանուր ցանկն է, որի համար հիմք է հանդիսացել Ս. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանը» [Մալխասյան, 1—4, 1944—1945]: Մեր կազմած ցանկը լրացվել է Հ. Բարսեղյանի ցանկից հանված արմատական բայերով, որոնք գերադասապես խոսակցական-բարբառային բնույթի են և գործածություն ունեն մեր դրականության մեջ: Ստացված ցանկն ստուգված է է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանով» [Աղայան, 1976], որը հիմք է հանդիսացել նաև բայերի առաջնային և երկրորդային իմաստները տարբերակելու համար: Ցանկի մեջ մտած բայերի ընդհանուր թիվը 1185 է:

Ցանկը կազմված է հետևյալ սկզբունքներով.

1. Նրա մեջ մտել են այն բոլոր բայերը, որոնց վերջավորություններին և հիմքակազմ տարրերին (—ան—, —եմ—, —մ—, —չ—, —աց—, —ւց—) նախորդող մասերը արդի խոսողների կողմից գիտակցվում են որպես անվերլուծելի (արմատական), թեև իրականում նրանք կարող են պատմականորեն (ստուգաբանորեն) վերլուծելի լինել. հմմտ. արգանատ—ել (արգ «փոր, աղիք»+հատ—ել), բամբաս—ել (բամ «ասում հմ»+բաս «ասում հս»), մխիբաբել (մխ' խիբար) և այլն: Կրկնավորները բերում են միայն այն դեպքում, երբ համապատասխան ոչ կրկնավորները չլիկան կամ իմաստով ու ձևով տարբերվում են. հմմտ. աղաղ—ել (աղ—ից), արար—ել (հմմտ. անել<առ—նել), արծարծ—ել, արհամարհ—ել և այլն: Այդ նույն սկզբունքն է կիրառվել —ուց—ով (ագուց—ել, գեկուց—ել և այլն), —որ—ով (բրորել, գլոր—ել և այլն) և այլ բայերի նկատմամբ:

2. Կրավորական ձևերը տրվում են այն դեպքում, երբ համապատասխան առանց վ—ի ձևերը կամ չկան, կամ կան, բայց իմաստային տարբերություն չունեն. վերջին դեպքում վ—ն դրվում է փակագծերի մեջ. հմմտ. բնակվել, հարձակվել, զմայլ(վ)ել, հոծար(վ)ել և այլն:

3. Բայերի քերականական ու հնչյունական տարբերակների և կրկնակ ձևերի առկայության դեպքում կամ հավելական մասերն առնվում են փակագծերի մեջ, ինչպես բո(ր)բոբալ, խա(ր)շել և այլն, կամ երկու տարբերակներն էլ տրվում են թեք գծով (/) անջատված, ինչպես, բառնալ/բարձել, ընթեռնել/ընթերցել և այլն, կամ ընտրվում է տարբե-

բակներէց միայն մեկը՝ գրական լեզվում ավելի տարածվածը (մանավանդ եթե տարբերությունները բառակազմական արժեք չունեն)։

4. Հնչյունափոխված հիմքային ձևերի առկայության դեպքում փակագծերում տրվում են հնչյունափոխված ձևերը, մանավանդ եթե դրանք կարող են հանդիպել որպես բաղադրությունների վերջին բաղադրիչ՝ շեշտի տակ։

5. Համեմատաբար քիչ գործածական և համանուն բայերի իմաստները համառոտակի բացատրվում են։

Արմատական բայերի ցանկի համեմատությունը այլ իոսքի մասերի համադասարան ցանկերի հետ ցույց է տալիս հետևյալը.

1. շուրջ երեք հարյուր բայարմատներ, հնչյունափոխված ձևով կամ նույնությամբ գործածվում են նաև որպես բայանուն-գոյականներ, և դրանց խոսքիմասային տարբերակումը որոշ պայմանականություն ունի։ Ըստ գործառական արժեքի գերակշռության այդ բայարմատները գրված են մասամբ միայն բայերի կամ միայն գոյականների, մասամբ էլ թե՛ բայերի և թե՛ գոյականների ցանկերում. աշտպես, աղեսւ(ել), աղմկ(ել) (աղմուկ), ան(ել) և այլն գրված են միայն բայերի ցանկում, ամբողջ(ել), աղաչակ(ել), անըչ(ել) (անուրջ) և այլն՝ միայն գոյականների, գործ(ել), գր(ալ) (գրութ), դադար(ել) և այլն՝ թե՛ բայերի և թե՛ գոյականների ցանկերում։ Տաբերակման միանշանակ ձևական չափանիշներ դժվար է նշել [Աբրահամյան Ա., 1962, 70—119]։ Եթե նշված բայարմատներին և գոյականներին միացնենք երկու հարյուրից ավելի այն ընդհանուր բայարմատներն ու գոյականները, որոնք տարբերվում են բայական —ան(ալ) ածանցի առկայությամբ ու բացակայությամբ, կամ իմաստային տարբերություն ունեն (գոյականներին հատուկ են ազելի թանձրացական իմաստներ. հմմտ. ազդել և ազդ, գրավել և գրավ, քարգմանել և քարգման և այլն), ապա սարգ կլինի գոյականական և բայական արմատների մի զգալի մասի տարբերակման ողջ պայմանականությունը։

2. Բայական և ածականական ընդհանուր արմատները թվով ավելի պակաս են՝ մեկուկես հարյուրյակից փոքր-ինչ ավելի, բայց այս դեպքում էլ հարկավոր է նկատի առնել հետևյալը. նախ՝ իմաստափոխություն ավելի սակավադեպ է (հմմտ. խաճարհ-ել, ծածկ-ել, սքր-ել, վայել-ել և այլն). երկրորդ՝ ընդհանուր արմատների ցանկի մեջ հաշվի չեն առնվում —ան(ալ) ածանցով բայաձևերը, որոնք տեսականորեն կարող են կազմվել բոլոր մնացած ածականներից (մեծանալ, փառքամանալ և այլն), մասամբ էլ ղրղաձևություններ ստեղծել մյուսների համեմատությամբ (բարակ-ել և բարակ-անալ, դեղնել և դեղն-անալ, երկար-ել և երկար-անալ և այլն). երրորդ՝ արմատական ածականները

քանակով շատ ավելի պակաս են արմատական գոյականներից: Որպես բուն բայաճիմքերի և բուն ածականների տարբերակման միջոց կարելի է նշել ան- ժխտականի գործածությունը. բուն ածականները սովորաբար չեն գործածվում ան-ի հետ, մինչդեռ բայաճիմքերը գործածվում են:

3. Արմատական որոշ բայաճիմքեր զուգահեռներ ունեն նաև թվական անունների, մակբայների և առդիրների (կապերի) մեջ: Թվականների դեպքում առկա են միայն -ան(ալ)-ով զուգահեռներ՝ մի-անալ, երկու-անալ և այլն: Մակբայների դեպքում կան ինչպես -ան(ալ)-ով, այնպես էլ ալ կարգի (-ել-ով) համընկումներ. հմմտ. խիթ-ել (խեր), կանխ-ել (կանուխ), կրկն-ել (կրկին), հաճախ-ել (իմաստափոխություն՝ «հաճախ այցելել»): հմմտ. հանախ-անալ), շրջ-ել (շուրջ), ուղղ-ել (ուղիղ): Քիչ չեն զուգադիպումները առդիրների հետ, մասնավորապես որ որոշ առդիրներ նաև ածականական արժեք ունեն. անց-ն-ել—անց, դիմ-ել—դիմ, զատ-ել—զատ, կց-ել—կից, համար-ել—համար (համար գոյականից՝ իմաստափոխություն՝ համար), նման-վ-ել և նման, շրջ-ել և շուրջ, չափ-ել և չափ. բավական շատ են ոչ արմատական բայաճիմքերի և առդիրների (սովորաբար նաև ածականների) համընկումները՝ համա-ծայն-ել, համեմատ-ել, փոխանակ-ել, փոխաբեր-ել (փոխաբեր) և այլն. այստեղ չենք խոսում այն առդիրների մասին, որոնք ներկայացնում են բայական քարացած ձևեր՝ շնայած, կապված և այլն:

Այս բոլորի հիման վրա կարելի է անել այն հետաքրքրական եզրակացությունը, որ բայը,—այն բայը, որ շատերի կողմից դիտվում է որպես նախադասության կենտրոն,—շատ դեպքում իբրև ինքնուրույն միավոր անորոշալի է: Արմատական բուն բայերը բառիս իսկական իմաստով արդի փուլում քարացած՝ բայերից և նրանց ածանցյալներից դուրս գործածություն չունեցող ձևեր են, որոնց ստուգաբանական վերլուծության դեպքում էլ հաճախ նույնպես հայտնաբերվում է անինքնուրույնություն: Եվ սա հասկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ բայերը բառիս բուն իմաստով հարաբերությունների և վիճակների արտահայտիչներ են:

բ. Գոյաբանական կարգերով բնութագրվող «մեներմույթ» բայաբնաբաններ

Բայերի իմաստաբանական հետազա վերլուծության առնչությամբ հարկավոր է նկատի ունենալ, որ բայն ինքնին գերազանցապես բաղմաձևույթ է, և որ բուն արմատական իմաստներին հավելվում են բայական ածանցների ու վերջավորությունների արտահայտած իմաստները: Դեռ ավելին. որպես բայական միավորներ գործառուղ արմա-

[illegible]

տական ձևերը լրացուցիչ իմուլյժներ են ունենում, ինչպես, օրինակ, հրամայական ձևերի դեպքում. բն՝ւ ձևը նշանակում է «ես հրամայում եմ, որ դու բերես»:

Այս կապակցությամբ հետագա քննության մեջ հարկ կլինի դիմել որոշ վերացության և քննել ոչ թե արմատական բայերը, այլ բաղական արմատները: Սա նշանակում է, նախորդ հատվածներում ասածներին համապատասխան, որ բայարմատների ալտալիսի քննությունը հաճախ ոչ այլ ինչ է, եթե ոչ բայարմատների հետ համընկնող գոյականների, ածականների և այլ խոսքի մասերի քննություն: Այս փոփոխությունը էլ, երբ նկատի են առնվում բուն բայարմատները, մենք դարձնում ենք մենիմուլյժ ձևույթներ ունենալուց: Հարկավոր է, մասնավորապես, նրկատի առնել, որ բայիմաստների համար ընդհանրապես տիպական է փոփոխության կարգի եզրերի դրսևորումը՝ «դանալ» («փոխվել»՝ փ→), «վերադառնալ նախկին վիճակին» (փ←), «մնալ դարձած վիճակում» (փ→—), «փոփոխական վիճակի մեջ լինել» (փ↔), «ինքնակա (իբեն հատուկ) վիճակում լինել» (փ↔«լինել») և «փոփոխության հանդեպ շեղոք վիճակում լինել» (փ.՝ «է»): Սրանց կարող են միանալ պատճառականության եզրերը՝ առելով համապատասխան ներդրածական արժեքներ՝ փ→ պ→ «դարձնել, տնել», փ← պ← «վերադարձնել նախկին վիճակին», փ→— պ→ «պահել դարձած վիճակում» և այլն:

Այս բոլոր ասածներից բխում է, որ մենիմուլյժ բայարմատների առանձնացումը որոշ պայմանականություն ունի: Բնականաբար, մենիմուլյժ արմատները պետք է լինեն ամենից ավելի վերացական իմաստ ունեցողները, սակայն մենք հետագա դասակարգման մեջ թույլ կտանք որոշ շեղում և մենիմուլյժների մեջ կգնենք ավելի կոնկրետ որոշ արմատներ, ընդ որում կվերանանք նրանց փոփոխության, պատճառականության լրացուցիչ իմաստներից: Միաժամանակ առաջիմ կբացառենք նշանային իմաստները, որոնց առանձին հատված կհատկացվի: Ընդհանուր առմամբ նկատելի է, որ նշանային իմաստներ պարունակող բայերը թվով դերադանցում են ոչ նշանայիններին. սա բացատրվում է նշանայնությամբ օժտված գոյակների (օրդանիզմների) հատկանիշների ու հարաբերությունների մեծ բաղմադանությամբ:

Բայական «մենիմուլյժ» արմատները ստորև կտրվեն երկու աղյուսակով (տե՛ս աղ. 2, 3)՝ ըստ գոյորոշ (առարկաները որոշող) և առգոյորոշ (առարկաների հատկություններն ու հարաբերությունները որոշող) կարգերի: Առգոյորոշ կարգերով բնութագրվող մենիմուլյժ բայերի քննարկման կապակցությամբ պարզենք, թե ձևական ի՞նչ հատկանիշներով կարելի է առանձնացնել դրանք գոյորոշներից: Դժվար չէ հասկանալ, որ այս դեպքում հիմք կարող է ծառայել այդպիսի արմատ

Համեմատության թիվը (համեմատական)	Պատճառայ- նության	Հաճախայ- նության	Կերպ	Լինթ աղածի	Փոփոխության (անցում)	Տեսողական	Ժամանակ
	աղղ(կ) ալ(կ) արար(կ) կատար(կ) ստեղծ(կ)		սկս(կ)	դարդ(անալ)	դառ(անալ) « փոխ- վել » հեղ(կ) « փոխել » փոխ(կ)		
	ծաղ(կ)		ազարտ(կ)	(հավաղ(կ))	դառ(անալ) « դառ- նալ համեմատել » վիճակին » մե(ալ) սլահ(կ)		
	զար(վկ)			պոսթի(ալ)		առ(կ)	
	բղ(կ)			դադար(կ)		լի(հեկ)	բուր(կ)
						լ(մ)	

ունեցող բայերի զուգորդելիությունը առգոյորոշ իմաստներ արտահայտող այլ միավորների, այսինքն՝ սկզբնական ածականական և բայական իմաստներ ունեցող բառերի հետ՝ անկախ դրանց խոսքիմասային արժեքից. այլ կերպ ասած՝ առգոյորոշ (հատկաբնթացական) բայերը կարող են կապակցվել բուն ածականների (մեծ դառնալ, մեծ լինել և այլն) և անորոշ դերբայների հետ (սկսել գրել, գրել պրծնել և այլն), երկրորդաբար նաև բուն ածականներից ու բայերից ածանցված և նրանց հիմքային իմաստները պահպանած այլ խոսքի մասերի, այդ թվում՝ մասնավորապես ածականածանց բայերի (սկսել ծերանալ, դաշտել մեծանալուց և այլն) և բայանունների հետ (սկսել շարժումը, ավարտել վագր և այլն, այլև շարժումն սկսվեց, վագրն ավարտվեց և այլն):

գ. Գոյարանական կարգերով բնութագրվող բազմիմույր բայարմատներ

Մենիմույթ բայարմատների իմաստային վերլուծության արդյունքները կարելի է ներկայացնել ինչպես աղյուսակով, այնպես էլ համապատասխան բանաձևերով, որոնց մեջ տրվում է կարգի (կատեգորիայի) հասկացվումը և համապատասխան եզրի նշանը: Բազմիմույթ բայարմատների դեպքում աղյուսակային ներկայացումը կարող է խիստ ծավալուն լինել և նպատակահարմար չէ. եթե մենիմույթ բայարմատների դեպքում թվարկվում է առավելագույնը 8 կարգ, ապա երկիմույթների դեպքում հնարավոր է կարգերի $\frac{8-7}{1-2}$ 28 համակցություն: Այս դեպքում էլ քննությունը բանաձևերի դժվարընկալ շարք չդարձնելու նպատակով կդիմենք անհրաժեշտ բացատրությունների և բանաձևերը կտանք ըստ անհրաժեշտության:

Բազմիմույթ բայարմատների քննությունն սկսենք ֆիզիկական զանազան վիճակներ արտահայտող այն բայարմատներից, որոնք աղյուսակներում բերված «մենիմույթ» բայարմատների համեմատությամբ ունեն լրացուցիչ իմաստներ: Այս դեպքում էլ հարկավոր է նկատի առնել հետևյալը. նախ՝ ֆիզիկական շատ գործողությունների ու վիճակների նշանակումներ կապված են հատկապես մարդու և կենդանիների հետ, այսինքն՝ ունեն նշանայնության համապատասխան տարրեր. երկրորդ՝ հիմնական իմաստային տարրերին երբեմն միանում են այնպիսի լրացուցիչ տարրեր, որոնք արտահայտում են համապատասխան վերաբերմունք: Այստեղից էլ ակնհայտ է դառնում, որ «մաքուր» ֆիզիկական բայիմաստներ դժվար է առանձնացնել, և որ, հետևաբար, հետագա քննությունը որոշ չափով պայմանական բնույթ է կրում՝ վերա-

նալով նշանայնություն հատկանիշից և մարդկային նպատակադիր գործունեությամբ պայմանավորված որոշ իմաստային տարրերից: Այդ քննության ժամանակ մենք նկատի կառնենք ընդհանուր գծերը՝ բոլոր նրբերանգների մատնանշումը համարելով բառարանի գործը:

Պայմանականորեն բաժանենք ֆիզիկական բնույթի բայարմատները երկու խմբի. առաջին խմբում գնենք այն բայարմատները, որոնք համեմատաբար ընդհանուր բնույթ ունեն և կիրառելի են տարբեր օբյեկտների նկատմամբ, երկրորդ խմբում՝ այն բայարմատները, որոնք կապված են շոջապատող բնության այնպիսի կոնկրետ օբյեկտների հետ, որոնց իրական բնույթի բացահայտումը գիտության գործն է, և որոնք լեզուներում բնութագրվում են հատկանիշների ամբողջ համալիրներով՝ հող, ջուր, օդ, կրակ, լույս:

Կանգ առնենք առաջին խմբի բայարմատների վրա: Սրանց իմաստները բնութագրվում են ՀԷԿ-ի տարբեր կարգերով, ընդ որում առարկայական և վիճակային կարգերին երբեմն կարող են միանալ իրադրական իմաստներ:

Բայական իմաստներին ընդհանրապես հատուկ են փոփոխություն կարգի տարբեր եղբրը, որոնց ներգործական իմաստների գեպում կարող է միանալ պատճառայնության → եղբը («պատճառ լինել այս կամ այն փոփոխության»): Եթե փոփոխությունը տարածական է (տեղի կամ դիրքի), սովորաբար խոսվում է շարժման մասին. եթե փոփոխությունը նյութական է, ապա սովորաբար խոսվում է գործողության մասին:

Այժմ կատարենք բայարմատական իմաստների որոշ դասակարգում՝ փոփոխության և պատճառայնության կարգերի կողքին որպես առաջնային առանձնացնելով կարգային (կատեգորիական) որևէ էական իմաստ:

Կազմի հետ կապված բուն իմաստներն արտահայտվում են այլ խոսքի մասերով, որոնցից երկրորդաբար կարող են կազմվել բայական հիմքեր. հմմտ. ավելանալ, պակասել, նվազանալ, փոխարինել, ամբողջանալ (կազմվել), տարբանալ (մասնանալ), Կանգ առնենք կազմով և լրացուցիչ այլ իմաստներով բնութագրվող բայարմատների վրա: Մի շարք բայարմատներ արտահայտում են մասերի բաժանում, այսինքն՝ կազմի կարգի շեղոք (•) եղբ՝ միացած թվի կարգի հիմնական (թիվ—) «շատ») եղբի, երբեմն էլ այլ լրացուցիչ կարգային կամ էնկրեուսոված իմաստների հետ (տարբերակում ըստ օբյեկտների, չափի և այլն). հմմտ. բաժան(ել), բրդ(ել), լեխ(ել), լես(ել), լոս(ել), խորտակ(ել) (իմաստի հետագա տեղաշարժով), կոտոր(ել), ջախջախ(ել), ջարդ(ել), սղկ(ել), տրոհ(ել), քայքայ(ել), քծ(ել), քք(ել): Մասնատման ի-

մաստն առկա է նաև վխոր(ել) բայի մեջ՝ կիրառված կոնկրետ առարկայի՝ կաթի նկատմամբ: Փլ(շել) բայարմատի ղեպքում արտահայտվում է նաև շարժում ղեպի ցած (ուղղ→տ↓) հմմտ. նաև խլխլ(ալ) ձխարխուլ լինել, փլշելու մոտ լինել»: Յան(ել) և ցր(ել) բայարմատներն արտահայտում են բազմաթիվների հեռացող շարժում (տեղի չափ→), բնդ որում ցան(ել)-ի ղեպքում՝ շարժում ղեպի ցած: Բաշխ(ել) բայարմատը ցույց է տալիս բաժանման հավասար թիվ (թիվ→): Կազմի կարգի հետ են կապված նաև ալլախան(ել) (հմմտ. կեղտոտ և սրբ(ել)) բայարմատները, որոնցից առաջինը ցույց է տալիս հավելուրդային նյութի առկայություն (կազմ→), երկրորդը՝ վերջինիս բացառում (→): Օծ(ել) բայը նույնպես ցույց է տալիս հավելում, ինչպես ապալան(ել)-ը, բայց այլ նյութի և որոշակի նպատակով:

Ընտր(ել) (ընդ+դիր՝ կազմի մթաղնմամբ) և ջուկ(ել) բայարմատներն արտահայտում են (ամբողջից) մաս առանձնացնելը, բայց նշանային լրացուցիչ իմաստով՝ որոշակի նպատակով:

Եվ շարք բայարմատներ կապված են կախման կարգի հետ՝ մասամբ լինելով երկրորդային բնույթի (հմմտ. բուռ—բռնել, զուսպ—զրսպել), մասամբ արտահայտելով լրացուցիչ իմաստներ, բռնել, բնկնել, կալ(ն)ել բայերի արմատներն արտահայտում են կախման մեջ դնելը (կախման սկիզբը՝ կխ→կերպ→), զսպել և կաշկանդել բայերի արմատները՝ կախման մեջ պահելը, վերջիններիս իմաստները որոշ չափով մոտենում են խանգարել, խափանել բայերի արմատների իմաստին՝ ազատ (անկախ) դործելու բացառում (կխ/պ→): Ձերծ(ել), քոքափ(ել) բայարմատները (հմմտ. նաև ազատ(ել)) արտահայտում են կախումից ղերծ դարձնելը (կխ. կերպ→պ→): Եթե ուն(ենալ) բայարմատը աղյուսակում պայմանականորեն զրված է մենիմուլիների շարքում, ապա հալքայր(ել), հար(ել) և մատակարար(ել), օծա(ել) բայարմատները կարելի է դիտել, որպես փոխկազմարման արդյունք, այսինքն՝ «ունեցող դառնալ» և «ունեցող դարձնել»: Սրան իմաստով մոտ է զիջ(ել) բայը՝ կախուրդի փոխարինման (կազմ→) լրացուցիչ իմաստով:

Կա կախման կարգի հետ կապված բայերի մի խումբ՝ նշանայնություն լրացուցիչ իմաստով՝ գտն(ել), կորչ(ել), կրկա(ել), որոն(ել), պտոռ(ել), պրպտ(ել), փնտռ(ել). որոնցից գտն(ել)-ը իմաստով զուգահեռ է հալքայր(ել), հար(ել) բայերին, բայց ունի նաև լրացուցիչ «զգայելի՛ տեսանելի դառնալ» իմաստային հատկանիշը. կորչ(ել)-ը նշանակում է ոչ միայն «զաղարել կախման մեջ լինելուց» (կորցնել «զաղարել ունենալուց»), այլև «զաղարել զգայելի՛ տեսանելի լինելուց»: Էլ ափելի որոշակի է նշանայնության հատկանիշը կրկա(ել), որոն(ել), պտոռ(ել), պրպտ(ել), փնտռ(ել) բայերի ղեպքում, որոնք ցույց են տա-

լիս գտնելը որպէս նպատակ, այսինքն՝ նպատակադիր շարժում (գործողութիւն)։ Քթլ(ել) բայը ունի նույն արժեքը, միայն թէ նպատակը կոնկրետ առարկա գտնելն է՝ միջատներ (ոջլիներ)։

Թվի կարգի ← եղրի հետ է կապված խնայ(ել) բայարմատը՝ ցույց տալով կախյալ առարկայի կամ միջոցի (կիս→) փոքր քանակութիւնը, թեև այստեղ առկա է նշանային տարր՝ հատուկ նպատակադիր, գիտակցված գործողութիւն։

Եթե աղյուսակում դրված լիս(ել), կարգ(ել), հեռ(ել), շար(ել) բայարմատներն արտահայտում են դասավորման, կարգավորման բնդհանուր իմաստներ, ապա դաբս(ել), կիտ(ել) բայարմատների դեպքում սրանց միանում է «վրա» իմաստը (տ↑). ղիգ(ել) բայարմատի դեպքում այս իմաստը կոնկրետացված է (օբյեկտը կոնկրետ է)։ Հաստատ(ել) բայարմատի դեպքում նկատի է առնվում դասի կարգի հիմնական (→) եղրը՝ շարքի սկիզբը դնելը՝ տեղի «տակ» իմաստով հանդերձ։ Վատն(ել) բայարմատի իմաստը հարաբերակից է սպառ(ել) բայարմատի իմաստին, բայց ունի նշանային լրացուցիչ արժեք՝ «աշանց հետևանքի» արդյունքի, ապարդյուն»։ Աղյուսակում դրված կննըռ(ել) բային մենք պայմանականորեն վերագրել ենք ձևի ←→ եղրի իմաստ որպէս անկյունավորութեան և խորդուբորդութեան (մերթ մի կողմ, մերթ մյուս կողմ թեքվող) արտահայտիչ, թեև այդ բայարմատը կապված է հատկապէս մարդու դմբի կնճիռների հետ։ Հատկապէս մարդու անկյունավոր ձև ընդունելը կոչվում է նստ(ել) (բարձր ոճով՝ բազմ(ել)) ինչ-որ տեղի հետ շփվելով (հենվելով) միջին մասով (այդպիսի հենակետ չունենալով՝ պալգ(ել). հմմտ. նաև բորբ. կկգ(ել))։ Սրան հակառակ կանգն(ել)-ը ցույց է տալիս ուղիղ ձևը (ձ→)՝ միացած տեղի ուղղահայացութեան հետ (տ↔₂ կամ †), պառկ(ել),-ը՝ ուղիղ ձև՝ կապված հորիզոնական դիրքի հետ (տ↔₁)։ Տնկ(ել)-ը կանգն(ել)-ի համեմատութեամբ ունի պատճառայնութեան → եղրը՝ «ուղղահայաց դիրք տալ», թեև կապված հատկապէս բուսի հետ։ Հեն(ել) բայը, որ մենք օգտագործեցինք վերևում նստ(ել)-ը բնութագրելու համար, ցույց է տալիս տեղի (սովորաբար «տակ» և կամ «կողք») զրո չափ (հպում). կոքն(ել)-ը ցույց է տալիս արմունկով հենվելը։

Ձևի կարգի հետ կապված մի շարք բայարմատներ ուղեկցվում են լրացուցիչ այլ իմաստներով կամ կապվում կոնկրետ առարկաների հետ. այսպէս, գել(ել) «պրկել» և «լար(ել)» բայարմատներն արտահայտում են անորոշ ձևի (ձ.) անցումը որոշակի ձևի, հատկապէս «ուղիղ, հարթ» ձևի (ձև→)։ Կոտր(ել) բայարմատն, ընդհակառակն, արտահայտում է ուղիղ ձևից անցումը անկյունավորի (ձև←→). սկզբնապէս կոտրել-ի իմաստն ունեցող բեկանել բայը այժմ ձեռք է բերել նշանային մաս-

նորդիտական արժեք (որոշումը բեկանել): Փո(ել) բայի արմատն արտահայտում է ուղիղ (հարթ) ձև (ձև→—)՝ միացած հորիզոնական գիրքի հետ (տ←→): Զեի կարգի հետ է կապված նաև հարդար(ել) բայի արմատական իմաստը՝ ցույց տալով անցում անորոշ (չեզոք) ձևից ձևավորվածություն, բայց կապված հատկապես մարդու հետ: Այդպիսի ձև տալու իմաստ ունի նաև կո(ել) բայի արմատը, սակայն նախ՝ կապված մետաղի հետ, Երկրորդ՝ ունենալով լրացուցիչ իմաստներ (հատկապես կազմի): Խաւր(ել) բայի արմատը նույնպիսի ունի ձև տալու, հատկապես սուր (անկյունավոր՝ ձև←→) տալու իմաստ, բայց հատուկ գործիքով և որոշ մասերի անջատմամբ:

Զափի կարգի հակադիր եզրի (չ← «փոքր չափ») իմաստ են արտահայտում (բնականաբար, միացած փոփոխություն և, երբեմն, պատճառաբանության կարգերի հիմնական — եզրերի իմաստների, որոշ զեւքերում նաև ձեւի կարգի տարբեր եզրերի իմաստների հետ՝ ձ← «հարթ», ձ←→ «խորդուրդ», ձ. «անձև»), հետևյալ բայերը՝ ճզմ(ել), ճիւլ(ել), ճմլ(ել), ճմռ(ել), ճնշ(ել), ջնջիւ(ել), սեղմ(ել): Եթե այս գործողությունը կատարվում է մարդու ձեռքի բնամատի և ցուցամատի միջոցով (սովորաբար ցավի զգացում առաջ բերելու համար), ապա գործում են կնմք(ել), կմշտ(ել), կսմք(ել), կմկր(ել) բայարմատները: Զափի փոքրացում է արտահայտում կկոց(ել) բայարմատը՝ կոնկրետ առարկայի՝ աչքի կոպերի համար: Կծկ(ել) բայարմատն արտահայտում է և չափի փոքրացում, և որոշակի կտր ձև ! ձև→): Փխլ(ել) բայը ճզմելու իմաստի հետ միասին ունի բացվածք ստանալու լրացուցիչ իմաստ:

Աղյուսակում չափի կարգի չեզոք (զրո) եզրի իմաստի համար բերված ղիպ(չել), կպ(չել), հպ(ել) բայարմատների իմաստը կարող է ուղեկցվել տեղականության — Եզրով՝ շվ(ել): պատճառաբանության կարգի — եզրը չափի կարգի — («մեծ չափ») եզրի հետ միասին տալիս է ուժգին հպման, այսինքն՝ հարվածի իմաստ, որ արտահայտվում է բախ(ել), զարկ(ել), խփ(ել) բայարմատների միջոցով. եթե նկատի է առնվում ձեռքով, թափով հարվածելը, գործածվում է բամփ(ել) բայը. բռնեցրով հարվածելը նշանակվում է կոփ(ել), ափով հարվածելը՝ ապտակ(ել) բայարմատներով: Եի շարք բայարմատներ արտահայտում են հարվածների հաճախականությունը (հճ→ «շատ անգամ»)՝ երբեմն հարվածելու միջոցի և վերաբերմունքի տարրերություններով՝ դմփ(ել), դնքս(ել), գխկ(ել), բակ(ել), ծեծ(ել), հար(ել), ձաղկ(ել):

Լմ(ել), մած(ել), տրոր(ել), շփ(ել) բայերի արմատները իմաստով հարաբերակից են վերևում նշված հպ(ել) բայի արմատին, բայց ցույց

են տալիս հաճախակի (հճ→) և տեական (տե→) հպում՝ որոշ այլ երանգներով: Լոս(ել) բարբառային բայարմատը ունի շի(ել) բայարմատի իմաստը՝ միացած ձև տալու, հարթելու իմաստի հետ: Կոխ(ել) բայարմատն արտահայտում է հպում (տրորում) կոնկրետ առարկայով՝ ոտքով:

Կշռ(ել) բայարմատը ունի չափի կարգի իմաստ՝ ուղեկցված լրացուցիչ այլ իմաստներով (երկրի՝ ներքև ձգելու՝ ծանրության չափ), ընդ որում կապված է մարդու նպատակադիր գործունեության հետ:

Ուղղության կարգի ← եզրի (անջատելու) իմաստը արտահայտում են մի շարք բայարմատներ՝ Լրբեմն լրացուցիչ զանազան իմաստներով՝ «ամբողջից մաս», «սուր գործիքով» կամ կապված որևէ կոնկրետ առարկայի հետ. հմմտ. ստոծ(ել) (այստեղից ստոծանի «կրծքի և որովայնի խոռոչների միջնապատը»), կտր(ել), հատ(ել), հերծ(ել) «սուր գործիքով մաս անջատել»։ կլլ(ել), պլոկ(ել), պլոնկ(ել), քաշ(ել), խուզ(ել), կտր(ել), սափր(ել), ֆեր(ել), ֆերք(ել), ֆերծ(ել):

Պատահ(ել) բայի արմատն արտահայտում է զիջաց կապի իմաստը (ուղղ↔)՝ համապատասխան շարժամբ:

Կործանել բայի արմատական կործ- բաղադրիչն ունի «հակառակ, շրջված» (ուղղ↔) իմաստը, թեև ստացել է նաև լրացուցիչ այլ իմաստներ:

Կարկառ(ել) բայարմատը նշանակում է ուղղում առաջ (ուղղ→)՝ ուղիղ ձևով (ձև→—), ընդ որում կապվում է կոնկրետ առարկայի՝ ձևաքի հետ:

Տեղում (տ→—) լինելու (անփոփոխ մնալու՝ փոխ→—) ընդհանուր իմաստ ունի ծվար(ել) բայարմատը (սովորաբար կենդանիների մասին):

Տեղի կամ դիրքի փոփոխությունը, որ, ինչպես նշվել է, համարվում է շարժում, հաճախ միանում է ուղղության կարգի կզրերի իմաստների հետ: Բուն շարժ(ել) բայը ներգործական բնույթի է, այսինքն՝ ունի պատճառայնություն→ Եզրի լրացուցիչ իմաստը և շեղոք է դառնում վ-ի օգնությամբ: Այս բայարմատը ուղղության կարգի նկատմամբ շեղոք է: Մինչդեռ այլ դեպքերում ուղղության արտահայտությունը հաճախակի է, ընդ որում երբեմն հանդես է գալիս նաև իրադրական ուղղությունը (ոչ թե գործողության, այլ խոսքի մասնակիցների ուղղությունը): Այս բայարմատները մասամբ երկրորդական են (այսինքն՝ «մաքուր» ձևով հանդես են գալիս որպես այլ խոսքի մասեր), մասամբ առաջնային բնույթի. հմմտ. առաջ(անալ) (տ→) և նախանջ(ել) (տ←). քարծ(անալ) (տ↑) և իջ(նել) (տ↓), մտ(նել) (տ→3) և ել(նել) (տ↗3) և այլն:

Բառձր(անալ) բայարմատի իմաստը լրացուցիչ իմաստառճային երանգներով արտահայտում են հալքառն(ալ), հառն(ել) բայարմատները: Ուտն(ել), ցառկ(ել) բայարմատները նշանակում են շարժում դեպի վեր՝ արագությամբ (փոփոխության չափ→):

Գալ և գնալ բայերը, կապված լինելով գերադանցապես մարդու և կենդանիների շարժման հետ, տեղի փոփոխության հետ միասին արտահայտում են լրացուցիչ իրադրական ուղղության իմաստ՝ «դեպի խոսողը» և «խոսողից հեռացող» (իր ուղղ→ և ուղղ←): Ոճական տարբերությամբ առաջինին մոտ է ժամանել բայը, ռճախմաստային տարբերությամբ երկրորդին մոտ են երբալ և մեկնել բայերը: Վտարել բայը գնալ, հեռանալ բայերի համեմատ արտահայտում է պատճառայնության լրացուցիչ իմաստ («հեռացնել, պատճառ դառնալ, որ հեռանա, դնա»)՝ երբեմն միացած դեպի գուրս շարժման հետ (տՅ): Եթե նշվում է նաև կախյալ օբյեկտը (կիս←), այսինքն՝ մի առարկայի՝ շարժման մեջ ընդգրկվելը, ապա գալ և գնալ բայերին համապատասխանում են բերել և տանել բայերը. եթե նկատի է առնվում գործողի ուղղությունը կախյալ օբյեկտի հետ հսկմամբ (շ.)՝ հանդես են գալիս, տարբեր նրբերանգներով, մի կողմից՝ բորել, բրբել, խրել, խշտել, հրել, մղել և մյուս կողմից՝ ձգել, քա(ր)շել բայերը: Եթե բերելը և տանելը ենթադրում են հակառակ կողմի լրացուցիչ գործողություններ, հանդես են գալիս մի կողմից՝ առնել, ստանալ, մյուս կողմից՝ տալ (հմմտ. նաև երկրորդական ավանդել, հանձնել) բայերը: Ստնել բայի հիմնական իմաստը, վերաբերմունքի, օբյեկտի, չափի լրացուցիչ գրսեորումներով հանդերձ արտահայտում են գշլել, գոփել, գրալել, գալթել, խլել, կորգել, նվանել, շուրբել, շանթել, տիրել բայերը. սրանց հետ միանում են գողանալ, կողոպտել, հավիշտակել, այլև գերել բայերը՝ հասարակական համապատասխան պայմանների հաշվառումով: Թերել բային սկզբնական իմաստով մոտ է եղել ածել բայը, որի այդ իմաստը պահպանվել է իրարից հեռացած գործածություններում. հմմտ. ձու ածել և ներածություն, արտածել և այլն:

Կրել և բառնալ (բարնել, բեռնել) բայերի արմատները փոխկաղապարմամբ կապվում են բերել կամ տանել բայերի հետ (բերել→բերվող→բերվող (առարկա)=բեռ կամ տանել→տարվող→տարվող (առարկա)=բեռ)՝ ունենալով կախման → և ← եզրերը, այսինքն՝ «բերվող (տարվող) առարկա ունենալ» և «բերվող (տարվող) առարկայով օժտել»:

Շարժման ընդհանուր իմաստն ունեցող շատ բայարմատներ նշանային տարր ունեն՝ կապված լինելով մարդու գործունեության, հաճախ նպատակադիր գործունեության հետ՝ երբեմն վերաբերմունքի գրսեոր-

մամբ. այս բայարմատները բուն արժեքով պետք է քննվեն հաջորդ բաժնում, բայց զրանց մասին հարկ ենք համարում խոսել այստեղ՝ շարժման հետ կապված իմաստների քննությունն ամբողջացնելու նպատակով: Առաջ(ել) և հղ(ել) բայերի՝ արդեն որպես արմատ գիտակցվող հիմքերը իմաստով մոտ են մղ(ել) բայարմատին, միայն թե, ի տարբերություն սրա, չեն ենթադրում հետևողական հպում (շ.) շարժման ողջ ընթացքում (տե՛ս $\rightarrow$), մի բան, որ կարող է ուղեկցվել նշանային միջնորդությամբ (հրամանով, պատվերով): ԼՔ(ել) բայարմատը իմաստով մոտ է ազդույթյան կարգի $\leftarrow$ ելքի իմաստ արտահայտող անջատ(ել) (իմա՝ նաև անջատվել, հեռանալ) բայարմատին, ունենալով հոգեկան (իմա՝ նշանային) լրացուցիչ իմաստ՝ բացասական վերաբերմունքի գրասեռում: Գրռ(ել) և հալած(ել) բայարմատները ուղղույթյան կարգի՝ նախորդին հակառակ $\rightarrow$ ելքն ունեն՝ արտահայտելով հատուկ նպատակ (նշանայնություն հատկանիշ). միաժամանակ հալածելն արտահայտում է շարժվող օբյեկտ, գրռհլը՝ ոչ: Պատահական չէ, որ գրռհել, հարձակվել բայերն ստացել են նեղ՝ կռվի հետ կապված իմաստ. նշանակում է, որ գրռհելն ու հարձակվելը այս դեպքում ենթադրում են մարդկանց մեծ քանակ ($\beta \rightarrow$):

Հեռացող շարժում են արտահայտում մի շարք բայեր՝ միացած նշանային որոշ իմաստների հետ. ծլկել՝ «աննկատ (առանց տեսնվելու), հեռանալ». նողալ(ել), այլև փախ(չել)՝ «լուսնեգալոր բանից հեռանալ», ընդ որում արագ շարժումով:

Որոշակի, ուղղություն չունեցող շարժում են արտահայտում մի շարք բայեր, որոնք լրացուցիչ նշանային արժեք ունեն՝ ցույց տալով նաև որոշակի նպատակի բացակայություն՝ դեգեր(ել), քարքափ(ել), քափառ(ել), քռ(ել), հաժ(ել). ընդհանրապես, հաճույք ստանալու հետ կապված այսպիսի շարժում են արտահայտում զրոսն(ել) և նեմ(ել) բայերը՝ վերջինս «հալարտ քայլել» կրանգով. նազ(ել) բայը նույնպես ունի նշանային իմաստի տարր՝ զեղազիտական զգայություն հետ կապված, այսինքն՝ ցույց է տալիս դեղեցիկ քայլելը:

Պայմանականորեն մենիմույթ բայարմատների հետ միասին աղյուսակում տեղի կարգի տակ բերված մտ(նել), մխ(ել), մխրն(ել) բայերին համանիշ խոք(ել), խողխող(ել), խոց(ել), խռ(ել), ճխտ(ել) բայերը, որոշ չափով նաև մխրն(ել)-ը, ցույց են տալիս միևնույն գործողությունը (շարժում մեջ՝ տ $\rightarrow$), բայց ավելի մեծ ուժով (պատճառայնություն $\rightarrow$ ելք և չափի $\rightarrow$ ելք՝ մեծ չափի ազդեցություն): Կծ(ել) բայարմատը սրանցից տարբերվում է նրանով, որ կապվում է կոնկրետ առարկայի՝ ատամների հետ: Մոծ(ել) բայարմատը կապված է կոնկրետ առարկայի՝ դրամի հետ: Սպրդ(ել) բայարմատը ակնհայտ նշանային

արժեք ունի. այն նույնպես նշանակում է ներշարժում, բայց առանց զգայվելու (տեսնվելու)՝ ծածուկ կերպով: Խուժ(ել)-ն արտահայտում է ներշարժում՝ միացած մեծ քանակի հետ (թ→):

«Բաց տեղի» հետ կապված բայարմատները՝ բա(նալ), (բաց(ել)), խոս(ել), շփ(վել) գրվել են աղյուսակում՝ տեղի (դիրքի) կարգի . հզորի տակ: Սակայն այս իմաստը կրեմն միանում է չափի և ձևի իմաստների հետ. այսպես, ծակ(ել) բայը արտահայտում է ընդհանրապես բացվածք՝ առանց ձևի հասուկ նշման (ձ.) կամ էլ կլորավուն ձևվով (ձ⊃) և փոքր չափով (չ←), մինչդեռ նալ(ել), նեւլ(ել), նզ(ել), պատռ(ել), վեռեկ(ել) բայարմատները ցույց են տալիս երկարավուն և սովորաբար հարթ (չ→ ձ→ —) բացվածք:

Տեղի կարգի ⊃ եզրով բնութագրվող պարուր(ել), վարար(ել) բայարմատների համեմատությանը խտտ(ել), կամլ(ել) բայարմատները տարբերվում են միայն այն բանով, որ կապված են կոնկրետ առարկաների հետ՝ խտտել «գրկել, գիրկն առնել, թեքով շուրջն առնել» (հմմտ. գրկել՝ գ(ի)րկ-ից), կամլել «մեղքին կապել, փախաթել»։ Նշենք, որ որոշ դեպքերում այս բայերի իմաստները սերտորեն առնչվում են ձևի կարգի ⊃ իմաստի հետ, եթե հասուկ շնչովում է կլորությունը:

Շարժման տարբեր տեսակներ են արտահայտում մի շարք բայարմատներ, որոնք փոփոխության, հատկապես տարածական փոփոխության ընդհանուր իմաստի հետ միասին ունեն ձևի, չափի, շարժվողների քանակի, թվի և այլ լրացուցիչ իմաստներ. այսպես, գեռ(ալ), խլրտ(ալ), վխտ(ալ) և չվ(ել) բայարմատներն արտահայտում են շարժվողների մեծ քանակ (թ→)՝ առաջին կերպը անկարգ (խառն) շարժման (դ.), վերջինը՝ որոշակի ուղղության (ուղղ→) լրացուցիչ իմաստի հետ միասին. լխկ(ալ), տնգ(ալ), ցնց(ել) բայարմատները արտահայտում են որոշ տատանողական շարժում (ձե←→. հմմտ. դող(ալ), ղղղ(ալ), քրքռ(ալ), տատան(ել) և այլն)՝ առանց շարժման տեղի փոփոխության (տի.). խթխթալ-ն արտահայտում է տեական (տե←→) և հաճախական շարժում (հճ→)՝ միացած նպատակադիր գործողությունների հետ (նշանայնություն):

Տատանողական շարժում են արտահայտում շոբշոբ(ալ), օրոբ(ել) բայերը, բայց նշանային լրացուցիչ իմաստներով՝ որոշակի նպատակադրմամբ:

Ընդհանրապես մարդու նպատակադիր շարժման հետ են կապված մի շարք բայեր՝ արտահայտվելով նաև շարժման որոշակի միջոց (կիս→—). դրանք մասամբ երկրորդային բայեր են (հմմտ. նալ(ել), մասամբ առաջնային. հմմտ. հեծ(հեյ) (ծի). ձիու շարժման տարբեր տե-

սակներ են արտահայտում (ըստ ձևի, արագության և այլն)՝ սնգսնգալ, վարգել:

Մի շարք բայարմատներ վիճակային հատուկ իմաստներ են պարունակում՝ երբեմն միացած այլ (այդ թվում՝ կոնկրետ և նշանային) իմաստների հետ: Փոփոխություն, այդ թվում՝ տեղի փոփոխության կամ շարժման չափ կամ տեղդություն են արտահայտում մի կողմից՝ նամ(ենալ), հապալ(ել) (կրկար ժամանակ՝ դանդաղություն), մյուս կողմից՝ նեպ(ել), շտապ(ել), սլ(անալ), սուր(ալ) (կարճ ժամանակ՝ արագություն) բայարմատները (տե՛ս և տե՛ս): Սպաւ(ել) բայը արտահայտում է փեփոխություն → եզրը՝ նույն վիճակում մնալը, բայց նշանային հավելական իմաստով՝ որոշակի նպատակով. պատահական չէ, որ մնալ բայը կարող է բարբառային լեզվում օգտագործվել «սպասել» իմաստով. հմմտ. «Մնում էր յարին» (Հ. Թումանյան): Օր(ել), օրեան(ել), գիշեր(ել) բայարմատները կապված են կոնկրետ ժամանակահատվածների հետ:

Որոշ բայեր ֆիզիկական իմաստների հետ դուբակցում են տևրահայտ նշանային իմաստներ. խտր(ել) բայարմատը բուն իմաստով արտահայտում է անջատում (ուղղ←), բայց նշանակում է նաև ոչ նույնական, տարբեր (կազմ→), ընդ որում սովորաբար ընկաման (զգայման) հետ կապված. ծածկ(ել) բայարմատն արտահայտում է «վրան գցել», բայց և այնպես անել, որ շղթայվի՝ չտեսնվի (հմմտ. ծածուկ) և այլն: Վերջին իմաստն ավելի ուժեղ է պարտալ(ել) բայարմատի մեջ: Մենք այստեղ չենք խոսում դիմ(ել), դիմ(անալ), հանդիս(անալ) բայարմատների մասին, որոնցից առաջին երկուսի արմատը դեմ-ն է, երրորդինը՝ հանդես-ր՝ վերաիմաստավորված ռուսերեն ЯВЛЯТЬСЯ բայի գործածության ազդեցությամբ:

Մենք որպես պատճառականության կարգի → եզրի իմաստի արտահայտիչներ աղյուսակի մեջ դրել ենք ան(ել), կատար(ել) բայարմատները: Առաջին հայացքից սրանց համանիշ թվացող աշխատ(ել), բան(ել), գործ(ել), զբաղ-վ(ել), նգն(ել), մշակ(ել), պարապ(ել), ջան(ալ) բայարմատները իրականում ունեն հավելական նշանային իմաստ՝ ցույց տալով նպատակադիր՝ որոշակի հետևանքի ուղղված գործողություն, ընդ որում մշակ(ել)-ը ենթադրում է արդյունքի լավացում, այսինքն՝ ունի գնահատման տարր: Զլ(անալ)-ը նույնպես ունի նշանային լրացուցիչ իմաստ՝ «չցանկանալ մի բան անել»: Խաղ(ալ)-ը ենթադրում է մի բան անել՝ հաճույք ստանալու նպատակով:

Պատճառայնության կարգի հետ են կապված տոկ(ալ) և երկրորդական դիմ(անալ) բայարմատները, որոնք արտահայտում են պատճառայնության ← կարի՝ հետևանքի բացակայություն: Կովի(ել) բա-

յարմատն ունի լրացուցիչ ներգործական («պատճառ լինիլ») իմաստ՝ «տոկուն դարձնել, ամրացնել»:

Այժմ կանգ առնենք բայարմատների այն խմբի վրա, որ կապված է շրջապատող բնության կոնկրետ օբյեկտների հետ: Սրանք արտահայտում են հինգ տիպի օբյեկտների հետ առնչվող իմաստներ:

1) Հեղուկների և հատկապես ջրի հետ կապված իմաստներ (սրանք մասամբ ունեն օդի, կրակի և ջերմության, լույսի, երբեմն մարդկային նպատակադիր գործունեության հետ կապված իմաստներ)՝ բ(ղ)խ-(ել), բոր-(ել), եռ-(ալ), եփ-(ել), գեղ-(ել), բնկղմ-(ել), քաբախ-(ել), քաբալ-(ել), քափ-(ել), բոր-(ել), բրմ-(ել), բրջ-(ել), ժալք-(ել), փալ-(ել), լխկ-(ել), լկ-(ել), լող-(ալ), լուծ-(ել), խա(ր)շ-(ել), խխմ-(ել), ծլլ-(ալ), ծոր-(ալ, ել), ծփ-(ալ), կար-(ել), հեղ-(ել), հեղեղ-(ել), հոս-(ել), հորդ-(ել), մզ-(ել), շաղ-(ալ, ել), շոռ-(ալ), որ-(ել), ոռոգ-(ել), պաղպաղ-(ել), պղպղ-(ալ), պնայն-(ալ), փրփր-(ալ), սկ-(ել), սրսկ-(ել), սուզ-(ել), վա(յի)ք-(ել), վիժ-(ել), տեղ-(ալ), ցալ-(ել), ցրտկ-(ել), քամ-(ել): Թվարկված բայարմատների տարբերությունները ակնհայտորեն բացատրվում են ՀԼԿ-ի զանազան կարգերի եղբերով՝ կազմի (ջրին այլ նյութերի կամ այլ նյութերին ջրի հավելում կամ պակասեցում՝ կ→ և կ←). շափի և քանակի (թ→ և թ←)՝ բոր-(ել), բոր-(ել), բրջ-(ել), բրմ-(ել), լխկ-(ել), լուծ-(ել), մզ-(ել), քամ-(ել) և այլն. տեղի կամ դիրքի (ցած՝ ա↓), բալի-(ել), կար-(ել), շաղ-(ալ), (մեջ՝ ա→)՝ քաբախ-(ել), քաբալ-(ել), այլն մկրտ-(ել) (լրացուցիչ իմաստով), (մեջ և ցած՝ ա→ա↓)՝ բնկղմ-(ել), սուզ-(ել), (դուրս ած), ժալք-(ել) և այլն. ձևի (ալիքածի՝ փ←ած)՝ ծփ-(ալ), քանակի՝ (թ→)՝ հեղեղ-(ել), հորդ-(ել), շոռ-(ալ), (թ←)՝ ծլլ-(ալ), կար-(ել) և այլն:

Լոգանալ և լողանալ բայերը ցույց են տալիս մարդկային նպատակադիր գործողություն, այսինքն՝ լրացուցիչ նշանային իմաստ ունեն՝ ջուրն օգտագործել կեղտից (կազմ→՝ «հավելուրդային առարկա») աղտվելու նպատակով. այսպես է նաև լվանալ-ը, բայց կախյալ առարկայի առկայությունից (կխ→)՝

2) Պինդ մարմինների և հատկապես հողի (գետնի) հետ կապված իմաստներ՝ քաղ-(ել), քալալ-(ել), խոր-(ել), փոր-(ել): Այս բայարմատներն ղգալի շափով կապված են մարդկային գործունեության հետ և նշանային տարր ունեն. սրանցից քաղ-(ել), խոր-(ել), փոր-(ել) բայերի հիմքերը արտահայտում են տեղային լրացուցիչ իմաստներ՝ առաջին երկուսը՝ ա→ «մեջ», փոր-(ել)-ը՝ ա. «գատարկ տեղ»՝ միացած «աստիճանաբար» և «մեծացնել» իմաստների հետ. քալալ-(ել) բայի հիմքըն արտահայտում է տեղի (ա↓ «ցած») և շափի («գետնին կպած»՝ շ.),

ձևի (ձ՞՞ «կոր, կլոր») լրացուցիչ իմաստներ: Սող-(ալ), սողոսկ-(ել) և սան-(ել), սլլ-(ալ), սղղ-(ալ) բայարմատներն արտահայտում են գետնահոսալ (չ.) շարժում (տեղի փոփոխություն՝→)՝ երկրորդ դեպքում՝ դեպի ներս (ուղղ→տեղ→3), վերջին երկուսի դեպքում՝ հարթ մակերևույթ (ձ→—): Եթե սանել բայի իմաստին միանում է լրացուցիչ դեպի ցած շարժման (անկման) իմաստ (ուղղ→տվ), ապա գործածվում են գայքել, սայքաֆել բայերը: Լայստալ և, հնչյունների դրափոխությամբ, պլստալ բայերը սանել իմաստի հետ միասին ունեն ազատվել (կխ. փոփ→ «ազատ դառնալ») լրացուցիչ իմաստը: Լպրծել և լպտել բայերն ունեն փոխկաղապարային սերում՝ սանել→սանում→սանում դառնալ/դարձնել և լպրծում→լպրծում դառնալ/դարձնել: Այս դեպքերում ենթադրվում է նաև կոնկրետ առարկայի՝ հեղուկի առկայություն:

Դոփ-ել բայը արտահայտում է գետնին հարված (հարվածել, խըփել) իմաստի մասին տե՛ս չափի կարգի հետ կապված իմաստների վերլուծության մեջ) ոտքով, այսինքն՝ կապված է երկու կոնկրետ առարկաների հետ:

Պեղ-(ել) բայարմատի հին «փորել» իմաստն այժմ մասնադիտացել է՝ կապվելով նեղ բնագավառի՝ հնադիտության հետ: Բր-(ել) երկրորդական բայարմատը, համանիշ լինելով փոր-(ել)-ին, պահպանում է արմատի սկզբնական լրացուցիչ իմաստը՝ բրով փորել:

3) Գաղային մարմինների և հատկապես օդի հետ կապված իմաստներ՝ բո-(չել), նախր-(ել), սավառն-(ել), ցնդ-(ել), փշ-(ել): Առաջին երեք բայարմատները բնութագրում են շարժում օդում և կապված են հատկապես կենդանի օրգանիզմների՝ օդում շարժվելու հետ. փշ-(ել) բայի հիմքն արտահայտում է օդի շարժումը՝ մասամբ ստացած մարդու բերանի առաջ բերած շարժման հետ: Ցնդ-(ել) բայի հիմքն արտահայտում է մոտավորապես նույնը, ինչ լուծ-(ել) բայի հիմքը ջրի համար և կապված է մարդու զգայության՝ տեսնելուց դադարելու (այլևս չտեսնելու) հետ:

4) Կրակի և ջերմության հետ կապված իմաստներ, որոնք մասամբ առնչվում են այլ իմաստների հետ՝ աղանձ-(ել), այր-(ել), արծարծ-(ել), արծն-(ել), բով-(ել), բռնկ-(ել), դաղ-(ել), բրծ-(ել), լուց-(ել), խանձ-(ել), խար-(ել), խարկ-(ել), խորով-(ել), ծխ-(ալ, ել), կիգ-(ել), հանգ-(չել), մար-(ել), մխ-(ալ), ջեռ-(անալ, ել), սառ-(չել), մեկ-(ել), վառ-(ել), վոր-(ալ), վովո-(ալ), տապակ-(ել), տոչոր-(ել), փրփրբ-(ալ): Այստեղ էլ մենք դործ ունենք վիճակային այնպիսի կարգերով բնորոշվող տարբերությունների հետ, ինչպիսիք են կերպը (սկիզբը, ընթացքը, վերջը), ընթացածը (ուժեղանալը, թուլանալը, հարթ ընթանալը), փո-

փոխութիւնը (այլ վիճակի անցնելը, սկզբնական վիճակին դառնալը, նույն վիճակում մնալը, փոփոխվելը), տեղափոխութիւնը և այլն: Տոչոր-(ել) բայարմատը ձեռք է բերել հատկապես մարդու հետ կապված իմաստներ («ծարավ», «կարոտ»):

5) Լուսի և գունի հետ կապված իմաստներ՝ ևսանչ-(ել), ևսոպ-(ել), պլպլ-(ալ), պսպլ-(ալ), ցոլ-(ալ), փաղփաղ-(ել), փալլ-(ել), փլփլ-(ալ), փողփոլ-(ել) բայահիմքերն արտահայտում են լուսի պատճառը (պ →), ցոլ-(ալ) բայի հիմքը՝ նաև անդրադարձումը (սլ →): Հակառակ իմաստներն արտահայտվում են մուլ՝ գոյականական հիմքից ածանցված մբն-(ել) բայի միջոցով:

դ. Նշանային կարգերով բնութագրվող բայարմատներ

Գոյականական կարգերով բնութագրվող (ֆիզիկական երևույթներ արտահայտող) բայարմատների քննության ժամանակ մենք մասամբ շոշափեցինք այն դեպքերը, երբ այս կամ այն ֆիզիկական գործողութիւնը, շարժումը, երևույթը նպատակադրւոյր բնույթ ունեն, այսինքն՝ գործողի մոտ առկա է այն հետեանքի նշանը, որ պետք է առաջ դատվալ գործողութիւնը: Այստեղ հատուկ ուշադրութիւն կդարձնենք նշանայնութիւն հատկանիշով բնութագրվող երևույթներ, հատկանիշներ, գործողութիւններ արտահայտող այն բայարմատների վրա, որոնց դեպքում ուշադրութիւն կենտրոնում նշաններն են: Քննել նշանային կարգերով բնութագրվող երևույթները՝ նշանակում է քննել «հոգեկան» երևույթները լայն առումով: Նշանայնութիւն հատկանիշով բնորոշվող երևույթները միշտ էլ երկրորդային են իրականութիւն նկատմամբ, և ամեն մի նշանի դեպքում առկա է իրական հիմք՝ անմիջապես կամ միջնորդաբար: Ինքը նշանը ոչ այլ ինչ է, եթե ոչ փոխարինող, այսինքն՝ բնորոշվում է կադմի կարգի համապատասխան կերով (կադմ ←, հանում և հավելում):

Նշանայնութիւն հիմքում ընկած է պատճառայնութիւն կարգը, որի դեպքում նշանը ենթադրվում է որպես իրական պատճառի հետեանք (նշատե ←), որպես իրական հետեանքի պատճառ (նշպտե →), որպես իրական պատճառի և իրական հետեանքի նշանային օղակ (նշպտե → —), որպես նշանային պատճառ և նշանային հետեանք (նշպտե ↔), որպես նշանային պատճառի նույնացում նշանային հետեանքի հետ՝ իրականութիւն միջոցով (նշպտե ⊃), որպես նշանային չեղորոշութիւն (նշպտե ⋈):

Հանդես եկած նշանը, անկախ իր պատճառային՝ սերող կապից, կարող է հանդես գալ մի կողմից՝ որպես պարզապես նշան ու բնո-

րոշվել առարկան որոշող (գոյորոշ) նշանային կարգերով, մյուս կողմից՝ առաջ բերել նշանային շարժում և բնութագրվել առգոյորոշ կարգերով: Այդ տարբերությունը շատ լավ երևում է ղգայության և ղգացմունքի համեմատությունից. թեև երկու բառն էլ ծագում են ղգալ բայից (սա էլ՝ ֆիզիկական բնույթի ղալ բայից), բայց առաջինը նշանակում է արտաքին առարկայի կամ երևույթի պարզ ընկալումը՝ կախումը նրանից, երկրորդը՝ սրա առաջ բերած հոգեկան շարժումը. պատահական չէ, որ ղգացմունքին համանիշ հույզ բառի նախնական իմաստն է «շարժում», այսինքն՝ այն նշանակում է հոգեկան շարժում: Քննենք նախ ղգայության բայերը, սպա ղգացմունքի (հույզի) հետ կապվածները:

ղգայության բայերից ամենաընդհանուր իմաստ արտահայտում է ղգալ-ը, որ, ինչպես նշվեց, ծագում է ղալ բայից ղ- նախածանցով. ղգռել բայն ունի «պատճառ լինել ղգալու» իմաստը (հմմտ. ղգացնել), այսինքն՝ պարունակում է պատճառայնության → եզրը, որ ղնահատում է ղգալը ղգայության պատճառի դիրքերից: Մյուս բայերն արտահայտում են ղգայության տարբեր տեսակներ՝ իմաստային լրացուցիչ տարրերով և փոխկադապարմամբ: Մի կողմ թողնելով համի ղգայությունը, որ կապված է ուտելու հետ և մասնակի բնույթ է կրում, մյուս ղգայությունները տարբերվում են առաջին հերթին ղգալով և ղգալովի տարածական չափով՝ իրարից ունեցած հեռավորությունը. մաշկային ղգայությունը ենթադրում է անմիջական շփում՝ ղրո հեռավորություն կամ տեղի կարգի ղրո չափ (տշ.), մյուսները՝ ոչ: Առաջին ղեպքում բայարմատային տարբերությունները պայմանավորված են ղգայության առարկայի, երկրորդ ղեպքում՝ ղգայության փոխանցողի (կխ→) բնույթով:

Անմիջական ղգայությունն արտահայտվում է շոշալի(ել) կրկնավոր բայով: Համի ղգայությունը կարելի է դիտել անմիջական ղգայության մի տեսակը: Ոչ անմիջական ղգայությունն արտահայտվում է լսողությամբ (ղգայում օդի տատանման միջոցով) և տեսողությամբ (լույսի միջոցով): Հոտի ղգայությունը, որ իրականացվում է ղգացողի տարրերի միջոցով, չունի հատուկ բայական ղրսեկորում և արտահայտվում է հոտ առնակել, հոտ ղգալ (հոտ առնել) կապակցությունների միջոցով: Լսելու ղգայությունն արտահայտվում է լս(ել) բայով և սրան փոխարինող ղանաղան արտահայտություններով: Տեսողության հետ կապված արմատական բայերի շրջանակն ավելի մեծ է: Բուն տեսողության ղգայությունն արտահայտող տես-(նել) բայարմատի հետ միասին առկա են մի շարք բայարմատներ, որոնք տեսնելու համեմատությամբ ունեն ալլեալ լրացուցիչ իմաստներ՝ տեղություն, նպատակի

և այլն՝ դիտ-(ել), զնն-(ել), հսկ-(ել), տնտղ-(ել): Մի շարք բայարմատներ ունեն փոխկաղապարային տեսողությամբ բաղադրվել են ուղղութեան → եղբր՝ տեսողութունն ուղղել՝ *հայ-(ել) (այժմ առանձին չի գործածվում. հմմտ. հայելի), նայ-(ել). տեսականութեան լրացուցիչ → եղբն ունեն հառ-(ել), սլշն-(ել), սենն-(ել) բայարմատները. սլշ-(ել) և սլնդ-(ել) բայարմատներն ունեն լրացուցիչ իմաստներ՝ արտահայտելով դարմանք և, սրա հետ կապված, տեսողութեան միջոցի՝ աչքի չափի մեծացում («չոքել»): Նկատել բայն ունի անսպասելիորեն տեսնելու, նըշմարել-ը՝ ոչ ամբողջովին (կազմած) տեսնելու իմաստ: Նեւալ բալը իր մեջ ունի փոխկաղապարային արժեք՝ «տեսնել(ել)», այսինքն՝ զգայութիւնն առնվում է զգայվողի դիրքերից. քվալ-ն ունի այդ նույն փոխկաղապարային արժեքը՝ կազմի փոխարինական եղբի լրացուցիչ արժեքով՝ «մի այլ առարկայի փոխարեն զգայվել»: Ընդհանրապես պետք է նշել, որ զգայական բայերը սլատճառի և հետևանքի փոխհարաբերութիւնը ներկայացնում են հակառակ հարաբերութեամբ. զգայման առարկան ներկայանում է որպէս օբյեկտ, զգայողը՝ որպէս սուբյեկտ:

Եթե բերված զգայութեան բայերն արտահայտում են արտաքին պատճառի և նշանային հետևանքի փոխհարաբերութիւնը, ապա մի շարք բայերի դեպքում առկա է նաև հետևանքի զնահատում՝ զգայվողի համապատասխանութիւն զգայողին (հմմտ.→—) կամ անհամապատասխանութիւն (հմմտ.↔)՝ հաճելի և տհաճ. սրանք երբեմն տարբերակված են ըստ զգայման բնույթի. առանձնապես շատ են մաշկային զգայութեան հետ կապված բայերը, երբեմն արտաքին արտահայտութեամբ հանդերձ՝ խողտել, կոնկռնալ «ցրտից սրթսրթալ», կուցումել, մըսել, սարսռալ, սըքսըքալ (արտաքին ջերմութիւն՝ միջինից պակաս) և շոգել (արտաքին ջերմութիւն՝ միջինից բարձր):

Զգացական բայերի դեպքում զգայութիւնը, առաջանալով որոշակի պատճառից, առաջ է բերում ներքին շարժում, այսինքն՝ արտաքին պատճառի ներքին հետևանքը դառնում է ներքին (նշանային) շարժման պատճառ (նշ→), երբեմն որպէս հակաշարժում (ռեակցիա՝ նշպտճ↗), ընդ որում երկու դեպքում էլ առկա է նաև պատճառի դրական կամ բացասական զնահատումը (հմմտ.↔ և ↔): Այսպիսով, զգացական բայերը հանդիպադրական շարքեր են կազմում ըստ զնահատման բնույթի:

Մի շարք բայեր (իմա՝ բայարմատներ) արտահայտում են վերաբերմունք, անդրադարձ շարժում (նշպտճ↗) առարկաների (չայն իմաստով՝ ներառյալ և կենդանի էակները), երբեմն էլ նրանց գործողութիւնների նկատմամբ, այսինքն՝ արտաքին որևէ առարկա առաջ է բերում հոգեկան դրական կամ բացասական շարժում: Դրական զգացմունք են

արտահայտում, մասամբ արտաքին դրսևորմամբ, արգահատել, գրալ, չհրոշել, Երանել, զմայլվել, խանդաղատել, խղնալ, հարգել, հավանել, հիանալ, ողորմել, պատկառել, սիրել, սխառնալ «հիանալ» սխառնա-
նալ բայերը. գգվել, գուրգուրել, համբուրել, փայփայել բայերը ցույց
են տալիս դրական զգացմունքի ֆիզիկական արտահայտություն. բացա-
սական վերաբերմունք են արտահայտում անգոսնել, առել, արհամար-
հել, գարշել, գգվել, խոտել, խորշել, նախանձել, նողկալ, պժգալ, քա-
մահել բայերը: Այս ցուցակներում մտած բայերը, բնականաբար,
տարբերություններ ունեն վերաբերմունքի պատճառների (շարժառիթնե-
րի) առումով: Այսպես, օրինակ, գրալ, խղնալ և այլն բայերը ցույց են
տալիս զգացումը հարուցողի վատ (բացասական), իսկ նիսնալ, պառ-
կառել և այլն բայերը՝ լավ (զգացողի համեմատությամբ ավելի դրա-
կան) վիճակը. այս նույն ձևով էլ գնահատողական արժեք ունեն ար-
համարել և նախանձել բայերը: Մի շարք բայեր, ի տարբերություն
դրական զգացմունք արտահայտող այնպիսի բայերի, ինչպիսին, օրի-
նակ, սիրել բայն է, արտահայտում են լրացուցիչ պատճառայնություն
(«պատճառ լինել սիրելու»՝ պտճ→)՝ դյուրել, բուլել, կախարդել, հմա-
յել, հրապուրել. այս դեպքում նկատի չենք առնում սրանց հիմքային
սկզբնարժեքը (դյուր, հմա և այլն), որ ավելի կոնկրետ է և կրոնական-
հավատալիքային բնույթ ունի:

Եթե վերևում հիշված բայերի դեպքում զգացումը հարուցողը ա-
ռարկաներն են (լայն առումով՝ իրենց հատկություններով ու գործո-
ղություններով հանդերձ), ապա այլ բայերի դեպքում հատկապես այդ
առարկաների հարուցած գործողություններն են, ընդ որում եղած տար-
բերությունները կապվում են այդ գործողությունների հատկանիշների
հետ:

Գործողությունները կարող են առաջ բերել դրական կամ բացա-
սական՝ հաճելի կամ տհաճ զգացում, այլև համապատասխան վերաբեր-
մունք՝ հակադեցություն (հմտ. հաճ- արմատից կաղմված հաճել և
հաճոյանալ բայերը): Առաջին դեպքում առկա է պարզապես հետևանք
(նշպտճ←), երկրորդ դեպքում՝ հետևանք, որ իր հերթին առաջ է բերում
համապատասխան հոգեկան շարժում (→): Դրական հետևանքը հաճե-
լին է, բացասականը՝ տհաճը կամ, ավելի որոշակի արտահայտված՝
ցավը. վերջինս էլ կարող է լինել ֆիզիկական (ֆիզիկական հետևանքի
նշանային դրսևորում) կամ հոգեկան (հոգեկան հետևանք), որոշ դեպ-
քերում էլ՝ արտահայտել նաև պատճառայնություն (պտճ→), այսինքն՝
ցավի պատճառ դառնալը, այդ ցավի մեծ չափով՝ լլկել, խոշտանգել,
կեղեֆել, կսկծալ, կտտել, մարմաջել, մղկտալ, մղմղալ, մորմոֆել, շա-
շարել, տաժանել, տառապել, տվալտել, ցավել: Բնությունը սրանց մոտ:

են երկրորդային խոռոկել, նեղել բայերը: Յավի շափի թուլացում են արտահայտում ամոֆել և մեզմել բայերը:

Գործողությունների նկատմամբ դրական վերաբերմունք են արտահայտում, այդ վերաբերմունքի տարբեր աստիճաններով, բերկրել, զըվարնանալ, ժպտալ (ֆիզիկական դրսևորումով. հմմտ. նաև ծիծաղել), խալտալ (ֆիզիկական դրսևորումով), խնդալ, խտվտալ «խայտալ», հրնվել, ցնծալ բայերը, ընդհակառակն, մի շարք այլ գործողություններ առաջ են բերում բացասական վերաբերմունք՝ նույնպես սրա աստիճանավորմամբ՝ բարկանալ, զազազել, զայրանալ, քալսծել, լալ (ֆիզիկական արտահայտությամբ), կատաղել, վրդովել, ցասնել: Սրանց մեղմումն է արտահայտում ողոֆել բայը:

Գործողությունների նկատմամբ վերաբերմունքը մի շարք դեպքերում կապվում է դրանք կատարողների ո՞վ լինելու (ինքը թե ուրիշը), նպատակի, ժամանակի (նախորդելու, թե հաջորդելու՝ սպասելի լինելու) հետ:

Քծնել բայն արտահայտում է հաճելի լինելու նպատակադրում (հմմտ. հանդյանալ)՝ բացասական զնահատմամբ:

Մի շարք բայեր արտահայտում են ժամանակով նախորդող (ժ→) սեփական գործողության (սլտծ) բացասական գնահատում՝ ամաչել և ւալաշալել, ալաշխաբել, զղչալ, ստրչալ, վաղմանել: Հաճախակի կամ երկարատև գործողությունների նկատմամբ բացասական ունակցիա է արտահայտում ձանձրանալ բայը:

Ընդհակառակն, այլ բայեր արտահայտում են հաջորդող (ժ←)՝ սպասելիք բացասական գործողության նկատմամբ ունակցիա՝ երկնչել, զարհուրել, սաբսել, սոսկալ:

Մի շարք բայեր էլ արտահայտում են ունակցիա սպասելիք գործողությունից տարբերվող իրական գործողությունների հանդեպ՝ արմանալ, զարմանալ:

Անձկալ, բաղձալ, բղձալ, կարոտել, հավակնել, ձգտել, նկրտել, տենչալ, ցանկանալ, ուզե(նա)լ, փափագել բայերի դեպքում մենք գործունենք նշանի ուղղվածության հետ դեպի առարկան (նշուղղ→), ընդ որում այն կարող է դիտվել որպես անուղղակի (ձգտել մի բանի) կամ ուղղակի խնդիր (ցանկանալ մի բան). փերջին դեպքում առկա է կախյալության լրացուցիչ իմաստ («ձգտել, ունենալ»՝ նշուղղ→ կխ→): Մի շարք բայերի դեպքում կամքը դրսևորվում է որպես գործողության ներքին մղում՝ պատճառ («ցանկանալ մի բան անել»՝ նշսլտծ→, կամ ցանկանալ ուրիշին մի բան անել տալ, այսինքն՝ առկա է կախյալ առարկա՝ նշսլտծ→կխ→—):

Այսպիսի իմաստով կարող են հանգեն գալ ինչպես բերված բայերից ներգործականները (ոչ միայն հաց էմ ուզում, այլև ուզում էմ գրել և ուզում եմ, որ նա գրի), այնպես էլ հատուկ բայեր՝ մի կողմից՝ կամենալ (կամենում եմ տեսնել), մյուս կողմից՝ դրդել, պահանջել, ստիպել (դրդում է նրան գրել, դրդում է նրան, որ գրի, դրդում է, որ նա գրի): Կտղել, տարփալ և տուփել բայերն արտահայտում են կոնկրետ ֆիզիկական գործողության ձգտում:

Լայն առումով վերցրած իմացության բայերի մեջ ամենից առաջ պետք է առանձնացնել այն խումբը, որ ցույց է տալիս նշանի առկայությունը (նշտեղ→) կամ բացակայությունը. նշանի առկայությունը արտահայտում են գիտենալ, իմանալ, հիշել-ը՝ նշանը պահելը (նշտեղ→ փոխ→), ծպտել բայը (հմմտ. և քափցնել) ունի պատճառայնություն լրացուցիչ→եզրը՝ միացած նախորդ բայերի ժխտման հետ (պտճ→ նշտեղ ↔ «պատճառ լինել, որ չիմացվի»): Ուսանել, սովորել բայերն արտահայտում են շարժում չիմացությունից իմացություն (փոփ→ նշտեղ→), մոռանալ-ը՝ բնդհակառակն, իմացության վերադարձը չիմացության (փոփ← նշտեղ→): Կրթել բայը ուսանել, սովորել բայերի նկատմամբ ունի լրացուցիչ պատճառային արժեք (պտճ→)՝ «սովորեցնել»: Ճանաչել բայը ցույց է տալիս նոր նշանի համեմատում հնի հետ և նույնացում, այսինքն՝ արտահայտում է նշանային նույնացում (նշկալմ→) և տարբերվում է հասկանալ բայից նրանով, որ եթե առաջինի օբյեկտն առարկա է, ապա երկրորդինը գործընթաց է և բնութագրվում է համեմատության եզրով: Կոհնել բայը (հմմտ. նաև երկրորդային գոչակել) ունի լրացուցիչ ժամանակային իմաստ՝ նախապես (ժ→):

Խոկալ, խորհել, այլև կրկնավոր մտմտալ և բարդ մտածել բայերը արտահայտում են նշանային պատճառահետևանքային փոխհարաբերություն՝ նշանների կապ: Քննել և (հետա)զոտել բայերը (հմմտ. նաև դատել բայը շմասնագիտացված իմաստով) արտահայտում են նրանց համեմատ նաև նպատակ՝ հասկանալ (մտածել հասկանալու համար), թեև լրացուցիչ կերպով կարող են ունենալ լեզվական արտահայտության լրացուցիչ իմաստ (խոսքով հասկանալ): Ցնորել բայն արտահայտում է մտածողության (դատողության) (նշպտճ↔) կորուստ (կխ↔):

Մի շարք բայեր արտահայտում են մտածողության (նշպտճ↔) հարաբերությունը իրականությանը, Քանի որ նշանը կարող է միջնորդված լինել մի այլ նշանով (իրականություն → նշան → նշան), ապա առաջանում է միջնորդող օղակի՝ իրականությունը համապատասխանել կամ չհամապատասխանել՝ ճիշտ կամ սխալ լինելու (նշուղդ→ և նշուղդ←) հարցը: Կարծել, համարել, հավատալ բայերի դեպքում միջ-

նորդ օղակի համապատասխանությունն է ենթադրվում, կեղծել, հերյու-
րել, հնարել, նորինել, մոզոնել բայերի գեպքում՝ անհամապատաս-
խանություն, կասկածել, վարանել, տատամսել, տարակուսել բայերի
գեպքում՝ երկընտրանք (նշուղղ ↔ եզրը):

Շփանալ բայը (հմմտ. գոռոզանալ, մեծամտել երկրորդային բայե-
րը) արտահայտում է կարծել բայի իմաստը՝ չափի հիմնականն (→)
եզրի (իրականից ավելի մեծ չափ) և -անալ-ին հատուկ «դառնալ» (փոփ-
→) լրացուցիչ իմաստներով հանդերձ. այստեղ կա նաև գործողություն-
ների ազատության (կխ.) կարծիք ունենալու իմաստը, որ ավելի որո-
շակի արտահայտված է նաև լիստել բայի մեջ:

Գալիլեյ և խաղաղական բայերը արտահայտում են մտածողություն
(նշարձ←→)՝ ուղղված (ուղղ→) մեկի գործընթացին հակառակ (փոփ
←→):

Ձորել, կարենալ (կարողանալ) բայերը արտահայտում են պատ-
ճառացնության նշանային և իրական չափերի (նշ պտճչափ→ և պտճ-
չափ→) համապատասխանություն (հմմտ→→):

Հոգեկան գործընթացների հետ կապված բայերն ընդհանրապես
դալիս են ֆիզիկական գործընթացների հետ կապված բայերից. այդ
կապը սովորաբար պատմական է, բայց մի շարք դեպքերում այն ակն-
հայտ է նաև ժամանակակից փուլում կամ հեշտությամբ բացահայտ-
վում է բառային ստուգաբանական վերլուծությամբ: Այսպես, րվրոնել
բայը արդի փուլում էլ կապվում է բռնել բայի հետ և հասկացվում է
«մտքով բռնել», այսինքն՝ հանդես է գալիս յուրատեսակ փոխաբերա-
կան իմաստով: Խեք ածականը և սրանից կաղմված խեքել «խեթ՝ ծուռ
նաչել» բայը վաղ են ենթարկվել նման փոխաբերության, որ երևում
է նաև ստուգաբանորեն նրանց հետ կապված խաչք բառի մեջ՝ «մեղվի
խաչք» և «խղճի խաչք»: Շվիթ բառն ունի դասի կարգի չեղոր (·) եզրի
իմաստ. շվիթել բայի մեջ այն ձևը է բերել լրացուցիչ նշանային (հո-
դեկան) արժեք (բայի «հոգեպես խառնել» իմաստից նաև կաղմի ↔
եզրի նշանային մեկնաբանություն՝ «մեկը մյուսի փոխարեն համա-
րել»), ընդ որում կրավորական սեռի դեպքում նրա իմաստը դառնում
է (ինքնուրույն գործածության դեպքում) հիմնականում հոգեկան (հո-
դեպես խառնվել)։ շաղվել համանիշ բայի շաղ արմատը, որ սկզբնա-
պես ունեցել է «ծուռ» իմաստը (հմմտ. ձայնդարձային շեղ), այժմ գը-
րական լիզվում առանձին գործածություն չունի և պահպանվել է փո-
խաբերական գործածությամբ: Ակնհայտ է, որ նման մի նախնական
իմաստից է ծագում նաև շշկվել-ը, որի շշկիլ- հիմնաձևը հանդիպում
է միայն փոխաբերական գործածությամբ: Սքափվել բայի և սքափ

ածականի մեջ դեռ գիտակցվում է կապը Թալի(ե)լ բայի արմատի հետ: Խծրծել բայի խծրիծ հիմքի այժմ անգործածական խիծ բաղադրիչը մեկնաբանվում է որպես «մեղադրանք», այսինքն՝ նշանային արժեք ունի, բայց բիծ բաղադրիչը առանձին պահել է իր սկզբնական ֆիզիկական իմաստը: Հանդուրծել բայը, որի ծագումը հայտնի չէ (թեև հնչյունական կերպարանքն ակնհայտորեն իրանական է), ունի արդեն քննված տոկալ և տանել բայերի իմաստը՝ հոգեկան առումով:

Պարտ(ե)լ-ի բայարմատը արտահայտում է անհրաժեշտություն, այսինքն՝ նշանային պատճառայնության → — եզրը (իրական պատճառի և հետևանքի նշանային օղակ):

ե. նշանայնությամբ բնութագրվող գոյակների (օրգանիզմների) նետ կապված բայարմատներ

Քննելով լեզվի արտահայտության և բովանդակության պլանները՝ մենք լեզվաբանության բաժինները տարբերակեցինք ըստ դրանց զուգորդումով կազմվող միավորների բարդության տարբեր աստիճանների՝ ձևույթ, բառ, շարույթ, նախադասություն: Այսպիսով, լեզվի էությունը կազմում է երկկողմայնությունը՝ ֆիզիկականի և հոգեկանի («նշանային») զուգորդելիությունը: Գործածելով նշանայնություն բառը լայն իմաստով՝ դրա տակ հասկանալով նաև զդայականության (նշ ←) ամենատարրական դրսևորումը՝ զրգականությունը՝ որպես արտաքին ազդակի (պատճառի) ներքին հետևանք, մենք կարող ենք պայմանականորեն ասել, որ օրգանական աշխարհին բնորոշ է նշանայնությունը, և այս դեպքում էլ առկա են երկկողմանի (նշանային և ոչ նշանային) կազմակերպվածության տարբեր աստիճաններ՝ բույսին հատուկ է զրգականությունը (նշ←), կենդանուն, բացի դրանից, նաև կամայնությունը (նշ→), մարդուն, բացի դրանից, նաև զարգացած մտածողությունը (դատողությունը՝ նշ↔): Մարդկանց միավորումը հանգեցնում է կազմակերպության մի այլ՝ ավելի բարձր աստիճանի՝ հասարակության:

Նշանային պատճառականության տարբեր եղբրերի հիման վրա մենք տարբերեցինք նյութականության նշանային դրսևորման տարբեր աստիճաններ, որոնք գոյականացմամբ դառնում են հենակետային հասկացություններ՝ ոչ ֆիզիկական (ավելի ճիշտ՝ ֆիզիկա-նշանային) այլ հասկացությունները բնութագրելու համար. այդպիսի հենակետային արժեք ունեն բույս, կենդանի, մարդ, հասարակություն հասկացությունները: Մենք սրանց տարբերակման համար հիմք ընդունեցինք նշանային

պատճառականութեան եղբերը, բացի հասարակութուն-ից, որի համար հիմք են ծառայում նաև թվի և կազմի կարգերի համապատասխան եղբերը (թիվ→կազմ→ «շատերի ամբողջութուն»)։ Հասարակութունն էլ կարող է ունենալ տարբեր տեսակներ՝ ըստ միավորման հատկանիշի։

Հենակետային հասկացութիւնների առանձնացման համար հիմք ընդունելով հատկապես նշանային պատճառայնութիւնը՝ մենք թույլ տվեցինք որոշ պայմանականութիւն. նախ՝ որոշ հատկանիշներ կարող են վիճարկվել. այսպիս, մարդու համար բնորոշ համարելով դատողականութիւնը՝ մենք գիտենք, իհարկե, որ կենդանուն էլ հատուկ են դատողականութեան տարրերը, մանավանդ զգայելի իրադրութեան մեջ. երկրորդ՝ կան և գիտական գրականութեան մեջ նշվում են նաև այլ կարևոր հատկանիշներ. այսպիս, օրդանական աշխարհը կոչվում է օրգանական աշխարհ՝ հենց այն բանի համար, որ նրան պատկանող գոյակները («առարկաները») բաղկացած են այնպիսի մասերից (կազմ.), որոնցից ամեն մեկին հատուկ են գործողութիւնների (գործառութիւնների) որոշ տիպեր. մի խումբ իրականացնում է հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ (զեպի ներս՝ ուղղ→տ→—3 և զեպի դուրս՝ ուղղ→տ→3), երկրորդը արտաքինից բերվածը ենթաբխում է փոփոխութեան (փոփ→), երրորդը կապ է ստեղծում տարբեր մասերի միջև (կխ←→). այս խմբերը կոչվում են օրգաններ, և սրանց անվանումները տրվում են նրանց բնորոշ գործողութիւնների փոխակապարմամբ (փոխակերպմամբ). երբեմն կարող է կատարվել երկրորդային փոխակապարմում, և օրգանի անունը կարող է հիմք ծառայել նրա գործառութիւն անվանման համար. բույսերը և կենդանիները տարբերակելու հիմք կարող է լինել շարժվելու հատկանիշը՝ տեղը չփոխելը կամ փոխելը. օրգանական աշխարհի գոյակների համար բնորոշ է նաև իրենց նմաններն առաջ բերելու (սերունդ տալու) կարողութիւնը։ Լեզուների մեջ անվանման հիմք կարող են ծառայել տարբեր հատկանիշներ։

Առաջնային և երկրորդային բնույթի մի շարք բայեր ցույց են տալիս բույսի կյանքի տարբեր շրջանները, հատկապես սկիզբը, ընթացքը և վերջը, այսինքն բնութագրվում են կերպի կարգի եղբերով (կերպ→, →— և ←). բողբոջել, բուսնել, ծլել բայերն արտահայտում են սկիզբը, աճել, ուռնաճալ, փրքել բայերը՝ ընթացքը (զարգացման՝ ընթացածե→, չափի մեծացման՝ չ→, լրացուցիչ իմաստներով), քառամել, քաշամել, բռնել, խամբել, խշկել, կծղել, նլոբել, մծրել «կծղել», սալաբել բայերը՝ վերջը (ընթացածեի ←կերպով՝ հետ զարգանալու լրացուցիչ իմաստով)։ Մամշել, մզկել, նեխել, փտել նախորդների համեմատ ունեն նաև քայքայվելու լրացուցիչ իմաստ (կազմի փոփոխութիւն, մասնատում)

և գործածվում են ոչ միայն բույսերի, այլև ուրիշ կենդանի օրգանիզմների համար:

Կենդանի օրգանիզմի (այդ թվում՝ հաճախ նաև մարդու) կյանքի սկիզբն են արտահայտում երկնել, ծնել, սերել, ցնկնել (վերջինը՝ իմաստային սահմանափակմամբ՝ կենդանիների որոշ տեսակների համար), ընթացքը՝ ապրել, կենալ (տեղի լրացուցիչ իմաստով), վերջը՝ մեռնել, սատկել (հատկապես կենդանիների մասին) բայերը. մի շարք բայեր արտահայտում են լրացուցիչ պատճառ՝ պատճառ լինել ծնվելու, ապրելու, մեռնելու՝ դանազան լրացուցիչ իմաստներով. փրկել բայն ունի «պատճառ դառնալ ապրելու» կամ «շթողնել (խանգարել) մեռնելու» իմաստը, խեղդել, մորթել, սպանել բայերը՝ պատճառ դառնալ մեռնելու («մեռցնել»), ընդ որում խեղդել, մորթել բայերը ցույց են տալիս նաև դրա եղանակը (ընթացաձևը): Բտել, բուծել, խնամել, հոգալ, տածել բայերը ցույց են տալիս կյանքը պահելու (պահպանելու՝ փոփոխություն) պատճառ լինելը. բտել, բուծել բայերի դեպքում այս իմաստը լրացվում է սնելու (ուտեցնելու) իմաստով:

Բտել, բուծել բայերի կապակցությամբ նշված սնելու իմաստը կապված է գոյությունը պահպանելու նպատակով արտաքին աշխարհից օրգանիզմի ներսը նյութեր տանելու գործողության հետ (ուղղ→ տեղ→—3 կխ←՝ «մի բան ներս տանել»): Այսպիսի բայերը տարբերակված են ըստ նյութի բնույթի, իրականացնող օրգանի, իրականացնողի՝ կենդանի թե՛ մարդ լինելու, իրականացման ձևի, գործածության ոլորտների. հմմտ. արածել, դիել «սնել», ըմբռնել, ըմպել, լակել, լիզել, լպպել, լպստել, խծռել, խմել, խրթել «ուտել», ծծել, կլանել, կոնծել, կրծել, նաշակել, չրթել «արևածաղկի սերմ ուտել», սնել, վայելել, ուտել, փաղաղել «լափել». ծամել, մարսել, ուռնալ բայերը ցույց են տալիս կերածի հետագա փոփոխության ու մարմնի կազմի մեջ մտցնելու հետ կատարված գործողություններ՝ գերադանցապես մանրելը: Արբեճալ (արբել), նարբել բայերը ցույց են տալիս խմելու հետ կապված զգայություն թուլացում. հափրանալ, նդփանալ, ալլև կշտանալ բայերը՝ կերակրի ընդունման չափը (սահմանը՝ չ→—): Եթե հիշյալ բայերը ցույց են տալիս պինդ և հեղուկ նյութերի ընդունումը (կայուն ձև և փոփոխվող ձև ունեցող նյութեր՝ ձև→ փոփ→ և ձև→ փոփ→), ապա շնչել, բայը ցույց է տալիս գազային (անձև՝ ձև.) նյութի ընդունումը. թանչել, նևալ, մղձկնել ցույց են տալիս շնչելու արագ և ընդհատ բնույթը (շարժման չափ→ և ընթացաձև.)՝ առաջինի դեպքում՝ նաև ձայնական դրսևորմամբ: Հակառակ այս բայերի՝ մի շարք բայեր ցույց են տալիս օրգանիզմից նյութերի հանումը (ուղղ→տձ3)՝ նույնությամբ (հմմտ. փսխել՝

կամ որպէս ընդունածի և փոփոխածի մնացորդ՝ հավելուրդ (կազմ→)՝ կղկղել, միգել, քառնել:

Զգալի թշուղ բայեր ցույց են տալիս օրգանիզմի տարբեր վիճակներ (փոփ→)՝ ըստ վիճակի ընթացածին՝ դարդացական (ընթձև→), հարթ (ընթձև—, կամ ժխտմամբ՝ անհարթ→), նվազական (ընթձև←), դադարային (ընթձև.), երբեմն պատճառայնութեան, չափի, տեղանութեան և այլ լրացուցիչ իմաստներով հանդերձ. հմմտ. մի կողմից՝ ծյուրել, հյուծել, քնննել (դգացականութեան երանգով), երկրորդային հիվանդանալ, մյուս կողմից՝ ապաքինել, բուժել, կազդուրել, մարգել. մի կողմից՝ քմբել, նիւնել, ննջել, շնքուել, քնել, մյուս կողմից՝ զարքնել (և արքնանալ, զգաստանալ). նմկոտել—ը ցույց է տալիս արթնանալուց հետո կատարած շարժումները. վարակել բայը ցույց է տալիս հիվանդութեան անցումը (փոփ→) մյուսին: Բեզարել, նոգնել, պարտասել բայերը ցույց են տալիս շարժման կամ գործողութեան չափի անցում՝ հանգստի (դադարի) անհրաժեշտութեամբ հանդերձ:

Օրգանիզմի նշանային և մասամբ ֆիզիկական գործունեութեան թուլացում են արտահայտում նվաղել, շշմել բայերը:

Մարմնի կամ որևէ օրգանի չափի ավելացում (չափ→) են արտահայտում բոնել, պարարել (պարարտացնել) բայերը, չափի նվազում՝ (չափ←)՝ սմբել բայը. այս բոլոր դեպքերում նկատի է առնվում նաև չափի ավելացնող կոնկրետ նյութը:

Մի շարք բայեր ցույց են տալիս այս կամ այն օրգանին բնորոշ շարժումներ և գործողություններ: Մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու բռնել (ձեռքերին հատուկ գործողություն՝ բռն արմատից), քայլել (ոտքերին հատուկ շարժում) և այլ բայերի մասին. այստեղ նշենք մի շարք այլ բայեր, որոնք արտահայտում են առանձին օրգանների հետ կապված չափի փոփոխություն՝ փակում—բացում (չ. փոփ←→), մեծացում—փոքրացում՝ (չ→ փոփ←→)՝ բաքախել, քպրտալ, քրքրալ, քլքալ, տրոփել, տրփալ (սրտի մասին՝ երբեմն արագացմամբ հանդերձ՝ ընթձև→), քարքել, նպել (աչքերի կոպերի մասին), կարկալիել, այլև խածել, կծել (ատամների մասին). ստոծանու շարժում են արտահայտում բխկալ, գղթալ, զկոտալ (ձգոտալ) բայերը՝ արտաքին ձայնական դրսևորմամբ հանդերձ: Կրտել, մալել բայերը ցույց են տալիս սերող օրգանի գործելու դադարի պատճառ լինելը:

Քորել բայը ցույց է տալիս մաշկի գրգռվածութեան (նշպտն←) հանգստացում՝ շփման որոշակի եղանակով:

Խոսելով ֆիզիկական գործողությունների մասին՝ մենք առիթ ունեցանք նշելու դրանց մի մասի նշանային՝ նպատակադիր բնույթը: Այստեղ կանգ կառնենք մարդու նպատակադիր գործունեութեան աշխատանք

քի տարբեր բնագավառների, այսինքն՝ այս կամ այն կոնկրետ նպատակը հետապնդող գործողությունների վրա, որոնց ղեկավարում գիտակցվում է հետևանքը, և գործողություններն ուղղված են այդ հետևանքին հասնելուն: Կարելի է մասնավորապես նշել երկու հիմնական նպատակ՝ ընդունվող նյութերի (ուտելիքի և խմելիքի) պատրաստում և արտաքին բացասական ազդեցության (արտաքին բացասական պատճառների) շեղարացում (հակազդում՝ պտճ): Այս գործողությունների համար բնորոշ է գործողության հատուկ միջոցների կամ գործիքների (կիս→) օգտագործումը: Այս բոլոր գործողությունները, բնականաբար, բաղմաբնույթ են և դրանք նշանակող բայերը՝ բաղմամբ (կոնկրետ): Բացահայտել սրանց բոլոր իմաստները՝ կնշանակեք սահմանել դրանց տերմինային արժեքները՝ ձևականացված ըստ համընդհանուր լեզվաբանական կադապարի կարգերի (կատեգորիաների) և եզրերի (տերմինների): Այդ պատճառով էլ կբավարարվենք հայերենի արմատական բայերի սոսկական թվարկմամբ՝ ըստ վերևում տրված ընդհանուր բնութագրման:

Ուտելիքի և խմելիքի պատրաստման հետ կապված գործողություններ են արտահայտում հետևյալ արմատական բայերը՝ աղալ, էտել, թխել, քեել «հունցել», կալսել, կրել, հերկել, հնձել, հունցել, վարել, ցանել, ֆաղել:

Արտաքին բացասական ազդակներին հակազդելու երկու տիպի էական միջոցներ կան՝ հագուստ և բնակարան. առաջին տիպի միջոցները ենթադրում են տարածական չափի բացակայություն այդ միջոցների և մարմնի միջև (հպում՝ չափ.), երկրորդները՝ ոչ (չափ): Առաջին տիպի միջոցների պատրաստման և գործածության հետ կապված գործողությունները նշող արմատական բայերն են բլանդել, բնդել, զգել, կարել, կարկատել, կկել, հագնել (հմտ. նաև ագուցել՝ նույն արմատից), հագնել «կարել» (հմտ. հագնեցություն), հինել, հյուսել, մանել, մրդղակել, շուլակել, պանդունել, պննել, պշել, սագել, սեթեթել «պշովել», սոքտել, ֆերթել, ֆշտել, օթել: Երկրորդ տիպի՝ բնակարանի պատրաստման և օգտագործման հետ կապված արմատական բայերն են բնակվել, կեռտել, շինել, տաշել, ֆանդել: Վերջիններս մասամբ արտահայտում են տեղափոխման միջոցների պատրաստման հետ կապված գործողություններ:

Հասարակական կյանքի հետ կապված արմատական բայերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ 1) մարդկային սովորական հարաբերություններ արտահայտող, 2) սերնդագործության և նրա հետ կապված ազդակցական-ընտանեկան հարաբերություններ արտահայտող, 3) հասարակական կյանքի և գործառության հետ կապված բայեր:

Առաջին տիպի բայերը ցույց են տալիս երկու կամ ավելի մարդկանց սովորական հարաբերություններ, սակայն հաճախ պայմանավորված են հասարակական ընդհանուր նորմաներով: Սրանք մասամբ հարաբերակից են սովորական ֆիզիկական գործողություններ արտահայտող բայերին՝ այն առանձնահատկությամբ, որ հարաբերվող կողմերը մարդիկ են, և գործողությունները՝ միշտ նպատակադիր:

Մի շարք բայեր հանդես են գալիս որպես զգացմունքների արտաբերին զրսևորումներ, որոնք հնարավոր է ֆիզիկապես բնութագրել ՀՀԻ-ի ձևական ապարատով. հմմտ. մի կողմից՝ գրելել, համբուրել, շոյել, պաշել, փալվալել, փարվել, մյուս կողմից՝ գծովել, կովել: Խանդել և ստուգաբանորեն սրա հետ կապված նախաձեռնել բայերը ցույց են տալիս բացասական զգացում՝ միևնույն նպատակին (առաջին դեպքում՝ սիրո, երկրորդ դեպքում՝ որևէ ցանկության հետ կապված առարկայի) հասնելու համար կամ հասնելու ենթադրությամբ: Ընտելանալ բայը (ընդ+ել) արտահայտում է համատեղ կյանքի առաջացրած զգացում:

Միևնույն նպատակին հասնելու մեջ (նպատակի նույնություն) դերադասություն ստանալու գործողություններն է բնութագրում մրցել բայը. հաղթել և պարտվել բայերը ցույց են տալիս մրցման հետևանքը՝ դրական կամ բացասական գնահատմամբ. նպաստել, պաշտպանել, սատարել, օգնել բայերը ցույց են տալիս մասնակցություն նպատակադիր գործողությանը, այսինքն՝ բնութագրվում են կազմի կարգի հիմնական եզրով (→՝ «հետ միասին»): Այցելել բայն արտահայտում է նպատակադիր շարժում մեկի մոտ (տեղ→— ուղղ→ փոփ→):

Սերնդագործական գործողությունների նշանակումները գերադասապես գոհակաբանություններ են, որոնց հետ կապված ազգակցական-ընտանեկան հարաբերություններ արտահայտող բայերը հիմնականում երկրորդային բնույթի են. հմմտ. ամուսնանալ, կին առնել, հարս դառնալ (հարսնանալ) և այլն:

Հասարակությունը իր անդամների ինքնապաշտպանությունը և գոյապահպանությունը ապահովելու համար ստեղծում է համապատասխան գործողություններ կատարող (գործառույթների ունեցող) հիմնարկներ և վարմունքի (պատճառին համապատասխան գործելու) որոշ սահմանափակումներ:

Հասարակական վարմունքի հետ կապված արտոնել (հմմտ. քույլալորել) և արգելել բայերով արտահայտում են կախման կարգի չեղոք եզրի (կախ.) դրական և բացասական գնահատումը («ազատ թողնել» և «ազատ չթողնել»): Այլ կերպ ասած՝ այստեղ մենք գործ ունենք օրենքի և իրավունքի դրսևորումների հետ: Արգելքին հակառակ գործողությունը (հմմտ. քեկ, չնայած շաղկապների լիմաստը՝ պտճ→) կամ

դրա նշանային արտահայտությունը գնահատվում են՝ կատարողի դիրքից՝ զեղծել (հմմտ. նաև հին անցանել (>անցնել) բայի յանցանել և զանցանել ածանցյալներից կազմված յանցանի (>հանցանի) և զանցանի գոյականները), հանցանքի առարկայի դիրքից՝ տուժել բայերով։ Արգելքի խախտումը կամ դրա վերաբերյալ կասկածը առաջ են բերում որոշակի գործողություններ, որոնք արտահայտվում են դատել և իրենել, ներել և պատժել, տուգանել, քաղել բայերով. այս շարքին է պատկանում նաև կաշառել բայը։

Հասարակության անդամների կախմանային հարաբերություններն արտահայտվում են իշխել, վարել (կխ→) և բաղադրյալ ենթարկվել ու երկրորդային հնազանդվել բայերով։

Հասարակության մեջ գոյակների (նյութերի) փոխանակությունը (կալմ←→) և փոխանակվող նյութերի համեմատությունը (համեմատություն→ կալմ←), փոխանակվող առարկաների միջև հանդես եկող միջակա առարկաների (կխ→→) հետ կապված գործողությունները արտահայտվում են սուժել (արժենալ), գնել, ծախել, մսխել, շահել, վաճառել բայերով։

Եթե անձերի կախման հարաբերություններն արտահայտվում են իշխել, վարել տիպի բայերով, ապա անձերից իրերի (երբեմն էլ իրերի նման գնահատվող անձերի) կախման հարաբերությունն արտահայտվում է ունենալ բայով, որին մենք նախորդ շարադրանքում ընդհանուր իմաստ հատկացրինք. այս դեպքում այն գործածվում է մասնագիտացված իմաստով, որից և ունեցվածի (հմմտ. սեփականություն) բառը. այս նույն անցումն ունեն նաև պատկանել, ստանալ բայերը։ Մուրալ բայն ունի «խնդրել ունենալու համար» իմաստը։ Շնորհել բայը «տալ» բայի համանիշն է հասարակական հատուկ երանգով։

Ինչպես որ անհատների միջև գործող հարաբերությունների համար գործածվում են մրցել, կռվել բայերը, այնպես էլ հասարակական որոշ միավորների (ըստ տեղի և ըստ լեզվի ընդհանրության միավորված մարդկանց) միջև հանդես եկող համատիպ հարաբերությունները արտահայտվում են անհատների համար ևս գործածվող հաւածակվել, մախառել, նվաճել, ոգորել և մեծ խմբերի համար գործածվող երկրորդային պատեհագմել բայերով։

Հասարակության մեջ կարող է գործել նշանային մի ամբողջ համակարգ, որ չունի իրական հիմք. սա կրոնական համակարգն է, որի համար գործում են դավանել, պաշտել բայերը. հավատալ բայը «ճիշտ համարել» իմաստից անցում է կատարում այս բնագավառը՝ ցույց տալով հավատը նշանայինի իրական գոյության հանդեպ։

զ. Նյութալեզվական արտահայտության կարգերով
բնութագրվող բայարմատներ

Նշանայնություն կարգերի և եղրերի քննությունն ժամանակ կողմ-
նակի կերպով խոսվեց որոշ բայերի մասին, որոնց գեալքում զգացումը,
կամքը, մտածողությունը արտաքին (զգայարաններով ընկալելի, այդ
թվում՝ լեզվական) արտահայտություն են ստանում. այսպես, լալ-ը
վշտի արտահայտություն է, գրկել-ը և կամբուրել-ը՝ սիրո և այլն: Այս-
տեղ մեր ուշադրության կենտրոնում կլինեն ձայնական և հատկապես
լեզվական արտահայտության գեալքերը: Մենք առաջին հերթին կտար-
բերենք բնաձայնական արմատներով բայերը, որոնք խիստ կոնկրետ
բնույթի են և բաղմխմույթ, այն բայերից, որոնք քննված նշանային
երևույթների լեզվական գրսեորումներ են և արտաքին ձևով արդեն պայ-
մանական բնույթ են ստացել:

Բնաձայն բայերի համար անհրաժեշտ տարր է նշանակվող առար-
կայի իմաստային բնութագրերի մատնանշումը, և բոլոր բնաձայն բա-
յերի քննությունը մեծ տեղ ու ժամանակ կխլեր: Նշենք նաև, որ բնա-
ձայն և ոչ բնաձայն բայերի տարբերակումը որոշ պայմանականություն
ունի. մի կողմից՝ որոշ բայեր, որոնք արդի ընկալմամբ բնաձայն չեն,
ժամանակին եղել են այդպիսին, մյուս կողմից՝ բնաձայն բայերին հատ-
կացվող մի շարք ձևերի մեջ բնաձայնությունը համեմատաբար թույլ
է արտահայտված: Կառուցվածքային առումով սրանց մեջ առանձնա-
նում են նախ՝ կրկնավոր արմատով և արմատի կրկնակ բաղաձայնով
ձևերը (համապատասխանաբար կներառվեն սրանց ոչ կրկնավոր ձևե-
րը), երկրորդ՝ կենդանի աճականներով ձևերը, որոնց նմանողությամբ
կարելի է նոր ձևեր կաղմել, երրորդ՝ այն ձևերը, որոնց մեկ բաղաձայնի
փոփոխությամբ կարելի է բնաձայնական շարքեր կաղմել (հմտ. զրմ-
փալ, դմփալ, գմփալ, բմփալ և այլն). բնաձայն բայերը գերադանցա-
պես ալ խոնարհման են պատկանում: Արմատական բայերի մեր ցու-
ցակում տեղ են գտել հետևյալ բնաձայն ձևերը՝ բառաչել, բարբաչել
«ցնարանել», բարբառել, բզզալ, բլբլալ, բլթլթալ, բգալ, բղբղալ, բղ-
բղկալ, բռ(բ)բռբալ, բվալ, գլգլալ, գմոտալ, գմփալ, գոալ, դալալալ,
դգգալ, դծծալ, դխկալ, դմփալ, դնգալ, դնդնալ, դրդալ, դոնչել (-ալ),
դոռալ, դվվալ, գլգլալ, գխկալ, գկոտալ (ծգոտալ), գղգղալ, գմփալ,
գնգալ, գոալ, քառանչել, բխկալ, բմփալ, բնրնալ, բնկբնկալ, բնծկալ,
բշշալ, բփփալ, ժնգալ, լկկալ, լփլփալ, խգալ, խծծալ, խլխլալ, խըը-
շալ, խոխոչալ, խորդալ, խշխշալ, խռ(ք)խռբալ, խոկալ, խոնչել, խոռալ,
խրխրբալ, խրխնչալ, ծլնգալ, ծլլլալ, ծկլթալ, ծղրտալ, ծմբալ, ծպտալ,

ծվալ, կաղկանձել, կառաշել, կարկաշել, կլանշել, կլրկլթալ, կկկալ, կզալ» կնձկնձալ, կշկշալ, կոալել, կոթկոթալ, կոկոալ, կոնշալ, կոռալ, կվկվալ, կտկտալ, կրկշալ, կրկտալ, կրնտել, հաշել (հաջել), հեկեկալ, հծծել, հոծար(վ)ել, հոհոալ, դողանշել, դոռալ, դունդունալ, նալթել, նարնա-տել, նզզալ, նթթալ, նլրալ, նլլալ, նլփալ, նկ(նկ)ալ, նղալել, նղ(նղ)ալ, նղփալ, ննգալ, ն(ո)ղփալ, նշալ, նպնպալ «շփշփալ», նոթնոթալ, նոնշալ, նոռալ, նովողել, նստնստալ, նվալ, նտնտալ, նրալ (-ել), նփնփալ, նֆֆ)ալ, մալել, մզզալ, մլալել, մկկալ, մնշել, մշմշալ, մորմորալ, մոմոալ, մոնշալ, մոռալ, մրմնշալ, նոռալ, նվալ, շաշել, շառաշել, շրխ-կալ, շնկշնկալ, շննշալ, շշալ, շպպալ, շոնշալ, շվվալ, շրշալ, շլրշլրալ, շխկալ, շո(ո)ալ, շփշփալ, պզզալ, պծծալ, պլթալ, սոսափել, սլսլալ, վզզալ, վծծալ, վլվալ, վզվզալ, վնգալ, վշշալ, վսվսալ, վտվտալ, վրն-շալ, վր(թ)վրթալ, տզզալ, տծծալ, տլլալ, տկտկալ, տրաֆել, տրտրն-շալ, տֆալ, փլթփլթալ, փնթփնթալ, փնշալ, փշշալ, փոթկալ, փոնշալ, փոշտալ, փսսալ, փսփսալ, ֆրֆրալ, ֆլլալ, ֆշփշալ, ֆրմնշալ, ֆր-րջալ, ֆրֆրալ, ֆշշալ, ֆսսալ, ֆս(տ)ֆստալ:

Սկզբնական բնաձայն հիմքեր կարելի է ենթադրել նաև ուրիշ խումբում դրված մի շարք բայերի համար՝ բղալել (հմմտ. նղալել), բոռալ, գեղգեղել, գոշել, գոռալ, քասել «հեալ», քնշալ, քոթովել, կակագել, կանշել, կերկերալ, կոշել, հազալ, հայհոյել, հնշել, հոխոռտալ, հոշակել, շաղփաղփել, շշպոել, սուլել, փղծկալ:

Ընդհակառակն, պապանձվել, սաստել բայերը, որոնք բնաձայնա-կան տեսք ունեն, իրականում այդպիսին չեն՝ դոնե ստուգաբանական եղած տվյալներով:

Նյութական (այդ թվում՝ լեզվական) արտահայտություն մնացած բայերը տարբերակված են ամենից առաջ ըստ արտահայտության միջոցների, որոնք կարող են լինել 1) մարմնական դանաղան տեսանելի շարժումներ և երևույթներ, 2) օդի լսելի տատանումներ՝ ձայն, 3) տեսանելի հետք թողնող միջոցներ, 4) թվարկված միջոցներից երեքը կամ երկուսը՝ առանց սրանց տարբերակման: Բայերի գերակշռող մեծա-մասնությունը կապված է ձայնական արտահայտության հետ, և նախ-քան նրանց վերլուծությունն ու դասակարգումը կանգ առնենք մյուսների վրա:

Զգայական և զգացական, երբեմն էլ կամային երևույթները կարող են առաջ բերել տեսանելի շարժումներ, որպես ակամա դրսևորումներ: Որոշ դեպքերում դրանք արտահայտվում են չմասնավորված բայերով կամ նկարագրորեն, այլ դեպքերում հատուկ բայերի միջոցով: Այսպես, ամաշելու հետևանքով կարմրելը արտահայտվում է կարմրել կամ շառագունել ընդհանուր բայերով, մինչդեռ վախից, ցրտից դեմքի ստվո-

քական գույնը կորցնելը արտահայտվում է հատուկ սփռքնել բայով: Ֆիզիկական հատուկ տեսանկի դրսևորումներ են արտահայտում, օրինակ, արդեն հիշատակված ժպտալ և խայտալ բայերը (հմմտ. ուրախանալ, ցնծալ, որոնք ֆիզիկական անպայման դրսևորում չեն ենթադրում): Այս բնույթի են նաև խրտնել (հմմտ. վախենալ), սրսփալ, սփռքնել բայերը: Այս դրսևորումները հաճախ լինում են ձայնական, բայց ձայնի ակամա դրսևորմամբ և Լրբեմն լրացուցիչ այլ գործողություններով՝ բասել «հեալ», լալ, ծիծաղել, կոծել, հազալ, հեծել, հեալ, ուլբալ, ործկալ, պանծալ, պարծենալ, սգալ, փղծկալ:

Երրորդ տիպի միջոցներով դրսևորվող բայերից նկարել բայն ունի նաև ձևի նմանություն (ձևի հմմտ→) լրացուցիչ իմաստ, որ չկա զրել և տպել բայերի մեջ. վերջիններս տարբերվում են օգտագործած կոնկրետ միջոցներով. ընթերցել և կարդալ բայերն ունեն «գրածը (գրելու առարկայացված հետևանքը) զգայել», Լրբեմն էլ լրացուցիչ «ձայնով արտահայտել» իմաստը, ընդ որում զրած ձևը զրել բայի փոխկադապարման արդյունք է (հմմտ. նաև հեզել, որ ցույց է տալիս կարգալու եղանակը): Գծել, և խազել երկրորդային բայերն արտահայտում են դրսևորման միջոցի ձևը ըստ տարածական դիրքի միաշափուկյան և ուղղության:

Չորրորդ տիպի բայերն արտահայտում են արտահայտման միջոցի առկայություն՝ առանց սրա տարբերակման, թևե սկզբնական բնույթով մեծ մասը կապված է ձայնական արտահայտության հետ՝ քարզմանել «նշանների մի ամբողջությունը փոխարինել մի ուրիշով», մխտել, հերբել, մեծել, հրածարվել «ոչ ասել» (հմմտ. բացասել), հոծար(վ)ել «այո ասել»: Նշել բայը արտահայտում է ձևերի կամ մատի միջոցով (այն նշանակվողին ուղղելով), ապա նաև ընդհանրապես որևէ միջոցով արտահայտելը:

Ձայնական արտահայտություն ենթադրող մնացած բայերը երկու տիպի են՝ բայեր, որոնք նախատեսված չեն ընկալման (լսելու) համար (ակամա բնույթ ունեն) և բայեր, որոնք ցույց են տալիս ընկալելի արտահայտություն, այսինքն՝ ենթադրում են մեկին, որին ձայնով փոխանցվում է նշանը (ուղղ→): Առաջին տիպի բայերը բնաձայնություններ են կամ դրանց մոտ բառեր՝ ալմկել, բղավել, բռռալ, գնդգնդել, գոշել, գոռալ, հեզել, ընդալ, կանչել («ձայն արձակել»), կերկերալ, հնչել, նվագել, ռոնալ, սուվել. այս բայերը տարբերվում են իրարից արտահայտության միջոցի՝ ձայնի հատկանիշներով, որոնք բուն քննության առարկա են հատկապես հնչյունաբանության մեջ: Ընդհանուր բնույթ ունեն կանչել և հնչել բայերը՝ «ձայն հանել»: Մի շարք բայեր ցույց են տալիս ձայնի մեծ ուժը (պտծ→շափ→) և բարձրությունը (հաճախակա-

նությունը՝ հճ→)՝ բղավել, բռնալ, գռել, գռնալ (հմտ. և ոռնալ՝ որոշ կենդանիների մասին), թնդալ, իսկ կերկերալ բայը՝ ձայնի թուլանալը (ստճ-չափ←): Աղմկել բայն արտահայտում է ձայնական ալիքի ձևի (ընթձև)՝ անպարբերականութուն (խառնիխուռն լինելը՝ դաս.), գեղգեղել և երգել բայերը՝ ընդհակառակն (դաս→←). նվագել բայը տարբերվում է երգել բայից ըստ միջնորդավորվածության. առկա է ձայնի լրացուցիչ միջոց՝ գործիք (կիս→—): Սուլել և շաշել բայերը ցույց են տալիս ձայնարձակման աղբյուրից ստեղծված անցքի ձևի և շափի տարբերությունը:

Ինչպես վերևում հիշված գրել և կարդալ, այնպես էլ ձայնական միջոցներ ենթադրող ասել և լսել բայերի միջև առկա է նույն հարաբերությունը, ինչ տալ և առնել (վերցնել) բայերի միջև, այն տարբերությամբ, որ այս դեպքում կախյալը նշանային բնույթի է (նշկիս←): Մընացած բայերը տարբերվում են ասել և լսել բայերից նրանով, որ պարունակում են զանազան լրացուցիչ իմաստներ: Այս առումով լսել բային հարող բայերի շրջանակը մեծ չէ՝ անսալ «լսել կատարելու նպատակով», խլշել «ականջները ցցել լավ լսելու նպատակով»:

Լսել բայի շրջանակին պատկանող որոշ բայեր արտահայտում են ժխտականություն («չասել») կամ դադար («դադարել ասելուց»՝ ընթձև.)՝ լռել, պապանձվել:

Որոշ բայեր հանդես են գալիս որպես զանազան զգացմունքների և ցանկությունների լեզվական արտահայտություն՝ խոսքի առարկայի (անձի, իրի, երևույթի) համապատասխան դրական (լավ) կամ բացասական (վատ) գնահատումով և զանազան լրացուցիչ իմաստային հավելումներով. հմտ. մի կողմից՝ ավետել, գովել, դրվատել, խրախուսել, մաղթել, ջատագովել, օրհնել, մյուս կողմից՝ ամբաստանել, անիծել, բամբասել, բասել, գութել, դարձել, երգիծել, լուտալ, ծաղրել, կշտամբել, կոթել, հայհոյել, հեզնել, նախատել, նգովել, շշպոել, պախարակել, պարսավել, փնովել: Այս բայերի նման գնահատողական իմաստ ունեն նաև մի շարք այլ բայեր, որոնց մի մասը կապված է անցյալում կատարված վատ բանի, մյուսը՝ ապագայում կատարվելիք վատ բանի հետ. խրատել, սաստել բայերը ցույց են տալիս կատարված վատ բանի համար պախարակելը, մխիթարել, սփռփել բայերը՝ հոգեպես հանգստացնելը, բողոքել-ը՝ վատ բանի դեմ ուղղված խոսք, սադրել-ը՝ կատարվելիք վատ բանի դրդում (ստճ→), սպառնալ-ը՝ վատ բան կատարվելու մասին նախնական խոսք («վախեցում»):

Մի շարք բայեր արտահայտում են ցանկության և կամքի դրսևորման տարբեր աստիճաններ՝ երբեմն այն բանի տարբերակմամբ, թե ու՞մ է ուղղված խոսքը՝ աղաչել, աղերսել, աղոթել, ապսպ(ա)րել, քախանձել, խնդրել, հայցել, հրամայել, պահանջել, պաղատել:

Եթե նախորդ բայերը կապված են զգացմունքի և կամքի դրսևորման հետ, ապա մի շարք բայեր արտահայտում են իմացամտածողական գործընթացներ. ակնհայտ է, որ այս դեպքում նույնպես կարևոր է զննատողական բնույթը, հատկապես իրական ուղղվածությունը՝ իրականությանը համապատասխանելը կամ շահամոլատասխանելը՝ ճիշտ կամ սխալ լինելը. հմմտ. խաբել, (ստել, այլև սուտ ասել, հակառակել, նիշտն ասել), համոզել, հայտնել, վիճել, ուրանալ: Հարցնել բայը կամային և իմացական իմաստների զուգորդում է՝ «ցանկանալ իմանալ, խնդրել հայտնել՝ տեղեկացնել», այսինքն՝ ցանկություն է հայտնվում մեկին՝ որևէ բանի մասին հաղորդելու իրեն՝ պատասխանել: Ելադիսով, հարցնել և պատասխանել բայերը որոշ հակադարձ հարաբերության մեջ են: Բանդագուշել և շաղվաղվիել բայերը ցույց են տալիս մտքի խանգարման լեզվական դրսևորումը՝ «հիմար՝ անմիտ բաներ ասել»:

Խոսքի նշանակության և իրականության փոխհարաբերության վրա են հիմնված երգվել և դրժել, խոստանալ, խոստովանել բայերը, ընդ որում երգվել-ը, դրժել-ը և խոստանալ-ը ենթադրում են գործողության ժամանակային հաջորդում (երգվել, խոստանալ «ասել, որ կարվի», դրժել «ասածը չանել»), խոստովանել-ը՝ նախորդում («արածը ասել»):

Մի շարք բայեր ասել բայի համեմատությամբ ցույց են տալիս տեղականության, ընթացականի, փոփոխության, ժամանակային հաջորդականության կարգերին հատուկ տարբերություններ՝ զեկուցել, խոսել, պատմել, նամարտակել և քոքովել, կակազել, ոգել:

Հետևյալ բայերը ցույց են տալիս մեծ թիվ նրանց, ում ուղղված է խոսքը (արտահ ուղղ→ թիվ→)՝ հռչակել, հրապարակել (արդի իմաստով՝ գրի միջոցով):

Կանչել, կոչել, հրավիրել բայերը ցույց են տալիս խոսքով նշվող ապագա շարժում ասողի ուղղությամբ (ուղղ←), վոնդել բայը՝ ասողի հակառակ ուղղությամբ (ուղղ→):

Մի քանի բայ ցույց են տալիս «հպարտանալ, մեծամտել» իմաստների արտաքին, հատկապես լեզվական արտահայտությունը՝ հոխորտալ, պարծենալ (հմմտ. նաև պանծալ):

Կատակել երկրորդային բայը ցույց է տալիս ծիծաղ հարուցելու համար ասվածը:

ա. Արմատական ածականները և նրանց իմաստային
վերլուծության սկզբունքները

Ժամանակակից հայերենի ածականների մինչաշխարհային ուսումնասիրությունները սահմանափակվել են նրանց բառակազմական, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների նկարագրությամբ: Համեմատաբար քիչ ուղադրություն է նվիրվել նրանց իմաստաբանական վերլուծությանը. այս բնագավառի հազվագեղև փորձերը փաստորեն իմաստային սովորական դասակարգումներ և իմաստային առանձին խմբերի ոճական բնութագրումներ են: Եվ սա հասկանալի է. իմաստային վերլուծությունը պահանջում է համապատասխան տեսական սկզբունքներ. մինչդեռ ժամանակակից իմաստաբանական տեսությունները, ներառյալ նաև, այսպես կոչված, սերող իմաստաբանությունը և բաղադրական վերլուծությունը, ինչպես նշվել է, չեն թալիս ամբողջ բառապաշարն ընդգրկող վերլուծության միասնական սկզբունքներ: Ինչպես հայտնի է, ածականների մեջ միավորվում են այն բոլոր բառերը, որոնք գոյականական բառակապակցություն կաղապարի մեջ զբաղեցնում են գոյականին անմիջապես նախորդող որոշչի տեղը՝ «Երկու բարձր պատ»: Կարող է, իհարկե, հարց ծագել. ո՞րն է ածականի համար բնորոշը և նախնականը՝ որոշչային այդ գործառույթը, թե՞ մի այլ գործառույթ՝ նրա հանդես գալը որպես ստորոգելի (ստորոգյալի անվանական մաս)՝ «Պատը բարձր է»: Ըստ համընդհանուր լեզվաբանական կաղապարի ուսմունքի՝ այս երկու գործառույթները սերտորեն կապված են և փոխադարձելի որպես հարաբերության (ռելացիա) և հատկանշման (մարկացիա) զրսևորումներ՝ «Պատը բարձր է»←«Բարձր պատ». սրանց միջև հարաբերությունը անմիջականի և ոչ անմիջականի է՝ իրացման և հիշողական ակտի. «Պատը բարձր է» նախադասության մեջ բարձր-ը մղված է առաջին պլան, որպես տվյալ պահին ամենաէականը, իսկ «Բարձր պատ» կապակցության մեջ բարձր-ը արդեն յուրացված փաստ է. «Պատը բարձր է» նախադասությունը նույնն է, թե «Պատը բարձր պատ է», այսինքն՝ «Պատ=բարձր պատ» (տվյալ պահին):

Ժամանակակից հայերենի արմատական ածականների իմաստային վերլուծության համար հարկավոր է ունենալ համապատասխան ցանկ: Մեզ համար հիմք են ծառայել այդպիսի երեք ցանկեր՝ կազմված Հ. Աճառյանի ու Ա. Սուքիասյանի [Աճառյան, 1952, 26—32], մեր [Ջաֆարյան, 1974, 305—360] և Մ. Ասատրյանի կողմից [Ասատրյան, Բ, 1974, 61—65]. Հ. Աճառյանի և Ա. Սուքիասյանի ցանկն ընդգրկում

է 697 միավոր, բայց նրա մեջ դգալի թիւ են կազմում հնացած, ժամանակակից լեզվում անգործածական բառերը, որոնք չեն տրված հաջորդ երկու ցանկերում: Մ. Ասատրյանն ավելացրել է նաև ժողովրդական որոշ բառեր աստղանիշով՝ ազիզ, ախմախ և այլն, որոնք, սակայն, նախնական բնույթ չունեն և գերազանցապես արդեն առկա ածականներին համանիշներն են. այսուհանդերձ սրանք անհրաժեշտորեն հաշվի կառնվեն հետագա վերլուծության ընթացքում: Թե՛ Աճառյան-Սուքիասյանի և թե՛ Ասատրյանի ցանկերում փակագծերի մեջ տրված են բաղադրյալ այն ածականները, որոնց աղբյուրին լինելը կա՞մ կասկածելի է համարվել (Հ. Աճառյան), կա՞մ ժամանակակից լեզվի առումով ոչ լիովին ընդունելի (Մ. Ասատրյան):

Եթե մենք երեք ցանկերից նախ՝ հանենք ակնհայտորեն հնացած ու բաղադրյալ կազմութունները՝ վերջիններից թողնելով միայն այնպիսիները, որոնց արմատներն առանձին գործածված չեն հանդիպում, և երկրորդ՝ ավելացնենք որոշ նոր գործածական, այդ թվում՝ ժողովրդական ու պատահմամբ բաց թողնված ածականներ², ապա կունենանք ածականների մի ցանկ, որ կընդգրկի 566 միավոր: Այստեղ տեղ չեն գտել նորագույն փոխառութունները, որոնք գերազանցապես տերմինային բնույթ ունեն: Այդ ցանկը բերվում է գրքի վերջում որպես հավելված:

Ցանկը օգտագործելիս հարկավոր է անհրաժեշտաբար նկատի առնել, որ հայերենը չունի ածականների «գոտ» ձևաբանական նիշեր, ինչպես, օրինակ, ռուսերենը. հայերենի ածականները, հատկապես արմատականները, բավական հաճախ ունեն գործառական երկվութուն, որը լուծվում է ոչ թե ձևաբանորեն, այլ շարահյուսական գործածությամբ. որոշ ածականներ միևնույն ձևով կարող են գործածվել գոյականաբար (հմմտ. մութ), այլ ածականներ՝ մակբայաբար (հմմտ. շատ). կան նաև գոյական/ածական/մակբայ գործածությամբ բնութագրվող ածականներ (հմմտ. սխալ, սուտ): Երկգործառությի և եռագործառությի բառերի գործառութուններից մեկի նախնական լինելը կարող է որոշվել մասամբ պատմականորեն (ծագմամբ), մասամբ սերման իմաստագործառական բնութթյամբ:

Ինչպես ամեն մի վերլուծութուն, այնպես էլ մոնիստական վերլուծութունը չի կարող 1) փոխարինել բոլոր դիտութուններին և գուշակել բոլոր դիտական նվաճումները, 2) հաշվի չառնել որոշ նշանակութունների պայմանականություններն ու կոնկրետ պայմանավորվածութունը:

² Եղած ցանկերում հակադիր իմաստները երբեմն հաշվի չեն առնված. այսպես, Մ. Ասատրյանի ցուցակում պարզ-ը կա, բարդ-ը՝ ոչ:

Այն բանալի է տալիս միայն մարդկային լեզվի նշանակումների էությունը հասկանալու համար: Այստեղից բխում է, որ վերլուծության ընթացքում կարող են սուսաջ քաշվել որոշ հենակետային հասկացություններ, որոնք տվյալ մակարդակում չեն վերլուծվում, հենվում են անմիջական փորձի վրա, երբեմն էլ գիտության տվյալ փուլում անբացատրելի են: Այդ անհրաժեշտ է մասնավորապես հատուկ անունների դեպքում:

Վերլուծության ժամանակ նկատի են առնվում ածականների բաղմիմաստությունը և համանիշությունը: Համանիշ ածականներից վերլուծության համար ընտրվում է միայն մեկը՝ սովորաբար ամենագործածականը, ամենագործածականներից էլ՝ բնիկ հայերենը: Սրանով իսկ վերլուծվող ածականների թիվը զգալիորեն կրճատվում է:


Մոնիստական վերլուծության ժամանակ պետք է հստակ տարբերել բուն իմաստային սահմանները նրանց գործառական սահմաններից: Եթե ածականների մի մասը, ինչպես նշվել է, կարող է գործառական փոխարինել գոյականներին, որոնցից քերականական կախման մեջ է, և մակբայներին, որոնց ինքն է կախման մեջ դնում, ապա, ածականների մյուս մասը հարաբերողների արժեք ունի և այս առումով մոտենում է կապերին. նրանց խնդիրը յուրատեսակ կապի խնդիր է. այսպես, հակառակ-ը և զերծ-ը սովորաբար դրվում են ածականների մեջ, բայց հավասարապես կարող են դրվել նաև կապերի մեջ:

բ. Առաջնային ածականներ

Ներկա հատվածի հիմնական նպատակը բնականաբար առաջնային արմատական ածականների իմաստային վերլուծությունն է, այսինքն՝ այն ածականներին, որոնք, ըստ որոշչային կարգերի, բնութագրում են նյութական և տարածական օբյեկտներ (իրեր, կենդանիներ, անձեր) կամ ինքնին (հմտ. մեծ), կամ հիմնական կարգերին բնորոշ հարաբերությամբ հանդերձ (հմտ. ամուրի «առանց կնոջ»): Ոչ առաջնային (երկրորդային) ածականները բուն գործառությամբ ածականներ չեն, այլ կարող են մեկնաբանվել որպես բայերի ու բայական բառակապակցությունների փոխկադապարման (փոխակերպման) արդյունք. սրանք մասամբ ածականացած մակբայներ են, որոնք անփոփոխ ձևով դրվում են կա՛մ փոխկադապարված (փոխակերպված) բայանունների վրա (առաջ է ընթանում→առաջ ընթացի), կա՛մ, փոխկադապարված (փոխակերպված) բայերի (իմա՛ դերբայների) ղեղմամբ, այլ գոյականների վրա (տունը նոր է կառուցվել→նոր (կառուցված) տուն), մասամբ էլ փոխկադապարված (փոխակերպված) բայերի (դերբայների) ու բառակապակցու-

թյունների (գերբայական դարձվածների) արժեք ունեն (գործը օժանդակում է→օժանդակ գործ, հույը լավ բերք է տալիս→ (լավ բերք արվող=) արգավանդ հող): Այսպիսով, երկրորդային ածականների բուն իմաստային վերլուծությունը փաստորեն մակբայների ու բայերի վերլուծության խնդիրն է:

Ինչպես արդեն նշվել է, ածականները բնորոշվում են երկու հիմնական գործառույթով՝ որոշչային և ստորոգելիական, որոնք սերտորեն կապված են և փոխադարձելի: Սակայն հարկավոր է նկատի ունենալ հետևյալը. 1) նախադասությունը լեզվի կիրառության ելակետն ու նպատակահետն է. 2) անվանական բառակապակցության կազմում չկա ժլինչ, որ հանդես չդա նախադասության մեջ. 3) փոխակերպման դադափարը հենվում է նախադասության վրա. 4) բայերի փոխակերպումն անհրաժեշտորեն սկսվում է նախադասության քննությունից, մի բան, որ սկզբունքի միասնության համար պետք է տարածել նաև ածականների վրա: Այս նկատառումներով առաջնային համարելով (ինչպես քայների համար) ստորոգելիական գործառույթը՝ կունենանք հետևյալ պատկերը.



Առաջնային արմատական ածականների վերլուծությունը և սերտմը ըստ հիմնական ութ կարգերի հակադրության եզրերի կարելի է կատարել հետևյալ բանաձևով՝ ածական (կազմ₁, ..., 6) (կախում₁, ..., 6) (թիվ₁, ..., 6) (դաս₁, ..., 6) (ձև₁, ..., 6) (ուղղություն₁, ..., 6) (չափ₁, ..., 6) (տեղ₁, ..., 6) կամ, համապատասխան կրճատ նշանակումներով՝ ած. (կզ₁, ..., 6) (կխ₁, ..., 6) (թ₁, ..., 6) (դ₁, ..., 6) (ձ₁, ..., 6) (ու₁, ..., 6) (չ₁, ..., 6) (տ₁, ..., 6): Հիմնական ածականների սերման դեպքում փակագծերը բացվում են ձախից աջ, և հետևողականորեն (հերթով) տրվում կարգերի 6-ական եզրերն ըստ համակցությունների (կոմբինացիաների)՝ մեկական (1-ին տակտ), երկուական (2-րդ տակտ), երեքական (3-րդ տակտ) և այլն. այլ կերպ ասած՝ 1-ին տակտում առանձնացվում են պարզ իմաստով ածականները՝ ըստ հնարավոր բոլոր դեպքերի. 2-րդում՝ հնարավոր երկուական համակցությունները (կազմի կարգի եզրերը՝ մնացած 7 կարգերի եզրերի, կախման կարգի եզրերը՝ մնացած 6 կարգերի եզրերի հետ և այլն). 3-րդում՝ հնարավոր երեքական համակցությունները

(կազմի կարգի եզրերը՝ կախման և թվի կարգի եզրերի, ապա կազմի ե-
շափի կարգերի եզրերը՝ մնացած կարգերի եզրերի հետ և այլն): Ինչպես
տեսնում ենք, բարդ իմաստների հնարավոր տիպերը բավականաչափ շատ
են, բայց իրականում արմատական ածականների մեջ երկուսից ավե-
լի համակցություններով տիպերի իրացումները հազվադեպ են, երկու-
ականներինն էլ, ինչպես կտեսնենք, սահմանափակ: Այն հարցը, թե
աշխարհի լեզուներում ի՞նչ չափով են իրանում բոլոր հնարավոր համակ-
ցությունները, բաց է մնում:

Եթե սերման դեպքում մենք կարգերից և եզրերից ենք դնում դե-
պի հնարավոր իմաստները, ապա վերլուծության դեպքում վարվում
ենք հակառակ կարգով, այսինքն՝ նախ բացառում ենք երկրորդային
ածականները, ապա առաջնային ածականները բաշխում ենք ըստ
առանձին կարգերի ու եզրերի՝ առանձնացնելով պարզ և բարդ իմաստ-
ներով տեսակները: Համանիշների դեպքում որպես հիմնական ըստ-
հնարավորին ընտրվում են ամենագործածականները և ոճականորեն չե-
զոքները, մնացածները բերվում են փակագծերում: Ըստ անհրաժեշտու-
թյան փակագծերում կարգերի համապատասխան եզրերի դիմաց տըր-
վում են նաև՝ 1) որոշ հնացած, անհավաստի կամ բաղադրյալ ածա-
կաններ՝ իմաստային հակադրությունները և իմաստով բաղադրյալ (բազ-
միմուլթ) ածականները մեկնաբանելու համար, 2) այն բազմիմաստ ածա-
կանները, որոնց առաջնային հիմնական իմաստները բերված են այլ տե-
ղերում:

Առաջնային արմատական ածականների թիվը երկրորդականների
համեմատությամբ մի քանի անգամ պակաս է: Սրանց մեջ մենիմուլթ
արմատական ածականների թիվը հնարավոր 58-ից անց է, բայց դը-
րանց բաշխումը, ինչպես կտեսնենք, անհավասարաչափ է. կան եզրեր,
որոնք համապատասխան արմատական ածականներով չեն ներկայացված,
և, ընդհակառակն, կան եզրեր, որոնք ներկայացված են մեկից ավելի
համանիշներով:

Մենիմուլթ ածականների վերլուծության արդյունքները կարելի է
արտահայտել ինչպես բանաձևով, այնպես էլ համապատասխան աղյու-
սակով:

Բանաձևերն էլ իրենց հերթին կարելի է արտահայտել ինչպես եզ-
րերի բուն նշանակումներով, այնպես էլ նրանց կարգային հաջորդակա-
նությունների համապատասխան թվանշաններով. կզ→ կամ կզ1, կզ← կամ
կզ2, կզ→ — կամ կզ3 և այլն: Սրանց հարաբերությունը ցույց տալու նը-
պատակով այս դեպքում ընտրենք երկրորդ ուղին և բերենք մենիմուլթ
ածականները.

1) կղ₁ — զանազան (բնորոշիչներն ընդհանր, խառն) խումբ, խումբ, շխմթ)

կղ₂ — զուրկ (թերի, պակաս, պռատ, ախիզծ)

կղ₃ — զուտ (խտակ, մաքուր)

կղ₄ — անպակաղ (աղճատ)

կղ₅ — հոծ

2) կի₁ — ուրույն

կի₆ — ազատ (զերծ, լուկ, ջուկ, սոսկ)

3) թ₁ — չատ (առատ, բազում, սովոր)

թ₂ — քիչ (զուլզն, նվազ, չքնչին, սակավ, սուղ)

թ₃ — որոշ ճմի քանիք

թ₅ — (ամբ)ողջ (բովանդակ)

թ₆ — (մեկ)

5) ձ₁ — չեղ (թեր, թյուր, խոտոր, ծառ, կեռ, մոլոր)

ձ₂ — բաց (խռ, ծակ, փոս,

ժխտական՝ փակ, խուփ)

ձ₃ — ուղիղ (հավասար, ձիգ, շիտակ)

ձ₄ — սուր (ժխտ.՝ բռն)

ձ₅ — կտր (կտր)

ձ₆ — ճապող (տարտամ)

6) ա₅ — հակառակ (թարս)

7) չ₁ — (հեռ)

չ₂ — մոտ (մերձ)

չ₆ — կից (կիպ, քիփ, ժխտ.՝ անջատ, բաժան զատ, ջուկ)

8) ա₁ — աջ

ա₂ — ձախ (աջակ)

ա₆ — ժափուր (գատարկ, նանիր, սին, տնայն, փուչ, ժխտ.՝ լի, տուղ)

Մենիմույթ արմատական ածականների բաշխումը այժմ արտահայտենք աղյուսակով (տե՛ս աղ. 4):

Մենիմույթ ածականների աղյուսակի կապակցությամբ հարկ ենք համարում մի քանի էական դիտողություն անել:

1. Ինչպես նշվել է, ոչ բոլոր եզրերն են, որ ներկայացված են համապատասխան արմատական ածականներով: Դրան հակառակ՝ կան եզրեր, որոնք ներկայացված են համանիշների շարքերով:

2. Որոշ ածականներ մենիմույթների շարքը դասելու պայմանականությամբ ունի. այս դեպքում մենք նրանց վերագրել ենք վերացական իմաստներ: Հարկավոր է նկատի ունենալ, որ բուն եզրային արժեք ունեն այն ածականները, որոնք հավասարապես կարող են վերաբերել տվյալ բնույթի բոլոր գոյականներին թե՛ որոշչային և թե՛ ստորոգելիական դիրքերում, այսինքն՝ իմաստային սահմանափակությամբ չունեն և արտահայտում են ամենավերացական իմաստներ. ինչպես նշվել է, որքան կոնկրետ են իմաստները, այնքան բաղմիմույթ են այդ ածականները, այսինքն՝ ավելի շատ բաղադրիչներ են պարունակում:

3. Համեմատաբար հաճախադեպ են այն արմատական ածականները, որոնք բնորոշվում են բաղկացականությամբ հատկանիշով, այս-

Կարգեր եղեր	Կազմ	Կախում	Թիվ	Դաս	Ջե	Ուղղորթյուն	Չափ	Տեղ
→	զանազան (բնորոշ // փնթոր) (խառն // խուռն) (խոփ) (շփոթ)		շատ (առատ) (բազում) (սովաբ)		շեղ (թեթ) (թյուր) (խոտոր) (ծուռ) (կեռ) (մոլոր)		(հեռու)	Մաջ
←	զուրկ (թերի) (սակապ) (սկապ) (տխեղծ)		քիչ (դույզն) (նվազ) (չնչին) (սակավ) (սուղ)		բաց (խոռ) (ծակ) (փոս) (ժխտ.՝ փակ) (ժխտ.՝ խուլի)		մոտ (մերձ)	Ն ձախ (ահյակ)
→	զուտ (խստակ) (մաքուր)		որոշ		ուղիղ (հավասար) (ձիգ) (շիտակ)			
↔	աղավաղ (աղճատ)				սուր (ժխտ. բութ)			
Ս	հոծ	ուրույն	(ամբ)ողջ (քովանդակ)		կլոր (կոր)	հակառակ (թարս)	կից	թափուր (դատարկ) (նանիր) (սին) (ուսյն) (փուլ) (ժխտ.՝ լի)
		ապատ (զերծ) (լոկ) (սոսկ)	(մեկ)		ճապաղ (տարտամ)		(կիս // բիս) (ժխտ.՝ անջատ) (ժխտ.՝ բաժան) (ժխտ.՝ դատ) (ժխտ.՝ ջոկ)	(ժխտ.՝ տուգ)

ինքն ամբողջի՝ բաղադրելիների (տարրերի) հետ ունեցած հարաբերութ-
 ւոյուններով որոշվող կարգերով՝ կազմ, թիվ, ձև, չափ. ընդհանրապէս,
 խիստ սակավադեպ են այն կարգերով բնութագրվողները, որոնց դեպ-
 քում միավորները առնվում են անկախ ամբողջից՝ իրենց տիպի միա-
 վորների հետ ունեցած հարաբերութեամբ՝ կախում, դաս, ուղղութիւն,
 տեղ. այս կարգերով որոշվող ածականները հաճախ կապալին արժեք
 ունեն. հմտ. ազատ, զերծ, փափուկ և այլն:

4. Նախապես ասվածին համապատասխան տարբերելով ելրերի
 դրսևորման սովորական և գիտական հայեցակետեր, կարելի է ասել,
 որ անվանման հիմք է դառնում սովորական հայեցակետը. սրա հե-
 տեանքով մասամբ ստուգաբանական և գիտական-տերմինալին իմաստ-
 ների, մասամբ բառարանային մեկնութիւնների և գիտական սահմա-
 նումների միջև հանդես են գալիս հակասութիւններ: Միաժամանակ
 հարկավոր է նկատի առնել, որ քանակական կարգերի դեպքում ածա-
 կանները տալիս են ընդհանուր դրսևորումները. մասնակի և ճշգրիտ ար-
 տահայտութեան անհրաժեշտութեան դեպքում մենք դիմում ենք համա-
 պատասխան թվականներին՝ երկու, երեք, չորս ... (փոխանակ շատ,
 քիչ ... բառերի), երկրորդ, երրորդ, չորրորդ ... (փոխանակ միջին-ի՝
 առաջին-ի և վերջին-ի միջև): Ինչպես կտեսնենք, այսպիսի ճշգրիտ ար-
 տահայտութիւն ունեն զույգ, շուրտ բառերը՝ կազմի լրացուցիչ իմաս-
 տով «երկուսը միասին»:

Հիմնական կարգերով բնութագրվող բաղմիմույթ ածականների հան-
 գամանալից թվարկումն ըստ բոլոր համակցութիւնների իմաստաբա-
 նական բառարանի խնդիրն է: Այս դեպքում նպատակահարմար է դի-
 մել նրանց բանաձևային ներկայացմանը. աղյուսակային ներկայացու-
 մը ծավալուն է լինում. եթե մենիմույթ ածականների դեպքում մենք
 գործ ունենք 8 կարգերի հետ, ապա երկիմույթ ածականների դեպքում
 հնարավոր է այդ կարգերի $\frac{8 \cdot 7}{1 \cdot 2} = 28$ համակցութիւն: Ճիշտ է, սա-
 կայն, որ արմատական ածականների դեպքում բոլոր համակցութիւն-
 ները չէ, որ հանդես են գալիս. երկիմույթ արմատական ածականների
 համար բնորոշ են հատկապես որակական և քանակական, ինչպես նաև
 չափի ու տեղի կարգերի ղուդորդմամբ բնութագրվող տիպերը, ընդ
 որում դրանց թիվը մեծ չէ:

1) կազմի և թվի՝

կղ1թ1—բարդ

կղ1թ3—գույք (շուխտ)

կղ3թ1/6—պարզ (հասարակ)

3 Եզրի ժխտումն ամենուրեք արտահայտվում է նրա վրա դրված զծով, հնարավոր
 իմաստային տարբերակը՝ թեք զծով:

- 2) կազմի և չափի
կղճ₁ — խիտ (թաղկ, թանձր,
թավ, կոռ, սեղմ, սերտ)
կղճ₂ — նոսր (լուծ, ցանցառ,
ցիր)
- 3) կազմի և ձևի
կղճ — գունդ
- 4) կախման և թվի
կիս₁թ₁ — հարուստ (ճոխ)
կիս₁թ₂ — աղքատ
- 5) ձևի և թվի
ձ₄թ₆ — բեկբեկ
ձ₅թ₆ — ուր (վերտ)
- 6) ձևի և տեղի
ձ₃տ₁ — հարթ (կոկ, հիլի, ո-
ղորկ, տափակ)
- 7) ուղղութիւն և տեղի
տ₁տ₂ — ցածր (կախ)
- 8) չափի և տեղի
չ₁տ₁ — մեծ (խոշոր, վիթխա-
րի)
չ₂տ₃ — փոքր (մանր, պո-
ճոր)
չ₁տ₄ — երկար
չ₂տ₄ — կարճ
չ₁տ₄ — լայն (արձակ)
չ₂տ₄ — նեղ
չ₁տ₁₂ — խոր
չ₁տ₂₂ — ծանծաղ

Հաստ և բարակ, նուրբ ածականները, ի տարբերութիւն լայն և
նեղ ածականների, ունեն լրացուցիչ կղճ իմույթը, այսինքն՝ նյութական
կազմն են բնութագրում, համապատասխան տարածական չափով հան-
դես գալիս որպէս եռիմույթ միավորներ:

Հիմնական կարգերով բնութագրվող մենիմույթ և երկիմույթ արմա-
տական ածականների կողքին կան բուն բազմիմույթ արմատական ածա-
կաններ, որոնք հիմնական կարգերին հատուկ իմաստների հետ միա-
սին պարունակում են լրացուցիչ իմաստներ, և, հետևաբար, իրենց բնույ-
թով աւելի կոնկրետ են, քան արդեն քննվածները: Սրանց մեջ կարելի
է տարբերել երկու հիմնական խումբ:

Առաջին խումբը կազմում են այն արմատական ածականները, որոնք
վերաբերում են ոչ թե առարկաներին ընդհանրապես, այլ նրանց որո-
շակի խմբերի կամ կոնկրետ առարկաների, հատկապես կենդանիների
և անձերի. սրանով իսկ նրանք փաստորեն պարունակում են այդ առար-
կաններին հատուկ իմաստային տարրեր, կենդանիների և անձերի դեպ-
քում՝ նշանաշուկայան հատկանիշով բնութագրվող կարգերին հատուկ
իմաստներ: Մենիմույթ և երկիմույթ ածականների մեջ դրված մի շարք
ածականներ ևս, ինչպէս նշվել է, այս տիպի են, բայց որոշ պայմա-
նականութեամբ առնված են համեմատաբար վերացական իմաստով,
առանց կիրառման սահմանափակության: Այստեղ թվենք այս տիպի
նախ հիմնականում կենդանիների ու անձերի, ապա այլ առարկաների
վերաբերող արմատական ածականները. 1) ածղակա (հմտ. մեծ), ան-

նոռնի (Հմմտ. տձև), ավագ (ի հակադրություն ստորադաս-ի), ապրատամբ (կիս₂) (ըմբոստ, խեռ, ստամբակ՝ ի հակադրություն հնազանդ-ի), գանան (Հմմտ. կարն), զուսպ (կիս₅), լղար (Հմմտ. բարակ. բայց Հմմտ. նաև գեր), յլլոր «նիհար», կարոտ (Հմմտ. զուրկ), կոլոտ (Հմմտ. կարն), կուզ (Հմմտ. բեք, ծոտ), հարեան (Հմմտ. մոտ և կից), հնազանդ (կիս₂ «ենթարկւող, կախյալ») (նլու), հսկա (Հմմտ. մեծ), նագուկ (Հմմտ. բարակ), նիհար (Հմմտ. բարակ. բայց Հմմտ. նաև գեր), շիլ (Հմմտ. շեղ), ջոջ (Հմմտ. մեծ), պարբ (Հմմտ. մեծ), վտիտ (Հմմտ. բարակ), փարքամ. 2) անապակ (Հմմտ. մաֆուր), բրոնն (Հմմտ. խառն), գանգուր (Հմմտ. ոլոր), զուլպ (Հմմտ. մաֆուր), քնջուկ (Հմմտ. խիտ և ոլոր), լոշտակ (Հմմտ. լայն), խոնոն (Հմմտ. ոլոր), հստակ (Հմմտ. մաֆուր), ձուլլ (Հմմտ. հոծ), շարմաղ (Հմմտ. մաֆուր), հորդ (Հմմտ. շատ, առատ), ջինջ (Հմմտ. մաֆուր), վարար (Հմմտ. շատ, առատ), վնիտ (Հմմտ. մաֆուր):

Երկրորդ խումբը կազմում են այն արմատական ածականները, որոնց իմաստները ա) հիմնական կարգերի եղբերին հատուկ իմաստների և բ) գոյականական կոնկրետ իմաստների զուգորդումներ են: Հիմնական կարգերի եղբերին հատուկ իմաստներով ածականները, որոնք բերվել են մենիմուլթ ածականների քննության ժամանակ, այս դեպքում ունեն յուրատեսակ կապային արժեք և ստորոգելիական դիրքում արտահայտում են ենթակայի հարաբերությունը մի այլ գոյականի հետ, որ կատարում է խնդրի դեր. այլ կերպ ասած՝ այս դիրքում ստորոգելին ներկայացված է ածական հարաբերիչով և գոյական հարաբերչալով, ընդ որում որոշային դիրքում սրանք հանդես են գալիս կամ երկու բառի, կամ, ինչպես քննվող արմատական ածականների դեպքում, մեկ բառի ձևով. բնականաբար, հնարավոր է մակբայական լրացումի առկայություն, որ նույնպես կարող է բառապես հանդես գալ կամ չբալ: Ստորոգելիական և որոշային դիրքերի փոխհարաբերությունը նույնն է, ինչ նախապես քննված մենիմուլթ և երկիմուլթ ածականներինը.

ա) որոշիչ	որոշյալ ← ենթակա	ստորոգելի
բ) ածական	գոյական ← գոյական	ածական գոյական
գ) ամուսնույց դուրկ	կին ← կինը	դուրկ է ամուսնույց
(այլի)		(այլի է)



Արմատական ածականներին՝ քննվող խմբի համար բնորոշ են հատկապես ածականական այն իմաստները, որոնք հատուկ են կազմի կար-

գի հիմնական ($\rightarrow$) ու հակադիր ($\leftarrow$) եզրերին և ցույց են տալիս մի բան լրացուցիչ կերպով ունենալը, կամ մի բանից զուրկ լինելը: Որոշ վերապահումով այս հարաբերությունները կարող են ներկայացվել որպես ունենալ և ժխտական չունենալ բայերի փոխակերպումներ՝ ունենցող և չունենցող, երբեմն սրանց միացող ժամանակի, չափի և այլ լրացուցիչ իմաստներով հանդերձ՝ 1) զեջ, գեբ (պարսեր), բաց, խոնավ, նամ, շոռ, չադ, պղտոր, տամուկ. 2) ազապ, ամուպ, ամուրի, այրի, բորիկ, գոնջ, գոշ, գոս, լեբկ, խեղ (հաշմ), կազ, կույր, կունդ, հուլանի, նադատ, մերկ, ուրբ, չուր, ցամաֆ, ֆաշալ:

Մի շարք արմատական ածականներ պարունակում են համեմատություն եզրերին հատուկ իմաստներ՝ սովորաբար զուգորդված լրացուցիչ այլ իմաստների հետ: «Բուն» համեմատական (վերացական) իմաստները արտահայտվում են այնպիսի բառերի միջոցով, որոնք մասամբ հատկացվում են դերանուններին, մասամբ բաղադրյալ են. 1) $\rightarrow$ —՝ նույն, 2) $\leftrightarrow$ ՝ տարբեր. ածականների դեպքում ունենք $\rightarrow$ իմաստի լրացմամբ արժանի, հավասար (թիմատ—), հարմար, պատեհ, պատշան, վայել, $\leftrightarrow$ իմաստի համար՝ ուրիշ, օտար: Նման ածական-կապը ներկայացնում է եզրը ըստ ձևի՝ ձ համտ— (համտ. պես):

գ. երկրորդային ածականներ

Եթե մինչև հիմա քննված ածականների համար բնորոշ են գոյորոշ, հատկապես ոչ ընթացային կարգերը, այսինքն՝ դրանք կազմում են բուն ածականների խումբը, ապա մնացած (երկրորդային) ածականները բնութագրվում են առգոյորոշ, հատկապես ընթացային, այլև նշանային կարգերով, որոնք բնորոշ են բայերի և մակբայների համար: Նրանց փոխկաղապարումը, ըստ որոշչային և ստորոգելիական դիրքերի փոխհարաբերության՝ վերևում նկարագրված սկզբունքների, կարելի է պատկերացնել երեք ձևով:

1. Ստորոգելիական դիրքի բայը մակբայ-լրացումով կամ առանց դրա փոխակերպվում է համապատասխան որոշչի (որ բաղադրիչների մթազնամբ կարող է հանդես գալ նաև որպես արմատական ածական)՝ մարդը շարժվում է դանդաղ--դանդաղ շարժվող (=դանդաղաշարժ) մարդ:

2. Ստորոգելիական դիրքի բայը մակբայ-լրացումով հանդերձ փոխակերպվում է համապատասխան որոշչի, ընդ որում բայ-որոշիչը կարող է զեղչվել որպես ինքնին հասկանալի (որպես գոյականի համար սովորական գործողություն կամ վիճակ արտահայտող), և նրա մակ-

բայ-լրացումը կարող է դառնալ ածական-որոշիչ՝ մարդը վարվում է լավ→լավ (վարվող) մարդ:

3. Ասորոգելիական դիրքի բայը փոխակերպվում է զոյական որոշյալի, նրա մակբայ-լրացումը՝ որոշչի՝ կադատաբային դիրքի համատարտասխան տեղաշարժով՝ մարդը շարժվում է դանդաղ→(մարդու) դանդաղ շարժում, մարդը վարվում է լավ→(մարդու) լավ վարք:

Սկզբնային համարելով ասորոգելիական դիրքերը, ե, հետևաբար, դրանց իմաստային վերլուծությունը թողնելով բայերի և մակբայների իմաստային վերլուծությանը՝ ածականների համար մենք այստեղ կբավարարվենք ընդհանուր դիտողություններով:

Առգոյորոշ, հատկապես ընթացային կարգերով բնութագրվող արմատական ածականները ներկայացված են երեք հիմնական կարգերի պատկանող իմաստներով և դրանց այլ կարգերի հետ ունեցած տարբեր համակցություններով. այդ երեք հիմնական կարգերն են փոփոխությունը, տեղությունը և ժամանակը, որոնք համապատասխանում են գոյորոշ (ոչ ընթացային, հիմնական) կարգերից համեմատությանը, ուղղությունը, չափին և տեղին:

Այս կարգերով ներկայացված մենիմուլթ ածականները մեծ թիվ չեն կազմում, եթե նկատի չունենանք ոչ ընթացային ածականների ընթացային գործածությունները, հատկապես տեղի ածականների ժամանակային գործածությունը.

- 1) ϕ_1 ($\phi \leftarrow$)՝ փոփոխական ընթացք) — երեք
 ϕ_6 (ϕ ՝ ափսոսանք ընթացք) — անդուր (անքուլթ, իսողազ-հանդարտ, մարմանդ)
2) ψ_2 — (սլ ψ ՝ հետևանքի բացակայություն) — դուր (իզուր)
3) θ_1 ($\theta \rightarrow$) — կանուխ (վաղ)
 θ_2 ($\theta \leftarrow$) — ուշ
 θ_3 ($\theta \leftarrow \rightarrow$) — հավերժ (հավետ)

Համեմատաբար շատ են երկիմուլթ և բազմիմուլթ ածականները, նշենք երկիմուլթ ածականները.

- | | |
|--|--|
| 1) տեղություն և չափի (ժամանակային և տարածական չափերի).
տե ₁ չ ₁ — արագ (շատագ, շուտ, փուտ)
տե ₂ չ ₂ — դանդաղ (կամաց) | տե ₁ պ ₁ — հեշտ (դինջ, դուր-ին)). թեթե
տե ₂ պ ₂ — դժվար. ծանր |
| 2) տեղություն և պատճառաշնորհություն.
նոթյուն. | 3) տեղություն և ժամանակի
տե ₁ թ ₁ — հին
տե ₂ թ ₂ — նոր |

Ինչպես գոյություն ունի (հիմնական), այնպես էլ առգոյություն, հատկապես ընթացային կարգերով բնութագրվող արմատական ածականների դեպքում կարելի է առանձնացնել բավական սովոր մի խումբ, որի մեջ մտնողները կիրառվում են կոնկրետ առարկաների, հատկապես կենդանիների ու անձերի և որոշակի վիճակների ու երևույթների նկատմամբ, այսինքն՝ իմաստային սահմանափակություն ունեն։ Կենդանիներին և անձերին վերաբերող արմատական ածականների մեջ կարելի է առաջին հերթին առանձնացնել երեք հիմնական խումբ. 1) ածականներ, որոնց իմաստները փոփոխության (ընթացքի) կարգին են վերաբերում՝ արտահայտելով օրգանիզմի տարբեր վիճակներ՝ երբեմն զուգորդված քանակի, չափի և այլ կարգերին վերաբերող իմաստների հետ՝ կենդանի (ողջ), արթուն (զարթուն), զգաստ, սթափ, փուտ. 2) ածականներ, որոնց իմաստները կապված են պատճառայնության կարգերի եզրերի, նեղ առումով՝ սերունդ տալու և նրա հետ կապված ազգակցության հետ՝ արու (որս), էգ, կույս, կուրտ (կրտված), հարազատ, խորք, հոլի, ստեղծ. 3) ածականներ, որոնք ցույց են տալիս անձերի, երբեմն էլ ընդհանրապես կենդանիների ապրած ժամանակի տևողությունը ինչպես ընդհանուր հակադրությամբ՝ անդրանիկ (ավագ, երեց), կրտսեր, այնպես էլ տևողության տարբեր չափերով՝ մատաղ, պատանի, երիտասարդ (ջահել, ջիվան), ծեր (պառալ)։ Հարկ ենք համարում հիշեցնել, որ կենդանուն կարելի է բնութագրել նշանային պատճառայնության հակադիր եզրի (←)՝ զգայության հատկանիշով, որպես «զգայող», որի հետ որպես լրացուցիչ հատկանիշ կարող է զուգակցվել «ինքն իրեն շարժվող» «շարժուն» հատկանիշը. անձին (մարդուն) կարելի է բնութագրել նշանային պատճառայնության փոխադարձ եզրով (↔) որպես «մտածող, դատող», այլ կերպ ասած՝ հիշյալ ածականների մեջ առկա են նշանայնության լրացուցիչ իմաստներ։ Մյուս արմատական ածականներն են՝ ածան/էծան (հակադիր՝ քանկ), ամուր, ավեր, աշխույժ (ժիր), արգավանդ (բեղուն, բերրի), բարգավան, բամբ, բարկ (բորբ, բեծ), բուռն, դալար, դողդոջ, զիլ, քանկ, քառամ (քառամ), քարմ, քափառ, թունդ, թույլ (ամոֆ, մեղկ, մեղմ, մվաղ), լավ, խախտ (խախտվ), խակ (ագոխ, ժուռ), խեթ, խոպան (կորդ), ծույլ (նույլ, պղեթ), կերկեր, հզոր (նուժկու), (ան)հողողող, հուտրի, ձրի, նապուկ, պատրաստ, պարապ, պիրկ, փոխր, փաթու։

Այժմ համառոտակի խոսենք նշանային կարգերով բնութագրվող արմատական ածականների մասին։ Ինչպես նշվել է բացերի կապակցությամբ, նշան բառն այստեղ առնված է որոշ պայմանականությամբ։ Այն սովորաբար հանդես է գալիս որպես որևէ առարկայի (լինի այն

նյութական թե հոգեկան) տեղակայող (փոխարինող) և, հետևաբար, բնորոշվում է կաղմի կարգի 3-րդ (միջին) եզրով ($\rightarrow$ —): Սակայն նշանը կարող է ձևոք բերել ինքնուրույնություն և նշանակել այնպիսի առարկաներ, որոնց իրականության մեջ որոշակի օբյեկտներ չեն համապատասխանում կամ համապատասխանում են անմիջապես ոչ զգալի՝ ենթադրական օբյեկտներ:

Նշանաչություն հատկանիշը հնարավորություն է տալիս նկարագրելու հոգեկան երևույթները և վիճակները, որոնք թեև ընթացային բնույթ ունեն, բայց կարող են արտահայտվել ոչ միայն բայերի, այլև ածականների և գոյականների միջոցով. բայերի դեպքում դրանք գիտվում են որպես որոշ գործընթացներ (պրոցեսներ), ածականների դեպքում՝ որպես որոշ վիճակներ (հմտ. ուրախ—տխուր), գոյականների դեպքում՝ որպես զգայության օբյեկտներ (հմտ. լույս, ձայն, հոտ, համ, բայց շոշափել): Համապատասխանաբար քննարկվող նշանային ածականները տարբեր բնույթ ունեն:

Հոգեկան պրոցեսների, հատկապես հոգեկանի և իրականի հարաբերության ձևական նկարագրությունը, հենվելով համընդհանուր լեզվաբանական կաղապարի նշանային պատճառաչություն կարգի վրա, կունենա հակադրության վեց եզրերի հետևյալ դրսևորումները.

պ $\rightarrow$ (պ₁) — մղում (կամք, ցանկություն).

պ $\leftarrow$ (պ₂) — կիրք (զգացմունք, ապրում).

պ $\rightarrow$ —(պ₃) — անհրաժեշտություն (պարտականություն).

պ $\longleftrightarrow$ (պ₄) — դատողություն.

պ $\supset$ (պ₅) — նպատակ.

պ. (պ₆) — անտարբերություն:

Նշենք, որ առարկաների ձևը, չափը, ուղղությունը և այլն մեղտրվում են տարբեր զգայությունների միջոցով, և, հետևաբար ընդհանրական լեզվաբանական կաղապարի հետեղական կիրառումը պահանջում է այս բոլոր դեպքերում ելնել ոչ թե բուն զգայություններից, այլ դրանք հարուցող առարկաների ու նրանց շարժման ֆիզիկական բնութագրերից: Դրանց ձևական հանգամանակից նկարագրությունը դուրս է գալիս այս գրքի բուն նպատակներից, ուստի բավարարվենք արմատական ածականների բաշխմամբ ըստ վերևում հիշված եզրերի:

Արմատական ածականների մի զգալի մասը կապված է նշանի առկայության (իմացության) կամ բացակայության (անիմացության), նշանի և նշանակվողի համապատասխանության կամ անհամապատասխանության հետ՝ աշկարհ—գաղտնի (քաճուկ, ծածուկ), բուն «խակահան» (խկ/ը)—կեղծ (սլափո, սուտ), իշտ (հավաստի, նշգրիտ, նըշ-

մարիտ, ստույգ, վավեր) — սխալ (մոլար): Որոշ ածականներ էլ բնութագրում են անձներին ըստ իմացության կամ անիմացության, նշանի և նշանակվողի հարաբերությունը համապատասխանաբար թե ոչ համապատասխանաբար ներկայացնելու՝ խարդախ (նենգ), ծանոթ (տեղյակ), շվար:

Նշանակալից թիվ են կազմում զգայության արմատական ածականները, որոնց դեպքում ածականի որոշչային և ստորոգելիական դիրքերի փոխհարաբերությունը հիմնականում նույնն է, ինչ հիմնական կարգերով բնութագրվող ածականների դեպքում՝ այն տարբերությամբ, որ ստորոգելիական դիրքի ամբողջությունը կարելի է դիտել, որպես մի ստորադաս նախադասություն, որի համար որպես գլխավոր է ծառայում զգայական բնույթի բայ-ստորոգյալ ունեցող (զգալ, տեսնել, լսել և այլն) որևէ նախադասություն՝ (մարդը տեսնում է, որ) տունը կարմիր է → կարմիր տուն:

Այսպիսով, ստորոգելիական դիրքում գտնվող ածականը ցույց է տալիս որևէ զգայելի հատկություն, որ ֆիզիկապես կարող է բնութագրվել կազմի, ձևի, չափի և այլ կարգերի եզրերով: Համապատասխանաբար զգայական ածականները կարող են բնութագրվել զգայության հետ կապված որոշակի լրացուցիչ հատկանիշներով՝ չափի (զգայելի օբյեկտի հեռավորության զրո չափը՝ չ, ինչպես համի զգացման, շոշափման դեպքում, և ոչ զրո չափը՝ չ, ինչպես տեսողության, լսողության, հոտառության (?) դեպքում), պատճառայնության (զգայելի օբյեկտի իրական ակտիվություն՝ բուն պատճառ լինելու, ինչպես ձայնի դեպքում, կամ չլինելու, ինչպես շոշափման դեպքում) և այլն: Զգայության ածականները կարելի է խմբավորել նաև ըստ ազդեցության՝ դրական (հաճելի) և ոչ դրական (տհաճ) լինելու:

Զգայական արմատական ածականների մեջ ամենից ավելի մեծաթիվ են տեսողության և մաշկային զգայության հետ կապված ածականները: Տեսողության հետ կապված ածականները ցույց են տալիս տեսանելիության չափը, գույները և գույների արտահայտման չափը (աստիճանը)՝ երբեմն դրանց կիրառման սահմանափակումներով (լրացուցիչ իմաստներով)՝ ալ, ավան, աղոտ, աշխետ, բոսոր, գորշ, դալուկ, դեղին, դեղձան, թուփ, լուրթ, խաժ, խավար, խարտյաշ, ծավի, կանաչ, կապույտ, կարմիր, (խայտա)ճամուկ, ներմակ, մառ, մուգ, մութ, նսեմ, շեկ, չալ, պայծառ, սև, սպիտակ, վառ (բուն իմաստով՝ «վառվող», որ նշանային արժեք է ստացել): Եթե սրանց միանում է զգայական ընկալումը՝ համապատասխան դրական կամ բացասական գնահատմամբ, ապա հանդես են գալիս այնպիսի ածականներ, ինչպիսիք են՝ գողտր(իկ), հոյակապ, չֆնաղ, պերն, սիրուն:

Մաշկային զգայության (շոշափելիք, ջերմազգայություն) արմատական ածականները, եթե զանց առնենք նրբերանգային տարբերություններն ու փոխաբերական կիրառությունները, հետևյալներն են՝ ա) ջերմազգայական՝ գաղշ, գոլ, եղկ «գոլ», զով, հով, շոգ, պաղ, ջերմ, սառն, տափ, տոյր, ցուրտ. բ) շոշափելիքի զգայության՝ գիրգ, բմփլիկ, կակուղ, կարծր, կոպիտ (փոխաբերական հատուկ նշանակում), կոշտ, պինդ, բռն-բռն (վերջինս փոխաբերական ուժեղ նշանակում՝ ի հակադրություն կոպիտ-ի)։

Համի հետ կապված և համի տարբեր զգայություններ արտահայտող արմատական ածականներն են՝ ախորժ, անուշ, դառն, քրու, լեղի, մախոշ, տափպ, ֆաղցր։ Առանձնակի է մնում հում ածականը, որը հակադրվում է եփած դերբային և կարող է դիտվել եփել բայի ժխտականի փոխակերպումը՝ «չեփած»։

Հսկիքի հետ կապված և ձայնը բնութագրող արմատական ածականները սակավաթիվ են՝ բամբ, զիլ, խոպոտ։

Հոտառություն հետ կապված արմատական ածականներ չկան։

Բացի արտաքին ազդեակների զգայությամբ պայմանավորված ածականներից, կա ներքին ազդեակների զգայությամբ (ինքնազգայությամբ) պայմանավորված այնպիսի արմատական ածականների մի սակավաթիվ՝ խուժք, որոնք ցույց են տալիս կամ ընդհանուր ինքնազգացում՝ առողջ, առույգ, կայտառ, հիվանդ, կամ որևէ ներքին պահանջ ու նրա բավարարում՝ անոթի, անսլավ, ծառավ, կուշտ, պապակ։ Վերջիններս կարելի է դիտել որպես ներքին ձգտման և արտաքին միջավայրի՝ այն բավարարելու փոխհարաբերություն արտահայտող բայերի փոխակերպումներ՝ «ուտել՝ խմել ցանկացող», «այդ ցանկությունը բավարարած»։ Սրանով իսկ այս ածականները իմաստով տարբերվում են զգայության ածականների մյուս խմբերից։

Այժմ խմբավորենք հակադրության նշանա-ընթացային կարգերով բնութագրվող արմատական ածականները՝ նկատի ունենալով, որ զբոսնք կարող են կիրառվել մասամբ համապատասխան դործողությունների ու արարքների, մասամբ դրանցով բնութագրվող անձերի նկատմամբ։ Որոշ ածականներ էլ ունեն և՛ այս, և՛ այն կիրառությունը. նշենք, որ այսպիսի շատ ածականներ ունեն դերբայական արժեք։

Ցանկության (մղումի, կամքի՝ սրա տարբեր դրսևորումներով ըստ չափի, առարկայի և այլն) ածականներն են՝ ագան, ալիամա, ժլատ (կծծի, նղնիմ), զե(ղ)խ (շվայտ, ցով), կարկամ, պագշոտ (խեն-նեշ, շամբուշ, վալաշ), սեբեք։

Զգացմունքի (կրքի, ապրումի) ածականներն են (բերվում են ըստ զգացմունքը բնորոշող հատկանիշների և դրականի ու բացասականի

հակադրության)՝ քաջ (արի, խիզախ, կտրին, հանդուգն)—երկշտ (վեհեր)—զգույշ—ապահով, զարշ (զագիր), դժպիս (ժպիրհ, լկտի, լպիրշ). նախանձ. ուրախ (զոհ, երջանիկ, զվարթ)—տխուր (մռայլ, նկուն, վրհատ, տրտում)—լուրջ, դաժան (անագորույն, բարբառոս, բիրտ, բոհ, դժխեմ, դժնդակ, դժնի, ժանտ, խիստ, խոժոռ). ամենի (ապերասան, խոլ, վայրագ)—խեղճ (թշվառ, լղրնուկ, հեզ, նաչար). տաղտուկ:

Անհրաժեշտության (պետքի, պարտականության) ածականներն են՝ լավ (ազնիվ, առափնի, արդար, բարի, բնտիր, վեհ, վես, վսեմ)—վատ (ապիրատ, գեշ, հոռի, չար, ստահակ, սոռ, սրիկա, վատքար)—չփերթ «անփութ» (փեթի):

Եթե անհրաժեշտության (պարտականության) եղբը հասկանանք լայն առումով (որպես հասարակական նորմայից բխող անհրաժեշտություն), ապա այստեղ կարելի է դնել մի շարք արժատական ածականներ, որոնք մասամբ համապատասխան ֆիզիկական հատկությունների կիրառումն են հոգեկան հատկությունների նկատմամբ՝ սրանց հասարակական նորմայի դիրքերից եկող գնահատումով, մասամբ հասարակական արժեք ունեցող մի շարք գործողությունների հետ կապված բազմիմույթ հասկացությունների նշանակումներ: Առաջին տիպի ածականներից կարելի է հիշատակել շռայլ (հմտ. առատ), մտերիմ (հմտ. մոտ), հեզ (հմտ. փափուկ, մեղմ), նվաստ (հմտ. ցած, այլև նույնպես հոգեկան հատկություն նշանակող սոռ): Մյուսը յուրատեսակ փոխաբերական գործածություններ են, որոնք մասամբ դեռ պահպանել են կապը ֆիզիկական իմաստների հետ (հմտ. շռայլ), մասամբ՝ ոչ: Այսպիսի բնույթ ունեն կրոնական բնագավառին անցած այնպիսի ածականներ, ինչպիսիք են սուրբ (հմտ. մաքուր. սուրբ բառի սկզբնական իմաստն է «մաքուր, սրբված»)—պիղծ (փծուն): Երկրորդ տիպի ածականներից հիշենք թշնամի—գերի—հաղթ, ավազակ—գող, լիբ (բոզ, լաշառ), այլև լոթի, խումար, պանդուխտ, վեստ:

Մտածողության (մտքի, դատողության) ածականներն են՝ հիմար (ախմախ, անհեքեք, գիծ, դմբո, խենթ, խե, սարսաղ, տխմար, ցնոր) և, զգացական-գնահատողական երանգով, հախտուն, հպարտ (ամբարտավան, զոռ, զոռոզ, խոխտ, կոկոզ, սեզ)—համեստ:

Ներքին ուժի կամ կարողության (հնարավորության) ածականներն են՝ նարտար (կիրթ, հմուտ, նարպիկ, սովոր, վարժ, փորձ)—խամ, վարան:

Հոգեկան շեղոթության ածականներն են՝ նաշտ և ժխտական՝ ամբարիշտ:

Կան զգալի թվով արժատական ածականներ, որոնք ունեն լեզվական արտահայտության հետ կապված իմաստներ: Մյուսը բնութագրում

ձեն մասամբ խոսքը, մասամբ անձերի հատկությունները ըստ խոսքի բնույթի: Առաջին տիպի իմաստները, բնականաբար, ընթացային և նշանային կարգերի կիրառումն են խոսքային պրոցեսի նկատմամբ, երկրորդ տիպի իմաստները՝ խոսքային բայերի համապատասխան փոխակերպումները անձերի նկատմամբ (մոտ են դերբայական իմաստներին):

Խոսքը (ոճը) բնութագրող արմատական ածականներն են՝ ամփոփ (հակիրճ, համառոտ), խրթին—որոշ, նոռոմ: Անձերին ըստ խոսքի (լեզվի) կամ դրա ընկալման բնութագրող արմատական ածականներն են թոթով, լուռ (սուս), խուլ, կակազ, համր (մուռն), հալվան (հոժար), շաղակրատ (շաղկապ), շողոփորբ (շողոմ, փաղափուշ), փուռ. սրանք մասամբ կարող են բնութագրել և՛ խոսքը, և՛ անձերին. հալվան, շողոփորբ, փուռ ածականները ցույց են տալիս նշանային իմաստները սովորաբար նյութալիզվական արտահայտություններ: Ընդհանուր առմամբ կան դեպքեր, երբ միևնույն հատկությունները բնութագրվում են կա՞մ անկախ նյութալիզվական արտահայտությունից, կա՞մ աչգ արտահայտությունից հանդերձ. հմմտ. հալարտ և պարծենկոտ:

Տ. ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԱԿՐԱՅՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Արմատական մակրայնր

Ժամանակակից հայերենի արմատական մակրայների թիվը մեծ չափով պակաս է արմատական ածականների և արմատական բայերի թվից. մեր կազմած ցուցակներում արմատական ածականների թիվը 566 է, արմատական բայերինը՝ 1185, մինչդեռ արմատական մակրայների թիվը, ձեթ նույնիսկ նրանց մեջ զննեք իբրև բաղադրյալ չգիտակցվող կամ թույլ գիտակցվող աչնախի բառեր, ինչպիսիք են ալժմ, արդեն, իսկույն, հաճախ, հեռու, հույժ, վաղը, վաղուց, հասնում է 48-ի.

ալժմ	դեսը	հալվետ
ապա	դուրս	հալկերժ
առաջ	կրեկ	հար
արադ	խակոյն	հեռու
արդ	խեթ	հետ
արդեն	կանուխ	հետո
գանդադ	կրկին	հերու
դենը	հազիվ	հիմա
դեռ	հաճախ	հույժ

մենթո	չտապ	վալր (վար)
միշտ	շուտ	վեր
մոտ	շուրջ	վերև
նախ	շուրջը	ցած
ներս	վաղ	ուղիղ
ներքև	վաղը	ուշ
շատ	կատուց	քիչ

Այս ցանկի մեջ մտած բառերի զգալի մասի համար «մակբայ» անվանումը պայմանական է: Նախ՝ մի շարք դեպքերում մակբայներն առանձնացված են միայն ըստ գործածության և զգալի մասով համընկնում են ածականների, կապերի և շաղկապների հետ. միևնույն միավորները դրված են հաճախ և՛ մակբայների, և՛ նշված խոսքի մասերի մեջ: Երկրորդ՝ «մակբայ» անվան տակ նկատի են առնվում ոչ միայն մակբայները նեղ իմաստով, այլև մակածականները և մակթվականները. թեև շատ դեպքերում մակբայները կարող են լրացում լինել թե՛ բայերի և թե՛ ածականների համար, բայց կան դեպքեր, երբ «մակբայների» գործածությունն ըստ խոսքի մասերի սահմանափակված է. այսպես, հույժ-ը սովորաբար գործածվում է ածականների, շուրջ-ը՝ թվականների հետ և այլն:

բ. Արմատական մակբայների իմաստային բաշխումը

Ժամանակակից հայերենի արմատական մակբայները հիմնականում մենիմուլթ և երկիմուլթ են, ընդ որում ակնհայտորեն գերակշռում են ոչ նյութական՝ տարածական և, լայն առումով, ժամանակային իմաստները: Մենիմուլթ տարածական մակբայները համեմատաբար սակավ են. եթե, օրինակ, հանդես են գալիս տեղային իմաստներ, ապա դրանք սովորաբար միանում են ուղղության իմաստների հետ՝ ցույց տալով ուղղություն դեպի որևէ տեղ: Այս տեսակետից տեղային մակբայների գործածությունը հաճախ հակադրվում է համապատասխան կապերի գործածությանը. վերջիններս սովորաբար արտահայտում են տեղ՝ առանց ուղղության. հմտ. տան առաջ (առջև) և զնաց առաջ, փաղափից վեր և զնաց վեր, փառափից ցած և զնաց ցած:

Ոչ իրադրական մակբայները ըստ ՀԼԿ-ի կարգերի և եզրերի բաշխվում են հետևյալ կերպ.

Մենիմուլթ մակբայներ

1) շափի

չ→՝ հույժ, շատ «հույժ»

չ←՝ քիչ. շուրջ «մոտավորապես», մոտ «մոտավորապես»
(շուրջ քսան, մոտ քսան)

2) ձևի

ձև→՝ խեթ (նշանայնության լրացուցիչ իմաստով)

ձև→՝ ուղիղ

3) ժամանակի

ժ→՝ կանոն, նախ, վաղ, շուտ «վաղ»

ժ←՝ ապա, հետո, ուշ «հետո»

ժ←→՝ հար, հավիտ, հավերժ, միշտ

4) փոփոխության

փոփ→՝ արդեն

փոփ→՝ դեռ

5) հաճախականության

հճ→՝ հաճախ

հճ←՝ մերթ

հճ↔՝ կրկին

Երկիմույք և երկիմույք մակրայնեք

1) տեղի և ուղղության

տ→ ուղղ→՝ առաջ

տ← ուղղ→՝ հետ

տ↑ ուղղ→՝ վեր, վերև

տ↓ ուղղ→՝ վայր (վար), ցած, ներքև

տ→→ ուղղ→՝ ներս

տ↻ ուղղ→՝ շուրջը

տ↻ ուղղ→՝ դուրս

2) տեղի, չափի և ուղղության

տ→ շ→ ուղղ→՝ հեռու

տ→ շ← ուղղ→՝ մոտ

3) ժամանակի և չափի

ժ→ շ→՝ վաղուց

4) փոփոխության և տեղության

փոփ→ շ→՝ դանդաղ

փոփ→ շ←՝ արագ

փոփ→ շ՝ իսկույն

5) պատճառայնության և չափի

պտճ→ շ←՝ հազիվ

Մնացած մտերայները իրադրական բնույթի են և ցույց են տա-

լիս կամ խոսողի տեղի, կամ խոսելու ժամանակի հետ կապված տարբերություններ⁴ երբեմն միացած օբյեկտիվ (ցիկլային) ժամանակի կոնկրետ գրանդումների հետ.

1) իրադրական տեղի և ուղղության

իրտեղ→ ուղղ→՝ դենը

իրտեղ← ուղղ→՝ դեսը

2) իրադրական ժամանակի

իրժմ→՝ երևկ, հերու

իրժմ←՝ վաղը

իրժմ→ —՝ այժմ, արդ, հիմա:

Ձ. ԱՌԻԻՐՆԵՐԻ (ԿԱՊԵՐԻ) ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Ժամանակակից հայերենի առդիրենը

Ժամանակակից քերականության մեջ առդիրենը⁴ ու շաղկապները հատկացվում են սպասարկու խոսքի մասերին, և նրանց հիմնական հատկանիշն է համարվում ոչ նյութական⁵ քերականական կամ վերաքերական իմաստի արտահայտությունը: Սրանով իսկ այդ խոսքի մասերը հակադրվում են նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերին: Առդիրի զանազան սահմանումների հիմքում դրվում է նրա շարահյուսական գործառույթը, և այն փաստորեն դիտվում է որպես զուտ քերականական-շարահյուսական իմաստի արտահայտիչ, որոշ առումով՝ նաև որպես ձևականացված խոսքի մաս, որ իմաստավորվում է միայն շարահյուսական կիրառության մեջ: Առդրային իմաստի այսպիսի նեղ ըմբռնումը մասամբ պատմական հիմք ունի, մասամբ հենվում է նրա՝ քերականական ձևույթների հետ ունեցած զուգահեռության վրա: Ինչպես հայտնի է, մեզ ծանոթ բազմամիվ լեզուներում, այդ թվում՝ հունարենում, որի կառուցվածքի նկարագրությունից է գալիս ավանդական քերականությունը, և գրաբարում, որի քերականության ավանդույթը դեռ շարունակում է ազդել ժամանակակից հայերենի քերականության վրա, առդիրենրի հիմնական տեսակը՝ նախդիրենրը ինքնին առնված հաճախ իմաստային որոշակիություն չունեն և այն ձևեր են բերում միայն շարահյուսական գործածության մեջ⁵: Այս առումով նրանք հանդես են գալիս գրեթե որպես նույն տիպի ձևույթ-

⁴ Մ. Արևղյանի կողմից գործածության մեջ դրված կապ անվանումը տերմինային զովարություններ է հարուցում, և մենք դերադասում ենք առդիր տերմինը:

⁵ Նախդիրենրի՝ ինքնուրույն իմաստ ունենալու թե չունենալու հարցի մասին տե՛ս, օրինակ, Baudusch, 1964, 89—93:

ներ, ինչպիսիք հոլովական վերջավորութիւններն են՝ այն տարբերութեամբ, որ բառային գործածութիւնն ունեն և լիովին կապւած ձեւեր չեն ստեղծում. հմմտ. օրինակ, գրաբարի ի նախդիրը Սրան միանում են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են մի կողմից՝ նախդիրների և հոլովական վերջավորութիւնների իմաստային կապն ու հաճախ դուգահեռութիւնը, մյուս կողմից՝ նախդիրները գործածութիւնը որպէս նախածանցներ:

Ժամանակակից հայերենում հին հայերենի նախդիրների համակարգը չի պահպանուել՝ հանդես գալով միայն առանձին դրսևորումների ձևով: Ընդհակառակն, աշխուժացել ու լրացվել են, այսպէս կոչված, նախադրութիւնները, որոնց կապը նշութական խոսքի մասերի հետ ավելի ակնհայտ է, և ձևական ու առարկայական իմաստների խզում գրեթէ չկա: Եվ իրոք, ժամանակակից հայերենի առդիրների համակարգը ներկայացնում է մի բաղմաշերտ և տարասեռ ամբողջութիւն, որի անդամները իմաստով հարաբերակից են նշութական խոսքի մասերին և հաճախ տարբերվում են նրանցից միայն գործածութեամբ:

Վերևում ասվածը լիովին հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ նախ՝ նշութական ու քերականական իմաստների սահմանը պայմանական է, և, այսպէս կոչված, նշութական ու քերականական խոսքի մասերի տարբերութիւնը՝ հիմնականում գործածական, երկրորդ՝ քերականական հարաբերութիւնների հիմքում վերջնական ընկած են իրական հարաբերութիւնները: Եթե մենք տարբերենք առարկաների և գործողութիւնների հարաբերութիւնները՝ նկատի ունենալով, որ առարկաների հարաբերութիւնները հանդես են գալիս գերադանցապէս որպէս գոյականների, իսկ գործողութիւնների հարաբերութիւնները՝ գերադանցապէս որպէս բայերի հարաբերութիւններ, ապա դժվար չի լինի նկատել, որ առդիրները իրենց առաջնային գործածութեամբ արտահայտում են առարկաների (առարկայական) հարաբերութիւններ՝ ի հակադրութիւն ստորադասական շաղկապների, որոնք արտահայտում են գործողութիւնների (լայն առումով՝ առարկաների հարաբերութիւնների) հարաբերութիւններ. հմմտ. «Գիրքը սեղանի վրա է» (փոխակերպված՝ «Սեղանի վրայի գիրքը»), որի մեջ վրա-ն արտահայտում է գրքի և սեղանի հարաբերութիւնը: Երկրորդաբար միայն առդիրները կարող են հանդես գալ որպէս փոխակերպված (փոխկադապարված) բայերի՝ դերբայների և բայանունների հարաբերութիւնների աբստրակտներ: Դիմելով համընդհանուր լեզվաբանական կադապարի (ՀԿ) տերմիններին՝ կարող ենք ասել, որ առդիրների համար բնորոշ են հիմնական (գոյորոշ, հատկապէս ոչ ընթացային) կարգերի (կատեգորիաների) եզրերին հատուկ իմաստները. երկրորդաբար միայն

նրանք կարող են արտահայտել առգոյորոշ (հատկապես ընթացային) և նշանային կարգերի եզրերին հասուկ իմաստներ: Նույն ձևով, թեև ավելի հազվադեպ, առդիրները ցուցական դերանունների և որ շաղկապի օգնությամբ կարող են կազմել շաղկապական արժեքի միացություններ՝ այնպես որ, այնքան որ, նրա համար որ (այն պատճառով որ) և այլն: Այն լեզուներում, որոնց մեջ անունների և բայերի ձևական տարբերակումն ուժեղ չէ, միևնույն բառերը երբեմն կարող են հանդես գալ թե որպես առդիրներ և թե որպես շաղկապներ. հմմտ. անգլ. for «համար» և «որովհետև (նրա համար որ)»: Հայերենում այդպիսի երկգործառույթ արժեք ստանալու հակում ունեն մի շարք առդիրներ՝ մինչև (մինչև նաչ և մինչև կնաչեր), նախքան, չնայած, փոխանակ և այլն:

Իրենց առաջնային արժեքով արտահայտելով առարկաների հարաբերություններ՝ առդիրները սրանով իսկ իմաստով հաճախ հարաբերակից են բայերին, միայն թե առաջնային գործառույթամբ չեն բնութագրվում ընթացային կարգերով: Այլ կերպ ասած՝ առարկաների հարաբերություններ կարող են արտահայտել և՛ նախդիրները, և՛ բայերը՝ առաջինները ոչ ընթացային, երկրորդները՝ ընթացային ձևով: Սրանով է բացատրվում, որ՝ 1) նախդիրները կարող են հանդես գալ որպես բայահիմքեր (հմմտ. մոտ և մոտենալ), 2) ընդհակառակն, բայահիմքերը և բայաձևերը կարող են հանդես գալ որպես առդիրներ (հմմտ. անց, չնայած, վերաբերյալ), 3) բուն առդրային իմաստները զուգահեռներ ունեն բայական իմաստների մեջ (հմմտ. մեջ և մտնել, ի վեր և բարձրանալ, ի վար և իջնել և այլն):

Բայց ինչպե՞ս է լինում, որ առդիրները նախադասության մեջ համարվում են ոչ թե գոյականների, այլ գոյականների՝ բայերի հետ ունեցած հարաբերությունների արտահայտիչներ: Սրա հիմքը հենց բայերի ու առդիրների իմաստային մերձավորությունն է, որի հետևանքով 1) առդիրները իմաստները ըստ անհրաժեշտության լրացվում են բայական իմաստներով՝ հարաբերության ընթացային բնույթը նշելու համար (հմմտ. մոտ գնալ—մոտենալ), 2) բայերի իմաստները լրացվում, մանրամասնվում ու ճշգրտվում են կապական իմաստներով, 3) բայերը և առդիրները հանդես են գալիս սերտորեն կապված՝ խրոնոլոգական անհրաժեշտությամբ (պատմական պայմանավորվածությամբ):

Բայերի և առդիրների հարաբերության այս բնույթն էլ հիմք է տալիս բայերի հետ կապված բառերի՝ մակբայների և առդիրների իմաստային և գործառական մերձավորության համար: Հայտնի է, որ ժամանակակից հայերենում զգալի թվով բառեր երկգործառույթ են. այդ թվում կան բառեր, որոնք կարող են հանդես գալ և՛ մակբայի, և՛ առդրի գործառույթամբ: Լինելով հիմնականում առարկաների հարա-

բերությունների ոչ ընթացային արտահայտիչներ՝ առդիրները նախահասությունների մեջ միանում են այդ հարաբերությունների ընթացային արտահայտիչների՝ բայերի հետ, լրացնում նրանց արտահայտած իմաստը, փաստորեն դառնում գոյականների ու բայերի քերականական հարաբերիչներ, նրանց հետ միասին արտահայտում առարկաների հարաբերություններ: Այստեղից էլ բխում է այն վիճակը, որ միևնույն բառերը կարող են մի կողմից՝ ավելի շատ կապվել գոյականների, քան բայերի հետ և դիտվել որպես կապեր, մյուս կողմից՝ ավելի շատ կապվել բայերի հետ և դիտվել որպես մակբայներ. դեռ ավելին, նրանք կարող են հանդես գալ այդ տեսակետից նաև որպես բայական հարադիրներ ու նախածանցներ, էլ չենք խոսում վերևում նշված այն դեպքի մասին, երբ նրանք հանդես են գալիս որպես բայահիմքեր: Այսպիսով, օրինակ, մոտ բառը սեղանի մոտ գնալ կապակցության մեջ կարող է ավելի շատ կապվել մի կողմից՝ սեղան-ի հետ և ստեղծել սեղանի մոտ կապակցությունը, մյուս կողմից՝ գնալ-ի հետ, և ստեղծել մոտ գնալ կապակցությունը (հմմտ. նաև մոտենալ). նույն ձևով մեջ-ի համար հմմտ. գործի մեջ մտնել և գործի մեջ ու մեջ մտնել (կամ միջամտել): Սրա հետ է կապված արտահայտության այնպիսի զուգահեռ եղանակների ու կառույցների առկայությունը, որոնցից մեկում նշված տիպի բառերը հարում են գոյականներին, մյուսում՝ բայերին՝ սեղանի մոտ լինել և սեղանին մոտ լինել. հմմտ. նաև գործի մեջ մտնել և գործին միջամտել:

Այժմ մի քանի խոսք առդիրների և գոյական ու ածական անունների հարաբերակցության մասին:

Ժամանակակից հայերենում առդիրների և գոյականների հարաբերակցությունը երկու հիմնական դրսևորում ունի:

Առաջին՝ մի շարք գոյական անուններ ուղիղ ձևով կամ դանազան հոլովական ձևերով կարող են հանդես գալ առդրային գործառությամբ: Ինչպես հայտնի է, գոյական անունները ներկայացնում են վերացարկման տարբեր աստիճաններ: Ահա վերացարկման ամենից ավելի բարձր աստիճանների կազմող և կատեգորիական արժեք ունեցող այնպիսի գոյականներ, ինչպիսիք են տեղ, ուղղություն, չափ, ժամանակ, պատճառ, հետևանք, նպատակ և այլն, կարող են համապատասխան գոյականների (այդ թվում՝ գոյականաբար գործածվող դերանունների, դերբայների, բայանունների) զուգորդմամբ արտահայտել այնպիսի հարաբերություններ, որոնք գրաբարում սովորաբար արտահայտվում էին համապատասխան նախդիրների միջոցով, ընդ որում առաջնային գոյականների դեպքում հանդես են գալիս ոչ ընթացային, դերբայների և բայանունների դեպքում՝ ընթացային կարգերի իմաստներ. հարա-

Բերութեան այս եղանակը բնականաբար իմաստային տվելի մեծ որոշակիություն ունի, քան նախորդայինը. համտ. ընդ նորա—նրա փոխարենն. ընդ ծագել—ծագելու ժամանակ. առ անմտության—անմտության պատճառով (=անմտությունից). առ ի պատասխանի տալ—պատասխան տալու (պատասխանելու) նպատակով (=համար) և այլն: Բավական ստվար և աճող է գրաբարյան ի նախորդի (մասամբ և նրա դիրքային յ>ն տարբերակի) շարունակմամբ կազմվող նախադասությունների թիվը՝ ի դեմս, ի հաշիվ, ի հենուկս, ի փառս (համտ. նաև հանձին, հանձինս, հանուն). որոշ վերապահությամբ սրանց կարելի է ավելացնել նաև ի թիվս, ի լր(աց)ումս, ի կատարումս, ի հակակշիռ, ի վնաս, ի տարբերություն և այլն ձևերը, որոնք կարող են մասամբ փոխարինվել նոր գրական լեզվին հատուկ ձևերով՝ թվում, որպես լրացում և այլն:

Ներկայումս շատ առդիրներ կարող են հղումվել գոյականների նման և ովելադնել հայերենի արտահայտչական հնարավորությունները: Այս դեպքում առկային հղումվածները փաստորեն արտահայտում են գոյականի և առդրի կապակցության հղումական հարաբերությունները՝ տան մոտ—տան մոտից—տան մոտով. սեղանի տակ—սեղանի տակի—սեղանի տակից—սեղանի տակով և այլն:

Ածականների և առդիրների հարաբերակցությունը պայմանավորված է այն բանով, որ երկուսն էլ կապված են գոյականների հետ՝ արտահայտելով մի կողմից՝ նրանց հատկանիշները և մյուս կողմից՝ հարաբերությունները Սակայն, ինչպես հայտնի է, ածականները կարող են խնդիր ստանալ, և այս դեպքում նրանք փաստորեն արտահայտում են մի գոյականի նշած առարկայի հարաբերությունը մի այլ (հատկանշվող) գոյականի նշած առարկային. սրանով իսկ խնդրառու ածականները իրենց բնույթով մոտենում են առդիրներին, որոնք, ինչպես նշվել է, արտահայտում են առաջին հերթին առարկաների հարաբերությունները: Այս առումով հեշտ չէ որոշակի սահման անցկացնել խնդրառու ածականների ու առդիրների միջև, և լեզվաբանները բառերի խոսքիմասային պատկանելության գնահատման հարցում հանդես են բերում տարբերություններ. եթե բառը կարող է հանդես գալ առանց խնդրի, ապա այն առանց վարանման դնում են ածականների մեջ, մանավանդ որ այս դեպքում տեղի է ունենում իմաստային որոշ տեղաշարժ, և ածականն արտահայտում է կայուն հատկանիշ, այլ ոչ տվյալ պահին հատուկ հարաբերություն. համտ. մոտ մարդ և սեղանի մոտ, անկախ մեծություն և ինձնից անկախ և այլն:

Վերևում ասածների հիման վրա դժվար չէ եզրակացնել, որ սկզբունքային տարբերություն չկա նյութական ու քերականական իմաստների ու նրանց դասակարգման սկզբունքների միջև, և որ դժվար

է ժամանակակից հայերենի համար առանձնացնել առդրների մի որոշակի սահմանափակ ցանկ. այն միշտ էլ պայմանական բնույթ կունենա:

Մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ [Ջաֆուկյան, 1974, 317—323] բերված է 89 առդիր, որից 26-ը՝ նախդիր-նախադրություն և 69-ը՝ հետադրություն: Ավելացնելով այլ աղբյուրներում բերվող և գրական լեզվի նորմաներին համապատասխանող որոշ այլ առդիրներ ևս, տարբերակելով որպես համանուններ շուրջը «չորս կողմը» ու շուրջ(ը) «վերաբերյալ, մասին» առդիրները և սխալմամբ նախդիր-նախադրությունների մեջ դրված ջրգրուն տանելով հետադիր-հետադրությունների մեջ՝ մենք կունենանք 30 նախդիր-նախադրությունից և 77 հետադիր-հետադրությունից բաղկացած՝ 107 առդիր ընդգրկող մի ցուցակ:

1. Նախդիր-նախադրություններ

անկախ	ի լր(աց)ումն	հանուն
առանց	ի հակակշիռ	մինչև
բացառությամբ	ի հաշիվ	նախօքան
բացի	ի հեճուկս	նախած
դեպի	իրրև	ներառյալ
ընդդեմ	ինչպես	չնորհիվ
ըստ	հակառակ	որպես
ի	համաձայն	չհաշված
ի դեմս	հանձին	չնայած
ի թիվս	հանձինս	վրսահակ

2. Հետադրություններ

անց	դիմաց	կողմ(ը)
անցած	դուրս	կողմից
անունից	երեսից	համաձայն
անունով	դատ	համապատասխան.
առաջ	վուղընթաց	համար
առընթեր	ընթացքում	համեմատ
առթիվ	ժամանակ	համընթաց
առջև	ի վար	հանդեպ
դժով	ի վեր չդեպի վեր»	հանդերձ
դործում	ի վեր չսկսած»	հանդիման
դեմ	կապակցությամբ	հավասար
դեպքում	կից	հետո

հետ	ներս	սկսած
հետ կապված	ներքո	վար
հետք միասին	ներքև	վեր
հետո	նկատմամբ	վերաբերմամբ
հետևանքով	նպատակով	վերաբերյալ
հիմա՛ւ վրա	շուրջ(ը) զվերաբերյալ	վերջում
ձեռքից	շուրջը զշտրս կողմը	վերև
ձեռքով	շափ	վրա
մասին	պահիս	տակ
մեջ	պատճառով	տեղ
միջոցին	պես ճանաչ	փոխարեն
միջոցով	պես ճաննց որ	ուղղով թյամբ
միջև	ջութու	օրոք
մոտ	սկզբում	

Այս ցանկն օգտագործելիս հարկավոր է նկատի առնել հետևյալը.

1) ինչպես նշվեց վերևում և ինչպես ցույց կտա իմաստների համակարգային վերլուծությունը, ցանկը չի կարելի լրիվ համարել. այն կարող է լրացվել նաև այնպիսի ձևերով, որոնք սովորաբար չեն զբաղում նախդիրների մեջ (հմմտ. վերևում, ներևում և այլն).

2) ցանկի մեջ մտած միավորները հավասար գործածականություն չունեն և, չնայած գրական ձևերի որոշակի ընտրությանը, որոշ մասով կարող են հանվել.

3) առդիրների մեջ ևս զգալի թիվ է կազմում համանիշունք՝ ոճական և պատմական համապատասխան տարբերակներով. հետագա քննության մեջ որպես հիմնական կրնտրվի համանիշներից մեկը, և մյուսները կտրվեն փակագծերի մեջ:

Հայ քերականության մեջ ժամանակակից հայերենի առդիրների իմաստային դասակարգման փորձերը քիչ չեն [հմմտ. հատկապես Մարգարյան, 1955, 36—44. Աբրահամյան Ս., 1959, 85—112. 1965, 303—341. Ասատրյան Ա., 1970, 351—360]: Այստեղ մենք այն կատարենք ըստ համընդհանուր լիզվաբանական կադապարի (ՀԿ) կարգերի (կատեգորիաների) և եզրերի (տերմերի)՝ մոտավորապես նույն սկզբունքներով, ինչ սկզբունքներով դասակարգված են հայերենի արձատական ածականները: Ըստ այսմ կտարբերակենք առդրային իմաստների հետևյալ տիպերը. 1) առաջնային կամ գոյորոշ (առարկայական հարաբերություններ արտահայտող և հիմնական՝ ոչ ընթացային կարգերով բնութագրվող) և երկրորդային կամ առգոյորոշ (այն առումով գործողությունների հարաբերություններ արտահայտող և ընթացային

ու նշանաբանաբանային կարգերով բնութագրվող), 2) պարզ կամ մեծի-մուկ (ՀՀԿ կարգերի մեկական եզրերի իմաստների ներկայացնող) և բաղադրյալ կամ բազմիմուկ (ՀՀԿ տարբեր կարգերի եզրերի համակցությունների ներկայացնող):

Առդիրների առաջնային բնույթը պարզելու համար հարկավոր է նկատի ունենալ նրանց կապակցելիությունը հիմնականում կոնկրետ առարկայական իմաստ ունեցող գոյականների (օրինակ՝ իրանիշ՝ առև և անձնանիշ՝ Հակոբ)՝ ի տարբերություն բայական իմաստ ունեցող անորոշ դերբայների և բայանունների (օրինակ՝ գրել, գործ): Այս կապակցելիությունն արտահայտող մի աղյուսակ բերված է մեր «Փամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ [Ջաֆուլյան, 329—330], թեև կապակցելիության սահմանները որոշ չափով բնորոշված են (նկատի չի առնված հնարավոր դերբայի կամ բայանվան ղեղավածությունը. հմմտ. Լամաձալյան): Նկատի ունենալով այս հանդամանքը, կատարած փոփոխությունները և հավելումները՝ մենք կարող ենք առանձնացնել հետևյալ առաջնային առդիրները (միայն անձների տնունների, հատկապես անձնանունների հետ կապակցվողները բերվում են աստղանիշով)։

1. Նախդիր-նախադրություններ

անկախ	ի թիվս	հանձին(ս)
առանց	ի լրացումն	մինչև
բացառաթյամբ	ի հակառակս	ներառյալ
բացի	ի հաշիվ	որպես
դիպի	ի հեճուկս	հաջված
բնդդեմ	իբրև	փոխանակ
ի դեմս	ինչպես	

2. Հետադրություններ

անունից	ի վար	հանդիման
անառնով	ի վեր	համառար
առնթիվ	կապակցությամբ	հետո
առջև	կից	հետ
դեմ	կողմ(ը)	հետ կապված
դիմաց	կողմից	հետ միասին
դուրս	հակառակ	հետո
երեսից	հանդեպ	ձեռքից
դատ	հանդերձ	ձեռքով

մասին	նման	վերաբերմամբ
մեջ	շուրջը	վերաբերյալ
միջոցով	շուրջ(ը)	վերև
միջև	չափ	վրա
մոտ	պես	տակ
ներս	զգրու	տեղ
ներքո	վար	ուղղությամբ
ներքև	վեր	փոխարեն
նկատմամբ		

բ. Առդիրենրի իմաստային բաշխումը

Ըստ վերլուծության՝ վերևում նշված սկզբունքի՝ առաջնային առդիրենրի մեջ մենք կտարբերենք մենհիմույթ և բազմիմույթ իմաստներ։
 ունեցող տեսականներ։ Ի տարբերություն նյութական խոսքի մասերի, օրինակ՝ ածականների, այսպես կոչված, քերականական խոսքի մասերի, ներկա դեպքում՝ առդիրենրի մեջ գերակշռում է մենհիմույթ տեսակը։ Մենհիմույթ առդիրենրի արտահայտած իմաստները կարելի է ներկայացնել ինչպես բանաձևերով, այնպես էլ համապատասխան աղյուսակով (տես աղ. 5). ընտրենք աղյուսակային ներկայացման եղանակը՝ նկատի ունենալով, որ սրա հիման վրա հեշտ է կազմել համապատասխան բանաձևերը. այսպես, տեղի կարգի հիմնական եզրի իմաստն ունեցող առջև առդիրը կարելի է ներկայացնել ալ կամ տ→, միջին եզրի իմաստն ունեցող մեջ առդիրը՝ տ3 կամ տ→ — բանաձևերով և այլն։

Համապատասխան հարցականով օժտված մասին, շուրջ(ը), վերաբերյալ հետադրությունները պայմանականորեն նույնպես դնում ենք այստեղ՝ ըստ առաջնային կապակցելիության՝ կախման կարգի համապատասխան եզրի վանդակում՝ առանձնացնելով բուն կախման եզրի հետադրություններից գծով. սակայն նրանք հավասարապես կարող են կապակցվել նաև բայանունների և դերբայների հետ՝ առանց իմաստային որևէ տեղաշարժի։ Սրանք նշանային կախման հիմնական եզրն են (նկլ) արտահայտում և ցույց են տալիս նշանի հարաբերությունը դեպի նշանակվողը, որ կարող է լինել և՛ իր, և՛ անձ, և՛ գործողություն։

Աղյուսակի հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները. 1) ոչ բոլոր կարգերը և ոչ բոլոր եզրերն են ներկայացված առդիրենրի համակարգում. մասնավորապես թվի կարգն ընդհանրապես չի ներկայացված, դասը և ձևը ներկայացված են միայն մեկական եզ-

րով. դրանք արտահայտվում են այլ միջոցներով, հատկապես առդրային արժեք ունեցող այնպիսի կապակցություններով, որոնք ընդհանուր ցանկի մեջ չեն մտել կամ մտել են այլ կարգերի մեջ ըստ հիմնական արժեքի. այսպես, դասի կարգի մեջ առկա է հետս-ն, բայց առջև և առջևում, մեջտեղում, ծայրին (երկու կողմում) և այլն ձևերը չկան. 2) համեմատաբար բաղմնեղ կարգերի մեջ ևս կան ավելի կամ պակաս թվով բացակայող եզրեր. այսպես, տեղի կարգի առանձին եզրերը կարելի է լրացնել հետևյալ բառաձևերով՝ հետևում (հետևի կողմում), երկու կողմում, չորս կողմում, բոլոր կողմերում, վերևում, ներքևում, մի կողմում (աջ կողմում), մյուս կողմում (ձախ կողմում) և այլն. շատ իմաստներ էլ արտահայտվում են նկարագրորեն կամ այլ խոսքի մասերի և հոլովների օգնությամբ:

Վճ՝ Բազմիմույթ ազգերները հիմնականում երկիմույթ են: Բազմիմույթ առդիրների մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական տիպ. 1) առդիրներ, որոնք ունեն լրացուցիչ նշանային իմաստներ՝ գործածվելով հատկապես անձերի անունների (այդ թվում՝ անձանունների), այլև անձերով ներկայացված հավաքական բնույթի գոյականների հետ, ընդ որում երբեմն տեղի է ունենում իմաստային տեղաշարժ՝ փոխաբերական գործածություն կամ ընթացային իմաստի ձեռքբերում՝ րնդ-դեմ—դեմ (հմտ. դիմաց), ի դեմս—հանձին—հանձինս (հմտ. ինչպես), ի նեցուկս—ջգրու (հմտ. հակառակ), անունից—երեսից—կողմից (հմտ. —ից՝ ներգործություն խնդրի արտահայտում)—ձեռքով (հմտ. միջոցով). 2) առդիրներ, որոնք հանդես են գալիս որպես երկու եզրերի իմաստների կրողներ, հատկապես ա) ձևի և կազմի՝ պես, մման, ինչպես, այսպես (ձկզ→—՝ ձևի նույնություն), բ) շափի և կաղմի՝ շափ, հավասար (չկզ→—՝ շափի նույնություն), գ) ուղղության և տեղի՝ ներս (ու→ տ→3), ի վեր, վերև (ու→ տ↑), ի վար, ներքև (ու→ տ↓), դուրս (ու→ տ↔), դ) տեղի և շափի՝ հեռու (տչ→), մոտ (տչ←):

Երկրորդային առդիրները կապակցվում են հիմնականում բուն ընթացային և նշանաընթացային կարգերով բնութագրվող միավորների հետ. եթե նրանք կապակցվում են իրերի և անձերի անունների հետ, ապա նկատի են առնվում վերջիններիս շարժումը, գործողությունը և այլն: Երկրորդային առդիրները հետևյալն են.

1. Նախդիր-նախադրություններ

ըստ

նախքան

շնորհիվ

ի

նալած

չնալած

հատուկ

անց	ի վիր «ոկսած»	միջոցին
անցած	համաձայն	նպատակով
առթիւ	համապատասխան	պահին
գծով	համար	պատճառով
գործում	համեմատ	պես «հենց որ»
դեպքում	համընթաց	սկզբում
զուգընթաց	հետեանքով	վերջում
ընթացքում	հիման վրա	օրոք
ժամանակ		

Ինչպես նշանային կախման հիմնական եզրի իմաստ արտահայտող մենիմուլթ հետադրուլթյունները մենք բերեցինք բուն կախման հիմնական եզրի հետադրուլթյունների հետ, այնպես էլ ընթացային կարգերով բնութագրվող առդիրների նշանային տիպերը բերենք բուն տիպերի հետ՝ սրանց հասկացված վանդակների՝ գծերով կիսված ստորին մասերում (տե՛ս աղ. 6):

Մենիմուլթ երկրորդային առդիրների աղյուսակի քննության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները. 1) ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային առդիրների բաշխումը հավասարաչափ չէ. ամենից ավելի մեծ թիվ են կազմում պատճառայնության առդիրները իրենց ոչ նշանային ու նշանային տիպերով և ժամանակային առդիրները. չկան հաճախայնության և ընթացածեի կարգերին հատուկ առդիրներ. 2) ընթացային իմաստները հաճախ կարող են արտահայտվել համապատասխան ոչ ընթացային առդիրներով՝ առանց սրանց ձևական տարբերակման (աղյուսակների մեջ մենք առանձնացրել ենք միայն ձևական տարբերություն ունեցողները. հմմտ. առջև և առաջ). այսպես, ա) կազմի շատ առդիրներ հավասարապես կարող են գործածվել համեմատության (ընթացակազմի) համար՝ ընկերոջ հետ միասին և գրելու հետ միասին, առանց ընկերոջ և առանց գրելու (բացի ընկերոջից և բացի գրելուց), ընկերոջ փոխարեն և գրելու փոխարեն և այլն. կախման շատ առդիրներ՝ պատճառայնության համար՝ ընկերոջ կապակցությամբ և գրելու կապակցությամբ (հմմտ. որովհետև գրել էր), անկախ ընկերոջից և անկախ գրելուց և այլն. բնականաբար, ըստ ժամանակի գծայնության, տեղի շատ առդիրներ չեն կարող ընթացային գործածություն ունենալ, այլ դեպքերում էլ դրանք տարբերակված են՝ առջև և առաջ, մեջ և ժամանակ. բ) ոչ ընթացային բաղմիմուլթ առդիրները ևս կարող են գործածվել ընթացային իմաստներ արտահայտող

	Հաւեմատութիւն	Պատճառայնութիւն	Հաճախայնութիւն	Կերպ	Ընթացածէ	Փոփոխութիւն	Տեղորոշութիւն	Ժամանակ
→	Զուգընթաց	սլատնառով հետեանքով առթիւ		սկզբում				հախճան առաջ
→		դեպքում						
→		ըստ համաձայն հիման վրա		վերջում			կողմ	անց անցած հետո
→								ժամանակ միջոցին սկսելն օրոք
↔		համասլատասխան համեմատ				զծո /	ի վեր սկսած	դործում ընթացքում
↔		համար ի հանուն նստատակով						

տելու համար՝ տան և փողոցի միջև (արանձում) և գրելու և երգելու միջև (արանձում), մինչև տուն և մինչև գրելը:

Երկրորդային բազմիմույթ առդիրները սակավաթիվ են. բերված ցուցակում կարելի է նշել պես, որ արտահայտում է տեղություն և ժամանակի ղուգորդում (անմիջական նախորդում) և շնորհիվ-ը, որ արտահայտում է հետևանք՝ համապատասխան դրական վերաբերմունքով, այսինքն՝ ունի նշանայնության տարր (զգացմունք՝ «հետևանք + հաճելի»):

10. ՇԱՂԿԱՊԵՆՐԻ ԻՄԱՍՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Ժամանակակից հայերենի շաղկապները

Ի տարբերություն առդիրների՝ ժամանակակից հայերենի շաղկապները պատմականորեն կազմավորվել են գերազանցապես դերանունների և վերաբերականների (եղանակավորող բառերի) հիմքի վրա. ասես քե, կարծես քե շաղկապական ձևերի առաջին բաղադրիչները վերաբերականների արժեք ստացած բայական ձևեր են, նայած քե և չնայած ու ձևերի առաջին բաղադրիչները՝ առդրային արժեք ստացած դերբայական ձևեր: Վերջերս շաղկապական արժեք է ստացել նաև նշանակում է (=այսինքն) բայաձևը, որ բխում է վերլուծական արտահայտման ընդհանուր միտումից: Արմատական ձևերը, հատկապես ստորագասական շաղկապների մեջ, համեմատաբար քիչ են, որ խոսում է նրանց ուշ կազմավորվելու վարկածի օգտին: Այս վարկածի հիմքը հասկանալի կլինի, թե նկատի առնենք, որ ստորագասական շաղկապները վերացական մտքի և դատողության արտահայտիչներ են: Եվ պատահական չէ, որ հենց դերանունները և վերաբերական բառերն են ընկել նրանց կազմավորման հիմքում. կապված լինելով անմիջական հաղորդակցման հետ, ունենալով իրադրական անմիջականություն՝ ներանք անմիջական իրադրական հարաբերությունների արտահայտումից անցել են անմիջական կոնտեքստային հարաբերությունների արտահայտության, ստացել նշանային միջնորդվածություն:

Պայմանականորեն մեկ խոսքի մասի մեջ միավորվող համադրության և ստորագասական շաղկապները, որոնք կարելի է կոչել նաև համաշաղկապներ և ստորաշաղկապներ, տարբեր բնույթ ունեն: Առաջինները կարող են հարաբերել թե՛ գոյորոշ և թե՛ առգոյորոշ, երկրորդները՝ միայն առգոյորոշ կարգերով բնութագրվող միավորներին հատուկ իմաստներ: Այս առումով համաշաղկապները հարաբերակից են

մասին, վերաբերյալ կապերին, որոնք համասարապես կարող են կապել երկու կարգի իմաստներն էլ որպես նշանային օբյեկտներ (համտ. Հակոբի մասին—Երգելու մասին, ինչպես Հակոբն ու Պետրոսը—Երգելն ու գրելը)։ սա բխում է այն բանից, որ շաղկապվող միավորներն առնելով են հատկապես իրենց նշանային ուղղվածությամբ։ համադասական շաղկապներով կարող են կապվել այնպիսի միավորներ, որոնք իրականում համապատասխանորեն չեն կապված, այլ կապի մեջ են դրվում մտքում։ Մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ (էջ 499—500) համադասական շաղկապների արտահայտած իմաստները հատկացված են կազմի կարգին, և նույնիսկ հնարավոր է համարված դրանց արտահայտությունը համապատասխան առդիրքների (հետադրությունների) օգնությամբ՝ Հակոբը և Գրիգորը→Հակոբը Գրիգորի հետ միասին, երգելը և գրելը→Երգելը գրելու հետ միասին և այլն։ Այսպիսով, տեսականորեն կարելի է շաղկապների իմաստային քննությունը միավորել և կատարել միասնարար, մասնավոր երբ վերջին հաշիվով համաշաղկապներով միացած միավորներով նախադասությունները կարելի է դիտել որպես երկու առանձին նախադասությունների միավորումներ, այսինքն՝ քննել որպես փոխկաղապարում։

Համադասական շաղկապների արտահայտած հարաբերությունները որոշ տոումով ընկած են ստորադասական, հատկապես պատճառայնության շաղկապներով արտահայտված հարաբերությունների հիմքում, և պատահական չէ, որ այստեղ, նախ՝ խտորեն տարբերակվում են գլխավոր և երկրորդական նախադասությունների դրական և ժխտական լինելը (համտ. որովհետև և բեև, եթե և բեկուզ), երկրորդ՝ համադասական որոշ շաղկապներ հիմք են ստեղծում ստորադասական հարաբերությունը արտահայտելու համար՝ զրվելով գլխավոր նախադասության մեջ (համտ. բեև ... բայց)։

Ամենից առաջ բերենք շաղկապների ցանկը [համտ. Զահուկյան, 1974, 457, 497—498, այլև Գարեգինյան, 1963. Առաքելյան, 2, 1964. Արախամյան Ա., 1965. Ասատրյան, 1977]՝ որոշ ընարությունամբ (հանված են քիչ գործածական և ոչ գրական ձևերը)։

1. Համաշաղկապներ

այլ	այնինչ	թե
այլ ոչ թե	բայց	թե...թե
այլև	էլ	ինչպես...այնպես էլ
այն	էլ...էլ	իսկ

կամ	նույնպես	ոչ միայն...ալ նաև
կամ...կամ	ոչ...ալ	ոչ...ոչ
միայն թե	ոչ թե	սակայն
մինչդեռ	ոչ և...ալ	ու
նաև	ոչ միայն...ալ և	և

2. Ստորադրվապներ

ալ...պես	թե որ	մինչև (որ)
ալն է	թե չէ	նախքան
ալիպես որ	թեկող(և)	նամանավանդ որ
այնտամենայնիվ	թեպես(և)	նալած թե
այսինքն	իբր թե	որ
այսպիսով	ինչ	որովհետև
այսուհանդերձ	թեև	որպես թե
ասլու է և ոչ	ինչ է թե	որպեսզի
ասլու ուրեմն	ինչպես որ	չէ որ
ասես թե	ինչքան որ	չնալած (որ)
եթե	կարծես թե	ուստի (և)
եթե միայն	հենց (որ)	ուրեմն
եթե ոչ	հետևաբար	քա՛
եբր	հետևապես	քան թե
եբր որ	մանավանդ (որ)	քանի
թե	միայն (թե)	քանի դեռ
թե «եթե»	մինչ	քանի որ
թե ինչ է	մինչդեռ	

Շաղկապների՝ բերված ցանկը պարունակում է 27 համակապ և 53 ստորակապ: Ցանկն օգտագործելիս հարկավոր է նկատի ունենալ հետևյալը. 1) այն կարելի է լրացնել տարբեր բաղադրիչներից բաղկացած և գրական լեզվի նորմաներից շեղվող զանազան շաղկապական միավորներով, բայց դրանք իմաստային նորոթյուն չեն բերի՝ ունենալով գերադանցապես ոճական արժեք. 2) տարբերություններ կան համակապերի և ստորակապերի զնահատման հարցում. ոմանք միևնույն շաղկապները մոտցում են համակապերի, մյուսները՝ ստորակապերի մեջ՝ ըստ գործածության և շաղկապվող նախադասության անկախության աստիճանի տարբերությունների. 3) հայերենի քերականության մեջ միայն վերջին տասնամյակներում են տարբերակվել վերաքերականները որպես հատուկ խոսքի մաս, այդ պատճառով էլ շատ

	Կազմ	Համեմատութեան թիւը	Պատճառայնութիւնը	Կերպ	Ընթացածէ	Փոփոխութիւնը	Տեղեկութիւն	Ժամանակ
→	և այլև էլ էլ...էլ թե...թե ինչպէս...այն- պէս էլ նաև հոգնապէս ոչ միայն...այլև ոչ միայն...այլ նաև և...և ժխտ. ոչ...ոչ		որովհետև չէ՞ որ քանի որ ժխտ. թեև թեպետև չնայած որ եթե թե և եթե հայած թե միայն թե ժխտ. թեկուզ և					նախքան
←	բայց այլ ոչ թե այն էլ այնինչ մինչդեռ իսկ ոչ թե սակայն միայն թե	քան քան թե	այնպէս որ այսպիսով հետևաբար հետևապէս ուստի և ապա ուրեմն ժխտ. այլապէս այնուամենայնիւ այսուհանդերձ ասպա թե ոչ եթե ոչ թե չէ այսինքն այն է					
→	կամ թե կամ...կամ							եբբ եբբ որ
← →	այլ ոչ...այլ ոչ թե...այլ		որպէսզի թե ինչ է ինչ է թե				քանի քանի դեռ ինչքան որ	
↗								

վերաբերականներ նախկինում գրվել են շաղկապների մեջ. այժմ էլ նրանք գրվում են կամ շաղկապների, կամ վերաբերականների, մասամբ էլ և՛ առաջինների, և՛ երկրորդների մեջ. 4) տարբերակում չի անցկացված լուսն՝ բարդ նախադասության մեջ գործածվող շաղկապների կամ ներշաղկապների, և առանձին նախադասությունների ու ուղղանիսկ պարբերությունների միջև գործածվող շաղկապների կամ արտաշաղկապների միջև, ընդ որում վերջիններս բերված են որոշ ընտրությամբ (հմմտ. այսպիսով, չէ՞ որ, սակայն և այլն), այլապես ցանկը կարող էր ընդարձակվել. հարկավոր է նկատի առնել, որ արտաշաղկապների ուսումնասիրությունը նոր է միայն սկսվում՝ կապված, այսպես կոչված, տեքստի քերականության հետ, ընդ որում տարբերակումը զուտ գործառական է (եթե այդպիսին կա) և ոչ իմաստային:

բ. Շաղկապների իմաստային բաշխումը

Ամենից առաջ աղյուսակով ներկայացնենք մենիմուլթ շաղկապների իմաստային խմբերը (տե՛ս աղ. 7):

Մենիմուլթ շաղկապների իմաստային դասակարգման աղյուսակը բացահայտում է հետևյալ պատկերը. 1) եթե կազմի և պատճառայնության շաղկապները մեծաքանակ են, ապա «զուտ» ժամանակային շաղկապները, հակառակ սպասածի, փոքրամիջ են, իսկ մնացած կարգերը կամ ընդհանրապես չեն ներկայացված, կամ ներկայացված են մեկական եզրով. սա չի նշանակում, թե վերջիններս ընդհանրապես չեն արտահայտվում համապատասխան հարաբերիչ բառերով և բառախմբերով. այսպես, կերպային արժեք ունեն նախ, ապա, առաջին, երկրորդ ..., վերջապես բառերը, որոնք կապ են ստեղծում խոսքի տարբեր հատվածների միջև. ինչպիսի կտեսնենք, տեղումնային կարգը ներկայացված է նաև ժամանակի կարգի հետ միասին՝ բազմիմուլթ շաղկապներով. 2) նշանային բնույթի շաղկապները առգիծների նման մենք բերեցինք ոչ նշանայինների հետ միասին և գրեցինք առգոյորոշ (հատկապես ընթացային) կարգերով բնութագրվողների շարքում՝ համապատասխան վանդակներում. սակայն նշանային կարգը կարող է ունենալ և՛ առգոյորոշ, և՛ գոյորոշ դրսևորումներ. այս է պատճառը, որ ու շաղկապը տեղ չի գտել աղյուսակում, որտեղ ընթացային իմաստներ են դրված, մինչդեռ այն հիմնական արժեքով արտահայտում է կախման կարգին պատկանող իմաստ և ցույց տալիս նշանային բայ ունեցող գլխավոր նախադասության ընթացային օբյեկտը՝ «Գրիգորը գիտի, որ Հակոբը գալու է»։ սա կարող է փոխկաղապարվել (փոխակերպվել) մասին հետադրությամբ դարձվածի՝ «Գրիգորը գիտի

Հակոբի գալու մասին»։ Քե-ն հարաբերակից է ու-ին, բայց բազմի-մույթ է՝ արտահայտելով նաև կասկած։ 3) եթե գրական լեզուն, հատ-կապես գիտական ոճը, հանդես է բերում շաղկապների որոշակի՝ տար-բերակված գործածություն, ապա խոսակցական ոճում ոչ միշտ է հըս-տակ տարբերակում անցկացվում։ մասնավորապես ու-ը կարող է, բա-ցի իր բուն գործառնություն, արտահայտել երբ, եթե, որպեսզի և այլ շաղկապների իմաստներ։ 4) Բան, Բան թե շաղկապներն արտահայտում են համեմատության նվազական եզրը և այս իմաստով հարաբերակից են բացառական հոլովի իմաստին՝ «Սեդան ավելի գեղեցիկ է, քան Հրանու-շը» = «Սեդան Հրանուշից (ավելի) գեղեցիկ է»։ 5) շաղկապավոր ստորագաս (երկրորդային) նախադասությունները կարող են փոխկաղապարվել (փո-խակերպվել) համապատասխան առդրավոր դերբայական դարձվածնե-րի։ կազմի և համեմատության (համադասական) շաղկապների մասին արդեն խոսվել է։ այժմ օրինակներ բերենք մյուս շաղկապների հա-մար՝ վերցնելով համանիշներից որպես հիմնական դիտվածները։ ուով-հետև նա մեկնում էր→նրա մեկնելու պատճառով (հետևանքով)։ եթե նա մեկներ→նրա մեկնելու դեպքում։ թեկուզև նա չմեկներ→նրա չը-մեկնելու դեպքում էլ։ որպեսզի նա մեկնի→նրա մեկնելու համար։ ինչ նա մեկնել է→ նրա մեկնելուց ի վեր։ նախքան նա կմեկներ→նախքան նրա մեկնելը (նրա մեկնելուց առաջ)։ երբ նա մեկնում էր→նրա մեկ-նելու ժամանակ։ նշանակում է՝ նախ՝ հնարավոր է փոխկաղապարման (փոխակերպման) միջոցով ստուգել իմաստների բաշխումն ըստ կար-գերի ու եզրերի, երկրորդ՝ պարզել շաղկապների և առդիրների անփոխ-կաղապարելիության (անփոխակերպելիության) դեպքերը։ 6) միևնույն բաները որպես առդիր և որպես շաղկապ (ուր, թե շաղկապների հարա-դրությամբ կամ առանց դրանց) գործածվելիս կարող են իմաստային որոշ տեղաշարժ կատարել, մասնավորապես անցնել տեղային իմաս-տից ժամանակի։ հնարավոր է նաև բազմիմույթ շաղկապների արտա-հայտած իմաստներից մեկի թուլացում։

Բազմիմույթ շաղկապները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի։ 1) շաղկապներ, որոնց՝ աղյուսակում տեղ դրած իմաստ-ներից միանում են նշանային որոշ իմաստներ՝ կասկած կամ, ընդհա-կառական, համոզմունք։ այսպես, ասես թե, իբր թե, կարծես թե, ու-պես թե շաղկապները հարաբերակից են ինչպես ու-ին, թե-ն՝ ու-ին, եթե միայն-ը՝ եթե-ին, միայն թե արտահայտում են կասկած։ մանա-վանդ (ուր), նամանավանդ (ուր) շաղկապները հարաբերակից են ուով-հետև-ին, միայն թե արտահայտում են ուժեղ համոզմունք։ 2) հետև-յալ շաղկապներում զուգորդվում են տևողության և ժամանակի իմաստ-ները՝ ա) հենց ուր, թե չէ (տև.ժ←՝ անմիջական հաջորդում)։ սրանք

փոխկաղապարվում են պես հետադրություն՝ հենց որ մեկնեց (մեկնեց քե չէ)→մեկնելուն պես. բ) մինչև, մինչ, մինչդեռ, մինչև որ (առ.ժ→՝ անմիջական նախորդում). սրանց փոխկաղապարման ժամանակ մինչև, մինչ շաղկապները գործառում են որպես նախադրություններ՝ մինչև կմեկնեմ→մինչև մեկնելը:

11. ԱՐՄԱՏԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Գոյականների իմաստային բաշխման սկզբունքները

Այն հանգամանքը, որ գոյականների իմաստային քննությունը ղեկավարված է այլ խոսքի մասերից հետո՝ բացառությամբ դերանվան, բացատրվում է նրանով, որ գոյականներն ընդհանրապես և արմատական գոյականները մասնավորապես ունեն երկու էական առանձնահատկություն:

1. Մինչև այժմ քննված նյութական խոսքի մասերի մեջ կարելի է տարբերել առաջնային և երկրորդային (փոխկաղապարային) իմաստներ, այսինքն՝ իմաստներ, որոնք բնորոշ են տվյալ խոսքի մասերին ընդհանրապես, և իմաստներ, որոնք ձևով են բերվել փոխկաղապարմամբ: Այս տեսակետից գոյականները փաստորեն օժտված են միայն երկրորդային իմաստներով. նրանց իմաստները կարելի է մեկնաբանել որպես ածականական և բայական իմաստների, այլև ածականական և բայական բառակապակցությունների իմաստների փոխկաղապարման հետևանք: Ինչպես հայտնի է, «որոշիչ+որոշյալ» կապակցության մեջ գոյականն զբաղեցնում է որոշյալի և «ենթակա+ստորոգյալ» կապակցության մեջ՝ հատկապես ենթակայի տեղը, իսկ ամեն մի որոշյալի իմաստ վերջին հաշիվով կարելի է դիտել որպես «որոշիչ→որոշյալ» և ամեն մի ենթակայի իմաստ՝ որպես «ստորոգյալ→ենթակա» կամ «ստորոգյալ→որոշիչ→ենթակա-որոշյալ» փոխկաղապարման արդյունք: Եթե ենթադրենք սերման ամենասկզբնական աստիճանը, երբ ենթակա-որոշյալի մասին մենք ոչինչ չգիտենք, բացի այն բանից, որ նա ենթակա և որոշյալ է, այսինքն՝ գոյական՝ գոյակի նշանակում, ապա հավելյալ նրա արժեքը կորոշվի ստորոգյալի և/կամ որոշչի փոխկաղապարմամբ. եթե ենթակա-որոշյալը որոշակի արժեք ունի, այսինքն՝ անցել է որոշակի փոխկաղապարման գործընթաց, ապա նրա, որպես գոյականի, իմաստը կարող է լրացվել ստորոգյալի և որոշչի իմաստներով: Վերջին հաշիվով ամեն մի գոյականական իմաստ կարելի է դիտել որպես հենակետային գոյական-որոշյալի կամ հենակետային ստո-

րոգելիի և նրանց հարող լրացուցիչ իմաստների ղուգորդում: Եթե ամենաընդհանուր իմաստ վերագրենք զոյակ բառին⁶, ապա ամեն մի գոյականի իմաստ կարելի է արտահայտել «գոյակ, որ ...» բանաձևով:

2. Առաջին կետից բխում է, որ, բացի «որոշիչ-որոշյալ» կաղապարի մեջ որոշյալի և ստորոգելիի զրո արժեքից, կրթ ենթակա-որոշյալը նշում է միայն գոյականական գործառություն (նշանային մակարդակ), գոյականներն ընդհանրապես չեն կարող մենիմուլթ լինել. նրանք պարունակում են որևէ հենակետային գոյականական իմաստ և նրան գումարվող որևէ լրացուցիչ իմաստ, որ փոխկաղապարմամբ ստացվել է ածականների ու բայերի և ածականական ու բայական բառակապակցությունների իմաստներից (վերջին դեպքում կարող է տեղի ունենալ կրկնակի փոխկաղապարում): Որոշ դեպքերում սա ակնհայտ է, այլ դեպքերում կարող է բացահայտվել միայն որոշակի վերլուծությամբ: Այսպես, դժվար չէ ուսուցիչ գոյականի դեպքում նկատել, որ այն պարունակում է ուսուցիչ մարդ կապակցությունը, կամ մութ գոյականի դեպքում պարզել, որ այն ունի մութ վիճակ, մթություն արժեքը: Այլ դեպքերում, մասնավորապես փոխառությունների դեպքում, կապը կարող է խզված լինել: Հենց այս հանգամանքն է անհրաժեշտ դարձնում բացատրական բառարաններում գոյականական իմաստները բացատրել որևէ հենակետային գոյականի և որոշյալին բառի, բառակապակցության կամ նախադասության, երբեմն էլ մի բանի բառի, բառակապակցության կամ նախադասության օգնությամբ: Որպես օրինակ բերենք զայլ գոյականի բառարանային սահմանումը. «Գայլ—շների ընտանիքին պատկանող գիշատիչ գազան» [Աղայան, 1976, 218]: Այստեղ հենակետային գոյականը (հատկանշյալը) «գազան» բառն է, որի իմաստը ինքնին ներկայացնում է «կենդանի» բառի մասնավորված տարբերակը, իսկ հատկանիշն արտահայտում են 1) «շների ընտանիքին պատկանող» և 2) «գիշատիչ» բառերը, որոնք կրկու տարբեր ստորոգյալների փոխկաղապարումներ են, ընդ որում «գիշատիչ» հատկանիշն արտահայտված է մեկ բառով, «շների ընտանիքին պատկանող» հատկանիշը՝ բառակապակցությամբ: Այլ կերպ ասած՝ մենք գործ ունենք միևնույն ենթական ռենցող երկու տարբեր նախադասությունների աջակողմյան (ստորոգելիական) մասերի փոխկաղապարման (փոխակերպման) հետ՝ 1) «գայլը պատկանում է շների ընտանիքին» և 2) «գայլը գիշատիչ գազան է», ընդ որում սրանց

6 Նշենք, որ սա էլ ածանցված է զոյ բայանունից, որ իր հերթին կարող է ղիտվել որպես հին գոմ (զոլ) «դոլություն ունենալ» բայի փոխկաղապարման արդյունք. զոյակ—զոլ—զոմ բառերի փոխհարաբերությունը նույնն է, ինչ Լակ—Լ. (հին գոյական)—Լմ բառերինը:

մեջ առկա «շուն», «ընտանիք», «գաղան» գոյականները իրենց հերթին փոխկաղապարման արդյունք են և բազմիմուլթ:

Այժմ պարզենք այն հարցը, թե որո՞նք են որպես հատկանշալիներ հանդես եկող ամենաընդհանուր բնույթի հենակետային իմաստները: Այս նպատակով հարկավոր է տարբերել գոյականների երկու տեսակ՝ վերացական և կոնկրետ-թանձրացական:

Վերացական գոյականների իմաստները ոչ այլ ինչ են, եթե ոչ ածականական և բայահիմքային իմաստների գոյականացված արտահայտություններ, հատկանիշների և գործողությունների անուններ՝ ըստացված ստորոգյալների դեր կատարող ածականների և բայահիմքերի անմիջական փոխկաղապարումից (առանց միջնորդային այլ փոխկաղապարումների)՝ ֆաջ (է)→ֆաջուրյուն, խոս(ում է)→խոս և այլն: Վերացական բնույթի բաղադրյալ գոյականները կրենվեն բառակազմության բաժնում. այստեղ մենք կանգ կառնենք միայն արմատական վերացական գոյականների վրա: Նշենք, որ առդրային և շաղկապական իմաստները կարող են արտահայտվել ածականական և բայական միջոցներով և, հետևաբար, փոխկաղապարմամբ զրոսեորվել գոյականների խմբում: Կարելի է այս կապակցությամբ ասել, որ չկա այլ խոսքիմասային որևէ իմաստ, որ հնարավոր չլինի արտահայտել գոյականաբար: Ածականների, թվականների և բայերի դեպքում սա լիովին պարզ է, ուստի բերենք որոշ օրինակներ սպասարկու բառերի համար՝ երե (շաղկապ)→դեպում (առդիր)→պայման (գոյական. հմտ. պայմանով ձևի առդրային և այն պայմանով, որ կապակցության շաղկապական գործածությունը), որպեսզի (շաղկապ)→համար (առդիր)→նպատակ (գոյական. հմտ. նպատակով առդրային ձևը և այն նպատակով, որ շաղկապական տիպի կապակցությունը). որոշ դեպքերում, ինչպես հայտնի է, միևնույն բառը կարող է հանդես գալ և՛ գոյականական, և՛ առդրային գործածությամբ՝ երբ (շաղկապ)→ժամանակ (առդիր)→ժամանակ (գոյական):

Եթե վերացական գոյականների իմաստները կարելի է դիտել որպես բայ-ստորոգյալների (լրացումներով կամ առանց լրացումների) իմաստների անմիջական փոխկաղապարման արդյունք («բայ-ստորոգյալ→գոյական»՝ ուսանում է→ուսում), ապա կոնկրետ գոյականների դեպքում մենք գործ ունենք միջնորդված փոխկաղապարումների հետ՝ «բայ-ստորոգյալ→որոշիչ→որոշյալ» օղակներով՝ գրում է→գրող (մարդ)→գրող (գոյական), գրում է→գրելու (գործիք)→գրիչ. գրում է→գրված (բան)→գրվածք և այլն:

Կոնկրետ (թանձրացական) գոյականների իմաստները, ինչպես նշվել է, ներկայացնում են ընդհանրացման ու մասնավորման (առանձ-

նացման) որոշ աստիճաններ, որոնց բնույթի ու փոխհարաբերության հարցը հետաքրքրել է ոչ միայն լեզվաբաններին, հատկապես իմաստաբանական-գաղափարագրական բառարանների հեղինակներին, այլև, դրանցից ավելի վաղ, փիլիսոփա-տրամաբաններին:

Լեզվաբան-բառարանագիրները որպես հենակետ առանձնացված իմաստ-հասկացությունները քննելով ընդհանուրից մասնավոր աստիճանավորության մեջ՝ դրանք դարձնում են բառերի բաշխման սխեմայի հիմք և ուշադրությունը կենտրոնացնում այն աստիճանի հասկացությունների վրա, որոնց մեջ բաշխվում են բառերը:


Իրար նկատմամբ ընդհանրացման տարբեր աստիճաններ ներկայացնող իմաստների (տրամաբանական առումով՝ հասկացությունների) փոխհարաբերությունը, ինչպես հայտնի է, հին ժամանակներից ըսկըսած տրամաբանություն մեջ դիտվել է որպես սեռի և տեսակի հարաբերություն: Դեռևս մ. թ. III-րդ դարում հույն փիլիսոփա Պորփյուրը (Պորփիրիոս), որի գլխավոր աշխատությունը հավանաբար V դ. վերջերին լատիներենի է հայերեն («Ներածութիւն ստորոգութեանցն Արհատութիւն», հրատարակված է Վենետիկում, 1833 թ.), տվել է սեռային և տեսակային հասկացությունների հարաբերությունը ներկայացնող մի սխեմա, որ հայտնի է «Պորփյուրի ծառ» անունով (տե՛ս 125-րդ էջը):

Հետագայում առաջարկվել են իմաստների դասակարգման տարբեր սխեմաներ, որոնք հնարավորություն են տվել իմաստաբանական բառարանների հեղինակներին բառերը խմբավորելու ըստ իմաստների [հմմտ. Морковкин, 1976]: Այդպիսի դասակարգման ենթարկվում են հատկապես գոյականները, իսկ մյուս խոսքի մասերը կամ բերվում են համապատասխան գոյականների հետ միասին, կամ որոշ դեպքերում՝ առանձին (գոյականացված կամ սկզբնական ձևով):

Ժամանակակից հայերենի նյութի հիման վրա և նկնելով ՀԿ-ի սկզբունքներից՝ հենակետային իմաստների բաշխման դեպքում մենք նկատի ենք առնում հետևյալը:

Ամենից առաջ տարբերում ենք ըստ թվի կարգի երկու դասերման՝ եզական և հավաքական իմաստներ. եթե եզական ամենաընդհանուր իմաստը կարելի է արտահայտել զոյակ բառով, ապա հավաքական առումով այդպիսին կլինի աշխարհ բառը:

Երկրորդ՝ հավաքական իմաստները մենք տարբերակում ենք ըստ իրական և ըստ նշանային աստիճանների. այսպես, մառդ բառի համար նշանային աստիճանը կարտահայտի մառդկություն, իսկ իրական աստիճանը՝ հասարակություն բառը: Վերջինս, եթե ընդհանրացնենք նրա իմաստը մարդկային իրական հարաբերությունների բոլոր տիպերի



Համար, կարող է ունենալ ազգակցական (համառ. քննադիմ, տոնմ), լեզվական (համառ. ազգ) և այլ կարգի հատկություններով միավորվող տիպեր:

Երբորդ՝ ինչպես կարելի է հղրակացնել նախորդ շարադրանքից, գոյականական իմաստների սերումը մենք պատկերացնում ենք որպես փոխհաջորդական փոխակադապարման գործընթաց. նախադասության աջակողմյան մասի հենակետային իմաստը (հասկացությունը՝ էքստենսիոնալը) իրեն հարող լրացական իմաստների հետ միասին ձախ կողմում (ենթակայի մասում) տալիս է ավելի նեղ բնութստի գոյակսն, որ կարող է իր հերթին հանդես գալ աջակողմյան մասում. սա էլ նոր լրացական իմաստներով կարող է անցնել ձախակողմյան մասը և այլն:

Ասածներից բխում է, որ գոյականների իմաստային բաշխում, ըստ ՀԼԿ-ի, կարելի էր շկատարել, որովհետև գոյականների իմաստա-

յին տարրերն արդեն քննվել են, և մնացածը փոխադասարման հարց է: Սակայն մի կողմից՝ նկատի ունենալով, որ շատ ղեպքերում մենք ունենք բառեր, որոնց ելակետային հիմքերը պարզ չեն, մյուս կողմից՝ հաշվի առնելով ՀԼԿ-ի հիման վրա կազմվելիք հայերենի իմաստաբանական բառարանի պահանջը, մենք առանձին հատվածներով նախ կխոսենք վերացական գոյականների մասին, ապա կանգ կառնենք կոնկրետ-թանձրացական գոյականների առանձին խմբերի վրա հետևյալ հաջորդականությամբ՝ 1) անօրգանական աշխարհի հետ առնչվող գոյականներ, 2) բուսական աշխարհի հետ առնչվող գոյականներ, 3) կենդանական աշխարհի հետ առնչվող գոյականներ և 4) մարդկային հասարակության հետ առնչվող գոյականներ:

բ. Վերացական գոյականներ

Վերացական գոյականների մեջ առաջին հերթին առանձնացնենք այն արմատական ձևերը, որոնք, որոշ կոնկրետ դործածություններից վերանալու դեպքում, արտահայտում են գոյորոշ և առգոյորոշ կարգերի տարրեր եզրերը: Սրանց կապը համապատասխան բացական և այլ կարգի հիմքերի հետ որոշ ղեպքերում ակնհայտ է, այլ ղեպքերում, հատկապես փոխառությունների դեպքում, կարող է բացահայտվել ստուգաբանական վերլուծությամբ կամ այլ լեզուներից բերվող զուգահեռներով: Այս գոյականների իմաստային բաշխումը ներկայացնենք համապատասխանաբար երկու աղյուսակով (տե՛ս աղ. 8, 9):

Մի շարք գոյականներ՝ աղյուսակներում տեղ գտածների համեմատությամբ ունեն հավելյական իմույթներ և ստացել են ավելի կոնկրետ իմաստներ, զուեղ, քաղանք, խալ, շերտ, պատյան, փառ բառերն արտահայտում են նյութական որոշ կազմ (ամբողջ կամ մաս)՝ ձևի և այլ տարբերություններով. աղտ, բիծ և կեղտ բառերը՝ նյութի որոշ ավելցուկ (կազմ→). խաբիսխ և հիմմ բառերը՝ դասի կարգի→ (առաջին)՝ եզրը միացած տեղի կարգի ↓ («տակ») եզրի հետ. թափ և ուծ բառերը՝ շարժման և պատճառայնության մեծ չափ. կոն և փրամիդ բառերը՝ ձևի որոշ տիպեր, շեշ և փող «նեղ անցք» բառերը բացվածքներ՝ թվի և ձևի տարբերությամբ և այլն:

Մեծ թիվ են կազմում զանազան հավաքական գոյականները, որոնց իմաստները կարելի է բնութագրել որպես թվի կարգի ↔ եզրին վերագրված հավաք, զումար և այլն. գոյականների ավելի կոնկրետ տարբերակներ՝ լրացուցիչ իմույթներով և սովորաբար կապված առարկաների որոշ խմբերի հետ՝ բարդ «դեղ, կույտ», դաստա, դեզ, խումբ, կայտ, կույլ, շեղջ, տրցակ, փունջ և այլն: Անձերի հետ կապված հա-

	կազմ	կախում	Թիվ	Դաս	Ձև	Ուղղորթյուն	Չափ	Տեղ (դիրք)
→	համոզում	կապ		սկիզբ				կատար
←	արատ կարի-(ք) սկիս-(ք)			հանդ		խտիր խույս շատավիզ		տակ
→ —		դարձան ճար մեթոդ	կես		զիծ խաղ խայտ	վրել		կենտրոն
↔			դումար թիվ խումբ հանդանակ հաշիվ հավաք տակ «շարք»	ծայր կատար	անկյուն ծալ վրթ քունջ			եղբ ծիր կողմ կոշտ սրունակ սահման սայր սինոն (—լր. իմ.)
⌊	կազմ նյութ		դույզ (հ ած.) ջուր (հ ած.)	դաս կանոն կարգ համար	դալար փաթ օղ		լիբ ծավալ ոլորտ չափ	
	հատ հյուսիս մաս տարր			թոհուրոհ քառս	սրդ եղանակ կաղապար կերպ ձև նմուշ օրինակ	կես	վայր տեղ	

Համեմատություն	Պատճառայնություն	Համախառնություն	Կերպ	Ընթացիկ	Փոփոխություն	Տեղություն	Ժամանակ
→	առիթմ պատճառ						
→	պայման						
→	աբգա (իք)		ավարտ վախճան վերջ		հալ վիճակ		
→		անդամ			անդորր դադար զուլ		

վաքական անուններ են ամբոխ, առյուծ, թափուր, ժողով, հանդես և այլն: Սրանք մեծ մասամբ կրելով են կոնկրետ գոյականների խմբերում:

Արմատական շատ գոյականներ համընկնում են, հնչյունական որոշ տարբերությամբ կամ առանց դրա, համապատասխան բայական հիմքերի հետ և ներկայացնում են բաղադրանքներ՝ երբեմն որոշ կոնկրետացմամբ: Դրանք մեծ մասամբ քննվել են որպես բայահիմքեր. այստեղ բերենք համեմատաբար ինքնուրույն գոյականական արժեք ունեցող արմատական մի շարք ձևեր՝ ապտակ, արշավ, գիրկ, գյուտ, գոյ, գործ, գրոհ, դուրյո (դո- + -ույթ) «գորհ», երթ, զարկ, բարբափ, լող, խտիտ, ծեծ, ծուր, կար, նիգ (հմտ. ջան-բ—ջան-ալ), շու, պրտույտ, փույթ և այլն: Բայահիմքերը բնականաբար կարող են ենթարկվել լրացուցիչ փոխկադապարման և ստանալ ավելի կոնկրետ նյութական իմաստներ՝ ցույց տալով գործողության տեղը (ապաստան, դարան, հանգրվան և այլն), տուրկան և հետեանքը (ավանդ, բեռ, կծիկ, պատառ, փերթ, փշուր և այլն): Սրանք շատ դեպքերում կապված են կոնկրետ գոյականների տարբեր խմբերի հետ և կրենք են համապատասխան հատվածներում:

Առանձին դեպքերում գոյականների բաղադրանքական արժեքը բացահայտ է, բայց չկան համապատասխան բայահիմքեր՝ զոգ (հմտ.

գիրկ—գրկել), ծափ, ծոց (համտ. գիրկ), նախնիր, վրար, վիգ «օգնություն» (գորավիգ), ցույց և այլն:

Վերևում բերված վերացական և մասամբ նյութական բնույթ ունեցող բայածանց գոյականների կողքին մենք ուզում ենք առանձնակի նշել հատկապես նշանային (հոգեկան) իմաստ ունեցող այն գոյականները, որոնք մասամբ կապվում են բայական համապատասխան հիմքերի հետ, մասամբ հանդես են գալիս որպես բայական հարադիրներ, մասամբ ինքնուրույն գոյականներ են և ցույց են տալիս հոգեկան այս կամ այն երևույթը որպես գոյավիճակ: Սրանց ընդհանուր բնութագիրը, ըստ համընդհանուր լեզվաբանական կաղապարի, տրված է ածականների ու բայահիմքերի քննության կապակցությամբ և այստեղ չի կրկնվի: Ահավաստի այդ գոյականները՝ մասամբ օժտված նյութական արտահայտության լրացուցիչ հատկանիշով՝ ահ, ապավեն, ավյուն, բույր, գաղափար, գեղ, գորով, գրգիռ, զուր, զուման «կասկած», դարդ, (եռանդ), (երկևն), քախիծ, (ժույժ < գույժ), իզմ, իւանդ, խել(-f), խիղն, խինդ, խնդիր, խոկ, խոխի, կասկած, կարի-«ցում» (կարեկից), (կսկիծ), կորով (նաև ֆիզիկական իմաստով), համ, հարգ, հարկ, հեռ, հիշատակ, հնար, հոգ, հոտ, հրապույր, հույզ, հույս, ձանձիր, հաշիւ, միտ(-f), մորմոհ, նախանձ, շուշտ «կասկած» (անշուշտ), ոխ, փգր, սարսափ, սեր, վախ, վիշտ, տագնապ, տաղտ(ույ), տարա-կույս, տենչ, ցավ, ուշ(-f), փափագ, բեն:

Հետևյալ արմատական գոյականներում հոգեկան (նշանային) երկվայնների նյութական արտահայտությունն ավելի է շեշտված՝ աղետ, արհավիր-f, բախտ, Լեղոն, երախտ(hf), գավեշտ, խունապ, խույզ, շառ, պատուհաս, սարսուռ, վտանգ, փորձ:

գ. Անօրգանական աշխարհի հետ կապված անվանումներ.

Ժամանակի արտահայտություն

Տիեզերք (տի-եզեր-f) և աշխարհ ընդհանուր բնույթի գոյականների կողքին առկա են նաև այնպիսի գոյականներ, որոնք արտահայտում են հատկապես անօրգանական աշխարհի հետ կապված բնդհանուր իմաստներ: Այսպիսի ամենից ավելի ընդհանուր բաժանումներն արտահայտում են մի կողմից՝ երկիր և երկինք, մյուս կողմից՝ գետին (հող), ջուր և օդ գոյականները: Առաջին բաժանման հիմքում բնկած է ամենից առաջ տեղի կարգը՝ ներքինի (↓) և վերինի (↑) հակադրությամբ, թեև ստուգաբանորեն այդ անվանումների աղբյուրները տարբեր լեզուներում կարող են տարբեր լինել: Երկրորդ բաժանման

դեպքում հարկավոր է տարբերել առարկաների ընկալման սովորական և գլխավոր հայեցակետերը. լեզվական անվանման հիմքում ընկած է սովորական հայեցակետը՝ երբեմն բառարաններում ձևափոխված կամ լրացված գիտական հայեցակետով: Նույնի տարբերակումը կարող է հիմնվել ավելի լայն պլինդ մառմին, հեղուկ և գազային մառմին (գազ) հասկացությունների վրա՝ կազմի, չափի և ձևի կարգերի համապատասխան եզրերի օգտագործմամբ՝ պլինդ և ոչ պլինդ, սեփական ձև ունեցող և շունեցող, բաղադրիչների մերձավորության տարբեր ստիճաններով (չափով) բնութագրվող: Հենակետային այս հիմնական իմաստների օգտագործմամբ կարող են որոշվել գեանի (հողի) և ընդհանրապես պլինդ մարմինների, ջրի և ընդհանրապես հեղուկների, օդի և ընդհանրապես գազային մարմինների անվանումների տարբերակիչ հատկանիշները: Այս դեպքում էլ հարկավոր է տարբերակել ինչպես միայն գեանի (հողի), միայն ջրի, միայն օդի հետ կապված, այնպես էլ սրանց զանազան զուգակցումներով բնութագրվող մարմինները և երևույթները: Բոլոր հնարավոր տիպերի տարբերակումը թողնելով իմաստաբանական բառարաններին՝ այստեղ դիտողություններ անենք այս մարմինների և երևույթների իմաստային տարբերակման հիմքերի և դրանց ձևականացման հնարավորությունների մասին:

Փորձենք ըստ ՀԼԿ կարգերի և եզրերի բնութագրել գեանի (հողի, երկրի) հետ կապված արմատական գոյական անունները:

Սրանց մեջ ամենից առաջ կարելի է առանձնացնել նյութական բնութագրեր ունեցող և մասնավորապես կազմի կարգի շեղոք եզրով (կազմ.) բնութագրվող «երկրի կազմիչ տարր» մարմինները՝ հողը (նեղ առումով) իր տեսակներով, քարը և քարատեսակները, մետաղները, զանազան բնական նյութերը. սրանք գեանի (երկրի) բաղադրիչ տարրերն են, որոնց անվանումները իրարից տարբերվում են զանազան լրացուցիչ խմուխներով. ահավասիկ ժամանակակից հայերենում գործածվող մի շարք այսպիսի գոյական անուններ՝ ագար, աղամանդ, ալարաուր, անագ, սվազ, աբաթ, աբնի, աբուր, աբասալ, բուրակ, գաջ, գոհար, գաղձ, երկաթ, գմուխտ, խին, ծծումբ, կապար, կավ, հալիներ, հող, մարգարիտ, մարմար, մետաղ, շափուղա, շիր, ոսկի, պղինձ, սալ, սուտակ, փղի, փառ և այլն:

Գետնի (երկրի, հողի) հետ կապված արմատական գոյական անունների երկրորդ խումբը կազմում են հատկապես տարածական բնութագրեր ունեցող, այսպես կոչված, լանդշաֆտի գետնային մասը կազմող գոյականների անվանումները, որոնք ներքնապես տարբերվում են երկրի նկատմամբ գրաված դիրքով (տեղով), ուղղությամբ, չափով, ձևով, երբեմն էլ լրացուցիչ ավելի կոնկրետ հատկանիշներով՝ անդունդ,

առապար «բարբարոս վայր», բլուր, գուր («փոս» իմաստով), դաշա, դար «բարձրավանդակ», ընդերք («երկրի ներս» իմաստով, այլապես ընդհանուր իմաստով ներկայացնում է տ—3 «ներս» իմաստի գոյականացված արտահայտությունը), քումբ, ժայռ, լեռ, խուր, խրամ, ձերպ, կիրն, հովիտ, ձոր, սար, վիհ, վիրապ, փոս և այլն: Մասամբ այս բնույթի պիտի լինեն նաև, այսպես կոչված, աշխարհի չորս կողմերի անվանումները, որոնք տրվում են մարդկանց կողմից՝ տարածության մեջ կողմնորոշվելու համար՝ արևելք, արևմուտք, հարավ, հյուսիս: Սակայն, ինչպես ցույց է տրվել մեր կողմից [Djahoukian, 1986], հայերը կողմնորոշվել են հնից սկսած արևի կիսօրյա դիրքով որպես առաջակողմի, հակառակ կողմը եղել է հյուսիսը, ձախը՝ արևելքը, աջը՝ արևմուտքը. այսպիսով, հայերի մեջ աշխարհի կողմերի անվանումները կապված են երկնային մարմիններից արևի դիրքի հետ, այսինքն՝ մտնում են իմաստային ուրիշ խմբի մեջ:

Գետնի (հողի, երկրի), ավելի ճիշտ՝ պինդ մարմինների հետ կապված արմատական գոյականների երրորդ խումբը կազմում են այն անվանումները, որոնք բնութագրում են դրանք ըստ ջրային և օդային միջավայրերի. մի կողմից՝ ավի, կլզի, հրվաճեղան, մյուս կողմից՝ ասող, ասույ, արբանյակ (բնական), արև (արեգակ), արուսյակ, լուս¹, մանիկ: Նշենք, որ գետինը ի հակադրություն ջրի կոչվում է ցամաք:

Ջրի և ընդհանրապես բնական հեղուկների հետ կապված արմատական գոյական անունները ևս կարելի է բնութագրել ըստ ՀՀԿ-ի կարգերի զանազան եզրերի և ավելի կոնկրետ առարկաների հետ ունեցած լրացուցիչ հարաբերությունների. նրանց տարբերակումը կարելի է կատարել պինդ մարմինների և հատկապես գետնի հետ առնչվող գոյական անունների անալոգիայով. այսպես, կուպր, հավր, շուր և այլ հեղուկների անուններ տարբերվում են ըստ կազմի կարգի՝ լրացուցիչ այլ հատկանիշներով հանդերձ (հմտ. քանձ, ածականի ձևական նկարագրությունը ածականին նվիրված հատվածում). շիր, պուտ և ուղիս բառերը տարբերվում են չափի հետ կապված լրացուցիչ իմությունով. շատրվան—ը՝ ըստ գեպի դուրս (տեղի և ուղղության կարգեր) կատարված շարժման (փոփոխության կարգ). աղբյուր, առու, գետ, լիճ, ձով, վտակ, օվկիանոս գոյականները տարբերվում են ըստ չափի, ցամաքային միջավայրի հետ ունեցած կապի բնույթի և այլ հատկանիշների. հանի, տիղմ, ցեխ գոյականները՝ ըստ ջրի և հողի խառնուրդի (կազմի կարգ)՝ երբեմն լրացուցիչ իմությունով. մառախուղ, փրփուր բառերը՝ ըստ ջրի հետ օդի լրացուցիչ բաղադրության.

դիրտ, մուր բառերը ցույց են տալիս հեղուկի տակ պինդ նյութի մնացորդ:

Երկնքի, օդի և գազային այլ մարմինների հետ կապված արմատական գոյականները համեմատաբար սակավաթիվ են. նրանց տարբերակիչ հատկանիշները հարաբերակից են պինդ մարմինների (հատկապես գետնի) և հեղուկ մարմինների (հատկապես ջրի) հետ կապված արմատական գոյականների տարբերակիչ հատկանիշներին. այսպես, առկա են գազային մարմինների տարբեր անվանումներ, օդի տարբեր տարածական հատվածների անվանումներ (հմտ. արփի «օդի լուսավոր շերտ», Եթեր «օդի վերին շերտ»՝ ըստ հին պատկերացումների), ջրի հետ օդի տարբեր տիպի խառնուրդների մասամբ անվանումներ (պղպշ-ակ, փրփուր):

Գետնի, հողի և ջրի հետ կապված գոյականների երկրորդ խումբը կազմում են, այսպես կոչված, բնության երևույթների անվանումները, որոնք բուն գոյորոշ (առարկայական) հատկանիշներով բնութագրվող կարգերին հատուկ իմաստների հետ միասին ունեն նաև առգոյորոշ (հատկություններին և գործընթացներին հատուկ) հատկանիշներով բնութագրվող կարգերին հատուկ իմաստներ:

Բացի բնության առարկաների ընդհանուր շարժման անվանումներից, կան շարժման վիճակների և վիճակափոխության որոշակի տեսակների անվանումներ, որոնք մեր կողմից հիմնական գծերով նշվել են ածականների և բայերի իմաստային քննության կապակցությամբ. դրանք են լույսը և գույնը, կրակը և ջերմությունը, էլեկտրականությունը, ձայնը: Սրանց հետ կապված անվանումները, երբեմն միացած որոշ կոնկրետ իմաստների հետ, կարող են հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ տարբեր զուգորդումներով:

Այրման գործընթացի հետ կապված գոյականները ցույց են տալիս սկիզբ, ընթացք և վերջ (կերպի կարգ), պատճառ և հետևանք (պատճառայնության կարգ), տեղություն տարբեր աստիճաններ, ուժի և արագության տարբեր չափեր, այրվող նյութի տարերույթուններ, այսինքն՝ բնութագրվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ ավելի կոնկրետ տարրերույթուններով՝ անյուն, անբեղ, բոց, (հր)–դեմ, (խառ–ույկ), ծուխ, կայծ, կրակ, հուր, մոխիր, մուխ, մուր:

Ջրի շարժման տարբեր տեսակներ են արտահայտում և բնութագրվում առգոյորոշ կարգերի տարբեր եզրերով հետևյալ արմատական գոյականները՝ ակիք, ծուփ, կոհակ, վետ:

Օդի շարժման տարբեր տեսակներ են արտահայտում և բնութագրվում առգոյորոշ կարգերի տարբեր եզրերով ու լրացուցիչ կոնկրետ

իմաստներով հետևյալ արմատական գոյականները՝ զեփյոռո, խորշակ, հողմ, հով, սյուֆ, քամի:

Լույսի և գույնի հետ կապված նշենք գույն, երփն, քույր, լույս, նաճանձ, մայր «մթություն», մութ, նշույլ, շող, շուֆ, սովեր:

Ձայնի հետ կապված նշենք արձագանք, որոտ:

Ջրի տարբեր վիճակներ, օդի մեջ նրա տարբեր քանակներ, սրանց շարժման տարբեր տեսակներ են արտահայտում ամպ, անձրև, բուֆ, եղյամ, բուխպ, կարփուտ, նյուս, ձյուն, մառախուղ, մեգ, մշուշ, (մրբ-րիկ), շաղ, շամանդաղ, տաբափ, տեղ «առաառ տնձրե», ցող, (փոթորիկ) արմատական գոյականները: Օդի մեջ ջրի պակաս (կաղմ←) է արտահայտում երաշտ բառը:

Օդի ջերմության, կաղմի, վիճակների փոփոխության հետ կապված իմաստներ են արտահայտում ամպրոպ, կլիմա (հմմտ. ածանցյալոր եղանակ բառը), հավա, շանք, տապ (բառ մարդկային զգայություն), տոք (բառ մարդկային զգայություն):

Առաքիաների փոխազդեցություն (սրանց հետևանք), վիճակափոխություն են արտահայտում ժանգ, հալ(ք) բառերը:

Արևի ու լուսնի շարժման և եղանակի փոփոխությունների պարբերականությունն ու տևողականությունը մարդիկ վաղուց են օգտագործել համապատասխան ժամանակային գաղափարներ արտահայտելու համար. շատ (այդ թվում՝ արմատական) գոյականներ արտահայտում են ոչ միայն բնական մարմինների շարժման փուլեր, այլև ժամանակային գաղափարներ՝ այգ, ամ, ամիս, ամառ, աշուն, առավոտ, արշալույս, գարուն, զիշեր, դար, երեկո, ծագ, ձմեռ, տիվ, (ցայգ՝ ց+այգ), (ցերեկ՝ ց+երեկ), օր: Սրանց կողքին մի կողմից՝ հանդես են եկել ժամանակի ընդհանուր անվանումներ՝ անգամ, ժամանակ, հեղ, նվագ «տնգամ» և ժամանակի առողության չափերի պայմանական անվանումներ՝ բուլե, (վայրկյան՝ վայր+իկ+եան), քրիք «ակնթարթ», մյուս կողմից՝ կոնկրետ երևույթների (այդ թվում՝ տոների) ժամանակային այնպիսի նշանակումներ, ինչպես, օրինակ, զատիկ, նավակատիֆ, ամիսների և շաբաթվա օրերի անվանումներ, տարբեր ժողովուրդների մոտ ընդունված ժամանակագրական համակարգեր, որոնք բնութթով կապված են հատկապես մարդկային հասարակության հետ:

Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ ոչ անօրգանական բնության, այլև ինչպես կոեսներ, ուրիշ կարգի անվանումներ հաճախ կապվում են մարդու գործունեության հետ (հմմտ. տոմար, տոն և այլն) և պայմանականորեն են քննվում նրանից անկախ:

Մարդու կողմից բուսականությունն ընկալվում է որպես բնության բաղկացուցիչ մաս, և բնությունն բառը փաստորեն նշանակում է այն ամենը, ինչ հակադրվում է մարդուն: Ինչպես այլ դեպքերում, այնպես էլ բուսական աշխարհի նշանակումների դեպքում առկա են հավաքական հասկացությունների և բուսական աշխարհի առանձին գոյակների նշանակումներ, որոնց իմաստային հակադրությունն իրականանում է թվի կարգի եզրերի միջոցով:

Բուսական աշխարհի նշանակումների դեպքում ևս տարբերվում են նշանային և ոչ նշանային (իրական) հավաքական գոյականներ. այսպես, ծառ բառը հավաքական է նշանային մակարդակով՝ նշանակելով ինչպես ծառերն ընդհանրապես, այնպես էլ ամեն մի առանձին ծառ, մինչդեռ անտառ բառը նշանակում է ծառերի իրական հավաքական ամբողջություն: Այսպիսի նշանային ընդհանրություն ունեն բույս, նրա առանձին խմբերի համար՝ բանջար, քուփ, խոտ (նաև որպես չորացրած անասնակեր), ծաղիկ, ծառ, միրգ, տունկ բառերը, որոնք տարբերակվում են կամ ըստ օբյեկտի արտաքին հատկանիշների (համտ. քուփ, ծառ), կամ մարդու կողմից ստացած գործածության (համտ. միրգ, տունկ՝ տնկել բայի հետ կապված և այլն): Իրական հավաքական նշանակումներ են, բացի հիշված անտառ բառից, նաև ծմակ («մուխ անտառամաս»), շամբ, պուրակ բառերը. սաղարթ բառը նշանակում է տերևների (ծառերի և թփերի մասերի) ամբողջություն: Բուսական աշխարհի ընդհանուր հավաքական նշանակումն է ուշ շրջանում փոխառված ֆլորա բառը: Յուրահատուկ իմաստ ունի օ(վ)ազիս բառը, որ նշանակում է կանաչապատ (բուսականություն ունեցող) տեղ՝ ի հակադրություն շրջապատի:

Բուսականության հետ կապված մյուս արմատական գոյականները կամ առանձին բույսերի, կամ սրանց գոյության տարբեր փուլերի, կամ էլ բույսերի մասերի անվանումներ են:

Առանձին բույսերի անվանումները տարբերվում են իրարից ինչպես ըստ օբյեկտիվ՝ ՀԼԿ-ի կարգերով ու եզրերով բնութագրվող (ձև, չափ, տեղ և այլն) հատկանիշների, այնպես էլ ըստ մարդու ընկալման, նրա անցկացրած համեմատության (նմանեցման), նրա օգտագործման: ՀԼԿ-ի կարգերով և եզրերով բնութագրվող տարբերությունները արմատական գոյականների դեպքում մեծ մասամբ բացահայտվում են ստուգաբանական վերլուծությամբ և ավելի ակնհայտ են բարդ ու ածանցավոր բուսանունների դեպքում. հարկավոր է նկատի առնել, որ շատ բուսանուններ փոխառյալ են, և նրանց անվանումների իմուլսների

բացահայտումը պահանջում է ամենալայն ստուգաբանական աշխատանք: Միայն առանձին ղեկավարում արմատական բուսանունների մեջ հնաբառեր է տեսնել անվանման սկզբնական հիմքերը: Շատ անվանումների մեջ առկա են կոնկրետ իմաստային տարրեր, և այսպիսի բուսանունների վերլուծությունը պահանջում է կոնկրետ պատմական տվյալներ: Բույսերը մարդկանց կողմից տարբերակվում են ըստ վայրի և ոչ վայրի տեսակների, ըստ ուտելիության և անուսելիության, ըստ առաջ բերած զգայություն (հոտ, բաղյր, կծու և այլն) և այլն: Բուսանունների անվանումների իմաստային հանգամանակից քննությունը առանձին մեթոդությունների գործ է:

2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» ավանդված և ժամանակակից հայերենում գործածվող բուսանուններից են հետևյալները՝ ալոն, անանուխ, առվույտ, ավելուկ, արմավ, բաղրիջան, բագուկ, բամբակ, բակլա, բարձվեկյակ, բարդի, բողկ, բորբոս, բրինձ, զագ, գագար, գաղձ, գարի, գեղձ «բաղեղ», գինի, գինձ, դաղձ, դարչին (դարինենիկ), դափնի, դդում, դժնիկ, ելակ, եղևնի, եղեգ, եղինջ, բարխուն, բղիկ (թխիկ), ժախ, լալագար, լորի, լուռոս, խաշխաշ, խիար, ծիրան, ծորո (ծորին), կակաշ, կաղամախ, կաղամբ, կանեփ, կինամոն, կիպարիս, կնյուն, կննիթ (կունջութ), կ(ո)ծոխուր, կոտեմ, կարեկ, կորեգան, հալվե, հանար, հանար-ի, համսլար, համիկ, հացի, հուրտ, ձմերուկ, նակն(ղեղ), նիլ, մամուռ, մայրի, մանուշակ, մասուր, մացառ, մեխակ, մոր-ի, հարգիզ, հարդոս, հոն-ի, հուսափար, շահասպրամ «սահան», շահոհրամ, շաղգամ, շամամ, շրեշ, շուշան, սլոռ, ոսպ, որբ, որոմ, ուրի, չինար, պղպեղ, պտեր, պրսու, պուտ, ոհհան, սամիթ, սեխ, սիբեղ/խ, սիմինդ, սինձ, սիսեռ, սխտոր (խստոր), սմբուլ, սոխ, սոն-ի, սոս-ի, սպանախ, սունկ, սուսամբար, վագ, վարդ, վարունգ, վարսակ, վիկ, վուշ, տատասկ, տերեփ-ուկ, տոսախ, ցարաս-ի, ցորեն, ուռ-ի, ուրց, վեգենա, վեկոն, վինի, (փշատ), փրփրեմ, ֆեյ, օշինդր (նշանակում է նաև օշինդրից պատրաստված ըմպելիք): Ծաղիկների ամբողջություն է նշանակում փունջ բառը:

Ավելի շատ փոխաբերական գործածություններ է հայտնի կարկած «դդում» բառը (գլխի համար՝ բացասական իմաստով):

Ծառ կամ քուփ և պտուղ (սերմ) բառերի հարաբերությունն իմաստային առումով մոտավորապես նույնն է ծնող և զավակ բառերի հարաբերության հետ՝ հենվելով պատճառայնության կարգի վրա: Մի շարք ղեկավարում արմատական գործածություն ունեն պտուղների անվանումները, իսկ պտղաբերների անունները արվում են ըստ այդ պտուղների՝ բալ, բոխնշ, դեղձ, զկեռ, ընկույզ, բուգ, բուք, խնձոր, կաղին, կեռաս, կիտրոն, հապալաս, հունապ, մուրտ, նարինջ, նուշ, նուռ,

պոպոկ, սալոր, սերկևիլ, տանձ: Առանձին դեպքերում բույսը (ծառը) և պտուղը անվանվում են միևնույն ձևով. հմմտ. մանանեխ: Մառխ բառով նշանակվում է և՛ բույսը, և՛ նրա տված այրվող նյութը (խեթ): Հազվադեպ թփի և պտղի հարաբերությունը որոշվում է տարարմատությամբ, ինչպես ուրթ, վազ և խաղող:

Բույսերի մասերի և արտադրած նյութերի անվանումների իմաստային տարբերությունները կարող են ներկայացվել և ներկայացվում են ըստ գործառնության (համապատասխան բայական հիմքերի փոխկադապրմամբ) ու ըստ տեղի կարգի եզրերի (գետնի և իրար նկատմամբ դրաված դիրքով). պտուղների մասերի անվանումները իմաստաբանորեն կարող են ներկայացվել ըստ տեղի (դիրքի) կարգի եզրերի. ժամանակակից հայերենի բուսամասերի և պտղամասերի արմատական անուններից են արմատ, բուն, զոխ, կեղև, կեռպ, կոթիգ, կուտ, հասկ, նյուլ, մորե, շյուղ, շիվ (ունի նաև «ունիկ» իմաստ), ողկույզ, ոստ, շանչ (չեչ), (պատին), (տակոի), տերև, ցոլուն, փոնոկ, փուշ (նաև կենդանու մարմնի մաս), ֆիստ:

Մի շարք գոյական անուններ ցույց են տալիս բույսի և նրա մասերի զարգացման տարբեր փուլերը և, բնականաբար, կարող են արտահայտվել ժամանակի կարգի, երբեմն էլ պատճառայնության եզրերով՝ բուլբոջ, բնծյուղ, ծիլ, կոկոն, հունդ, սերմ:

Բույսերի հետ կապված որոշ արմատական գոյականներ ցույց են տալիս բույսերից ստացված նյութեր՝ գերազանցապես ըստ մարդկանց օգտագործման տարբերությունների՝ անգուժատ, բեկեկ, խեթ, խունկ, կնդուկ, կոնդ, նիպոտ, նեկտար, օսլա և այլն:

Ե. Կենդանական աշխարհի հետ կապված անվանումները

Կենդանի բառը, որ կապվում է կյանք<կեան-բ բառի և, վերջին հաջվում, հին կեալ «ապրել» բայի հետ, գործածվում է ինչպես լայն իմաստով՝ ողջ կենդանական աշխարհի ներկայացուցիչների, այդ թվում՝ նաև մարդու համար, այնպես էլ նեղ իմաստով՝ որպես անասուն բառի համանիշ՝ ի հակադրությոն ասուն-ի՝ մարդու: Ինչպես տեսնում ենք, կենդանի բառն ածանցյալ է, և այդպիսի ընդհանրացնող իմաստով արմատական գոյական չկա: Ինչպես բուսականների դեպքում, կենդանական աշխարհին վերաբերող արմատական գոյականների մեջ կան ընդհանուր և հավաքական, տարբեր հասակների հետ կապված անվանումներ: Սակայն կենդանական աշխարհին վերաբերող անվանումների մեջ հաճախ տարբերակվում է սեռը:

Բացի կենդանիների տարբեր տեսակներ նշանակող անվանում-

ներից, կան նաև ընդհանրացման տարբեր աստիճաններ ներկայացնող զանազան անվանումներ: Սրանց մեջ արմատական գոյականները չեն ընդգրկում՝ կենդանիների բոլոր խմբերը, և գիտական դասակարգման ժամանակ լրացվում են բաղադրյալ գոյականներով: Այսպես, եթե ըրու-չուն և հավի անվանումներն ածանցավոր են, ապա կան հատուկ արմատական բառեր արու և էգ թռչունների նշանակման համար՝ վարու-ժան և մարի: Սիրամարգ և լուրամարգ բառերում հանդիպող մարգ «թրու-չուն» բաղադրիչը, որ իրանական ծագում ունի, այլևս չի գիտակցվում: Մյուս կարգի ընդհանուր անվանումներից բոզուն, զազան, երե «որսի կենդանի», ձուկ, տավար, ալլև մարդ:

Արմատական հավաքական անուններ կան ինչպես ընդհանուր բր-նույթի, այնպես էլ ամենից ավելի տարածված (հատկապես ընտանի) կենդանիների համար՝ երամ (հմմտ. նաև երամակ), խաշն, նախիր, հոտ, ոհմակ, պարս, վոառ, տարմ:

Բավական շատ են կենդանիների սերունդների համար արված ընդհանուր և մասնավոր անվանումները, երբեմն հասակային ղգալի տարբերակմամբ՝ ալոջ «էգ ուլ», աւիծ, ավանակ, արջառ, զառ, երինջ, լակոտ, խոնկոր, կորյուն, ձագ, հուտ, մաթիլ, մոզի, մուրուկ, վառեկ, ֆուռակ: Գնշ, լեշ բառերը ցույց են տալիս կենդանու գործառություն-ների դադարումը (հմմտ. մարդու համար դի), բուխս բառը՝ թռչունի ձագ հանելու վիճակը:

Թեև բնակարանը բնորոշ է մարդու համար, բայց կան կենդանի-ների բնակության տեղի հետ կապված արմատական գոյականներ՝ բայ-ոց, բույն, ոռջ, սոր՝ իմաստի մասնագիտացմամբ:

Նշենք, որ կենդանիների սրոշ անուններ ավելի շատ հայտնի են փոխաբերական գործածությամբ՝ ֆալքառ «բորենի»→«պառավ կին»:

Առանձին կենդանիների համար հնից եկող արմատական անվա-նումներն են ագռավ, ալծ, անգղ, աղավնի, աղկիռն, աղվես, անձեղ, աղյուծ, առնետ, արագիլ, արծիվ, արջ, արտույտ, արոս, աֆաղաղ, աֆար, աֆիս, բադ, բագե, բարակ, բլբուլ, բնդեռ, բոռ, բորենի, բու, բրետ, զամփռ, գայլ, գոմեշ, գորտ, դելփին (դելֆին), եգ, ելն-իկ, երիվար, զամբիկ, քիթեռ, քոքոշ, քրքուր, քուրակ, իծ, ինձ, լոր, լոր-տու, լու, լուսան, խլեգ, խուռդ, խխունջ, խոզ, խոյ, ծիծառ, ծիւ, ծրդ-րիդ, կաշաղակ, կապիկ, կառու, կարապ, կարին, կաֆավ, կեռնիս, կետ, կհնն, կիվիվ, կկու, կնգում, կոկորդիլոս, կով, կոունկ, կրիա, կրետ, կուզ, կուդբ, հավ, հիդրա, հուպոպ, հովազ, հովառակ, ձի, հա-գար, հայ, հանն, հիմու (հնի), հննդ-ուկ, հպուռ, հուռակ, մատակ, մա-ֆի, մեդու, մժեղ, մոծակ, մոզես, մորեխ, մորմ, մրջյուն, մուկ, մուշկ, նապաստակ, նժույգ, նոխազ, շերամ, շուն, ոզնի, ոչխար, ոչիլ, ոռդ,

շիղջ (շղջիկ) . պիծակ, ջալլամ, ջուրի, սագ, սամույր, սարդ, սառչակ, (սի-
րամարգ), սկյուռ, սոխակ, սպունգ, վագր, վարազ, վիթ, տառնխ, տատրակ,
տգրուկ, տիգ, տորդիկ, ցեց, ցին, ցիռ, ցուլ, ուղտ, փաղանգ, փասիան,
փիղ, փոկ, օծ:

Կենդանական աշխարհի հետ կապված գոյական անունների հա-
ջորդ խումբը կազմում են մարմնի մասերի անվանումները: Ամբողջի
և մասի այս հակադրությունը ընդհանրացած ձևով արտահայտում են
մարմին (հմմտ. նաև խոսակցական ջան) և անդամ արմատական բա-
ռերը, ընդ որում սրանցից առաջինն ունի նաև ավելի լայն գործածու-
թյուն՝ նշանակելով տարածական ամեն մի գոյակ:

Մարմնի անդամների անունների իմաստային տարբերակումը կա-
տարվում է շուրջին հերթին տեղի կարգի եզրերի միջոցով (վերև, ներ-
քև, ներս, սջ, ձախ, առջև, հետև՝ համապատասխան ձևական նշանա-
կությունների ներառությունը), և համապատասխան գործունեություննե-
րի բայական նշանակումների գոյականացմամբ: Երկրորդաբար կարող
են հանդես գալ նաև այլ տարբերակիչ հատկանիշներ՝ ձևի (կոթ, ուղուցիկ կամ դուրս ընկած, գլխավոր կամ ներս ընկած, ուղիղ), շա-
փի, գույնի, կազմի, դասի հետ կապված, ինչպես նաև ավելի կոնկրետ
(բազմիմույթ) իմաստներ (այդ թվում ըստ համեմատության եզրի՝
նմանություն): Մարմնի մասերի (անդամների), մասամբ էլ մարմնա-
կան նյութերի, տեղամասերի՝ ժամանակակից հայերենում ամենից
ավելի տարածված և հնից եկող արմատական անվանումները հետև-
յալներն են՝ ագի, ազդր, ականչ, աղիք, անառ «կռճիկ», անուկ, այտ,
անութ, աչք, ատամ, արգանդ, արմունկ, արտևան-ունք, ափ, բազուկ,
բաշ, բեղ, բերան, բիր, բութ, բուկ, բուշտ «միզապարկ», բջիշ, գագար
(ունի նաև լայն իմաստ), գանձակ «կենդանու ստամոքսի բաժին», զարշա-
պար, գավակ, գեղձ, գես, զլուխ, գուն «ծունկ», դաստակ, դմակ, (դունչ <
ընդ-ունչ), եղունգ, եղջուր, երախ, երակ, երես, երկկամ, զիստ, քար,
քաղանք, քիզ, քիկունք, քոք, քուշ, քև, ժանիք, իրան, լանջ, լեղի,
լեղնդ, լյարդ, (խախաց-ոց «կենդանու ստամոքսի բաժին»), խայթ, խո-
պուռ, խոչակ, ծամ, ծիծ, ծղի, ծնոտ, ծոճրակ, ծուծ, ծունկ, կաշի, կա-
պին «ակնակապիձ», կառափ, կզակ, կնդակ, կմախք, կնքիք, կոկորդ,
կոզ, կոճ, կոպ, կոտոր, կոուփ, կտուց, կրունկ, կուշտ «կող», կուռ,
«թև», կուրծ-ք, հեռ, հող, հոնք, ձառ, ձեռ-ք, նանկ, նարպ, նիվ, նիտ,
նիրան, նկույթ, նուռ, մագիլ, մագ, մաշկ, մատ, միս, մկան, մորթ,
մորուք, ներքան, նյարդ, շիճն, շուրք, ոլոք, ող(ն), ո..., ոսկր, ոտ-ք,
որկոր, որովայն, պառնեկ, պարանոց, պինչ, պնեղ, պոզ, պոշ, պորտ,
պտուկ, պ..., ջիլ, ռունգ, սիրտ, սմբակ, տամոխ, ստինք, սրունք-ք, վառս,
վեգ (նշանակում է նաև խաղամիջոց), վիզ, ցուկ «կենդանու դունչ»,

ուղեղ, ունշ, ուս, փայծաղ, փետուր, փռշտ, փոր, ֆաղիւրք, ֆամակ, ֆար-
նիկ, ֆիթ, ֆիմ-ֆ, (ֆուռ-ֆ): Մարմնում գտնվող հեղուկներ են նշանակում
ավիշ, արյուն, հյուրք (վերջինս նաև բուսական) բառերը:

Առանձին դեպքերում մարմնի մասերի անունները կրում են լրա-
ցուցիչ իմուլթներ՝ նշելով որոշակի ձևեր, վիճակներ, մարդկանց կող-
մից նպատակային օգտագործումներ և այլն՝ բռունցք, բուռ, հյուս «մա-
ղահյուս», նան (հմմտ. բերված վեգ բառը), շալակ, շանշ, սալաւտ:
Որոշ հին բառեր այժմ դադարել են նախկին իմաստով ինքնուրույնա-
բար գործածվելուց և հանդիպում են միայն բաղադրյալ բառերի կազ-
մում՝ -աքուր «ոտք» (առաքուր), ալի- «սպիտակ մազ» (ալեհեւ, ալե-
զաւդ), ակն- (ակնակալին և այլն՝ ինքնուրույն գործածվող աշխ-ի
կողքին), -փառ «թև» (խնշափառ):

Կենդանական մարմինը արտադրում կամ փոխակերպում է ընդու-
նած կամ ներսում գտնվող նյութերը, որոնց համար կան զգալի թվով
արմատական անվանումներ. սրանք, բնականաբար, հաճախ զուգա-
հեռներ ունեն բայական համապատասխան նշանակումների մեջ և կա-
րող են դիտվել որպես փոխկաղապարումներ՝ գործողութուն→հետևանք
անցմամբ. հնից եկող և ժամանակակից հայերենում գործածվող այս
կարգի արմատական գոյականներն են աղբ, արտառու-ֆ (արցունք),
բեղմ(ն), դալ, դաշտան, քաւախ, քեփ, քրիֆ, քուֆ, լոժ, խոխ, խուխ,
ծեւտ, խին «կաթի յուղային մաս», կաթ, կեղտ (ունի նաև ավելի լայն
իմաստ), կոյ (կու), ձու, ձուլը «ձկնկիթ», մաղձ, մեզ, շաւալ, վահե,
փթիւր, փսիւնֆ, ֆ...: Որոշ անուններ էլ կապված են կենդանիներից
ստացված նյութերի բնական կամ արհեստական ձևափոխումների հետ,
և դրանց անուններն ունեն լրացուցիչ իմուլթներ՝ դռնդող, կաւագ,
նենն, յոպ, սեւ, ֆակուր: Ինչպես որ անօրգանական աշխարհի քննու-
թյան դեպքում մենք առանձնացրինք գոյորոշ կարգերով բնութագրվող
իմաստները առգոյորոշ կարգերով բնութագրվողներից և տարբերեցինք
բնական մարմինների նշանակումները բնության վիճակների ու երե-
վույթների նշանակումներից, այնպես էլ մինչև այժմ քննված կենդա-
նիների, մարմնի մասերի, մարմնի արտադրած նյութերի անունների,
կողքին կառանձնացնենք այն անվանումները, որոնք ցույց են տալիս
կենդանի օրգանիզմի ու նրա մասերի վիճակները. սրանց տարբերիչ
հատկանիշները բնութագրվում են հատկապես այնպիսի կարգերի եզ-
րերով, ինչպիսիք են՝ ժամանակը, փոփոխութունը, ընթացածը և այլն,
սակայն հաճախ կարող են բնութագրվել նաև գոյորոշ կարգերի եզրե-
րի, ինչպես նաև կոնկրետ իմաստների հետ կապված իմուլթներով:

Օրգանիզմի գոյության տարբեր փուլերը և սրանց հետ կապված
վիճակներն են նշում սաղմ, երկն (երկունֆ), ծին, կյան-ֆ, արբուն-ֆ,

ման գոյականները, որոնք կարող են դիտվել որպես համասյուսասխան բայական իմաստների փոխկադապարտման: Բաղադրություններում հանդիպող տի արմատը դեռատի, նորատի բառերում, բաղադրյալ նա-ս-ակ և տաՐի-ֆ գոյականների հետ միասին ցույց է տալիս ընդհան-րացած ձևով կյանքի որևէ ժամանակահատվածում մարդկային օրգա-նիզմի անցած ժամանակի տևողությունը: Առանձին փուլեր են նշում երեխա, մանուկ, պատանի, երիտասարդ բառերը. այս իմաստային շարքը լրացվում է ածականներով (ծեր, զառամ և այլն) և բաղադրյալ գոյականներով (ծերունի և այլն): Դի արմատական գոյականը ցույց է տալիս մարդկային օրգանիզմի գործառույթյունների ավարտի՝ մահվան հետևանքը (կենդանիների համար հմտ. գեշ, լեշ). այսինքն՝ նույն-պես փոխկադապարման արդյունք է (հմտ. մեռնել→մեռել, ննջել՝ փոխաբերական իմաստով «մեռնել»→ննջեցյալ): Դիակի թաղման (հմտ. քաղել) հետ կապված կան գերեզման, դագաղ, դամբան, դամ-բարան, չիւիւմ, պատան բառերը, որոնք ունեն նաև հասարակական ար-ժեք: Օրգանիզմի սաղմնավորումը և ծնունդը կապված են սեռային բա-ժանման հետ, որ վերջին հաշվով կարելի է քննել որպես պատճառայ-նության. կարգի հատուկ դրսևորում. բացի սեռ ընդհանուր բառից այս դեպքում պետք է նշել սեռային տարբերակումների այնպիսի անվա-նումներ, որոնք լինում են և՛ ածականներ, և՛ գոյականներ՝ հաճախ պարունակելով նաև կենդանու և անձի հասակային փուլերի հետ կապված տարբերությունների իմուլթներ, ընդ որում այս անվանում-ների մեջ հակադրական զույգերը կարող են արտահայտվել և՛ արմա-տական, և՛ ոչ արմատական ձևերով. հմտ. արու և էգ, քած. տղա և աղջ-իկ, կույս, օրիորդ. ծերունի (նաև ընդհանուր իմաստով) և պա-ռավ, տղամարդ և կին: Այս տարբերությունները, ինչպես կոտեսներ, ընկած են ընտանեկան հարաբերությունների տարբերությունների հիմ-քում:

Քոժոժ բառը նշանակում է թրթուրի պատյան:

Մեծ. թիվ են կազմում մարմնի և նրա անդամների ընդհանուր վի-ճակների՝ ֆիզիկական (ոչ նշանային) և նշանային գործառույթյունների, անվանումները՝ սովորաբար համասյուսասխան ածականական և բա-յական զուգահեռներով՝ ախտ, անուրջ, բիծ, բուր, երագ, խույլ «պա-շար», խոց, կեղ «խոց», կննիռ, կում, հագագ «շունչ», հագ, մանիա, մաքմաշ, մրափ, նաֆաս, նինջ, նիրհ, նուպա, շեֆ, շունչ, պալար, սով, սպի, վեր-ֆ, տենդ, ֆայլ, ֆաղց, ֆոս, ֆուքեշ, ֆուն:

Մարմնի ոչ սովորական վիճակ (հիվանդություն) կամ նույնիսկ մահ հարուցող նյութերի համար կան քույն, ժանր, իսկ հիվանդությու-նը վերացնող (բուժող) նյութերի համար՝ դեղ, սպեղանի բառերը: Սը-

Մասնա կարող են պատրաստվել և գործադրվել մարդկանց կողմից և այս դեպքում կապվում են մարդկային հասարակության հետ. հմմտ. բը-
միջկ («բուժել»→«բուժող» իմաստային փոխկադապարմամբ)։

գ. Հասարակության հետ կապված անվանումներ

Հասարակություն բաղադրյալ գոյականը իր բնույթով պետք է լի-
նի սովորական հավաքական անուն, սակայն այն նշանակում է ոչ
թի մարդկանց սովորական հավաքական ամբողջություն, ինչպես, օրի-
նակ, մարդկություն բառը, այլ փոխկապակցված միավորների ամբող-
ջություն. պատահական չէ, որ երբեմն խոսում են հասարակական օր-
գանիզմի մասին՝ զուգահեռ անցկացնելով հասարակության և կեն-
դանական օրգանիզմի միջև որպես որոշակի կառուցվածքների։

Մարդը որպես հասարակության անդամ սովորաբար նշանակվում
է անձ բառով։ Հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ կապված
անվանումների մեջ մարդը որպես հասարակության անդամ կրննվի
ըստ իր հասարակական գործառությունների՝ իմաստային մոտավո-
րապես նույն հարաբերությամբ, ինչ առկա է մարմնի մասի (անդա-
մի) և մարմնի միջև։ Սակայն, բացի այս մասնագիտացված գործա-
ռական բնույթի անվանումներից, կան նաև անձ ցույց տվող շատ գո-
յականներ, որ նշանակում են մարդկանց՝ ըստ նրանց հատկություն-
ների, իրար և իրերի նկատմամբ ունեցած հարաբերության, բնակու-
թյան տարածական մերձավորության և այլն՝ ակոյան, ընկեր, կառա-
պետ, հեռու, հուրկյառ, հոմանի, պահապան, պաշտպան, «սատար» և
այլն։ Այս կարգի հարաբերություններից շատերի ընդլայնումը և տե-
կանացումը հենց վերածվում է հասարակական համապատասխան գոր-
ծառության, բնորոշում հասարակության կառուցվածքը։

Մարդկանց ժամանակակից հատուկ կառուցվածքային ամբողջու-
թյուններն են ընտանիքը և պետությունը՝ բառերիս լայն առումով (որ-
պես ցեղակցական խումբ և երկիր-պետություն). սրանցից առաջինի
հիմքում ընկած է սերնդի վերարտադրության անհրաժեշտությունը, և
այն փաստորեն մտնում է հաջորդ՝ ավելի բարձր միավորման մեջ։
Երկրորդի հիմքում ընկած է առաջին հերթին մարդկանց գոյատևա-
նության անհրաժեշտությունը, և այն ներկայանում է որպես հասարա-
կական կառուցվածքի գլխավոր արտահայտությունը։ Եվ ընտանիք, և
պետություն բառերը բաղադրյալ են։ Իսկ ի՞նչ արմատական գոյական-
ներ կան, որոնց միջոցով արտահայտվում են մարդկանց ընդհանրու-
թյան տեսակները։ Այդպիսի գոյականներն են ազգ, (գերդաստան),
տոհմ, ցեղ, որոնցից առաջինը հենվում է գերազանցապես լեզվական,

վերջին երկուսը՝ ծագման ընդհանրության վրա. ազգը կարող է համ-
ընկնել պետության՝ որպես հասարակական միավորի հետ կամ չհամ-
ընկնել. գերդաստանը և հատկապես տոհմն ու ցեղը արդեն պատմա-
կան հասկացություններ են, որոնք փաստորեն միավորել են սերնդա-
պահպանության և գոյապահպանության գործառությունները: Հնից ժա-
ռանգվել են նաև այնպիսի արմատական գոյականներ, որոնք ցույց
են տալիս առանձին ժողովուրդների ներկայացուցիչների՝ խափշիկ,
նրեա, տանիկ և այլն: Այս խմբին են պատկանում նաև արմեն, հայ,
ռուս և այլ անվանումները: Ժամանակակից հայերենում և այլ լեզու-
ներում ավելի տարածված են առանձին ժողովուրդների ներկայացու-
ցիչների բաղադրյալ անվանումները՝ հատկապես -ացի-ով:

Ժամանակակից հայերենի ազգակցական տերմին-գոյականները
կարող են դասակարգվել ազգակցական տերմինների ընդհանուր դա-
սակարգման սկզբունքներով՝ պատճառայնության, կախման, ժամա-
նակի կարգերի համապատասխան եզրերի հիման վրա՝ լրացուցիչ այլ
հատկանիշների հաշվառումով [Джаукаш, 1982]. Ժամանակակից հա-
յերենի՝ հնից ժառանգած և ազգակցական հարաբերություններ նշող
արմատական գոյականները հետևյալներն են՝ ամուսին, այր, այրի,
աներ, դուստր, եղբայր, զարմ (զ+արմ), զավակ, զոհանչ, թոռ, խր-
նամի, կին, հայր, հարս, մամ, նահապետ, որդի, պապ, պապա, սան,
սկեսուր, տալ, տատ, տեգր, փեսա, ֆենի, ֆեոի, ֆույր:

Հարճ բառը այժմ միայն պատմական արժեք ունի, -դուխտ «գուս-
տըր» բաղադրիչը գործածվում է միայն հատուկ անուններում: Հասա-
րակական երևույթի մասնագիտացված անվանման կրողի արժեք ունի
պոռնիկ-ը՝ ի տարբերություն սովորական բռզ բառի (հմմտ. նաև լիր-
ածականը). մարդու և կնոջ միջնորդի հատուկ մասնագիտությունը, որ
հանդես է գալիս հասարակության մեջ, նշանակվում է կավատ բա-
ռով. ծնողների կողմից ամուսնացող աղջկան տրվող իրերի ամբող-
ջությունը կոչվում է օժիտ:

Ինչպես նշվել է, հասարակության ամենահիմնական գործառու-
թյունը հանգում է մարդկանց գոյության ապահովմանը: Բնության մեջ
նույնությամբ հանդիպող ուտելիքը և խմելիքը, արտաքին ազդեցու-
թյունից պաշտպանող մազածածկույթը և բնական ապաստարանը, —
այս բոլորը կազմում են կենդանու կյանքի անհրաժեշտ մասը: Երբ այս
դեպքում մարդը բնության տվածը ձեռնարկում և ծառայեցնում է իրեն,
այսինքն՝ երբ հանդես է գալիս մարդկային մշակույթը, մենք գործ-
ունենք հասարակության գործունեության հետ, որովհետև մարդն այս-
քույրն անում է հասարակության մեջ: Այս տեսակետից որոշ բառեր,

սովբրական կենսաբանական իմաստից դուրս ձեռք են բերում հասարակական արժեք, կապվում մարդու նպատակագիր գործունեության հետ:

Մարդկային գործունեության բնագավառներից նշենք առաջին հերթին որսորդությունը, անասնապահությունը, գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, որոնք ապահովում են մարդու գոյապահպանության հիմնական կողմերը: Հանդես են գալիս գոյակների նոր տեսակներ և նոր գործողությունների նշանակումներ, բնդ որում գոյական անունները մեծ մասամբ կամ համապատասխան բայերի փոխկադապարումներն են, կամ բնական գոյակների անուններից կազմված անուններ:

Բերենք այն արմատական գոյականները, որոնք կապված են մարդու սննդի ապահովման հետ. այստեղ շենք կրկնում այն բույսերի և կենդանիների անունները, որոնք արդեն տրված են նախորդ հատվածներում:

Հնից եկող որսորդական բնույթի արմատական բառ-տերմիններն են երե, րակարդ, րարփ, խայծ, ծուղակ, կարք, որոգայք, որս, վարմ «բակարգ», ցանց: Սրանք որսի հետ կապված համապատասխան բայերի փոխկադապարումներ են, որոնք ցույց են տալիս որսի առարկան (կիս←) կամ միջոցը (գործիքը՝ կիս→):

Հնից եկող անասնապահական արմատական բառ-տերմիններն են ախոռ, ասր «բուրդ», աբոռ, բուրդ, գոմ, րառ, խար «անասնակեր», հանդ («արոտ» իմաստով), հոռ, նախիր, մակաղ «փարախ», մսուր, փարախ:

Հնից եկող գյուղատնտեսական բառ-տերմիններն են ագարակ, ամբար, այգի, ակոս, արտ, արոռ, բառ, բիր, գերանդի, գութան, եղան, երկան-f, րի, խեչ(ակ), խծոծ, խոգան, խուպան, խորխախ, խոփ, խուրձ, կալ, կամ, հարդ, հերկ, կուր, հովիվ, հորան, հունձ, ման, մանգաղ, մառան, մարագ, մարգ, շտեմ(արան), պատվաստ, պատրուս, պարտեզ, ցել, ցնցուղ, փեքակ, փոցխ, օրան:

Անասնապահության և գյուղատնտեսության արտադրանքների տեսլի տեսակների և դրանց պատրաստման միջոցների համար կան զանազան բնդհանուր և մասնավեր անվանումներ: Ուտելիքի տեսակների, բադադրիչների և պատրաստման ու օգտագործման փուլերի համար առկա են հետևյալ անվանումները՝ ալյուր, աղ, աղանդեր «դեսերտ», աղանձ, ապուխտ, ապուր, բադարչ, բլիք, գաքա, գինի, գալ «բանջարի հյուս», (երախայրի), երշիկ, բերքի-f, րան, բեյ, լավաշ (րոշ), խավիժ, խմոր, խյուս, խորաիկ, կարկանդակ, կորկոտ, համեմ, հարխա, հաց, հուրշակ, ձավար, ձեք, ճաշ, մակարդ, մանառ/ր, մա-

յա, (մեռան), մեղր, շարքաթ, շաֆար, շփոք, շինուկ, շամիշ, շիր, պանիր, պաստեղ, պաֆսիմատ, սուրն, փոխինդ, ֆացախ, օլի, օշարակ: Այս անվանումները լրացվել են բազմաթիվ նոր անվանումներով, գերազանցապես փոխառյալ բնույթի, որոնց թվարկումը մեզ շատ հետևողական է: Ընդհանուր անվանումներ են մքեր-է, նպար, պաշար, պարեն:

Մարդկային ուտելիքների և ըմպելիքների անվանումների կողքին կան տնային կենդանիների ուտելիքների անուններ՝ լա, լափ, կեր, կոպտոն, նարակ, ֆուսպ:

Ուտելիքի պատրաստման հետ են կապված հետևյալ գործիքների և միջոցների անունները՝ ակիշ, քոնիր, կասկարա, մաղ, շամփուր, շիշ «շամփուր», սանդ:

Կան բազմաթիվ անուններ ուտելիքների և ըմպելիքները մատուցելու կամ պահելու զետեղարանների համար (տեղ→—3)՝ մասամբ մասնագիտացված հենց ուտելիքի, մասամբ ընդհանրապես տարբեր նյութերի համար. բացի վերևում հիշված ամբար, շանմ(արան) և այլ բաներից հիշենք աման, անոթ, ավսե, բաժակ, բղոլ, գալ, գավաթ, գոլ, դուլլ, զամբյուղ, քաս, լագան, խեցի, կաթա, կարաս, կնուն, կողով, կոնֆ, կուժ, մախաղ, շիշ «սրվակ», պաշուսակ, պարկ, պնակ, պուրակ, սալա, սաքաթ (սապատ), սափուր, սինի, սնդուկ, սովակ, տակառ, տաշտ, տաշտակ, տիկ, տոպրակ, տուփ, փարշ: Մյուսնք հատկանշվում են ըստ ձևի, ըստ այն նյութի, որից պատրաստված են (կազմ), ըստ այն բանի, թե ինչի՞ համար են նախատեսված (նպատակ) և այլն: Մոտավորապես նույն հարաբերությամբ, որպիսին առկա է մարմնի և նրա մասերի միջև, հիշյալ զետեղարանների անվանումների հետ միասին կան նրանց մասերի և հարակից հարմարանքների անվանումներ՝ խուփ, կանթ, ունկ:

Կայն առումով զետեղարանների արժեք ունեն, այսինքն՝ տեղի կարգի →3 եղբոր էն բնութագրվում նաև հագուստները և բնակության վայրերը՝ այն տարբերությամբ, որ առաջինները հարում են մարմնին (տարածական զրո չափ՝ չափ.), երկրորդները՝ ոչ:

Հագուստի հետ կապված ընդհանուր անվանումները համապատասխան բայական իմաստների փոխկադապորումներ են, ընդ որում տարբերվում են հագուստների տեսակները, նյութերը, պատրաստման միջոցները, դրանք իմացող և գործածող արհեստավորները և այլն. կան տարբեր անվանումներ առանձին բաղադրիչների, պատրաստման առանձին փուլերի համար և այլն: Հնից եկող՝ հագուստի հետ կապված արմատական գոյականները հետևյալներն են՝ արեշում, (անդրավարտիֆ), ապարոշ, (առեշ), ասեղ, աստառ, ատլաս, բանկոն, բարուր,

բալուլ, բենեգ, բիգ, գդակ, գոտի, գրպան, գրատ, դերձան, դիպակ, երիգ, զգեստ, քել, ժապավեն, իլիկ, լար, լաշակ, խանձարուր, խույր, խոհեան, ծոս, կապա, կերպաս, կոշիկ, կտավ, հալավ, հանգույց, հանդերձ, հեքյուն, ձորձ, նախարակ, նարմանդ, նոր, մախար, մաշիկ, մետաքս, մկրատ, մունակ, նարոտ «գուլնգուլն թել», շապիկ, շղարշ, շոր, ոստայն, չոխա, պատմունան, պարեգոտ, սանդալ, սնդուս, սոլ, սկեմ, վարտիմ, վեղար, տարագ, տրեխ, տուտ, ուրար, փարաշա. փեղույր, փիլոն, փոկ, ֆաքան, ֆեմուխա, ֆլամիդ, ֆոլ, ֆուլ, օձի-բ: Հագուստի պատրաստման հետ կապված արհեստագործների արմատական անուններից են դերձակ, նոն, ջուլհակ:

Հագուստի, որպես մարմինը արտաքին ազդեցություններից պաշտպանելու միջոցի, բուն նպատակը անվանման մեջ կարող է լրացվել նշանային բնույթի այնպիսի տարրերով, որոնք վերաբերում են դեղնեղին. այլ կերպ ասած՝ հագնում են ոչ միայն բուն նպատակի, այլև գեղեցկության և հաճելի տպավորության համար: Այս դեպքում հագուստի հատուկ ձևի, գույնի և լրացուցիչ այլ տարրերի հետ միասին հանդես են գալիս հագուստից որոշ չափով անկախ ազդեցության միջոցներ: Դեղագիտական այսպիսի լրացուցիչ արժեք են արտահայտում օրինակ հետևյալ գոյականները՝ ապարանջան, գինդ, (զարդ < գ + արդ). նամուկ, մանյակ, պանույն, ուլուն: Հագուստը կարիք է զգում խրնամքի, ժամանակի ընթացքում օժտվում կողմնակի նյութերով՝ կեղտով (հմմտ. աղտ, կեղտ՝ կազմ→), որից աղատվելու համար կատարվում են մաքրելու գործողություններ՝ համապատասխան նյութերով՝ լեղակ, սապոն, օնառ, գործիքներով՝ խոզանակ, սանր, միջոցներով՝ քաշկինակ: Այս խմբի բառերին մոտ, բայց փոքր-ինչ առանձնակի է կանգնած վարսավիւր բառը: Հագուստի և մարդկային այլ արտադրանքների գույնի համար օգտագործվում է հատուկ միջոց, որ նշանակվում է ներկ բառով. այն ունի լրացուցիչ նշանային իմուլյ. ծաբիր, շղար, սնգույր բառերը առանձին տեսակների նշանակումներ են՝ նշանային լրացուցիչ իմուլյաներով: Նշանային տարրը էական է նաև դիմակ բառի մեջ՝ «գեմքի ծածկոց՝ չճանաչվելու համար»: Մարդը որպես նեցուկ կարող է օգտագործել հատուկ միջոցներ՝ գավազան, ցուլ (թագավորական՝ գայիսոն):

Մարդու բնակություն համար նախատեսված գոյակների համար կան տարբեր անվանումներ: Տեղի ընդհանուր նշանակումների կողքին առկա են նաև աչգ նպատակին ծառայող հատուկ զեռեղարանների նշանակումներ, որոնք տարբերվում են ըստ այն բանի, թե ի՞նչ գոյակների համար են գործածվում (իրերի և նյութերի, կենդանիների, մարդ-

կանց), բնակա՞ն են, թե՞ արհեստական, առանձնակի են առնվում, 'թե՞ հաւաքական ամբողջութիւններ են և այլն: Այստեղ առաջին հերթին պետք է նշվեն մարդկային բնակութեան բնական տարածութիւնները՝ այլ, անձալ և այլն, որոնց սկզբնական իմաստով հակադրվում է անապատ բառի իմաստը որպէս անբնակ վայրի նշանակման:

Մարդկային բնակարանի հետ կապված անւանումները, բացի տեղի կարգի հետ կապված իմութիւններից, կրում են կազմի, թվի, դասի (մասերի դասավորութեան), կախման, ձևի, ուղղութեան, չափի, ինչպէս նաև նշանային պատճառայնութեան (նպատակի) և այլ կարգերի հետ կապված լրացուցիչ իմութիւններ: Ստորև բերվող և հնից եկող բառերի մեջ դրված արմատական գոյականները ցույց են տալիս բնակարանների տեսակներ և մասեր՝ առաստաղ, ապարան-ք, աստիճան, բազրիք-ք, բակ, բաղնիք, բուխարիք, գավիթ, գմբէք, գուռ, դանիկն, դաստակերտ, դարպաս, դստիկոն «տան հարկ», դուռ, երդիկ, խուց, խր-նիթ, ծխնի, կտուր, հատակ, հարկ, հյուղ, ձեղուն, նաղ, նիգ «սողնակ», նկուղ, շեմք (սեմ), որմ, պալատ, պահանգ, պանդոկ, պատ, պատշգամբ, պատուհան, պարիսպ, սանդուղ-ք, սենյակ, սյուն, սրահ, վրան, տաղավար, տուն, փեղկ: Բնակարանի և նրա մասերի անվանումների իմաստային փոխհարաբերութիւնը այս դեպքում էլ մոտավորապէս նույնն է, ինչ մարմնի և նրա մասերի անվանումների իմաստային փոխհարաբերութիւնը: Իրենց սկզբնական բնութիւնով կառուցների տարրեր տեսակներ են ցույց տալիս (ձևի, կազմի և այլ կարգի տարբերութիւններով)՝ բավիղ և լարիւրնրոս բառերը, որոնք այժմ ավելի շատ գործածվում են փոխաբերաբար՝ նշանակելով խճճված ուղիներով, անհլանելի տեղ, այլև, անալոգիայով, վիճակ:

Նշանակալից թվով արմատական գոյականներ կան բնակարանների անհրաժեշտ նյութերը (կազմի կարգ) և գործիքները (կախման կարգ←) նշանակելու համար. նյութերի անուններն են աղյուս, ապակի, առաղձ, բեռն «գամ», գամ, գերան, քիթեղ, ծեփ, կղմինդր, հնգույս, ձյուրք, ձող, շաղախ, պաստառ, սեպ, տախտակ, ցից, փայտ. սրանց նշանակած նյութերը մտնում են բնակարանի կազմի մեջ և նույնութեամբ կամ ձեափոխութեամբ դառնում բնակարանի մասեր. բնակարանի պատրաստման գործիքները հաճախ օգտագործվում են նաև այլ կարգի արհեստական գոյակներ պատրաստելու համար, և միշտ չէ, որ հստակ տարբերակվում են հատուկ ու ավելի լայն գործածութիւն ունեցող գործիքները՝ ափցան, գայլիկոն, դանակ, դուր, բակ, կացին, կոք (որպէս գործիքների մի մասի ընդհանուր բաղադրիչ), հեսան, մուրն, շաղափ, շեղք, ուրագ: Հնից եկող գործիքների այս շարքը այժմ մեծ չափով լրացվել է նոր անուններով, որոնցից արմատականները գերա-

զանցապես փոխառյալ են: Ինչպես որ հագուստների դեպքում նշվեցին այնպիսի գոյականների անուններ, որոնք ավելի շատ գեղագիտական արժեք են ստացել, այնպես էլ բնակարանի դեպքում կան լրացուցիչ իմուլթներով, այդ թվում՝ գեղագիտական արժեքի գոյականներ՝ դրասանգ, այլև դրվագ, խոյակ, կամար, Բանդակ:

Նշանակալից թիվ են կազմում բնակելի կառույցների հավաքական ամբողջություններ, դրանց հատուկ մասեր և գործառական տարբերություններ նշանակող անվանումները՝ չափաքանակական լրացուցիչ իմուլթներով՝ ավան, արվարձան, գյուղ, քաղ, կրապուրակ, ճամբար, մայր, մեյդան, շեն, ռստան, պողոտա, փողոց (հմտ. նաև գոնն-«փողոց») Բաղաֆ: Սրանցից տարբեր են գավառ, մարզ, Լահանգ անվանումները, որոնք ցույց են տալիս տվյալ պետության տեղահատվածները՝ չափերի և կառավարման առանձնահատկությունների տարբերություններով:

Տան և բնակության հետ կապված շատ գոյական անունների իմաստներ ոչ այլ ինչ են, եթե ոչ մարդկային օրգանիզմի գործառությունն առնչվող բայական իմաստների փոխկաղապարման տարբեր տեսակներ՝ միջոցներ, գործիքներ և նյութեր նշելու համար: Այդպիսիք են շերմության (վառելու), կրակի և լույսի (ածուխ, ակուք «օջախ»), աշտանակ, բով, բուխարիկ, լամպ(ար), լապտեր, խոփ «չոր ճյուղեր որպես վառելափայտ», կանթեղ, կեռոն, հն-ոց, հրագ, մոմ, պատույզ, քան, փռտ), զանազան իրեր կապելու (առասան, թոկ, կեմ, հոպան, շոթա, շվան, պարան, ջով), մարդու քնելու, հանգստանալու, ուտելու, լողանալու, նյութեր պահելու, կպցնելու հետ կապված անվանումները՝ աթու, (անկողին), ավագան, արկղ, բարձ, գգրոց, գորգ, դիվան, քախտ (տախտ), քաղ-իֆ, խսիր, կան «թաղիք», կապերտ, կոծիկ, ձագար, մահին, սավան, սեղան, սնար, սոսինձ, վարագույր, փառղա, փսիաթ: Տան մեջ եղած առարկաների հավաքական ամբողջությունը նշանակելու համար կան աղիս, կան (այստեղից կանույֆ), կարասի բռները:

Տարածության մեջ մարդու շարժման կամ տեղափոխության հետ կապված գոյականները կարող են դիտվել առաջին հերթին որպես շարժման բայերի փոխկաղապարումներ: Նրանք ցույց են տալիս շարժման ուղղությունը, տեղությունը, միջավայրը (գետին, ջրում, օդում), այլև միջոցներն ու սարքերը և սրանց մասերը: Վերջիններս բնութագրվում են ըստ իրենց գործառությունների և այլ հատկանիշների: Առկա են ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ բնույթի գոյականներ՝ կապված մարդու նպատակադիր գործունեության, այդ թվում՝ արհեստագործության հետ: Մարդու շարժման և տեղափոխության հետ առնչվող արմատական հին գոյականներն են ամոլ «լծակից», անուր, առեղ,

ասպանդակ, անիվ, առագաստ, (արահետ), գրաստ, երասան(ակ), թամբ, լաստ, լուծ, լիսեռ, խան «իջևան», խարազան, կածան, կամուրջ, կայմ, կառ-ֆ, համետ, դեկ, նամպուկ, նանապարհ, մակույկ, մղոն, մարակ, նալբանդ, նալ, նավ, նավագ, (նավաստի), շավիղ, պախուրց, պայտար, պատգարակ, սլայտ, սայլ, (սամետի), սամի, սանձ, սոնի, վաշ «սայլ», տոռմ(իղ), ուղի, փալան, փարսախ, փարավան (կարավան), ֆեղի «ղեկ»:

Մարդու կյանքի համար անհրաժեշտ արհեստագործական և մեքենայական գործունեության հետ են կապված, բացի վերևում հիշատակվածներից, նաև մետաղների և նյութերի, գործիքների և սարքերի, արհեստավորների՝ հնից եկող զանազան անվանումներ՝ բրուտ, դարբին, լար, խողովակ, կարկին, կլայեկ, հյուսն, պողպատ, ջնարակ, սար-ֆ, փուֆս, սլաֆ:

Երբ մարդու և բնակարանի առարկաների տարածությունների միջև հաստատվում են այնպիսի հարաբերություններ (կախման կարգի — հզր), որոնք, առանց մարդու հատուկ ցանկության, հնարավոր չէ օտարել, մենք խոսում ենք ունեցվածքի (ունենալ բայից) և սեփականության մասին. արմատական գոյականների մեջ այս կապակցությամբ նշենք. մի կողմից՝ բրբռ. մալ և մուլֆ, մյուս կողմից՝ տեռ և, ըստ ունեցվածքի քանակի՝ աղֆատ, հուրուստ: Օտարումը կատարվում է կամ ունեցողի (տիրոջ) ցանկությամբ ու փոխանակության ձևով, կամ բռնի ճանապարհով. առաջին դեպքում ծագում են փոխանակության (կազմի կարգի ←— հզր) և առևտրի գաղափարները, ընդ որում փոխանակությունն ու առևտուրը կարող են կատարվել անմիջաբար կամ տվյալ նպատակին նախատեսված հատուկ գոյականների (փողի) օգնությամբ, երկրորդ դեպքում՝ մասամբ օրինականության և անօրինականության, մասամբ էլ հարձակման և պաշտպանության, վերջին հաշվով՝ կռվի ու պատերազմի գաղափարները: Իհարկե, կռվի պատճառ կարող են ծառայել նաև նշանային (հոգեկան) հանգամանքներ ըստ մարդկանց շահերի ու ցանկությունների, բայց հասարակական մեծ ամբողջությունների ընդհարման պատճառները գերազանցապես նյութական են և կապված պետության գործառությունների հետ:

Ժամանակակից հայերենը հնից ժառանգել է մեծ թվով արմատական գոյականներ, որոնք վերաբերում են առևտրի ու լայն առումով փոխանակության բնագավառին և ցույց են տալիս փոխանակման գոյակների շափաքանակական համեմատությունը (շափ, կշիռ, դին և այլն), տեղը, միջոցները, առարկաներն ու նյութերը, երբեմն էլ աշխատանքի դիմաց նյութա-դրամական հատուցումը՝ բազագ, զանձ, գին, գրավ, դահեկան, դրամ, բոշակ, թուման, լիտր, լումա, խանութ,

կապայ, կշիռ, կրպակ, մարկ, մետ, մուրհակ, նծար, նսպատ, շան, շուկա, պիտակ, ռոնիկ, սակ, վաշխ, վաստակ, վարկ «կանխադրամ», վարձ, վնար, վնաս, տոկոս, տոմս, փերեզակ, փող, օգուտ, Այստեղ, բնականաբար շին դրված այնպիսի բառեր, որոնք կամ բաղադրյալ են (առետուր, սպրանգ և այլն), կամ արդեն քննված են համապատասխան բայահիմքերի մեջ, կամ էլ նորագույն փոխառություններ են (կոպեկ, ռուբլի և այլն):

Կովի ու սլաոներադմի հետ կապված և հնից եկող արմատական գոյականներն են ամբարտակ, աղեղ, աշտարակ, աշտե, ասպատակ, ասպար, ավար, ատրնանակ, արկ, բաբան, բանակ, բերդ, զաղուր, զեղարդ, գերի, գումակ, գումարտակ, գունդ, դաշն, դաշույն, դատաստան, դռոշ, զեն(-f), զուր-f, զրան, թիրախ, թուր, եղեռն, կապարն «նետաման», կապուտ, համահարգ, հրամանատար, հրոսակ, նոշան «լանջապանակ», մահակ, մարտ, նետ, նիզակ, պահակ, պատերազմ, պատնեշ, պատվար, ջոկ, ռազմ, ռումբ, սակր, սաղավարտ, սպա, սպասալար, սպարապետ, սվին, սուսեր, սուր, վահան, վաշտ, տապար, տեզ, փաղանգ: Ինչպես տեսնում ենք, այս բառերը ցույց են տալիս պատերազմողների կարգավորված հավաքական խմբեր ու քանակական ամբողջություններ, հարձակվելու ու պաշտպանվելու միջոցներ, պատերազմողների գործառական խմբեր և հեշտություններ կարող են նկարագրվել համընդհանուր լեզվաբանական կաղապարի կարգերի հզորությամբ և փոխկաղապարման միջոցներով:

Հասարակության մեջ մարդկանց միջև ստեղծվում են կախման և դասի կարգերի հզորություն բնութագրելի որոշակի հարաբերություններ, որոնք զրանց մի քանի աստիճաններով: Հանդես են գալիս տնտեսական կյանքին, կառավարման համակարգին, ռազմական գործին և այլ բնագավառների պատկանող անվանումների համապատասխան կարգերով բնութագրվող հակադրական հզորություններ: Սկզբնական բնույթով դրանք կապված են բայերի փոխկաղապարման հետ. այսպես, կառավարել, հրամայել, իշխել, կարգադրել բայերի բազայի վրա կարող են հանգես գալ կառավարող—կառավարվող, հրամայող—հրամայվող, իշխող—իշխվող, կարգադրող—կարգադրվող հակադրական զույգերը, կառավարություն, հրաման, կարգադրություն՝ սկզբնական բնույթով վերացական գոյականները, իրականացման միջոցների և իրականացնողների անվանումները և այլն: Ժամանակակից հայերենի՝ հնից ժառանգած այս կարգի արմատական գոյականների կապը սկզբնական բայական իմաստների հետ հաճախ խզված է. դրանք կամ փոխառյալ են, կամ իմաստափոխված, կամ տրված միանգամայն սլավոնականորեն (հմմտ. տիտղոսների անվանումները): Այսպիսի բառերի բուն

իմաստաբանական վերլուծության հետևանքով ստացվող իմուլթները կարող են չհամընկնել իմաստների պատմական կազմավորման իրական կազմի հետ:

Ժամանակակից հայերենի՝ քննվող իմաստային խմբին պատկանող՝ հնից ժառանգած ու հաճախ պատմական բնույթի արմատական գոյականներից հիշենք աղախին, ասպետ, արհա, բամբիշ «թագուհի», բղեշի, գզիւ, դանին, դեսպան, դշտ «թագուհի», դուխ, խարուն, խան, ծառա, կայսր, կյուրապաղատ, կոմս, կեզեմն, հյուպատոս, հպատակ, հորտ, մանկավիկ, մատովակ, մարգպան, մարկիզ, մելիք, նաժիշտ, նախարար, (ներհինի), շահ, ոստիկան, պայազուտ, պատվիրակ, պատրիկ, պարթև, պետ, ռանվիրա, ռամիկ, ռես, սատուրապ, սեևատուր, սեպան, ստուրկ, սուրբան, սուրհանդակ, փաղիշահ, ֆառաշ:

Տվյալ հարաբերության մեջ գտնվող, տվյալ գործառույթյամբ օժտված անձերի անունների կողքին կան բազմաթիվ անուններ, որոնք ցույց են տալիս հարաբերության տեսակը, եղանակը, իրականացման միջոցը, հաճախ նաև հագուստի, բնակարանի և այլ գոյականների՝ տվյալ գործառույթյունը կատարող անձին հատուկ տեսակը: Այսպիսի մի շարք գոյականներ մասամբ բերվել են նախորդ քննության մեջ. այստեղ հիշենք զան, գայիսուն «արքայական գավազան», թագ, կոռ, հարկ; հրաման, հրովարտակ, մախ, ֆվե:

Կառավարման համակարգի հետ սերտորեն կապված է դատական համակարգը, որին առնչվող անվանումները ևս ցույց են տալիս անձերի դատական հարաբերությունները, դատավարության հիմքերը, ընթացքը և հետևանքները, հասարակության մեջ մարդկանց հարաբերությունները կանոնավորող, գործողությունները սահմանափակող նորմերը (օրենքները) և սրանցից կատարվող շեղումները և այլն: Այս անվանումները կազմում են, այսպես կոչված, իրավաբանական տերմինաբանությունը, որից մենք ընտրում ենք հնից ժառանգված արմատական գոյականները՝ ապահարզան, ավազակ, ախուր, բանտ, գող, դավաճան, դատ, դատախազ, (դատավոր), երաշխիք, զնդան, ժառանգ, կնիք, կտակ, հայց, հարամի, հեն, նոտար, ռեիք, պատանդ, պատիժ, վկա, վճիռ, վրեժ, տույժ, օրենք: Դատական գործի և օրենքի հիմքում ընկած է կախման կարգի շեղոթ եզրի (կխ.) հետ կապված ազատության գաղափարը. հասարակության մեջ անհատի գործողության ազատությունը սահմանափակվում է հօգուտ հասարակության այլ անդամների. մարդը հասարակության մեջ ազատ չէ անելու ամեն ինչ. նրան թույլատրվում է կատարել այս և չի թույլատրվում կատարել այն: Թույլատրելի և անթույլատրելի գործողությունների վերաբեր-

յալ տվյալները կազմում են օրենքը, որ իրականացվում է դատական օրգանների և դատակաշն արարողությունների օգնությամբ:

Գոյականների մեջ մի մեծ խումբ են կազմում մարդու նշանային (հոգևոր) գործունեության, նրա զգայությունների, զգացմունքների ու բնկալման, կամքի, իմացության հետ կապված գոյականները: Նշանային գործունեության հետ բնականաբար հաճախ միանում են արտահայտության կարգերով բնութագրվող երևույթները: Հանգես են գալիս արվեստը՝ կապված մարդու գեղագիտական-զգայական, գիտությունը՝ կապված մարդու իմացա-մտածողական և լեզուն՝ կապված մարդու արտահայտչա-հաղորդակցական կարիքների հետ:

Արվեստի տարրեր բնագավառների վերաբերող և հնից եկող տերմինները իրոք հիմք ունեն մարդու զգայական ընկալումը (հմմտ. հուն. էսթետիկա բառը, որ արմատակից է հուն. αἰσθητικὴ «զգալ, ընկալել», αἰσθησις «զգացմունք, զգայություն» բառերին). նրանք կապված են մասամբ լսողության (երգ և երաժշտություն), մասամբ տեսողության (նկարչություն, քանդակագործություն, այլև ճարտարապետություն՝ ըստ բնակության գոյակների զգայական-գեղագիտական ձևավորման), մասամբ աչք երկուսի զուգորդման հետ (պար և թատրոն): Արվեստին վերաբերող և հնից եկող արմատական գոյականներից նշենք անպարար, արվեստ (արու-եստ, թե՞ իրանական փոխառություն), անդրի, բեմ, գուսան, դեր, երաժիշտ, երգ, երգեհոն (հին երգիչն՝ բաղարկված երգ-ի հետ), քամաշա, քառ, քատրոն (քառեր-), քմբուկ, ծնծղա, կիթառ, կոբուզ, փաննար, փուլիտ, միմնա, նալարա, նկար, շեխար, շվի, պատկեր, պար, պատվանդան, պոետ, ջութակ, ստեղն, սրինգ, վին, վրձին, տաղանդ, տավիղ, փանդիտ, փանֆա, ֆնար: Սրանց ավելացել են մեծ քանակությամբ փոխառյալ, իմաստափոխված և նորակազմ բառեր: Արվեստին վերաբերող բառերը իմաստային առումով, բնականաբար, բայական իմաստների փոխկադապարումներ են՝ բառ կատարողի, կատարման միջոցի, կատարման հետևանքի և այլն:

Արվեստի հետ զգալիորեն առնչվում է խաղը (խաղ), որ հաճելի դրազմունքների (գործողությունների) ամբողջությունն է՝ խաղացողների, խաղերի, տեսակների միջոցների նշանակումներով՝ հոլ, նատրակ, նարդի և այլն: Որոշ չափով սրանց մոտ են սպորտային տերմինները՝ ըմբիշ, սկավառակ, ստադիոն, օլիմպիադա և այլն:

Գիտության հետ առնչվող հնից եկող արմատական մասնագիտացված գոյականները սակավաթիվ են, որ բացատրված է հին գիտության բնույթով. դրանք գերազանցապես փոխառյալ տերմիններ են, հատկապես գիտության տարրեր բնագավառների ու դրանցով զբաղվողների

րի անվանումներ՝ ակադեմիա, կանառ, մաքեմատիկա, պերիպատե-
տիկ, սովեստ, Բիմիա (և ալֆիմիա), փիլիսոփա: Ժամանակակից հա-
յերենի գիտական տերմինները հիմնականում փոխառյալ են կամ բա-
ղադրյալ:

Գիտելիքների ու փորձի փոխանցման, մի սերնդի ձեռք բերածը
մյուսին հաղորդելու անհրաժեշտությունը ստեղծում է հասարակության
մեջ ուսման և կրթության բնագավառը՝ սովորեցնողներով և սովորող-
ներով, սովորելու միջոցներով, եղանակներով ու հասուկ վայրերով
(կառույցներով). այս բնագավառի գոյականական տերմինները ևս
իմաստով հենվում են համապատասխան բայերի փոխկադապարման
տարբեր տիպերի վրա. հնից եկող արմատական գոյականներից հի-
շենք ամբիոն, աշակերտ, դաստիարակ, դպիր, համբակ, պնակիտ, սեկ-
տոր, տետր:

Ուսման և կրթության բնագավառի հետ սերտորեն կապված է
հոգեկան (նշանային) կողմի նյութական, հատկապես ձայնային և զրա-
յին արտահայտության, վերջին հաշվով՝ գրավոր մշակույթի բնագա-
վառը լայն առումով. եթե գրականությունը հետապնդում է գեղագի-
տական նպատակներ, ինչպես արդեն նշված արվեստները, ապա այն
հանդես է գալիս որպես գեղարվեստական գրականություն. միայն բա-
նավոր հաղորդման գեպքում նրան փոխարինում է բանահյուսությունը:
Գրավոր ուսուցման և բանավոր ու գրավոր արտահայտության հետ
կապված՝ հնից եկող արմատական գոյականներն են գիր, դավթար,
զանգ, էջ, քանաֆ, քարգման, քերք, քուլք, լեզու, ծրար, հեղինակ,
դպամ, մագաղաթ, մամուլ, մատյան, մատիտ, մելան, նամակ, (շա-
կերտ), պատենն, (պարույկ), պրակ, ռետին, տառ, տիպ, տող, (ցանկ),
փարտ, փարտույար:

Վերջապես, կա մարդու հոգևոր կյանքի մի բնագավառ, որ առա-
ջացել է բնության զանազան երևույթների պատճառները չիմանալու և
սրա հետ կապված ինչ-որ անզգայելի էակների գոյություն ենթադրելու
հետևանքով: Սա կրոնի բնագավառն է, որ մեծ դեր է խաղացել մար-
դու կյանքում և մեր լեզվում թողել հասուկ տերմինաբանություն: Այն
ընդգրկում է գերբնական աշխարհի և գերբնական էակների, սրանց
սլաշտամունքի ձևերի, միջոցների, վայրերի, կրոնական տարբեր համա-
կարգերի, կրոնավորների նշանակումները: Կրոնին վերաբերող հնից
ավանդված արմատական գոյականներն են արև, արեղա, ալ-ֆ «չար
ոգի», աղանդ, այս «չար ոգի» (այսահար), ասուլսո, ատուշան, ար-
ֆնախսկոպոս, բագին, գեհեն, գուշակ, դե, դոխ-ֆ, դի-ֆ, դրախտ, եղեմ,
եկեղեցի, եպիսկոպոս, երեց, զոն, էփիմերտե (էփիմերդի), ժամ «եկե-
ղեցի», խաչ, խորան, ծես, ծոմ, կաթողիկոս, կախարդ, կարդինալ-

կղեր, կնգուղ, կոնդակ, (կրոն), հեքանոս, հերետիկոս, հոգի, հրաշ-հ, հրեշ, հրեշտակ, հուռուր, հուրի, հիվալ, մահտեսի, մատուռ, մարգարե, մարտիրոս, մեհյան, մեռոն, մզկիթ, միարուպոյիտ, մոգ, հանատակ, նեռ, նշխար, ոգի, պապ «Հոռոմի պապ», պատարագ, պատրիարհ, շատուկ, փաբրի, սաղայել, սանդարամետ, սատանա, սարկավագ, սինոդ, վան-հ, վարդապետ, վիշապ, վնուկ, տարտարոս, ուրու, փահանա:

12. ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՅՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Ժամանակակից հայերենի արմատական դերանունները

Ժամանակակից հայ քերականության մեջ դերանունների շրջանակն զգալիորեն ընդլայնված է. 1) դերանունների մեջ զբաղում են շատ բառեր, որոնք գրաբարի քերականները դնում էին անվան կազմի մեջ. այս առիթովից հայ քերականների մոտեցումը հենվում է դերազանցապես ուստի քերականության ավանդույթի վրա. 2) դերանունների մեջ զբաղում են ոչ միայն դոչականական և ածականական, այլև մականաչական դերածածություն ունեցող բառեր (այսպես, այսֆան և այլն):

Դերանունների շրջանակը, բնականաբար, մեծ չափով նեղանում է, երբ մենք բնորոշում ենք միայն արմատական ձևերը՝ բաղադրյալների բնութիւնը թողնելով բառակազմության բաժնին: Հնից ժառանգված դերանունների մեջ որպես արմատական գիտակցվեղ ձևեր նշվում են հետեւյալները՝ (ամբողջ), ամեն, այդ, այլ, այն, այս. անդ, աստ, բոլոր, դա, ես, դու, երբ, ինչ, ինք, իր (յուր), իբար, (համայն), (յուրահանջյուր). մյուս, նա, նույն, ով, ողջ, ոմն, որ, որոշ, ո՛ր, սա, սույն, ուր, քան-ի: Բացի սրանցից, կան դերանվանական -ս, -դ, -ն հոգերը, որոնք արտահայտում են համատիպ իմաստներ, սրանցից -ն-ն -ը տարբերակի հետ միասին համարվում է որոշիչ հոգ և հակադրվում մի-ին ու զրոյին. շատ քերականներ մի-ն դնում են հենց դերանունների մեջ:

Դերանունների իմաստային հիմնական առանձնահատկությունը իրադրայնությունն է՝ այս բառի լայն իմաստով, այսինքն ներառյալ նաև կոնտեքստայնությունը: Դերանվան դիպքում նշանակվող գոյակը ոչ քի անվանվում է ըստ որևէ օբյեկտիվ հատկանիշի, այլ որոշվում ըստ խոսքային իրադրության: Հնարավոր է դերանվանական երկրորդի իմաստ՝ անմիջական-իրադրական, կոնտեքստա-հարաբերական (անաֆորիկ) և իմացատրոշական:

Անմիջական-իրադրական իմաստի ղեպքում ղերանվան նշանակած գոյակը որոշվում է կամ ըստ խոսքին նրա ունեցած մասնակցության (երեք դեմքով՝ խոսող, խոսակից և խոսքի առարկա), կամ ըստ խոսողի նկատմամբ գրաված դիրքի:

Կոնտեքստա-հարաբերական իմաստի ղեպքում ղերանվան նշանակած գոյակը որոշվում է սեքստում գտնվող որևէ այլ բառի միջնորդությամբ. ինչն անմիջական-իրադրական իմաստի ղեպքում ղերանվան, որպես նշանի և առարկայի, որպես նշանակվող գոյակի, հարաբերությունն անմիջական է՝ նշան→գոյակ, ապա կոնտեքստա-հարաբերական իմաստի ղեպքում այն միջնորդված է մի այլ նշանով՝ նըշան→նշան→գոյակ: Թեև կոնտեքստա-հարաբերական իմաստը անմիջական-իրադրական իմաստի համեմատությամբ երկրորդային է, բայց նա է հիմք հանդիսացել «ղերանուն» անվանման համար («ղերանուն» = «անվանը փոխաբխող»):

Պերանվան իմացաորոշական իմաստի ղեպքում ղերանվան նշանակած գոյակը խոսողին կամ ընդհանրապես հայտնի չէ, կամ լավ հայտնի չէ (սովորաբար խոսողի իրազեկությունը միջնորդված է):

Ըստ այս երեք աիդի իմաստների արտահայտության խմբավորելով բերված ղերանունները՝ կունենանք միաբնույթ և երկբնույթ աիդեր. այսպես, ևս, դու (անձնական կոչված) ղերանունները միաբնույթ են՝ հանդես գալով փաստորեն միայն որպես անմիջական-իրադրական իմաստների կրողներ. սա, դա, նա, այս, այդ, այն, սույն (ցուցական կոչված) ղերանունները երկբնույթ են՝ հանդես գալով և՛ որպես անմիջական-իրադրական, և՛ որպես կոնտեքստա-հարաբերական իմաստների կրողներ (հմմտ. «Նա իմ ընկերն է» և «Մարդը դնում էր. նա (= մարդը) կանդ առավ»): Երկբնույթ են նաև ով, ինչ, ուր, երբ, ուր, բանի ղերանունները, որոնք հարցական նշանով անմիջական-իրադրական են, առանց հարցականի՝ կոնտեքստա-հարաբերական (հմմտ. «Ո՞ր Հակոբը» — «Հակոբը, ուր(ը) նստած էր մահճակալին»):

Հիմք ընդունելով ղերանվանական երեք հիմնական իմաստները՝ դժվար չէ պարզել, որ ամբողջ, ամեն, այլ, բոլոր, ինքը, համայն, յուրաքանչյուր, մյուս, ողջ բառերը զուրկ են իրադրական իմաստից և բուն արժեքով ղերանուններ չեն: Սրանք բնութագրում են գոյականների կազմը և թիվը՝ անկախ խոսքից և խոսակիցներից՝ հանդես գալով որպես այդ երկու կարգերի եզրերի զբաղեցրածներ. այսպես, ինքը և նույն բառերը արտահայտում են կազմի կարգի — եզրը (նույնություն), իսկ մյուս և այլ բառերը՝ այդ եզրի ժխտումը՝ → («ոչ ինքը», «ոչ նույնը»): Որոշ բառը կարող է հանդես գալ և՛ որպես ղերանուն («որոշ մարդիկ»), և՛

շորպեա ածական («հարցը որոշ է»): Այս նկատառումով հետագա քննութեան մեջ կթողնենք գերանունների հետեյալ ավանդական խմբերը.

1. Անձնական՝ ես, դու, (նա), (իր).
2. Ցուցական՝ այս, այդ, այն, սա, դա, նա, սույն, (ասա), (անդ).
3. Հարցական-հարաբերական՝ ով, ինչ, որ, երբ, ուր, քան-ի.
4. Անորոշ՝ որոշ, ոմն, ոք.
5. Փոխադարձ՝ իրար:

Մրանցից անձնական գերանունները գործածվում են գոյականաբար. իր-ը կարելի է դիտել որպէս նա-ի հատկացուցչային գործառությունը, որի գեպքում գոյականը կախման մեջ է դրվում այլ գոյականից. այս գեպքում նա-ն կունենա այդ գործառութեան երկու տարբերակ՝ իր (յուր), որ ցույց է տալիս հատկացչալի պատկանելիութեանը ենթակային («Գրիգորը վերցրեց իր գիրքը»), և նրա, որ ցույց է տալիս հատկացչալի պատկանելիութեանը ոչ ենթակային («Գրիգորը վերցրեց նրա գիրքը»): Մյուս արմատական գերանուններից ցուցականները գործածվում են գոյականաբար (սա, դա, նա), ածականաբար (այս, այդ, այն, սույն) և, որոշ հնացած արտահայտութիւններում, մակբայաբար (ասա, անդ). հարցական-հարաբերականները՝ գոյականաբար (ով, ինչ), ածականաբար (ինչ, քան-ի) և մակբայաբար (երբ), անորոշները՝ գոյականաբար (ոք. միայնակ չի գործածվում, այլ հանդես է գալիս որպէս գերանվանական բաղադրիչ՝ ամեն ոք, ոչ ոք և ածականաբար (որոշ, ոմն. ոմն-ի համար հմմտ. ոմն Հակոբյան), փոխադարձը՝ գոյականաբար (իրար):

Ամբելորդ շենք համարում նշել, որ, ինչպէս տեսանք նշութական այլ խոսքի մասերի իմաստային վերլուծութիւնից, իրադրական տարբեր իմաստներ առկա են նաև այլ խոսքի մասերում (հմմտ. գալ, նիմա և այլն):

բ. Արմատական դերանունների իմաստային բաշխումը

Դերանունների իմաստային ընդհանուր առանձնահատկութիւնների մասին ասածներից պարզվեց, որ այս կարգի բառերը սերտորեն կապված են մարդկային հաղորդակցման և հաղորդման ընդհանուր կարիքների հետ: Քանի որ ամեն մի հաղորդակցութիւն վերջիվերջս իմացական ակտ է՝ նշանափոխանակութիւն, այն սկսվում է հարցից և ավարտվում պատասխանով, այսինքն՝ որոշակի հաղորդմամբ. վերջինս կարող է ստանալ ինքնուրույն արժեք, հանգես գալ նաև անկախ կոնկրետ հարցից, որպէս հաղորդման ընդհանուր բնույթի ակտ, որի

համար ոչ միշտ է ենթադրվում անմիջական ընկալող: Կարելի է ասել, որ իմացական ակտի հիմքը համապատասխան նշանի բացակայությունն է, և հարցն ու պատասխանը նպատակ ունեն լրացնել բաց նշանի տեղը: Սակայն, ինչպես կոեսենսը, հարցական դերանունները ինքնին որոշ ինֆորմացիա պարունակում են արդեն. նրանց դեպքում տարբերվում են անձը և իրը, կազմը, թիվը, ժամանակը, կարելի է ասել, ընդհանուր ձևով (փաստորեն չեղքեց եղբերով, որոնք պետք է որոշակի դառնան պատասխանով): Պատասխանի մեջ հարցման առարկան որոշվում է կամ ուղղակի կերպով՝ անձնական, ցուցական, անորոշ դերանուններով ու անուններով, կամ անուղղակի կերպով՝ առարկան գործողությունում ու հատկությունում բնութագրելու միջոցով (հարցականի փոխարեն օգտագործվում է հարաբերական դերանուն՝ համապատասխան գործողության կամ հատկության նշումով): հմտ. Ո՞վ.— Ես /Հակոբը/ ով նստած է (=նստածը): Անձնական, ցուցական և անորոշ դերանունները կարելի է կոչել պատասխանական դերանուններ:

Դժվար չէ հասկանալ, որ դերանունների իմաստը բացատրելու համար պետք է նկատի ունենալ համապատասխան բայերը իրենց փոխկաղապարումներով (փոխակերպումներով):

Հարցական դերանունների էությունը հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ հարցնել բայի իմաստի մասին ասվածը: Այս բայը նշանակում է «ցանկանալ իմանալ», այսինքն՝ պարունակում է կամային և իմացական իմուլթներ: Բուն հարցական դերանունները ցույց են տալիս հարցնել բայի կախյալ առարկան (նշկախ←)՝ հարցնել (որոշելու նպատակով) X-ի մասին (ն՞վ, ի՞նչ, ո՞ր), քանակի մասին (քանի՞), գործողության ժամանակի (ե՞րբ) և տեղի (ու՞ր) մասին. այսպիսով, ինչպես նշեցինք, հարցի մեջ արդեն առկա են ընդհանուր բնույթի լրացուցիչ իմուլթներ, որոնք մասնավորվում են պատասխանի մեջ՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ե՞րբ, ո՞ւր, քանի: Սրանք, ինչպես նշվել է, կարող են պատասխանի մեջ կրկնվել որպես հարաբերական դերանուններ համապատասխան ճշգրտող տարրերով, որոնք որոշում են (կողմնակի կերպով) X-ի բնույթը՝ ո՞վ—ով կերել է. ի՞նչ—ինչ արվել է. ո՞ր մարդը(=ո՞րը)—որը ձախ կողմում է. ե՞րբ—երբ իմացել է. ո՞ւր—ուր գնացել է. քանի՞ մարդ(=քանիսը)—քանիսը պետք է:

Ինչպես որ հարցական դերանունների էությունը հասկանալու համար մենք վկայակոչեցինք հարցնել բայը, այնպես էլ անձնական դերանունների փոխհարաբերությունը հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ ասել (խոսել) և լսել բայերի մասին ասվածը, որովհետև տվյալ իրադրության մեջ ես—ը ցույց է տալիս, այդ բայի փոխկաղապարմամբ և իրադրացմամբ, ասողին (խոսողին, երկրորդաբար նաև

գորողին, ընդհանրապես հաղորդողին), դու-ն՝ լսողին (երկրորդաբայ
նաև ընթերցողին, ընդհանրապես ընկալողին), նա-ն՝ նրան, ում մա-
սին ասվում է (հմմտ. մասին առդրի վերաբերյալ ասվածը), այլ կերպ
ասած՝ ես, դու և նա դերանունների հարաբերությունը կարելի է դիտել
որպես «X-ը ասում է Y-ին Z-ի մասին» նախադասության փոխադա-
պարային արտահայտությունը՝ դրանց հարաբերությունը նշող ասել
բայի փոխադապարմամբ՝ «ասող», «ասածն ընկալող», «ասվածի ա-
ռարկա»։ Պատահական չէ, որ ասել և լսել բայերի հարաբերությունը
մենք համեմատեցինք տալ և առնել բայերի հարաբերության հետ՝ այն
տարբերությամբ, որ այս դեպքում առկա է նշանների փոխանակում.
տվող, առնող և տրվող եզրերի փոխարեն հանդես են գալիս ասող, լսող
(ընկալող) և ասվող եզրերը, որոնք փոխարինվում են ես, դու, նա
դերանուններով։ Եթե նկատի առնենք, որ խոսքը կարող է ուղղվել այն-
պիսի մեկին, որ կարող է նաև չլսել, չընկալել, և որ այս դեպքում
էականը խոսքի՝ ո՞ւմ ուղղված լինելն է, ապա ես-ի, դու-ի, և նա-ի ընդ-
հանուր հարաբերությունը կարելի է արտահայտել երկու մասնավոր հա-
րաբերությամբ. ես-ի և դու-ի միջև առկա կլինի նշանային ուղղու-
թյան նյութական (լիզվական) արտահայտություն հարաբերություն՝ եր-
կու եզրով՝ → (նա, ով ուղղում է նշանը) և ← (նա, ում ուղղվում է
նշանը), իսկ ես-ի և նա-ի միջև՝ նշանային կախման նյութական (լիզ-
վական) արտահայտության հարաբերություն՝ նույնպես երկու եզրով՝ →
(կախողը և ← (կախյալ)։

Հիմնական ցուցական դերանունները՝ այս, սույն, այդ, այն, սա,
դա, նա, ցույց են տալիս նշանակվող գոյականների հեռավորության փոքր
չափը (տեղի չափ←). 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերի (ես-ի, դու-ի, նա-ի)
նշանակած գոյակներից. հնարձ ասա և անդ բառերը ցույց են տալիս
նրանց նշանակած գոյականների դիրքը խոսողի նկատմամբ, նրանց հե-
ռավորության փոքր կամ մեծ չափ (տեղի չափ← և →) 1-ին դեմքի
(ես-ի) նշանակած գոյակից։ Այլ կերպ ասած՝ ցուցական դերանուն-
ներն ունեն տեղի և չափի կարգերի եզրերի հետ համընկնող լրացու-
ցիչ իմույթներ։

Անորոշ դերանունները ցույց են տալիս խոսողի անբավարար իմա-
ցություն (նշկազմ←), ընդ որում որոշ-ի և ոմն-ի ու ոմ-ի միջև առկա
է թվի կարգի հետ կապված տարբերություն. վերջին երկուսը ցույց են
տալիս մեկ գոյակ (թիվ.), որոշը՝ մեկից ավելի գոյակներ (թիվ)։

Վերջապես փոխադարձ իրար դերանունը ցույց է տալիս կախման
կարգի ←→ եզրը՝ փոխադարձաբար կապված (կախման մեջ գտնվող)
գոյակներ։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Ծ Ա Ն Յ Ո Ւ Մ

1. ԲԱՌԱԾԱՆՑՄԱՆ ՏԻՊԵՐԸ ԸՍՏ ՀԱՄԸՆԴՆԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Բառակազմության կենտրոնական հասկացությունը բառն է, ուսումնասիրության հիմնական առարկան՝ բաղադրյալ բառը: Քանի որ բառը նյութական միավոր է, որի բաղադրատարրերը առնվում են նույնպես որպես նյութական միավորներ, նրա նկատմամբ կիրառելի են համընդհանուր տեսության մեջ առանձնացվող նյութական շորս կարգերը՝ կազմ, թիվ, կախում, դաս: Այլ կերպ ասած՝ ըստ կազմության բառը կարող է բնութագրվել այդ շորս կարգերի տարբեր եղբերով:

Ինչպես ամեն մի կաղապարի, այնպես էլ բաղադրյալ բառի կաղապարի մեջ տարբերվում են միջուկային և առմիջուկային բաղադրիչներ, ընդ որում բաղադրության տեսակները որոշվում են առմիջուկային բաղադրիչների բնույթով: Քննության ելակետ ընդունելով բաղադրիչների նվազագույն քանակ ունեցող երկբաղադրիչ տիպը՝ մենք կարող ենք արձանագրել, որ միջուկ է ծառայում որպես բառակազմական հիմք ձևավորված որևէ արմատ (արմատահիմք), իսկ որպես առմիջուկային բաղադրիչ հանդես է գալիս կամ համատիպ որևէ միավոր, կամ մի հատուկ տիպի բաղադրիչ, որ նախատեսված է հենց այդ գործառության համար և անկասորեն չի գործածվում (կիս): Երկրորդ տիպի բաղադրիչն ընդունված է կոչել ածանց, ածանցավոր բառի սերումը (ստացումը)՝ ածանցում: Համատիպ բաղադրիչներով բաղադրությունը կոչվում է բարդություն կամ բարդ բառ, սրա սերումը՝ բարդում:

Կարող են լինել բարդության այնպիսի առմիջուկային բաղադրիչներ, որոնք գտնվում են ածանցի վերածվելու ճանապարհին. այսպիսի բաղադրիչները կոչվում են ածանցակերպներ: Բառակազմության այս

ենթաբաժնում կրննվի ածանցումը, հաջորդ ենթաբաժնում՝ բարդումը:

Միշտ չէ, որ հնարավոր է առանձնացնել բառակազմական հիմքակազմիչը բուն ածանցից, և հաճախ դրանք միասին առնվում են որպես մեկ ածանց. այսպիսի բաղադրություններում բառակազմական հիմքի տարրը ավելի շատ գիտակցվում է որպես ածանցի, քան որպես արմատահիմքի տարր. հմմտ. եց տարրը երգեցիկ և, մահավանդ, գեղեցիկ բառերում:

Ըստ կազմի կարգի՝ ածանցի հետ ունեցած հարաբերությամբ բառերը կարող են բնութագրվել որպես ածանցավոր (կզ→) և անածանց (կզ←). անածանց բառերը քերականության մեջ հանդես են գալիս նաև այլ անվանումներով. ումանք, առանց բարդման և ածանցման տարբերությունը հաշվի առնելու, դրանք կոչում են պարզ կամ արմատական բառեր, ուրիշները, այդ տարբերությունն հաշվառմամբ, նախադադափառ բառեր. վերջին տերմինը տարածված էր մահավանդ հայ հին քերականների մոտ և ներկայացնում էր հուն. ἁπλοῦς բառի թարգմանությունը (պատճենումը) [հմմտ. *ΑΔΟΧΗ*, 1915, 13]: Եթե անածանց բառն առնվում է բաղադրչալի հարաբերությամբ որպես համապատասխան ածանցի ժխտական կամ նույնիսկ հակադիր արժեքի կրող, ապա այս դեպքում խոսվում է զրո ածանցի մասին: Այսպես, տուն բառը տնակ բառի համեմատությամբ օժտված է զրո ածանցով, որ ցույց է տալիս տան մեծությունը ի տարբերություն ակի, որ փոքրացուցիչ արժեք է հաղորդում: Զրո ածանցի արժեքը հանդես է գալիս նաև կիրառության տարբերությունը նշելու դեպքում. այսպես, խիզախ ածականը խիզախ կովել կապակցության մեջ ունի խիզախաբար իմաստը և փաստորեն օժտված է արար-ի արժեքով, այսինքն՝ զրո մակբայական ածանցով:

Ըստ թվի կարգի բառերը կարող են լինել մենաածանցավոր (թ.) և բազմածանցավոր, այսինքն՝ մեկից ավելի ածանց ունեցող (թ!): Ածանցավոր բառի կաղապարը կազմելիս մենք հայերենի համար կարող ենք նշել նույնիսկ, թե ո՞րն է մեկ բառի մեջ զուգորդվող ածանցների առավելագույն ճշգրիտ քանակը:

Վերջապես, ըստ դասի կարգի ածանցները արմատահիմքի հարաբերությամբ կարող են լինել նախադաս (դ→) և հետադաս (դ←). նախադաս ածանցները կոչվում են նախածանցներ, հետադասները՝ վերջածանցներ: Եթե միջադաս ածականների հայերենում հնարավոր են (հմմտ. 1 ածականը՝ բնդ-ել—բլնդ-ել, կանչ-ել—կլանչել), ապա միջադաս ածանցներ (միջածանցներ՝ դ→—) չկան: Նախածանց ունեցող բառերը կոչվում են նախածանցավոր, վերջածանց ունեցողները՝ վերջածանցավոր: Որոշ լեզուներում տարածված են նաև այնպիսի ածանց-

ներով կազմութիւնները, որոնք բաղկացած են մեկ ածանցի արժեք ունեցող նախադաս և վերջադաս տարրերից (Հմմտ. վրաց sa—o նախաածանց-վերջածանցը սեղացույց արժեքով՝ Sakartveio «Վրաստան»): Հայերէնի համար այսպիսի երկդաս ածանցները (դ←→) բնորոշ չեն (Հմմտ. անդր-շիրիմ-յան): մեծ մասամբ բառի կազմում գտնվող նախածանցները և վերջածանցները (այսինքն՝ բառը միաթամանակ և՛ նախածանցավոր է, և՛ վերջածանցավոր) հանդիս են գալիս իրարից անկախ:

Բառակազմական վերոհիշյալ հասկացութիւնները և տերմինները մենք քննեցինք ըստ բաղադրյալ բառի բաղադրիչների կառավարային հարաբերութեան՝ առանց նկատի առնելու այդ բաղադրիչների կոնկրետ իրացումները: Այժմ անցնելով վերջիններիս՝ մենք կարող ենք տարբերել ըստ արմատների հետ կապակցվելու (կախման մեջ մտնելու) թվային արտահայտութեան բնդհանրական (թ↔) և անբնդհանրական (առանձնական կամ մասնական) ածանցներ: Ընդհանրական ածանցները կարող են զուգորդվել տվյալ գործառական կարգի բոլոր արմատների հետ, նույնիսկ փոխարինել անբնդհանրական ածանցներին: անբնդհանրական ածանցները սովորաբար զուգորդվում են մեկ կամ մի քանի արմատի հետ՝ սահմանափակելով ընդհանրական ածանցների գործածութիւնը կամ մրցելով նրանց հետ: Ընդհանրական ածանցները, ընդունակ լինելով կապակցվելու շատ արմատների հետ, բնականաբար, ավելի գործածական և ավելի արտահայտողական են. նոր բառերը սովորաբար կազմվում են այս տիպի ածանցների օգնութեամբ:

Քանի որ ածանցները երկպալանային միավորներ են, այսինքն՝ ունեն միաթամանակ և՛ արտահայտութեան, և՛ բովանդակութեան պատեններ (և՛ հնչյունական որոշակի կերպարանք, և՛ որոշակի իմաստ), ուստի հնարավոր են այդ երկու կողմերի թվային տարբեր արժեքներ՝ մեկ ձև (հնչյունական միեւնույն կերպարանքը)՝ մեկից ավելի իմաստների և մեկ իմաստ կամ իմաստային մեկ դաշտ՝ մեկից ավելի ձևերի դեպքում: Ըստ իմաստների մերձավորութեան աստիճանի դնահատման՝ առաջին դեպքում տարբերում են բաղմիմաստ և համանուն, երկրորդ դեպքում՝ նույնանիշ և (իմաստային մեկ դաշտի պատկանելու դեպքում) համանիշ ածանցներ: Արտահայտութեան և բովանդակութեան պլաններն իրենք իրար նկատմամբ առնված բնութագրվում են կախման կարգի փոխադարձութեան եզրով՝ կխ←→, այսինքն՝ դիտվում են որպէս փոխադարձ կախման մեջ գտնվող կողմեր (հարաբերիչներ):

2. ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՑԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՏԱՏԻԿ ԵՎ ԴԻՆԱՄԻԿ ՄՈՏԵՅՈՒՄ

Ինչպես ձևաբանական, այնպես էլ բառակազմական հիմքի հասկացությունը բաղմարժեք է: Եթե բառակազմական հիմք տեսնով հասկանանք յուրաքանչյուր ածանցական ձևի՝ ածանցից զուրկ մասը, ապա դժվար չէ համոզվել, որ ածանցված բառերը կարող են հայերենում դարձյալ ածանցվել, և որ, հետևաբար, հիմքերի հնարավոր քանակը կհամապատասխանի իրար հաջորդող ածանցների ընդհանուր քանակին, այլ կերպ ասած՝ կարելի է տարբերել 1) տրամադական հիմքեր, 2) նախաածանցավոր հիմքեր և 3) վերջածանցավոր հիմքեր, ընդ որում և՛ նախաածանցավոր, և՛ վերջածանցավոր հիմքերը կարող են լինել մի քանի կարգի՝ ըստ բառակազմական կազմադրի մեջ ածանցների հնարավոր հաջորդականություն:

Ինչպես որ բայական վերջավորությունների ամբողջությունը կազմում է բայի խոնարհման հարացույցը, իսկ գոյականական վերջավորությունների ամբողջությունը՝ գոյականի հոլովման հարացույցը, այնպես էլ նույն համաբանությամբ կարող ենք ասել, որ բառի ածանցների ամբողջությունը կազմում է նրա բառակազմական հարացույցը: Առկայելով այս դեպքում հարցը փոքր-ինչ ավելի բարդ է: Հայտնի է, որ հոլովման դեպքում մենք գործ ունենք միայն վերջավորությունների հետ, իսկ խոնարհման դեպքում առկա են նաև կ- և շ- նախադասանիկները, որոնց խոնարհման հարացույցի մեջ մտցնելու հարցը սովորաբար դրականորեն է լուծվում. թերևս այս նույն ձևով էլ բառակազմական հարացույցի մեջ կարելի է մտցնել նաև նախաածանցների համակարգը, և բառակազմական հարացույցը ասելով հասկանալ բառի ածանցների ամբողջությունը. միաժամանակ, ինչպես որ խոնարհման հարացույցն ընդգրկում է ոչ միայն համադրական (հմմտ. գնացի), այլև վերլուծական կառույցները (հմմտ. զնում ևմ), բառակազմական հարացույցի մեջ կարելի է մտցնել վերլուծական տիպի կազմությունները ևս: Իսկ ինչպե՞ս պետք է վարվել բարդությունների հետ, որոնց մեջ ածանցների փոխարեն հանդես են գալիս ինքնուրույն գործածություն ունեցող բառերը, և որոնց ներմուծման դեպքում հարացույցի սահմանները լայնանում են ու դառնում ահօրոշ. ի տարբերություն ածանցների, որոնց թիվը որոշակիորեն սահմանված է, և հարացույցը սահմանափակ, բառերի դեպքում հարացույցը կարող է ընդլայնվել: Այս դեպքում նպատակահարմար է տարբերել բառակազմական նեղ և լայն հարացույցներ՝ առաջինի մեջ գնելով միայն ածանցավոր կազմությունները, երկրորդի մեջ՝ նաև բարդությունները: Ընդհանուր առ-

մամբ կարելի է ասել, որ ամեն մի բառի լայն հարացույցը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրա բառակազմական փունջը: Այս լայն ըմբռնման դեպքում հիմքի հասկացությունը կարելի է տարածել նաև բարդությունների վրա:

Ածանցական հիմքի և ածանցի հասկացությունների հետ սերտորեն կապված են ածանցելիի (ածանցման ենթակա միավորի) և ածանցյալի գաղափարները: Ածանցելին ածանցական հիմքից տարբերվում է նրանով, որ առաջինը կարող է ձևավորված չլինել որպես հիմք, մինչդեռ երկրորդը բնորոշվում է հենց այդպիսի ձևավորմամբ: Միաժամանակ այս դեպքերում մենք գործ ունենք բառակազմության ստատիկ և դինամիկ ըմբռնումների տարբերության հետ. ածանցական հիմքի և ածանցի գաղափարները կապված են արդեն ձևավորված կազմության հետ, և մենք որոշում ենք այդ կազմության բաղադրիչների փոխարարելությունը. ածանցելին և ածանցյալը ենթադրում են դինամիկ մոտեցում՝ միավոր, որից պետք է կազմվի նոր միավոր: Նույն համաբանությամբ մենք բարդության համար կարող ենք տարբերել մի կողմից՝ բարդության հիմքը և առհիմքային բաղադրիչը, մյուս կողմից՝ բարդելին և բարդյալը:

Ստատիկ մոտեցման դեպքում առաջնային քննության առարկան են բաղադրյալ՝ ածանցյալ ու բարդյալ, բառերը որպես առկա կազմություններ, և քննությունը կատարվում է ըստ զրանց բաղադրիչների՝ իրար և բաղադրությունների նկատմամբ ունեցած հարաբերության: Դինամիկ մոտեցման դեպքում քննությունն սկսվում է ոչ թե բաղադրյալ, այլ բաղադրելի միավորներից, և ցույց է տրվում դրանց բաղադրման ընթացքը: Եթե ելակետ ընդունենք անբաղադիր (սյարդ) միավորները, ապա հետևողականորեն, քայլ-առ-քայլ (տակտ-առ-տակտ) պիտի քննենք բառարմատներից ածանցական հիմքերի, սրանցից առաջին կարգի (երկբաղադրիչ), ապա երկրորդ կարգի (եռաբաղադրիչ) բաղադրյալ միավորների ստացումը և այլն՝ մինչև տվյալ լեզվի հնարավոր տիպերի սպառումը: Ստատիկ մոտեցման դեպքում, մենք փաստորեն գործ ունենք վերլուծության, դինամիկ մոտեցման դեպքում՝ համադրության հետ: Մեր ընդունած կաղապարման մեթոդը հնարավորություն է տալիս ղուգակցելու երկու մոտեցումները. նախ տրվում են բաղադրության կաղապարները, սրանց բաղադրիչների հնարավոր առավելագույն քանակը, ապա հետևողականորեն, քայլ-առ-քայլ բացահայտվում են կաղապարների բաղադրիչների իրացման դեպքերը, դրանց ձևական և իմաստային առանձնահատկությունները: Կաղապարման մեթոդը հնարավորություն է տալիս իրագործելու լեզվական միավորների և՛ վերլուծությունը, և՛ համադրությունը:

Նշենք, որ ինչպես ուրիշ լեզուների, այնպես էլ հայերենի բառակազմական ուսմունքի մեջ հստակ տարբերակում չի անցկացվում ստատիկ ու դինամիկ մոտեցումների միջև, և դործածություն մեջ են այնպիսի բառեր ու տերմիններ, որոնց հիմքում ընկած է կամ մեկ, կամ մյուս մոտեցումը, երբեմն էլ խառնված են երկու հայեցակետերը. այս հանգամանքը մասամբ էլ հետևանք է այս կամ այն լեզվի տերմինափոխության առանձնահատկությունների: Այս առումով հարկ ենք համարում կատարել տերմինափոխ ճշտումներ: Մեզ համար հիշատակ են ծառայում, ինչպես նշել ենք, արմատի և բառակազմական արմատափոխության գաղափարները. բառակազմության արդյունքն է բառաբաղադրությունը իր երկու տեսակով՝ բարդ բառ (բարդություն) և ածանցավոր բառ (բացակայում է համապատասխան «ածանցություն» համանիշը): Ածանցելի և ածանցյալ բառերը մենք կօգտագործենք բազմաբան խնչպես եզրային նվազագույն և առավելագույն, այնպես էլ միջին օղակների բառակազմական հիմքերը և զրանցից ստացված բառերը նշանակելու համար: Երկուսից ավելի բաղադրիչ ունեցող բառերը, ըստ անհրաժեշտության, կկոչենք հարարադ, բազմաձևից և բարդ ածանցավոր: Բարդ բառերի սերման ընթացքը կկոչենք բարդում, ածանցալի՝ բառերի սերման ընթացքը՝ ածանցում, երկու պրոցեսը միասին՝ բառաբաղադրում:

3. ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏՐ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՐԺԵՔՐ.

ԱՄԱՆՅՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՏՅՍԱԿՆԵՐԸ

Ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության՝ գոյաբանական-իմաստաբանական կարգերի հետ միասին և նրանց հետ կապված հանդես են գալիս նաև լեզվական (այն առումով՝ նյութական) արտահայտության կարգեր, որոնք ընդհանրացված ձևով ցույց են տալիս լեզվական համակարգում, նրա կաղապարների մեջ միավորների գործառության պայմանները: Այսպես, կախման գոյաբանական կարգը ցույց է տալիս առարկաների հարաբերությունների տիպերը, լեզվական արտահայտության նրա նմանակը (անալոգը)՝ լեզվական կախման կարգը, լեզվական միավորների կախման տիպերը. տեղի գոյաբանական կարգը ցույց է տալիս առարկայի տարածական դիրքը, լեզվական տեղի կարգը՝ լեզվական միավորի տեղը (դիրքը) լեզվական կաղապարում և այլն:

Ըստ այս տարբերակման՝ ածանցները հայերենում կարող են հանդես գալ երկու դերով՝ գոյաբանական-իմաստաբանական և լեզվական:

Առաջին դեպքում նրանք հիմքային իմաստին ավելացնում են նոր իմաստ կամ փոխում նրա սկզբնական իմաստային արժեքը. երկրորդ դեպքում նրանք որոշում են լեզվական կաղապարների մեջ միավորների գրավելիք տեղերը, դրանց համապատասխան փոփոխությունները: Ավանդական քերականությունն անհրաժեշտ ուղադրություն չի հատկացրել ածանցների այս կողմի վրա, որ կապված է փոխակերպման կամ, ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության, փոխկաղապարման հետ: Ինչպես որ բառերը բուն իմաստի հետ միասին ունեն գործառական արժեք, այնպես էլ ածանցները կարող են հանդես գալ իմաստաբանական կամ իմաստահավելական և լեզվադործս ռական արժեքներով, որոշ դեպքերում էլ կարող են դրանք զուգակցել: Մենք տարբերում ենք միավորի առաջնային և երկրորդային գործառույթներ: Առաջնային գործառույթը միավորի համար բնորոշ կաղապարային տեղն է (պաշտոնը), երկրորդայինը՝ ոչ բնորոշը: Երկրորդային գործառույթ միավորն ստանում է փոխկաղապարմամբ, Երի նշաններն են՝ բառի դեպքում հենց գործառական ածանցները (այդ թվում՝ զրո ածանցը):

Միավորների գործառույթը որոշվում է մակարդակային ափելի բարձր միավորի մեջ նրա գրաված տեղով (պաշտոնով): Բառի համար իբրև այդպիսի միավոր ծառայում է շարույթը, որի անվան տակ մենք հասկանում ենք գոյականական շարույթը: Նախադասությունը մեկ կամ մեկից ավելի շարույթից կազմված միավոր է, որ բնորոշվում է ստորոգմամբ՝ իրադրացման հատուկ տեսակով:

Շարույթը մեր կողմից դիտվում է որպես գոյականի և գոյականական բառակապակցության ընդհանրացված անվանում. այն կարող է արտահայտված լինել ինչպես բառակապակցությամբ, այնպես էլ միայն մեկ բառով. վերջինս լինում է շարույթի հիմնական անդամ՝ գոյականը, կամ փոխկաղապարմամբ սրա տեղը բռնած լրացումը:


Շարույթն, այսպիսով, հանդես է գալիս որպես գոյական-լրացյալի և սրա լրացումների ամբողջություն: Քանի որ հայերենում լրացումները սովորաբար նախորդում են լրացյալին, ուստի մենք կարող ենք տալ (1)⁹ ընդհանրացված բանաձևը: Գոյականի համար որպես լրացում կարող են հանդես գալ թվականը և ածականը: «Զուտ» գոյաբանական-իմաստաբանական գնահատմամբ առաջինը պիտի լինեք քանակական, երկրորդը՝ որակական լրացում, բայց խոսքի մասերի ժամանակակից ուսմունքը ածականի մեջ դնում է նաև քանակական արժեքի այնպիսի բառեր, որոնք քանակը որոշում են մոտավորապես և ոչ ճշգրտորեն (հմմտ. շատ, քիչ): Միասին հանդես գալու դեպքում թվականը շարույթի կաղապարում տեղ է զբաղեցնում ածականից առաջ՝ երկու գեղեցիկ տուն, այսինքն՝ առկա է (11)(12)⁹ կամ (թ)(ա)⁹ կաղապարը: Այս

կապակցութեամբ հարկ ենք համարում նշել, որ անհայտ երկրի մաստ է՝ նշանակելով ոչ միայն սոսկական ածականը, այլև գոյականի լրացումներն ընդհանրապես: Դեռ ավելին, ածականի մեջ դրվում են շատ բառեր, որոնք ունեն դերբայական արժեք և նույնիսկ կարող են բայահիմքերի նման կախման մեջ դնել գոյականներին (համա. ջրով լի = ջրով լցված): Հետագա քննութեան մեջ որոշ տուրք տալով խոսքի մասերի ավանդական դասակարգմանը՝ անհայտ բառը կգործածենք երբեմն լայն առումով՝ որպէս լրացման նշանակում:


Շարույթի լրացական անդամները՝ ածականը, թվականը և փոխկաղապարմամբ որպէս լրացում հանդես եկող ածականական դերբայը կարող են ունենալ լրացական բառեր և նրանց հետ միասին կազմել ենթաշարույթներ: Այս լրացական բառերը կամ լրացման լրացումները հայտնի են «մակբայ» ընդհանուր անունով, թեև ճիշտ կլինէր տարբերակել մականականներ, մակթվականներ և բուն մակբայներ: Նկատի ունենալով գոյականական շարույթը՝ այս լայն առումով մենք կունենանք ((մ)լ)Գ կամ, եթե «ածական» բառն առնենք լայն առումով, ((մ)ա)Գ ընդհանուր բանաձևեր:

Շարույթի անդամները իրար հետ կապված են, այսպէս կոչված, հատկանշման կապով, ըստ որի մենք տարբերում ենք հատկանշյալ, հատկանիշ և ենթահատկանիշ, որոնք ընդհանուր ձևով կոչվում են լրացյալ, լրացում և ենթալրացյալ: Եթե մենք շարույթը հարաբերութեան մեջ դնենք նախադասութեան հետ, ապա կարող ենք ասել, որ շարույթի և նախադասութեան միջև առկա է փոխկաղապարային հարաբերութեան, ընդ որում մենք այս հարաբերութեանը, ինչպէս նշել ենք, դիտում ենք որպէս փոխադարձելի: շարույթը կարող է փոխկաղապարվել նախադասութեան, նախադասութեանը՝ շարույթի: Եւ սա հասկանալի կլինի, եթե նկատի առնենք, որ շարույթը գիտակցութեան փաստի, իսկ նախադասութեանը՝ մտածողութեան փաստի (ակտի) լեզվական արտահայտութեան է, ընդ որում սրանք փոխադարձաբար պայմանավորված են:

Նախադասութեան հիմքում ընկած հարաբերութեանն արտահայտելով $(RrR)r_1(RrR)$ ձևով և սրանից առանձնացնելով չկրկնվող R, r և r_1 տարրերը՝ մենք կարող ենք սրանց և շարույթի անդամների միջև սահմանել փոխկաղապարային հետեւյալ հարաբերութեանները՝



կամ, որ նույնն է,



Հանդես գալով տարբեր գործառույթներով՝ բառերը փաստորեն մտնում են լեզվական տարբեր կարգի կախումների մեջ և, ինչպես նշվեց, այս շեղումն բնութագրվում են լեզվական կախման կարգով:

Եթե մենք բառերը քննենք ըստ լեզվական կախման՝ նկատի ունենալով նրանց կադապարային փոխարարերույթյունը և առաջժ ա) զանց առնենք ինչպես խնդրառու և ոչ խնդրառու ածականների տարբերությունը, այնպես էլ ածականի և թվականի դիրքային և գոյաբանական տարբերությունը, բ) մականականը և մակթվականը միացնենք մակբայի հետ, գ) դերանունները դիտենք որպես գոյականների, ածականների և մակբայների իրադրական տեսակների, ապա կունենանք գոյականի, ածականի (ներառյալ թվականը), մակբայի և բայի կախումնային հետևյալ բնութագրերը.

դոլական՝ կիւ→ (կախորդ).

ածական՝ կիւ→ — (միջակայալ).


մակբալ՝ կիւ← (կախալ).

բայ՝ կիւ↔ (փոխկախալ):

Այլ կերպ ասած՝ հանդես կգա սրանց կախումնային հետևյալ փոխհարաբերությունը.

$$((մ \leftarrow) ա \leftarrow) գ \rightarrow բ (\rightarrow գ (\rightarrow ա (\rightarrow մ))) :$$

Սակայն խոսքի մասերի սահմաններն անշարժ չեն, և նրանց միջև կարող է տեղի ունենալ փոխանցում. եթե սլաքներով այժմ նշանակենք ոչ թե կախման, այլ փոփոխության (գործողության, անցման) կարգի եզրերը, ապա կունենանք հետևյալ սխեման.



Այսպիսով, խոսքի մասերը փոխանցելի են, և այդ փոխանցումը կատարվում է համապատասխան գործառական ածանցների, այդ թվում նաև զրո ածանցի օգնությամբ: Միայն թե լեզվի մեջ բոլոր ան-

ցումները չէ, որ հավասարապես հնարավոր են: Եթե իմաստահավելա-
կան ածանցները տվյալ հանրություն մեջ ամենից ավելի հաճախական
իմաստների համառոտ նշանակումներն են, ապա գործառական ածանց-
ները խոսքիմասային կամ գործառական նիշեր են, որոնք ցույց են
տալիս ածանցյալի և ածանցելիի գործառական տարբերությունը: Երկ-
րորդսրար ածանցյալը նույնպես կարող է ենթարկվել նոր ածանցման,
այսինքն՝ դառնալ ածանցելի նոր ածանցյալի համար և այլն՝ սովոր-
աբար մինչև գործառական արժեքի կրկնվելը:

Հետագա քննության մեջ մենք հստակորեն կտարբերակենք բա-
ռակազմական այն կաղապարները, որոնց ղեկքում բաղադրությունը
պահպանում է հիմնական բաղադրիչի առաջնային գործառական, այ-
սինքն՝ խոսքիմասային, արժեքը, այն կաղապարներից, որոնց ղեկքում
բաղադրությունն ունի հիմնական բաղադրիչից տարբեր գործառական
արժեք: Առաջին տիպի բառակազմության քննությունը կոչվեց համա-
կաղապարային, երկրորդը՝ փոխկաղապարային:

4. ԲԱՌԱՄԱՆՅՄԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ԿԱՂԱՊԱՐԸ ԽՂ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

Մեր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» աշ-
խատության մեջ [Ձառուկյան, 1974, 152—158] տրված է բառաածանց-
ման՝ խոսքիմասային բոլոր հիմքերի համար ընդհանրացված կաղա-
պարային բանաձև, ըստ որի հայերենում հնարավոր է առավելագույ-
նը երեք նախածանցից և երեք վերջածանցից բաղկացած ածանցյալ:
Բաղադրիչների պարտադրականությունը նշող փակագծերի որոշ ճշ-
գրությամբ այն կունենա հետևյալ տեսքը՝

(a)(b)(c).Λ(d)(e)(f/d)₁:

Կաղապարային այս բանաձևի մեջ նախածանցներն ունեն գերա-
զանցապես իմաստափոխական, վերջածանցները՝ գերազանցապես գոր-
ծառական-փոխանցական արժեք: Ըստ կաղապարային այս բանաձևի՝
ա-ն իրանում է ժխտական, Ե-ն՝ ժամանակային, Ե-ն՝ տարածական
իմաստ ունեցող նախածանցների, ժ-ն և ժ₁-ը՝ դոյականական, Ե-ն՝
ածականական, Ի-ը՝ մակբայական գործառություն հաղորդող վերջա-
ծանցների միջոցով: Թեք գիծը (1) ցույց է տալիս ածանցների փոխա-
րինելիությունը:

Այժմ նպատակ ունենալով ածանցման հարցերի հանգամանակից
քննությունը՝ մենք կարող ենք ասել հետևյալը. առաջին՝ ընդհանրաց-
ված բանաձևը կիրառելի է հիմնականում (որոշ փոփոխությամբ) բա-

յաւկան ածանցելի հիմքերի (A=բայահիմք) և գոյականական ածանցելի հիմքերի (A=գոյականական հիմք) նկատմամբ՝ մյուս կարգի ածանցելի հիմքերի դեպքում տալով մեծ քանակութեամբ բաց վանդակներ (բանաձևում նշված ածանցների և ածանցյալ տիպերի զգալի մասը չի իրանում): Երկրորդ՝ ինչպես որ Ա-ի՝ գոյականական հիմքով հրահանգները դեպքում գոյական հիմքի մոտ կարող է հանդիպել գոյականակերտ ածանց՝ այս դեպքում իմաստափոխային արժեքով, այդպես էլ խոսքիմասային մյուս կարգի հիմքերի դեպքում հնարավոր է այդպիսի համագործառական ածանցների առկայություն, այսինքն՝ ածականական հիմքի մոտ կարող է հանդիպել ածականակերտ ածանց, մակերայական հիմքի մոտ՝ մակերայակերտ ածանց և այլն՝ հիմնականում իմաստափոխական և մասամբ գործառությունը շեշտող արժեքով. այս դեպքերում իմաստափոխական ածանցները նախորդում են հիմնականում գործառական բնույթի ածանցներին: Երրորդ՝ գործառական ածանցները առաջ են բերում կաղապարային զիջքի փոփոխություն և, հետևաբար, փոխկաղապարային արժեք ունեն. այս կաղապարային մենք հետագա քննության մեջ կառանձնացնենք համասեռ կաղապարները տարբեր կաղապարներից, այսինքն՝ կքնենք նախ խոսքիմասային այն կաղապարները, որոնց դեպքում բառակազմությունը մնում է միևնույն խոսքի մասի սահմաններում, ապա այն կաղապարները, որոնց դեպքում մի խոսքի մասից անցում է կատարվում մի այլ խոսքի մասի:

Քանի որ ածանցելի հիմքերի խոսքիմասային (գործառական) տիպերը զիջարկվելու են առանձին-առանձին, բնդ որում հիմնականում գործառական արժեք ունեցող վերջածանցները կարող են հանդիպել տարբեր գործառական հիմքերի մոտ, նպատակահարմար է և՛ հիմքերի, և՛ վերջածանցների համար մշակել նշանների որոշակի համակարգ:

V(=verbum)—բայահիմք

S(=substantivum)—գոյականական հիմք

A(=adjectivum)—ածականական հիմք

N(=numeralis)—թվականական հիմք

A^v(=adverbium)—մակերայական հիմք

P(=pronomen)—դերանվանական հիմք

v—բայական վերջածանց

s—գոյականական վերջածանց

a—ածականական վերջածանց

n—թվականական վերջածանց

a^v—մակերայական վերջածանց

5. ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔՆԵՐԻՑ ԱԾԱՆՑՎԱԾ ԲԱՌՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՑՈՒՄԸ

ա. Համասեռ կաղապարներ

1) Համադրական ձևեր

Բայական հիմքերի ածանցման համասեռ կաղապարների քննության ժամանակ մենք բոլոր օղակներում գտնվում ենք բայական հիմքերի քննության սահմաններում, այսինքն՝ $է'$ ածանցելիները, $է'$ ածանցյալները բայահիմքեր են: Բայական հիմքերից նոր բայական հիմքերի ածանցման ընդհանուր կաղապարը կունենա հետևյալ տեսքը.

$$(v_1)(v_2)V(v_3):$$

Ըստ այս բանաձևի մենք պիտի տեսնենք բայածանցական $2^3 = 8$ տիպ՝ 1 տնածանց (V), 3 մենածանց (v_1V , v_2V , Vv_3), 3 երկածանց (v_1v_2V , v_1Vv_3 , v_2Vv_3) և 1 քառածանց ($v_1v_2Vv_3$): Սակայն v_1 և v_2 նախածանցները v_3 վերջածանցի հետ սովորաբար չեն հանդիպում. առաջին երկուսը հատուկ են գրքային, երրորդը՝ ժողովրդախոսակցական ոճին [հմտ. Ջանուկյան, 1986]: Այս առումով մենք փաստորեն կունենանք ոչ թե մեկ ընդհանուր կաղապար (լիակաղապար), այլ երկու մասնակաղապար.

$$(v_1)(v_2)V \quad \text{և} \\ V(v_3):$$

Սա նշանակում է, որ 8 տիպի փոխարեն կունենանք 5 տիպ՝ 1 տնածանց (V), 3 մենածանց (v_1V , v_2V , Vv_3) և 1 երկածանց (v_1v_2V):

Կաղապարային v_1 բաղադրիչն իրանում է նախ(ա), վեր(ա)–, փոխ(ա)– ածանցներով, որոնք արտահայտում են հիմնականում ժամանակի, հաճախայնության և պատճառայնության կարգերի իմաստներ.

$\partial \rightarrow$ («ժամանակով առաջ՝ նախորդող» իմաստով)՝ նախ(ա)– (նախ–նինքնուրույն գործածություն ունի, և նախ(ա)–ն կարելի է դիտել որպես ածանցակերպ)՝ նախագուշակ–(ել), նախագգուշ–(ան–ալ), նախատրամադր–(ել) և այլն. սրանց համարժեք են կանոխ մակրայով կազմությունները (կանխա– ձևով)՝ կանխագուշակ–(ել), կանխագգուշ–(ան–ալ) և այլն. նախագախ–(ել), նախադաս–(ել) բայաձևերի մեջ նախա–ն արտահայտում է դասային իմաստ ($q \rightarrow$), բայց այս բայերը երկրորդական են՝ ստացված համապատասխան նախագախ, նախա–

դաս անուններին, որոնց մեջ նախա-ն իմաստային նշված արժեքն ունի. ժամանակային հակադիր իմաստը (ժ←՝ ժամանակով հետո՝ հաջորդում) կարող է արտահայտվել հետ մակբայով (հետածգ-(ել)) և տար(ա)- նախածանցով (տարածամ-(ել)) կազմությունների միջոցով, բայց սրանց ժամանակային գործածությունը հազվադեպ է.

հե («կրկնվող» երկրորդ անգամ կատարվող)՝ վեր(ա)-վերաբաժան-(ել), վերագծ-(ել), վերապատմ-(ել), վերադարձ-(ել) և այլն. սլ ↔ («փոխադարձ» իմաստով)՝ փոխառուց-(ել), փոխամածայն-եցն-(ել) և այլն:

Կադապարային V₂ բաղադրիչն իրանում է անդր(ա)-, ապ(ա)-, առ(ա)-, արտ(ա)-, *բաղ(ա)-, *բաց(ա)-, գեր(ա)-, դիմ(ա)-, ենթ(ա)-, զուգ(ա)-, *ընդ-, *թափ(ա)-, դիմ(ա)-, քեր(ա)-, հակ(ա)-, համ(ա)-, ճար(ա)-, հեղ(ա)-, *մակ(ա)-, միջ(ա), ներ-, ստոր(ա)-, տար(ա)-, *տը-րամ(ա)-, փոխ(ա)- ածանցներով, որոնք արտահայտում են կազմի, համեմատություն, ուղղություն, ընթացածի, չափի և տեղի կարգերին հատուկ իմաստներ, ընդ որում աստղանիշով նշանակված նախածանցներով կազմությունները ժառանգվել են հնից՝ պատրաստի ձևով, և անփոփոխելի են:

կզ→ («հետ միասին» իմաստով)՝ զուգ(ա)-, համ(ա), ալև բաղ(ա)-, հար(ա)-՝ զուգադր-(ել), համադր-(ել), բաղադր-(ել), հարադր-(ել):

կզ↔ «փոխարեն, փոխելով» իմաստով՝ փոխ(ա)-՝ փոխադր-(ել), փոխանց-(ել). հեղ(ա)-՝ հեղաշրջ-(ել):

ուղդ↔ («դեմ, հանդեպ, դիմաց» իմաստով)՝ դիմ(ա)-՝ դիմադր-(ել), դիմականգնել. առ-՝ առնակատ-(ել):

ուղդ↔ («հակառակ, հակադիր» իմաստով)՝ հակադր-(ել), հականառ-(ել) և այլն. դիմ(ա)- նախածանցը հաճախ ունի նաև հակ(ա)-ի արժեք:

փոփ← («վերածել նախկին վիճակին» իմաստով՝ սովորաբար ի հակադրություն -ացն-(ել)-ի իմաստի)՝ ապագող-(ել), ապանեխ-(ել), ալև ապակենտրոնացն-(ել):

հմ→ («ամելի մեծ չափով» իմաստով)՝ գեր(ա)-՝ գերակատար-(ել):

հմ← («ամելի փոքր չափով» իմաստով)՝ քեր(ա)-՝ քերակատար-(ել):

տ← ուղդ→ («դեպի հետ» իմաստով)՝ անդրա-՝ անդրադառն-(ալ). հին կազմություններում և գոյականական հիմքերի մեջ անդրա-ն նըշանակում է «այն կողմ», այսինքն՝ ունի իրադրական իմաստ. «դեպի հետ» իմաստը ավելի հաճախ արտահայտվում է հետ մակբայով՝ հետադարձ-(ել), հետադիմ-(ել). հակադիր իմաստը (տ→ ուղդ→) ար-

տահայտվում է առաջ մակբայով կազմությունների միջոցով՝ առաջադր-(ել), առաջադիմ-(ել) և այլն.

տ↑ («վրա» իմաստով) և տ↑ ուղղ→ («վեր, դեպի վեր» իմաստով)՝ վեր(ա)- (այս իմաստով հաղվագիտ)՝ վերադր-(ել). մակ(ա)-՝ մակագր-(ել).

տ↓ («տակ, ներքո» իմաստով) և տ↓ ուղղ→ («դեպի ներքև, վար» իմաստով)՝ ենք(ա)-՝ ենթադաս-(ել). բնդ-՝ բնդծ-(ել). ստոր(ա)-՝ ստորագր-(ել).

տ→-1 («միջև» իմաստով), տ→-2 («մեջ» իմաստով) և տ→-3 ուղղ→ («դեպի միջև» իմաստով), տ→-2 ուղղ→ («դեպի մեջ» իմաստով)՝ միջ(ա)-՝ միջամտ-(ել). բնդ-՝ բնդհատ-(ել).

տ→-3 («ներսում» իմաստով) և տ→-3 ուղղ→ («դեպի ներս» իմաստով)՝ ներ-՝ ներդր-(ել).

տ↔2 ուղղ→ («դեպի շոքս կողմ» իմաստով)՝ բնդ-՝ բնդարձակ-(ել). մերձավոր «շուրջը» իմաստով ավելի հաճախ գործածվում են շրջ(ա)-ով կազմությունները՝ շրջագայ-(ել), շրջապատ-(ել).

1 տ↔3 («դուրս» իմաստով) և տ↔3 ուղղ→ («դեպի դուրս» իմաստով)՝ արտ(ա)-՝ արտաբեր-(ել), արտադր-(ել).

չ← ուղղ→ («դեպի մոտ» իմաստով) կամ չ. ուղղ→ («բնդհուպ» իմաստով)՝ առ(ա)-՝ առադր-(ել), առնայն-(ել).

չ↔ («ծայրից ծայր» իմաստով և չ↔ ուղղ→ («մի ծայրից դեպի մյուսը» իմաստով)՝ քափ(ա)-՝ քափանց-(ել). տրամ(ա)- (պատարաստի ժառանգված օտարաբան կազմություններով)՝ տրամարան-(ել), տրամադր-(ել):

Կազմապարային V₃ բաղադրիչն իրանում է -առ-/ոտ-/տ-, -որ-, -շտ(որ)-, -ա-տակ- ածանցներով: Սրանցից առաջին երեքը արտահայտում են հաճախայնություն կարգի իմաստներ՝ «շատ անգամ» կամ «ոչ մեկ անգամ» մեկից ավելի անգամ», այսինքն՝ ներկայացնում են այդ կարգի հիմնական եզրը (→) կամ չեզոք (-) եզրի ծխտումը (հճ/)-առ-/ոտ-/տ-՝ կտրատ-(ել), ջարդոտ-(ել), պատոտ-(ել), պատառոտ-(ել), -որ- (կրկնավոր հիմքերի հետ՝ որպես ուժեղացնող)՝ ծակծկոր-(ել), խագճգոր-(ել), -շտ (որ)-՝ խառնշտ-(որ)-(ել): Միայն -ա-տակ- ածանցակերպը արտահայտում է կերպային իմաստ՝ գործողության սկիզբ (կ→)՝ կարմրատակ-(ել), փայլատակ-(ել) (վերջին դեպքում՝ միանգամից կատարվողի երանգով՝ տեականություն չեզոք եզրով՝ տ.):

Հարկ ենք համարում մի քանի խոսք ասել նախաածանցների ցանկում չբերված տարրեր ունեցող անարտադրողական կազմությունների մասին:

Բացի առ(ա)- և ընդ- նախդիր-նախածանցներով կազմված բայերից, որոնք նշվեցին վերևում, նոր գրական լեզուն հնից պատրաստի ձևով ժառանգել է զ- և հ- ($<յ-$) նախդիր-նախածանցներով բայական ձևեր, որոնց իմաստային հակադրությունը մեծ մասամբ մթափնած է կամ փոխված. հմմտ. զիջ-(ել) — իջն-(ել) (նշանային և ոչ նշանային կամ բարոյական և ֆիզիկական իմաստների հակադրությամբ) և արձակ-(ել) — հարձակ-վ-(ել) (յ-արձակիմ). մի շարք բայերում դեռ կարելի է որսալ զ-ի սկզբնական ուժեղացնող իմաստը արմ-ան-(ալ) — զարման-(ալ), եռ-(ալ) — զեռ-(ալ):

Այժմ, երբ պարզ են բայի համասեռ կաղապարների բաղադրիչների իրացումները, օրինակներ բերենք դրանց հնարավոր զուգորդումների, այսինքն՝ մասնակաղապարային տիպերի իրացման համար: Ինչպես նշվել է, մենք կունենանք 1 անածանց, 3 մենածանց և 1 երկ-ածանց տիպեր՝ V^1 բեր-, V_1V^1 նախատես-, V_2V^1 քերակատար-, VV_3^1 կտրատ-, $V_1V_2V^1$ վերադադր-: Նշենք, որ 1) անածանց ձևը կարող է հանդես գալ նաև գոյականական, ածականական, էրբեմն էլ այս խոսքիմասային արժեքով՝ վար(-), ազատ(-) և այլն. 2) ածանցավոր բայահիմքերը երկրորդաբար կարող են նույնությամբ փոխկաղապարվել և գործածվել գոյականաբար կամ ածականաբար, այսինքն՝ ունենալ զրո գործառական ածանց. հմմտ. քերակատար:

2) Վերլուծական ձևեր

Բացի համադրական ձևերից, հայերենի բային հատուկ են նաև կազմության վերլուծական ձևեր, որոնք Մ. Արեղյանից սկսած ընդունված է կոչել հարադրական բայեր [հմմտ. Արեղյան, 1931, 171—175. հմմտ. նաև Արախամյան Ա., 1962, 156—208. Մարգարյան, 1966, 21—276]: Այս բայերը գործածվում են հատուկ տիպի բառերի հարադրությամբ, որոնք համընկնում են որոշ մակբայների ու առդիրների (կապերի) հետ և հարաբերակից են V_2 տիպի բայածանցներին: Սակայն, ի տարբերություն բուն բայածանցների, սրանք շեշտ են կրում և կառուցվում են բուն բայի ձևերից անջատվել օժանդակ բայի ձևերով: Վերլուծական տիպի բայերը, ունենալով իրենց նախատիպերը հին հայերենում, այսուհանդերձ արդի գրական լեզվում ավելի շատ բնորոշ են ժողովրդախոսակցական ոճին և հաճախ կարող են ունենալ համադրական զուգահեռներ գրքային ոճում: Եթե բառի սահմանային ազդանշանը նշանակենք $\parallel$ նշանով, ապա այս բայերի համար կունենանք ($V_2\parallel$)V կաղապարը՝ ի տարբերություն նախածանցավոր բայերի (V_2)V կաղապարի:

Կադապարի V2 բաղադրիչն իրանում է հետևյալ հարադիրներով՝ առաջ (առաջ գալ, առաջ բերել, առաջ խաղալ), դեմ (դեմ առնել, դեմ ընկնել), դեմ (դեմ ածել, դեմ գցել), դեա (դեա գցել, դեմ փաշել, երբեմն էլ, դեմ—ի հետ միասին, դեա ու դեմ գցել), դուրս (դուրս բերել, դուրս գալ, դուրս փաշել), հետ (հետ ընկնել, հետ փաշել), մեջ (մեջ բերել, մեջ ընկնել, մեջ փաշել), ներս (ներս գալ, ներս ընկնել, ներս փաշել), շուտ (շուտ գալ, շուտ տալ), վայր/վեր (վայր գցել—վեր գցել, վայր ընկնել—վեր ընկնել), վեր (վեր կենալ, վեր փաշել), վրա (վրա գալ, վրա վազել): Սրանցից առաջ, դեմ հարադիրները կարող են գործածվել նաև գոյականաբար՝ հոգով, որ առաջ է բերում իմաստային տարբերակում՝ առաջ բերել և առաջը բերել, դեմ առնել և դեմն առնել:

Ինչպես տեսնում ենք բերված ցանկից, հարադիրների մի մասը որոշակի զուգահեռներ ունի բայական նախածանցների մեջ, և նրանց իմաստային քննությունը գրեթե չի տարբերվի համապատասխան բայածանցների իմաստային քննությունից, որ արդեն կատարված է: Մընացած մասը համընկնում է համապատասխան առդիրների հետ, որոնց իմաստների քննությունը նույնպես կատարված է [հմմտ. նաև Զանուկյան, 1985]:

Համադրական և համապատասխան վերլուծական (հարադրական) կազմությունները կարող են հանդես գալ որպես համանիշային շարքեր՝ երբեմն ձևա-բառային տարբերակներով՝ վրա և մակ(ա)–, շուտ և շրջ(ա)–, դուրս և արտ(ա)–. հմմտ. առաջ դիմել և առաջադիմել, դեմ դընել և դիմադրել, դուրս բերել և արտաբերել, մեջ մտնել և միջամտել և այլն: Առանձին դեպքերում հարադիրները կարող են ձուլվել բուն բայերի հետ և ստանալ նախածանցների արժեք, հմմտ. վերլուծել: Որոշ դեպքերում էլ հարադրական բայերին կարող են համապատասխանել սովորական պարզ հիմքով բայեր՝ դուրս գալ—ելնել, դուրս փաշել—հանել և այլն:

Հայերենի վերլուծական բայաձևերը գործածության սահմանափակություն ունեն, և հարադիրները կարող են հանդիպել ոչ բոլոր բայերի մոտ: Ըստ հարադիրի և հարադրյալի (բուն բայի) փոխհարաբերության կարելի է տարբերել վերլուծական բայերի երեք հիմնական տիպ.

1) հարադիրները հանդիպում են շարժման բայերի հետ՝ ցույց տալով շարժման ուղղությունը դեպի որևէ տեղ. այս դեպքում գծվար է որոշակի սահման գծել հարադիրների և համապատասխան մակբայների միջև, և կարելի է ասել, որ հարցը լուծվում է կապի սերտության աստիճանով. հմմտ. ընկնել բայով՝ առաջ ընկնել, դեմ ընկնել, դուրս ընկնել, հետ ընկնել, մեջ ընկնել, ներս ընկնել, վայր ընկնել, վրա ընկնել:

2) Հարադիրները հանդիպում են վերացական բայերի հետ, որոնք արտահայտում են ընդհանուր բայական գործողություն, և նրանց իմաստը մասնավորվում է հարադիրների օգնությամբ. հմմտ. անել և լինել բայերը, որոնք հաճախ կազմում են չեզոք ու ներգործական զույգեր, և որոնց մոտ հարադիրները արտահայտում են հիմնական իմաստները՝ դեմ անել—դեմ լինել, դուրս անել, ներս անել և այլն: Այսպիսի հարադրական բայերին մոտենում են այն հարադրական բայերը, որոնց դեպքում բուն բայահիմքերն են զուգորդվում վերացական բայերի հետ և արտահայտում հիմնական իմաստը՝ զրույց անել—զրուցել, խաղ անել—խաղալ, ձայն տալ—ձայնել և այլն:

3) Հարադիրները բուն բայերի հետ կազմում են մեկ սերտ ամբողջություն՝ հանդես դալով փոխաբերական իմաստով, այսինքն՝ ըստանալով դարձվածային արժեք՝ դուրս տալ «շաղակրատել, հիմար-հիմար խոսել», նետ տալ «խելքը թոցնել, խելագարվել» և այլն: Այսպիսի ձևեր կարող են կազմվել բուն հարադիրներից տարբեր բառերի, հատկապես գոյականների օգնությամբ. հմմտ. ձեռք տալ «ձեռնառու լինել»:

բ. Տարասեռ կաղապարներ

Բայական հիմքերից կերտվող բառերի ածանցման տարասեռ կաղապարները երկու կարգի են՝ առաջնային և երկրորդային: Առաջնային տարասեռ կաղապարներն ընդգրկում են բայական հիմքերից որևէ այլ խոսքի մաս կերտող միայն մեկ տեսակ ածանցներ: Երկրորդային կաղապարների դեպքում այդ խոսքի մասերից կերտվում են այլ խոսքի մասեր: Համասեռ կաղապարները հիմք են ծառայում առաջնային տարասեռ կաղապարների, սրանք էլ՝ երկրորդային տարասեռ կաղապարներին համար, այսինքն՝ առաջինները որպես հիմքեր մտնում են երկրորդների մեջ և վերածանցվում, երկրորդները մտնում են տարբեր խոսքի մասերին հատուկ կաղապարների մեջ և վերածանցվում:

Բայի առաջնային տարասեռ կաղապարներն ունեն այն էական առանձնահատկությունը, որ նրանցով բնութագրվող բառերը կարող են պատկանել և՛ գոյականներին, և՛ սծականներին, և՛ մակբայներին, այսինքն՝ միևնույն բայական հիմքերից առաջնային ածանցներով կարող են ածանցվել գործառական երեք տիպի բառեր: Սրանք մասամբ պահպանում են բայահիմքային առանձնահատկությունները և հայ քերականության մեջ հայտնի են «գերբայներ» ընդհանուր անունով, մասամբ հանդես են գալիս որպես սովորական ածանցավոր բառեր: Ածա-

Վանական և մակբայական դերբայները կարող են գործառել ոչ միայն որպես բառածանցական, այլև որպես բառաթեքական արժեքի միավորներ՝ հանդես գալով որպես վերլուծական բայաձևերի հիմքեր:

Վերևում սասածներից բխում է, որ մենք կունենանք բայահիմքերից ածանցված բառերի երեք սուաչնային կաղապար՝ գոյականական, ածականական և մակբայական.

- | | |
|-----|---------------|
| (1) | $V(s)$ |
| (2) | $(a_1)V(a_2)$ |
| (3) | $V(a^y)$ |

Սրանց հիման վրա կարելի է տալ հետևյալ ընդհանրացված բանաձևը.

- | | |
|-----|---------------------|
| (4) | $(a_1)V(s/a_2/a^y)$ |
|-----|---------------------|

Կաղապարային a_1 բաղադրիչն իրանում է ան-, առանձին դեպքերում նաև տ- ու շ- մասնիկների օգնությամբ. վերջինս լինելով ընդհանրապես բառաթեքական (վերաբերական) մասնիկ՝ առանձին դեպքերում ձեռք է բերում բառակազմական մասնիկի (ածանցի) արժեք: Այս մասնիկներն արտահայտում են ժխտում և, ինչպես կտեսնենք, հաճախ հանդես են գալիս a_2 ածանցների հետ միացած, այսինքն՝ a_1V տիպը փաստորեն հավասարազոր է $a_1V a_2$ տիպին և, ինչպես կտեսնենք, հաճախ արտահայտվում է հենց նրա իրացումներով. ան-ով իրացած a_1V տիպի համար հմտ. անգետ «չգիտեցող», անտես «չտեսներվող», անզգա «չզգացող», անմոռաց «չմոռացվող» և այլն (սրանց մեջ անզգա-ի ա-ն, անմոռաց-ի -աց-ը հիմքերի կազմիչներ են). հազվադեպ այս արժեքով գործածվում են տ-ն և շ-ն՝ տգետ (անգետ-ի համեմատ՝ բացասական վերաբերմունքի երանգով, այսինքն՝ նշանայնություն լրացուցիչ իմաստով), տհաս, չբեր, չհաս, չտես: Հայերենում շատ տարածված է $a_1V a_2$ տիպի ան-V-ալի/-ելի նախածանց-վերջածանցավոր իրացումը՝ անդառնալի, անիմանալի, անլուելի, անլուծելի և այլն: Այն դեպքերում, երբ բայական հիմքը միաժամանակ գոյականական գործածություն ունի, ան-ը կարող է հանդիպել նրա մոտ այլ արժեքով (հմտ. անտրտունք). բայց այս դեպքը վերաբերում է գոյականական հիմքի ածանցական կաղապարների ըննությանը: Եվ մենք մնանք միայն բայահիմքի սահմանում, ապա բառակազմական արժեքը այս դեպքում խիստ հազվադեպ կլինի (ան- ածանցով՝ անտես-(ել)). բուն շ-ով ձևերը (չտեսնող, չստանա և այլն) ոչ թե բառակազմական ձևեր են, այլ ժխտական խոնարհման համապատասխան ձևերի փոխակերպումները՝ չի գնում→չգնացող:

Կաղապարային $s/a_2/a^v$ բաղադրիչն իրանում է, ինչպես սովորական, այնպես էլ, այսպես կոչված, դերբայական ածանցների միջոցով: Քննենք նախ վերջիններս: Սրանք իմաստով և գործածույթյամբ միջին տեղ են գրավում բուն ածանցների և վերջավորությունների միջև՝ ալ/-ել, -ած, -ող, -ալիլ/-ելիլ (-լիլ), -ալիս/ելիս (-լիս). նախ՝ -ած-ը և -ալիս/-ելիս-ը կարող են մասնակցել վերլուծական (այսպես կոչված, բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ) ձևերի կազմությանը՝ որպես յուրատեսակ բայահիմքեր՝ ֆնած եմ, գրած եմ լինում, գալիս եմ. գր-ելիս եմ լինում. զնալ-զալ ունեւ, զնացող չեմ, զարմանալի է ուղի ձևերի դեպքում էլ աղապիսի արժեք են ձեռք բերում մյուս ածանցները. երկրորդ՝ դերբայները պահպանում են դիմավոր ձևերի սեռային (գր- և գր-վ-, խոս- և խոս-եցն-) և, ինչպես կտեսնենք, ժամանակային (հաջորդականություն՝ գրած, գրող, գրելի) տարբերությունները. երրորդ՝ դերբայների մեջ հանդես են գալիս ներկայի և կատարյալի հիմքերի կազմության առանձնահատկությունները (հմմտ. մերձ-են-ալ, մտ-ն-ել, գն-աց-ող և այլն դերբայական ձևերը, որոնց մեջ առկա են բայահիմքային հատուկ տարրեր): Այս հանգամանքները, արմատահիմքի կազմության մասին ասածների հետ միասին, մի անգամ էլ վերկայում են, որ բառակազմության և բառաթերման սահմանները խիստ որոշակիություն մը չեն դժված. թեև ըստ իդեալական վիճակի բառը պետք է ընդգրկվի բառաձևի մեջ, բայց առանձին դեպքերում որոշ բառաձևեր որպես բառակազմական հիմքեր ընդգրկվում են բառի մեջ: Դեռ ամենին, բառաթեքական որոշ ձևեր ժամանակի ընթացքում կարող են բմբռնվել որպես բառակազմական ձևեր, բառի ձևաբանական հարապոցից անցնել բառակազմական հարապոցի մեջ, բառաձևից վերածվել բառի, և այս դեպքում վերջավորությունը, դուրս գալով իր հարապոցային ամբողջությունից, կարող է բմբռնվել որպես ածանց. հմմտ. համ-ով, ցալ-ով:


Դերբայական ձևերը մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են որպես բառակազմական ձևեր՝ իրենց հատուկ գործառական արժեքներով:

Հայերենի դերբայները գործառական՝ ըստ գոյականական շարույթի ո՞ր բաղադրիչի (անգամի) գործառույթում (գերում, պաշտոնում) հանդես գալու բաշխվում են հետևյալ կերպ.

Մակրայական	Ածականական	Գոյականական
ալիս -ելիս	ալիք -ելիք	ալ/-ել
	ող	
	ած	

Ինչպես մասամբ երևում է աղյուսակից, դերբայներն իրենց բաշխմամբ և բնույթով հավասարաբեկ չեն. 1) եթե մակերայական և գոյականական գործառույթով հանդես եկող դերբայները ժամանակային առումով միարժեք են, ապա ածականական դերբայները տարբերակված են ըստ ժամանակի (հաջորդականության). $-(ա/ե)լիք-ը$ ցույց է տալիս հաջորդում ($ժ \leftarrow$), $-(աց)ող-ը$ ՝ համընկում ($ժ \rightarrow$) և $-(աց)ած-ը$ ՝ նախորդում ($ժ \rightarrow$). 2) եթե գոյականական և մակերայական դերբայները վերաբերում են իրեն իսկ գործողությանը (ընդ որում գոյականական դերբայը հանդես է գալիս որպես գործողություն առում և հոլովում), ապա ածականական դերբայները վերաբերում են գործողության կողմերին (ակտանտներին)՝ ենթակային (սուբյեկտին) կամ առարկային (օբյեկտին), այսինքն՝ բնութագրում են այդ կողմերն ըստ գործողության, ընդ որում հաջորդայինը՝ միայն առարկան, նախորդայինը և համընկականը (ըստ սեռային տարբերակման)՝ թե՛ ենթական և թե՛ առարկան (նախորդայինի հակամարդեպի առարկան). հմմտ. Հակոբյանը երգում է արիան $\rightarrow$ ա) Հակոբյանի՝ արիան երգելը, բ) Հակոբյանի՝ արիան երգելիս, գ) Հակոբյանի երգելի (f) արիան, դ) արիան երգող Հակոբյանը և Հակոբյանի կողմից երգվող արիան, ե) արիան երգած Հակոբյանը և Հակոբյանի կողմից երգված արիան (Հակոբյանի երգած արիան). 3) մակերայական $= (ա/ե)լիս$ դերբայը հանդես է գալիս ժամանակային արժեքով՝ ցույց տալով մի այլ գործողության հետ ժամանակով համընկնող գործողություն. այսպիսի գործողություն է ցույց տալիս նաև անորոշի գործիականը՝ այն տարբերությամբ, որ առաջին դեպքում բուն և ուղեկցող գործողության ենթակաները կարող են տարբեր լինել, երկրորդ դեպքում՝ ոչ. հմմտ. Հակոբյանը երգելիս գրում էր և Հակոբյանի երգելիս ես գրում էի, բայց միայն Հակոբյանը երգելով գնում էր. վերջին դեպքում հնարավոր է ժամանակային տարբերակում՝ նախորդում (Հակոբյանը երգած լինելով՝ նաև գրատանում էր), և, տեսական հնարավորությամբ, հաջորդում (Հակոբյանը երգելու լինելով՝ նաև գրատանում էր):

Եթե մենք գծագրով ներկայացնենք սերող նախադասության անդամների (R ՝ հարաբերյալ, հարաբերվող կողմ, այդ թվում՝ R_1 ՝ ենթակա, R_2 ՝ ուղիղ խնդիր, r ՝ հարաբերիչ, գործողություն) և նրա հետ հարաբերվող շարույթի անդամների (S ՝ գոյական, A ՝ ածական, A^v ՝ մակբայ) կադապտացիոն սխեմաները, ապա նրանց և համապատասխան դերբայական ցուցիչների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.



Ակնհայտ է, որ ածականական ածանցները կունենան միաժամանակ և՛ գոյարանական-իմացաբանական (պատճառայնության կարգի), և՛ լեզվական արտահայտության (կախման կարգի) եզրերի նիշեր.

- ալի-ել՝ $\vee$ լիկս $\rightarrow$
- լիս՝ $\vee$ լիկս $\leftarrow$
- լիք՝ $\vee$ պ $\leftarrow$ լիկս $\rightarrow$ — (ժ $\leftarrow$)
- ող՝ $\vee$ պ $\rightarrow$ լիկս $\rightarrow$ — (ժ $\rightarrow$ —)
- վող՝ $\vee$ պ $\leftarrow$ լիկս $\rightarrow$ — (ժ $\rightarrow$ —)
- ած՝ $\vee$ պ $\rightarrow$ լիկս $\rightarrow$ — (ժ $\rightarrow$)
- ված՝ $\vee$ պ $\leftarrow$ լիկս $\rightarrow$ — (ժ $\rightarrow$)

Անցնելով կաղապարային $S/a_2/a^v$ բաղադրիչն իրացնող գերբայական ածանցներից բուն ածանցներին՝ զեվար չէ նկատել, որ դրանք մասամբ կազմավորված են հենց գերբայական մասնիկների հին և նոր գործածությունների բազայի վրա՝ ունենալով որոշ հավելական տարրեր. այսպես, -ած-ի բաղայի վրա կազմվել են՝ -ածո (բածո, նանածո), -ածու (ծողովածու, հավաքածու), ածխ(հյուսվածք, գրվածք). նշենք, որ հնից եկող գթած, ողորմած ձևերը ունեն «գթացող», «ողորմացող» իմաստները: Քանի որ լրացուցիչ Բ-ով ածանցները ընկալվում են միասնաբար, որոշ դեպքերում էլ ընդհանրապես առանց Բ-ի չեն գործածվում, հետագա քննության մեջ դրանք կառնվեն որպես միասնական ածանցներ:

Ամենից առաջ առանձնացնենք այն ածանցները, որոնք գործառական գրիթե հավասարարժեք են գերբայական ածանցներին և բայահիմքերից կերտում են գոյականներ, ածականներ և մակբայներ:

Անորոշ կոչված -ալ/ել գերբային ամբողջովին կամ մասամբ հավասարադոր, բայց ավելի որոշակի գոյականական գործառությամբ բայանուններ կերտող ածանցներ են՝ -ալիք (մասամբ՝ սպառնալիք «սպառնալը»), -անակ (մասամբ՝ հաղթանակ = հաղթույթյուն «հաղթելը»), -անդ (եռանդ), -անք (աշխատանք, հալածանք), -ար (մասամբ՝ սպառնար), -արք (գործարք, լուծարք), -ափ (քարքափ, սաքսափ), -եստ (մասամբ՝

գովնստ), -ինն (նախատինն, փորհարինն), -իստ (հանգիստ), -իք (ավետիք, ընթրիք «ընթրելը» իմաստով, կարծիք), -մունն (Հմմտ. -ում. մասամբ՝ ցուցմունն, զգացմունն), -յուն (բնաձայն հիմքերի զեպքում՝ դրդյուն, հնչյուն, շշնջուն, քրքմնջուն), -ոց (մասամբ՝ ծակոց, կրակոց, փշոց, հատկապես բնաձայն հիմքերի՝ զեպքում՝ բզբոց, գոռոց, ծղրտոց), -լած (մասամբ՝ հարված), -ուքյուն (մասամբ՝ առգաւնու-
րյուն, բարկուրյուն, զոհաբերուրյուն), -ում (ընթերցում, խափարում, հարուցում, կենդանացում, հավաստիացում), -ույք (մասամբ՝ զայ-
րույք), -ունդ (մասամբ՝ ծնունդ), -ուստ (մասամբ՝ գալուստ, բախուստ, կուրուստ, փախուստ), -ուրդ (մասամբ՝ հազուրդ, պաշարուրդ), -ուց-ի (այրուցի, մոլուցի), -ի (խոսի, հայացի):

Այս ածանցների իմաստի մեջ հաճախ տեղի է ունենում տեղաշարժ, և դրանք, ինչպես կտեսնենք, միևնույն գոյականական գործառությամբ նշանակում են ոչ թե հարաբերությունն ինքը՝ գործողությունը (այսինքն՝ հանդես են գալիս ոչ թե իրեն բայանուններ), այլ հարաբերության միջոցը (կիս→, այսինքն՝ այն, ինչ կախման մեջ է գրվում գործողության ենթակայից և կախման մեջ գնում գործողության առարկան) և արդյունքը կամ ելքը (կիս←, այսինքն՝ գործողության կախյալ առարկան, այն, ինչ հանդես է գալիս որպես գործողության արդյունք):

Ածականական դերբային համարժեք ածանցները մասամբ հանդես են գալիս միևնույն ածականական արժեքով, մասամբ, ինչպես այս դերբայների դեպքում (Հմմտ. գրող, ուսանող և այլն), գոյականա-
նում են. վերջին զեպքում էլ նկատելի է իմաստային երկու տարբերակ. անձերի նկատմամբ կիրառվելու զեպքում այս ածանցները -ող-ի նման արտահայտում են գործողություն կատարողին, այսինքն՝ բնութագրում են կախորդի (կիս→) գործառութիւնը հանդես եկողին (Հմմտ. երգող, գրող, գնացող և այլն), իրերի նկատմամբ կիրառվելիս նրանք արտահայտում են գործողության միջոցը, մի առարկա, որ կախման մեջ գրվելով բռն կախորդից (գործողությունը կատարողից) ինքն իր հերթին հանդես է գալիս որպես կախորդ գործողության առարկայի նկատմամբ, այսինքն՝ որպես կախյալ՝ գործողություն կատարողի, և կախորդ՝ գործողության առարկայի նկատմամբ, վերջին հաշիւով՝ որպես գործողության փոխանցող (կիս→): Մենք տեսանք, որ այս գործառությունը մասամբ հատուկ էր նաև տնտրող դերբայի -ալ/-ել ածանցին փոխարինողներին, բայց համապատասխան իմաստային տեղաշարժով: Ածականական -ող մասնիկին ամենից ավելի մերձավորը և տարածվածը -իչ-ն է, որի մեջ, սակայն, գերակշռում է երկու գործառութիւններից (գործողությունը կատարողի՝ կիս→, և գործողության միջոցի՝ կիս→)

երկրորդը. այսպես, անձերին վերաբերող երգիչ, ցրիչ (= երգող, ցրող) ածանցյալների կողքին առկա են բրիչ (բրելու միջոց, գործիք), գրիչ (գրելու միջոց, գործիք) և այլն ածանցյալները: Ի տարբերություն -ող-ի՝ -իչ-ը չունի կրավորականի ձև (կա -վ-ող, բայց չկա *վ-իչ), բայց գրաբարից եկող պատճառական մասնիկի (-ույց-, անշեշտ դիրքում՝ -ուց-) օգնությամբ (երբեմն նախորդող -աց-, -եց- հիմքատարրերով) չեզոք բայերից նույնպես կարող է կազմել գործիքի կամ միջոցի անուններ՝ ջեռուցիչ, բազմացուցիչ, տախտակաչի: -իչ-ը -ող-ի նման կարող է հանդես գալ և՛ ածականական, և՛ գոյականական գործառույթյամբ. ածականական գործածությունից համար հմմտ. խանգարիչ, համոզիչ, սպանիչ, այլև հեղծուցիչ, ստորացուցիչ և այլն:

-ող-ին և -իչ-ին համարժեք գոյականակերտ և ածականակերտ (վերջին դեպքում, ի տարբերություն -ող-ի, տեական և ոչ ժամանակավոր հատկանիշ արտահայտող) մյուս ածանցները, սովորաբար գործառույթյան ավելի նեղ ոլորտով և մասամբ այլ գործառույթով, հետևյալներն են՝ -ալի (բանալի), -ածու (մասամբ՝ փայլածու), -ակ (գիտակ և արգելակ, մանրադիտակ, վերելակ), -ական (մասամբ՝ վիճակական, ֆենական), -աղ (թակաղ, կախաղ-ան, փակաղ-ակ), -ան (խցան, կարկատան, կռան), -աստ (զգաստ), -ավոր («ունեցող» իմաստային երանգով՝ բողոքավոր, նպաստավոր, սգավոր), -արան (մատուցարան, նվագարան), -արար (հավաքարար և կործանարար, փրկարար), -արիչ (կափարիչ), -աֆ (թանաֆ), -ելի (ածելի, հայելի), -ելիֆ (հաշակելիֆ), -իկ (անառիկ, թափանցիկ, թափառիկ, շրջիկ, ինչպես նաև -աց, -եց, -ուց հիմքատարրերով՝ մուրացիկ, սլացիկ, ազդեցիկ, երգեցիկ, բռուցիկ, պայքուցիկ), -ին (կապին, հատին, պատին, ուտին), -իֆ (գործիֆ. հմմտ. և խաղալիֆ), -լան (մասամբ սաստկականություն և հաճախականություն երանգով՝ զուժկան, լալկան, լացկան, մրսկան, որսկան), -կոտ (թուլացնող երանգով՝ դանդաղկոտ, պարծենկոտ, վախկոտ, փութկոտ, -աց հիմքատարրով՝ մոռացկոտ), -ման (ելման, եմման, լալման, վառման), -նակ (կոչնակ, սխնակ), -ոն (գործոն), -որդ (ժառանգորդ, լողորդ, հակառակորդ, հավորդ, որսորդ), -ոց (ծածկոց, ջնջոց, ֆուրց), -րի (բերրի), -ու (ալցելու, կծու, հասու, հատու, այլև բարդ հիմքերով՝ անարկու, ծաղրածու, վերակացու, տարփածու, վորձառու. վերջիններս մեջ բարդություն երկրորդ բաղադրիչները -ու-ով հանդերձ փաստորեն ածանցակերպների արժեք ունեն), -ուկ (դիպուկ, հատուկ, այլև կուժկոտուկ), -ույր (կափույր), -ուն (գնայուն, զգայուն, խոհուն, ծոռուն, կարկաչուն, փայլուն), -ուչ (ընկալուչ, վայելուչ, սրտառուչ, տեսուչ):

Որոշ ածանցյալներ կատարում են -ած-ին, հատկապես սրա կրավոր-
 քական ձևին (-ված-ին) մոտ գործառույթ՝ սովորաբար ածանցյալի տե-
 ղադարձով ածականից գոյականի. հնից եկող -ված-ը, ի տարբերու-
 թյուն բուն դերբայական կրավորական -ված-ի (գրված, դրված, տրված
 և այլն) և սրանից կազմված -վածո-ի (հյուսվածո, հողվածո, քաղ-
 վածո), ցույց է տալիս ինքնին գործողության գոյականացված ելքը կամ
 արդյունքը (կիս←)՝ զանգված, հարված. սակայն այս արժեքն ավելի
 որոշակի և տարածված է գոյականացնող -ե-ի հարադրությամբ՝ -վածք
 ածանցով՝ գրվածք, շինվածք, կառուցվածք, ունեցվածք և այլն: Այս-
 պիսիք են նաև -ած պարունակող և մասամբ արդեն հիշված -ածո,
 -վածո և -ածու ածանցները՝ բաժո, հանածո և ժողովածու, հավաքա-
 ծու. -ածու-ից է -ծու-ն շինծու բառի մեջ: Քանի որ ժամանակային
 տարբերությունը այս դեպքում երկրորդային է, այս իմաստը կարելի
 է համազոր համարել կրավորականի արժեք ունեցող -ալիք/-ելիք և -վող
 դերբայական ածանցների իմաստներին. այս ածանցներից երկրորդը
 ինքնուրույն ածանցյալներ չի տալիս, բայց առաջինի բազայի վրա կաղ-
 մրված են -ալի(-ք), -ելի-ք ածանցները՝ բանալի և ստանալիք, գիտե-
 լիք (մասամբ այլ արժեքով): Սրանց համազոր են նաև հին -արիմ
 (հավատարիմ), -ո (արգո, հանո) ածանցները: -(վ)ած-ի արժեք ունի
 գրաբարի դերբայական -յալ ածանցը (սրանից է ծագել ժամանակա-
 ձևերի կազմության մասնակցող -ել-ը), որ հանդես է գալիս գրաբարից
 պատրաստի ձևով ժառանգված ձևերի մեջ՝ առաջյալ, երդվյալ, կատա-
 յալ, հանդերձյալ, հավելյալ, օրհնյալ, ննջեցյալ և այլն (-ել-ի համար
 հմտ. մեռել): Մասամբ նաև այլ արժեքով և մասամբ միայն այս գոր-
 ժառույթով հանդես եկող այլ ածանցներից նշենք հետևյալները՝ -ալս
 (շաղախ), -անդի (վտարանդի), -աստ (իմաստ), -եստ (ուտեստ), -իլ
 (խաշիլ, կարիլ, տեսիլ), -մունք (բաժանմունք), -ոն (թափոն, կտրոն),
 -որ (բեկոր, հատոր), -ուրյուն (աշխատություն, գործություն), -տակ
 (փառտակ), -ուն (բրդուն, քաղկուն, կտրուն), -ույք (դրույք, հասույք),
 -ույք (դրույք), -ուն (մածուն), -ունդ (ելունդ, սերունդ), -ուստ (ելուստ),
 -ուր (քափուր), -ուրդ (ժողովուրդ, խառնուրդ), -ուց (ուռուց), -ուք
 (ֆերուք): Վարձկան բառի մեջ -կան-ն ունի «-ված անձ» իմաստը:

Մասամբ -լիք-ի և մասամբ -(վ)ած-ի արժեք ունի -ովի ածանցը՝
 բաժանովի, կարովի, կիսովի, հանովի, պնդովի, ջրովի, վարովի, գոյա-
 կանացած՝ ֆաշովի: ✓

Մենք վերևում տեսանք, որ ածականական դերբայների -ած, -ող
 և, որոշ վերապահությամբ, -լիք ածանցները բայերից կերտում են այն-
 պիսի ածականներ, որոնք վերաբերում են ոչ թե անմիջապես գործո-

դուլթյանը, այլ գործողին կամ գործողության առարկային. տեսանք նաև, որ այս նույն գործառնությունը հանդես են գալիս մեծ քանակությամբ արտադրողական (գործուն, կենսունակ) և ոչ արտադրողական (ոչ գործուն, անկենսունակ) կամ, այլ մոտեցմամբ, մեծաքանակ հիմքեր և սակավաթիվ կամ նույնիսկ եղակի հիմքեր ընդգրկող ածանցյեներ: Իսկ կա՞նք ածականական այնպիսի ածանց, որ ածականացնելի հենց ինքը՝ բայի նշանակած գործողությունը: Որպես այդպիսի ածանց հայերենում հանդես է գալիս հիմնականում -ական-ը՝ դուգակցվելով բայական տարբեր հիմքերի հետ՝ աղերսական, գննական, խաղաղական, հալածական, սպառնական. գնացական, հիացական, բացասական, համակրական, հուսանատական և այլն: Այս -ական-ը հետագայ փոխկապակցմամբ կարող է գոյականանալ և արտահայտել գործողին՝ ախորական, Վգաղթական, օգնական և այլն:

Եթե բայահիմքերից ածանցված դերբայական և ոչ դերբայական ածանցները բնույթով քիչ թե շատ միասնական են, ապա նույնը չի կարելի ասել մակբայների մասին: Ինչպես տեսանք, մակբայական դերբայի արժեք հաղորդող լին ածանցը պարունակում է համաժամանակության լրացուցիչ իմաստ (ժ→—). մակբայական արժեք հաղորդող անորոշի գործիականի -ով վերջավորությունը ցույց է տալիս համընթաց գործողություն և կարող է բնութագրվել կազմի կարգի հիմնական՝ հավելական եզրով (կզ→)՝ երգելով գնում էր = գնում էր + երգում էր (երգելու հետ միասին գնում էր): Ոչ դերբայական բնույթի մակբայակերտ ածանցները ղգալիորեն մոտ են վերջինին (բայց ոչ լիսին)՝ այն տարբերությամբ, որ լրացուցիչ գործողությունը այս դեպքում ներկայացվում է որպես բուն գործողության ձև՝ -ախ (հաճախ՝ ղուգակցված հ<յ նախդրի հետ), -(ա)բար (ենթադրաբար, պատահաբար, ֆենադատաբար), -ա-ցին (սաստկության երանգով՝ աղերսագին, տանջագին, ցնծագին, ընդ որում սրանք կարող են հանդես գալ նաև որպես ածականներ՝ բնութագրելով համապատասխան փոխկապակցմամբ սերված բայանունները՝ աղերսագին նայում էր→աղերսագին նայվածք (հայացք), ցնծագին դիմավորում էր→ցնծագին դիմավորում), -այն (եղակի գործածությամբ՝ լոելայն, որ կազմված է լոելի-ից՝ ի>յ անցմամբ), -(ա)պես (հաղվազեպ՝ բացառապես, զգայապես), -որեն (ֆենադատորեն, այլև ածականակերտ -ական-ի միջնորդությամբ՝ պատահականորեն):

Այժմ մի քանի խոսք այն ածանցների կամ ածանցական գործածությունների մասին, որոնք արտահայտում են լրացուցիչ իմաստներ. 1) -անակ-ը սովորական գործածության հետ միասին (հաղթանակ = հաղթություն, հաղթելը) մեջանակ բառի մեջ ունի բազմիմույթ արժեք՝

նշանակելով մրցության Լիթի գնահատումը (հաղթողին տրվող պարգև)։
 2) —աբան—ը սովորաբար ցույց է տալիս տեղ (տ—)՝ արգելաբան,
 վարժաբան, ավելի սովորական է նրա գործածությունը գոյականական
 հիմքերի հետ։ 3) —ա—գին—ը, ինչպես նշվեց, ցույց է տալիս գործողու-
 թյան սաստկությունը (ուժգնությունը)՝ զայրագին։

Մենք —բա—ն և —ցե—ն պայմանականորեն դրեցինք ածանցների մեջ,
 բայց դրանց գործածությունը կարելի է հասկանալ նրանց բուն արժեքը
 նկատի ունենալով. առաջինը հին բառ «ասում եմ» բայի հիմքն է և
 խաբեբա բառի մեջ հենց այդ արժեքն ունի (հմմտ. ստախոս)։ —ցե—ն
 հին հայերենի՝ ստորագասական համարվող ապառնիի երրորդ դեմքի
 կադմիչ է, որ կեցցե—ի մեջ պահպանում է իր հին իմաստը («թող ապ-
 րի»), հասցե—ի մեջ՝ ոչ. վերջին դեպքում բառը գոյականացել է։

Անցնելով առաջնային տարասեռ կաղապարներից երկրորդային-
 ներին՝ մենք պարզում ենք հետևյալը։ 1) լայածանց ածականները վե-
 րածանցվում են ոչ միայն $Va_2(s/a^v)$, այլև, դերբայների դեպքում,
 $Va_2(a_3)(s/a^v)$ ձևով, այսինքն՝ բայածանց գոյականների և ածականների
 համար փաստորեն գործում է $Vs/a_2(a_3)(s/a^v)$ ընդհանրացված կաղա-
 պարը։ 2) բայածանց մակրայները չեն վերածանցվում։

Բայական հիմքերից ածանցված գոյականներից ու ածականներից
 նոր ածականներ, գոյականներ ու մակրայներ կերտող, այսպես կոչ-
 ված, երկրորդային վերջածանցները հիմնականում համընկնում են
 առաջնայինների հետ՝ ի հայտ բերելով հետևյալ մասնակի տարբերու-
 թյունները։ 1) համանիշ ածանցներից երկրորդային գործառնությամբ
 հանդես են գալիս սովորաբար մեկը կամ երկուսը, որոնք կարող են
 որպես առաջնային ածանցներ կամ լայն գործածություն չունենալ (հմմտ.
 —այլիւ, —որեւն), կամ գործառնությամբ գրեթե համարժեք լինել (հմմտ.
 —ուրջուն), կամ էլ որպես առաջնային ընդհանրապես չգործածվել (հմմտ.
 —չեւ)։ 2) սակավադեպ գործածվող՝ միայն մեկ կամ մի քանի լայա-
 հիմքի կցվող առաջնային ածանցները որպես երկրորդային հանդես գալ
 չեն կարող. գ) դերբայական բուն ածանցները որպես երկրորդային
 հանդես գալ չեն կարող. դերբայական ածանցները կարող են հանդի-
 սել բերված ածանցներից հետո միայն —ան—, —ացն—, —ալոր— լայակերտ
 ածանցների միջնորդությամբ։

Բայական հիմքից առաջնային s ածանցով կերտված գոյականների
 վերածանցման դեպքում a_3 -ն իրանում է հիմնականում —այլին, s_1 -ը՝
 —ուրջուն, a^v -ը՝ —աբար, —ապես և —որեւն ածանցների միջոցով՝ վեր-
 ջիններիս տարբերակմամբ անմիջական և միջնորդված տիպերի մեջ։
 Նշենք, որ —ալ/—ել դերբայական ածանցը հաղվադեպ է ենթարկվում

երկրորդային ածանցման և այն էլ միայն -s-ից (-ութուն) առաջ և հավասիկ օրինակներ տարբեր տիպերի համար.

sa₃¹ հաղթանակային, աշխատանքային, գործարհային, զգացմուն-
ֆային, հարվածային, պարսպուրդային.

ss₁ (իրանում է միայն s=-ալ -ել տիպում)¹ ատելություն, խաշե-
լություն¹.

sa^v (հաղվահեղ)¹ գործարհորեն, զգացմունհորեն.

sa₃ss₁¹ զգացմունքայնություն, հարվածայնություն.

sa₃a^v¹ զգացմունքայնորեն, հարվածայնորեն:

Բայական հիմքից առաջնային a₂ վերջածանցով կերտված ածական-
ների վերածանցման դեպքում a₃-ն իրանում է -ական, s₁-ը՝ -ություն,
հաղվահեղ -չեֆ, a^v-ը՝ -աբար ածանցների միջոցով.

a₂a₃¹ հանդուրժողական, ձգողական, պատժողական.

a₂s₁¹ հարբածություն, հոգնածություն, մրսածություն, նեխածու-
րյուն, գոհողություն, ձգողություն. հանդուրժելիություն, պատժելիու-
թյուն, բողոքականություն, անադիկություն, դանդաղկոտություն, լալ-
կանություն. գողչեֆ, կարողչեֆ.

a₂a^v¹ հանդուրժողաբար, ձգողաբար, պատժաղաբար, հոգնածաբար,
դանդաղկոտաբար.

a₂a₃s¹ հանդուրժողականություն, ձգողականություն.

a₂a₃a^v¹ հանդուրժողականաբար, (հանդուրժողականորեն):

Նշենք, որ -ողական տիպի կազմությունները երկարժեք են. մի
դեպքում դրանք վերաբերում են գործողին և հակադրվում են առանց
-ող-ի ձևերին, որոնք նշում են գործողությունը՝ ընտրողական—ընտրա-
կան. այլ դեպքերում այդ տարբերությունը չեզոքանում է, և -ողա-
կան-ը որպես միակ ձև վերաբերում է հենց գործողությանը՝ սպասո-
ղական, խուսափողական (չկան սպասական, խուսափական):

Նկատենք, որ, ինչպես ցույց տվեցին բերված բանաձևերը, երբեմն
կարծեք անմիջական անցում է կատարվում գոյականից մակբայակերտ
ածանցին՝ առանց ածականական ածանցի միջնորդության. այս դեպ-
քում արտաքինապես խախտվում է մեր ՈՂ←→ՈՂ←→Մ բանաձևը,
բայց իրականում այստեղ մենք գործ ունենք «ներքին» բառակազմու-
թյան (արտաքինապես չարտահայտված օղակի), համեմատության կամ
փոխաբերության հետ:

¹ Սրանք կարող էին դիտվել որպես դարբարյան -եալ-ով կազմություններ (համա-
եղեալ-եղելություն), բայց առնմ բայն ունի առեցեալ անցյալ դերբայը:

6. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻՑ ԱԾԱՆՅՎԱՆ ԲԱՌԵՐԻ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՅՈՒՄԸ

ա. Համասեռ կաղապարներ

Մնալով դոյականական բառակազմության բնագավառում՝ մենք կունենանք գոյականական հիմքերից ածանցված դոյականների հետևյալ ընդհանուր կաղապարը.

$$(S_1) S(S_2)(S_3):$$

Կաղապարային S_1 բաղադրիչի իրացումները գերակշռող մեծամասնությամբ համընկնում են բայական համասեռ կաղապարի V_1 և V_2 բաղադրիչների իրացումների հետ: Բայական V_1 բաղադրիչի հետ համընկնող իրացումները նշանակում են դոյականական համապատասխան հիմքերով արտահայտված անձերի կամ իրերի գոյություն կամ վիճակի ժամանակը (բայահիմքերից ածանցված երկրորդական դոյականների զեպքում՝ զրանց բուն ժամանակը)՝ սովորաբար նախորդում (ժ→).

Նախ(ա)՝ նախահայր, նախամայր, նախամարդ և այլն. սրտ հետ միասին առկա է նաև տարածական իմաստ՝ նախագուռ:

Ժամանակային արժեք ունի նաև օտարազգի է.ս- մասնիկը՝ է.ս- չեմպիոն, նույնիսկ է.ս-նախագահ, է.ս-ֆարսուղար:

Հաղվագիպ միայն հակառակ իմաստը (ժ←) տալիս է հետո- նախածանցը՝ հետևելու, հետմիջոցե բառերի մեջ:

Բայի կաղապարային V_2 բաղադրիչի իրացումների հետ համընկնող գոյականական նախածանցները գործառնալու երկարժեք են՝ կազմելով ինչպես գոյականներ, այնպես էլ ածականներ: Վերջիններիս քննությունը թողնելով տարասեռ կաղապարներին նվիրված հատվածին՝ այստեղ նշենք այն նախածանցները և նախածանցակերպները, որոնք շին փոխում դոյականների խոսքիմասային արժեքը, այսինքն՝ գոյականներից նոր գոյականներ են կերտում և ունեն իմաստահատվելական արժեք. գոյականական հիմքերի մոտ զրանք մեծ մասամբ արտահայտում են տարածական իմաստներ և զգալի թվով զեպքերում պատճենումներ են՝ անդր- (Անդրկովկաս՝ ի հակադրության այժմ չգործածվող Այսրկովկասի-ի, որպես պատճենում ռուս. Закавказье բառի. ավելի սովորական է գործածությունը ածականակերտ ածանցներով հիմքերի հետ, որոնք կնշվեն տարասեռ կաղապարների քննության ժամանակ), առաջ(ա)- (առաջաբան, առաջադուխ, առաջագունդ, առաջամուտ, առաջակողմ), առաջ(ա)- (առաջխաբհ, առաջապարիսպ, առաջահաման), բաղ(ա)- (բաղաձայն՝ հին պատճենում հուն. σῆμα-φωσος ի օրինա-

կով, բաղակույտ), գեր- (գերմարդ և գերքրվովկ` -ուկ ածանցով), դեր- (դերանուն, դերբայ, դերծովակալ, դերկոմս, դերհյուպատոս), ենք(ա)- (ենթաբարբառ, ենթարուդ, ենթագլուխ, ենթախումբ, ենթակերտ, ենթաներկ, ենթասպա, ենթատեխտ, ենթատիպ), հակ(ա)- (հակաալիք, հակաբևեռ, հակագագ, հակաթույն, հակացիկլոն), համ(ա)- (համա-կարգ), հար(ա)- (հարանուն), մակ(ա)- (մակարույս, մակակետ, մականուն, մակաշերտ, մակբայ, մակերես), միջ(ա)- (միջամաս, միջավայր), ներ(ա)- (ներակենտրոն, ներգիծ), պար(ա)- (պարագիծ), ստոր(ա)- (ստորակետ, ստորուղի), վեր(ա)- (վերակազմ «երկրորդ անգամ արված կազմ», վերակարգ՝ ռուս. *напрямъ разоръ* պատճենումը), տար(ա)- (տարաշխարհ), տրամ(ա)- (տրամագիծ, տրամաչափ, տրամաշափ), փոխ(ա)- (փոխանուն, փոխարեա, փոխգնդապետ, փոխնախագահ):

Այս նախածանցները և նախածանցակերպները գերազանցապես մենիմուլթ են, այսինքն՝ արտահայտում են համընդհանուր լիզվարանական կաղապարի մեջ առանձնացվող մեկ կարգի մեկ եզրի իմաստ: Այդպիսի կարգեր են կազմը, կախումը, ուղղությունը, չափը, տեղը, ընդ որում տեղը երբեմն կարող է փոխանակվել դասի կարգի հետ, եթե նշանակում է ոչ թե զուտ տեղը, այլ այդ տեղը գրավող բաղադրիչը:

1) Տեղի իմաստ (մասամբ դասի կարգի հետ առնչվող)

տեղ→՝ առաջ(ա)-, նախ(ա)-

տեղ←՝ հետ(ա)- (հետն-)

տեղ↑՝ մակ(ա)-, վեր(ա)-

տեղ↓՝ ստոր(ա)-, ենթ(ա)-

տեղ→₁՝ միջ(ա)-

տեղ→₃՝ ներ(ա)-

տեղ⊃₂՝ պար(ա)-

տեղ⊃₃՝ արտ(ա)-

իրադրական տեղ→՝ անդր-

2) տարածական (տեղային) չափի իմաստ

չափ→՝ բաց(ա)-, տար(ա)-

չափ←՝ առ(ա)-, հար(ա)-

չափ←՝ տրամ(ա)-

3) ուղղություն

ուղղություն⊃՝ հակ(ա)-

4) կախման իմաստ

կախում $\rightarrow$ գեր(ա)-

կախում $\leftarrow$ ստոր(ա)-

5) կազմի իմաստ

կազմ $\rightarrow$ բաղ(ա)-, համ(ա)-

կազմ $\leftarrow$ գեր(ա)-, փոխ(ա)-

Կազմապարային S₃ բաղադրիչի իրացումները հետևյալ ածանցներն են՝ -ակ (առվակ, բլրակ, լնակ), -ան (ղղման), -այ (փմայ), -(ա)նոց (ծաղկանոց, մեղվանոց, արհեստանոց, զոգնոց), -(ա)յան (ախոռապան, գինեպան, դոճապան, ձիապան, պարտիզպան, սալլապան), -ապանակ (գրհապանակ, դրամապանակ, քղքապանակ, լանջապանակ, ծայրապանակ), -առ (մանգառ, գետառ), -ա-ստան (Հայաստան, Վրաստան, լեռնաստան, ծառաստան, վարդաստան), -աստի (նավաստի), -(ա)փո (արհեստավոր, սալվոր), -ար (գալար, կերպար, մրար, տիպար), -աբան (քեյարան, սրնարան), -ա-վանդ (դարավանդ, սարավանդ), -արկ (ակնարկ, ձեռնարկ), -(ա/ե)ցի (երևացի, գյուղացի, փողափացի, իրացի, խորհրացի, սարեցի, վաճեցի), -ացու (հարսնացու, սերմ(ն)ացու, փեսացու), -եզ (-ես) (կոնզեզ, -ես), -եղեն (ամանեղեն, ապակեղեն, կաթնեղեն), -եմ (մասամբ՝ համեմ), -են (մասամբ՝ ծվեն), -ենի (բալենի, բնկուղենի, ալծենի, ոչխարենի), -ենիք (հայրենիք), -եր (նեններ), -երք (տղերք, մոտերք), -ի (մասամբ՝ քրի, ծիրանի, տանձի), -իկ (բշտիկ, քաքիկ), -ին (աղավին, կավին), -իք (արմաիք, հարսանիք), -կալ (բաժակակալ, ծովակալ, կուսակալ, մահակալ), -հար (-ահար՝ դաշնակահար, ջութակահար), -նակ (քննակ), -նոր (տկնոր), -ոմ (խորշոմ), -ոչ (խոռոչ), -ով (մասամբ՝ կաթնով), -ոտ (ծղոտ), -ոտի(ք) (ոսկրոտի, ծակոտի(ք), փորոտիք), -որայ (արտորայ, դեղորայ), -որշի (զոլորշի), -ոց (ծաղկոց, հնոց, ակնոց, քիկնոց, ձեռնոց, մատնոց), -ոցի (խնոցի), -ոք (փորոք), -ոքի (տակոքի), -ս (փուքս), -վար (-ավար՝ գործավար, գործվար, դեկավար), -րակ (փողրակ), -ուկ (գունդուկ, քարուկ), -ուկ (գառնուկ, իշուկ, հորքուկ, գեղջուկ, գորտնուկ, երիցուկ, կանեփուկ, սիւտորուկ), -ույկ (գրհույկ, պարույկ), -ունի (ծերունի, Արշակունի), -ուռ (ծակուռ), -ուտ (ավագուտ, եղեգնուտ, մացառուտ), -ունք (ակունք, քիկունք, հիմունք, շրթունք, սկզբունք), -ք (բաժինք, գիրք, հավատք):

Իմաստային առումով այս վերջածանցները կարելի է բաժանել Էրեբ խմբի:

1) առաջին խմբի ածանցները մենիմուլյի են՝ պարունակելով թվի, չափի և տեղի որոշակի կրկրի իմաստներ. ա) -եղեն, -երք, -իդ, -իք,

-նտի(ֆ), -որայֆ, -ունֆ, -ֆ ածանցները բնույթով մոտենում են թվանիշ վերջավորություններին՝ ունենալով հավաքականության իմաստ, այսինքն՝ նշանակելով բաղմունքունը (շատը) որպես հավաքական ամբողջություն (թ←→). բ) -ալ, -իկ, -ուլ, -ուկ, -ույկ ածանցները արտահայտում են փոքրացուցիչ իմաստ, այսինքն՝ ցույց են տալիս չափի փոքրություն (չ←). սա կարող է միանալ դրական (փաղաքշական) որոշ վերաբերմունքի հետ, որ պատկանում է նշանային իմաստների թրվին. քնդհակառակն, -ալ ածանցը փոքրացուցիչ-փաղաքշական իմաստի հետ միասին գրչակ, իմաստակ բառերում ունի բացասական վերաբերմունքի դրսևորում, որ նույնպես պատկանում է նշանային իմաստներին. գ) -(ա)նոց, -(ա)պանակ, -(ա)վանդ, -(ա)ստան, -առան, -ենիֆ, -ով, -ոց, -ացի, -ուտ ածանցները հիմնականում տեղանիշ արժեք ունեն, այսինքն՝ արտահայտում են այն տարածությունը, որի մեջ (ներսում) առկա է ինչ-որ առարկա (իր, անձ)՝ տՅЗ. -ուտ-ը ունի լրացուցիչ որոշ իմաստ՝ արտահայտելով պարունակելիների թվի շատությունը (թ→)՝ ավագուտ «շատ ավագ պարունակող», բայց այս իմաստը ոչ բոլոր դեպքերում է որոշակիորեն արտահայտված:

2) Երկրորդ խմբի ածանցները արտահայտում են գերազանցապես փոխկադապարված (փոխակերպված) բայական և բայակապակցական իմաստներ, որոնց մոնիստական վերլուծությունը բայական իմաստների քննության խնդիրն է: Սրանք մասամբ հենց ծագում են համապատասխան բայահիմքերից (բայարմատներից)՝ պահպանելով կամ ձևավորվելով սկզբնական իմաստները: Պատահական չէ, որ մեր «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ [Զաքուկյան, 1974, 262—265] մի շարք տարածված ածանցներ քննվում են հենց փոխկադապարման բաժնում: Իհարկե, փոխկադապարային կարելի է համարել նաև տեղանիշ արժեք ունեցող որոշ ածանցներ որպես «պարունակող», բայց հիմնական մասով այս ածանցներն ունեն «տեղ, պարունակարան» իմաստը: Բերենք փոխակերպված բայական և բայակապակցական իմաստ պարունակող գոյականակերտ ածանցները՝ -(ա)պան «պահող, -ով զբաղվող, -ի հետ գործ ունեցող», -առ «առած, եղած (բան)», -աստի «-ի հետ գործ ունեցող, -ի հետ կապված», -արկ «ընկնող. առնվող», -ավոր «ունեցող», -(ա/ե)ցի «-ից ծագող, սերվող, -ում բնակվող», -եմ «տվող, հաղորդակից անող», -ենի «սերող, առաջացնող, տվող» և «-ից ստացված», -ի «սերող, առաջացնող, տվող», -կալ (-ա-կալ) «պահող.-ի հետ գործ ունեցող», -հար (-ա-հար) «նվագող», -նոր «-ից պատրաստված», -որշի «-ի առաջացրած», -ում «ունեցող, պարունակող», -վար (-ա-վար) «վա-

րող», -ով «-ում ապրող, -ից սերող» (գեղջուկ) և «-ի հետ ինչ-որ բանով առնչվող» (երիցուկ, կանեխուկ), -ունի «-ից սերվող»:

3) Երրորդ խմբի ածանցները անարտադրողական, մեկ կամ երկու հիմքի մետաֆանդիպող ածանցներ են, որոնք ածանցական հիմքի նկատմամբ երբեմն որոշակի իմաստ չեն ավելացնում և ցույց են տալիս ընդհանուր վերաբերություն, երբեմն նմանություն, երբեմն էլ իմաստային մասնավորում: Սրանք պայմանականորեն են առանձնացվում որպես ածանցներ, մասնավորապես որ ածանցելի հիմքերը առանձին գեղջերու մեք գրական լեզվում ինքնուրույն գործածություն չունեն: Այսպիսի ածանցներից են՝ -այլ, -աւ, -եզ (-ես), -են, -նակ, -ոչ, -առ, -ոք, -նի, -րակ, -ույկ:

Կաղապարային S_3 բաղադրիչն իրանում է -ուրյուն, -ունի ածանցներով:

Սրանցից -ուրյուն-ը արտահայտում է հավաքականություն ($\leftarrow$ ՝ հայություն, գյուղացիություն) կամ ներկայացնում է լին-(ել) բայի փոխակերպումը գոյականի՝ լինելը = -ուրյուն՝ ղոնապանություն = դրոնապան լինելը: Այսպիսի հավաքական արժեք ունեն նաև -ենք, -անք մասնիկները, որ միջին տեղ են բռնում բուն հոգնակերտների և հավաքական մասնիկների միջև:

-ունի ածանցը գործածվում է միայն անձերի անուններից հետո, լինեն դրանք անածանց կամ ածանցավոր. ըստ համընդհանուր լեզվաբանական կաղապարի՝ այն ունի նախ՝ նշանայնություն հատկանիշով բնութագրվող տարր և ապա «սերող, ծնող» փոխկաղապարային իմաստը, որ պատճառայնություն կարգի միջին եղրի փոխկաղապարված դրսևորումն է (պլ→—՝ մեկի պատճառով դառնալ մի հրրորդի գոյանալու պատճառ): Այս ածանցը նույնպես միջին տեղ է զբաղում բառածանցական և բառաթեքական մասնիկների, այսինքն՝ ածանցների և վերջավորությունների միջև:

Դոյականական բառածանցման համասեռ կաղապարի բաղադրիչները կարող են տալ 1 անածանց, 3 մենածանց, 3 երկածանց և 1 բառածանց տիպեր.

S ՝ կին, հաց, տուն.

$S_1 S$ ՝ գերմարդ, ենթադրուի.

SS_2 ՝ ավազատ, տնակ.

SS_3 ՝ կնոթյուն, հայունի.

$S_1 SS_2$ ՝ գերթթվուկ հակազազանոց.

$S_1 SS_3$ ՝ գերկոմսոթյուն, գերկոմսունի.

$SS_2 S_3$ ՝ պարտիզականություն, պարտիզականուհի.

$S_1 SS_2 S_3$ ՝ գերթթվուկոթյուն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, ոչ բոլոր տիպերն են հավասարապես գործածական, և գոյություն ունեն զուգորդման մեծ թվով սահմանափակումներ: Սակավադեպ են մասնավանդ Յ₃ նախածանցով կազմված երկածանց և եռածանց տիպերը:

Վերևում բերված ածանցները քննելիս մենք, ըստ ընդհանուր սկզբունքի, սահմանափակվեցինք գոյականական հիմքերով. սակայն հարկավոր է նկատի առնել, որ նախ՝ որոշ ածանցներ կարող են դրվել այլ խոսքիմասային հիմքերից ածանցված գոյականների վրա, սրանց քննությունը կատարվում է ոչ թե բացի մասերին նվիրված հատվածներում (հմտ. գր-(ել)→գր-իչ→գր-չ-ակ, գր-չ-ուրյուն. իմ-(անալ)→իմ-աստ→իմ-աստ-ակ, իմ-աստ-ուրյուն). երկրորդ՝ հնարավոր են այնպիսի ներքին փոխկազմադրումներ, սրանց հետևանքով իրար մոտ կարող են հանդիպել երկու առաջնային ածանց. այսպիսի դեպքերում հարկավոր է նկատի ունենալ ներքին (չարտահայտված) օղակ. դասառանցի բառը փաստորեն բուն դաս-ից չէ, այլ դաս անել ձևից (դաս անել→դաս անելու տեղ, դասառան): Այսպիսով, բառակազմական հարցերը քննելիս արտաքին բառակազմության հետ միասին պետք է նրկատի առնել ներքին բառակազմության հնարավորությունը:

բ. Տարասեռ կաղապարներ

Գոյականական հիմքերից ածանցվող բառերի տարասեռ կաղապարները ևս երկու կարգի են՝ առաջնային և երկրորդային: Այս դեպքում էլ համասեռ կաղապարները հիմք են ծառայում առաջնային տարասեռ կաղապարների, սրանք էլ՝ երկրորդային տարասեռ կաղապարների համար: Միայն թե պետք է նշել, որ համասեռ կաղապարների վերջին Տ₃ բաղադրիչն ընդհանրապես չի մտնում տարասեռ կաղապարների մեջ:

Գոյականական հիմքերից կարող են կերտվել ածականի, բայի և, ներքին բառակազմական միջակա օղակի միջոցով, մտերայի առաջնային տարասեռ կաղապարներ:

Գոյականական հիմքերից ածականներ կերտող առաջնային տարասեռ կաղապարը բաղմանդամ է.

$$(a_1)(a_2)S(a_3):$$

Այս տարասեռ կաղապարի a_1 բաղադրիչն իրանում է, այսպես կոչված, ժխտական նախածանցներով, որոնք, սակայն, ավելի ճիշտ կլինեն կոչել բացառողական նախածանցներ. սրանք արտահայտում են

Հաջորդող գոյականական հիմքի բացառումը, այսինքն՝ ունեն կաղմբի կարգի հակադրական եզրի իմաստ (կղ←՝ «բացի, բացառությամբ») և միաժամանակ փոխում են հիմքի գործառական բնույթը՝ ունենալով ածականակիրտ առժեք:

ան՝ անաղմուկ «առանց աղմուկի», անատամ, անրիծ, անկարգ, անտեք, անաուն և այլն.

ապ(ա)՝ ապարդյուն, ապերջանիկ, ապաշնորհ, այլև երկրորդական գոյականներից՝ ապակենտրոնացում, ապախոշորացում և այլն՝ վերջին դեպքում առանց գործառական արժեքի փոփոխության.

դժ՝ դժբախտ, դժգույն և այլն.

տ՝ տգեղ, տձև և այլն:

Բացառղական արժեք է տալիս նաև տարա-ն տարաբախտ բառում: Այսպիսին է նաև ա-ն իրանական ծագման ակամա բառում (հմմտ. կամա-ակամա):

Կաղապարի ձև բաղադրիչն իրանում է մեծ մասամբ այն նախածանցներով, որոնք համընկնում են համասեռ կաղապարի S₁ բաղադրիչի իրացումների հետ և, այսպիսով, բնույթով երկգործառույթ են՝ արտ(ա)՝ (արտակարգ, արտակենտրոն, արտահերք), հակ(ա)՝ (հակաբու, հակիմաստ), համ(ա)՝ (համագաղափար, համաձև, համատեղ. վերջինս գործում է նաև մակբույաբար), հար(ա)՝ (հարակենտրոն «կենտրոնին մոտ գտնվող»), ներ(ա)՝ (ներաճն, ներուժ), ստոր(ա)՝ (ստորակարգ), տար(ա)՝ (տարակենտրոն, տարաձև, տարատոհմ): Կան նախածանցներ, որոնք գործածվում են միայն տարասեռ կաղապարներում՝ առ- (առձեռն՝ հնացած կաղմուքյուն. առափնյա, առժամանակյա, առօրյա ձևերը կարող են մեկնաբանվել որպես նախածանց-վերջածանցավոր կաղմուքյուններ), բաց(ա)՝ (բացահոն «իրարից հեռու հոնքեր ունեցող»): Սրանք արտահայտում են տարածական չափ՝ «մոտ» և «հեռու» (չ← և չ→): Նկատելի է, որ զեր- ածանցը այս ձևով գործածվում է համասեռ կաղապարում (զերմարդ), զերա- ձևով՝ տարասեռում (զերահրաշ), այսինքն՝ գործառական արժեք է ձևեր բերում հոդակալը:

Նախածանցների՝ գոյականական հիմքերի մոտ գործածվելու երկակի բնույթը հիմք է տվել այն բանի համար, որ բուն ածականներ կերտելու համար հաճախ գործածվում են ածականական վերջածանցների՝ ածականական արժեքը շեշտելու համար. ստացվում են յուրատեսակ նախածանց-վերջածանցավոր հատուկ կաղմուքյուններ՝ a₂Sa₃ կաղապարով, ինչպես վերևում հիշված առափնյա բառի դեպքում. հմմտ. նաև անդր-յան (անդրկասպյան, անդրկովկասյան, անդրշիրիմյան, անդրսփերիյան և այլն՝ անդրկովկասյան-ի կողքին, որ կաղմված է Ան-

դրելովկաւ-ից), արտ—յա (արտածամյա), գեր—ալին (գերատոմա-
լին), հակա—ական (հակառազմական), հակա—ալին (հակադեսանա-
լին), համ—ալին (համաշխարհալին), հետ—յա (հետնաշյա), միջ—ա-
լին (միջագգալին, միջաստղալին, միջհաղալին), միջ—յա (միջերկ-
րյա), ներ—ալին (ներատոմալին, ներմիջուկալին, ներհաղալին),
ներ—յա (ներգեղնյա), ստոր—յա (ստորգեղնյա, ստորերկրյա), վեր—
ալին (վերաստղալին, վերգերեզմանալին, վերերկրալին), վեր—յա
(վերգեղնյա):

Կազմապարտալին ա₃ բաղադրիչն իրանում է նախ՝ զրո ածանցով (գո-
յալեանական հիմքի ածականացմամբ), ապա հետևյալ ածականակերտ
ածանցների միջոցով՝ -ագ (վայրագ), -(ա)գին (վշտագին, ուժգին),
-ալիս (գալառական, գլուղական), -ալին (անուառալին, ծովալին),
-աւի (գեղանի, լեզվանի, մեծիքանի, Երկերեսանի, չորհուտանի), -անոց
(էջանոց), -առու (աշառու, մաառու), -ավետ (բուրավետ, խոտավետ,
հոտավետ), -ավոր (արատավոր, բախտավոր, մասնավոր, օրինավոր),
-արար (գոյականացման հակումով՝ գործարար, տնարար, կազմարար),
-արդ (գմբեքարդ, խորանարդ), -արեն/-երեն (գոյականական և մակ-
բայական գործածությամբ. հունարեն, շինարեն, հայերեն, վրացերեն),
-արիմ/-երիմ (հավատարիմ, ռիսերիմ), -ացու (մասամբ՝ մահացու),
գար- (լեզվագար, խելագար), -դի (անջրդի), -են (արծաթե, երկաթե,
պողպատե), -եղ (գունեղ, քիկեղ, ուժեղ), -եղեն (մասամբ՝ լուսեղեն,
խրեղեն, ոսկեղեն), -եղի (աղտեղի), -ենի (հնամենի), -ժեռ (ամպա-
ժեռ), -ժեռ (ախտաժեռ), -ի (աղի, ձրի, ջրի, ալի երկդիմի, երկ-
սալի), -կեն (ծակոտկեն, հյուսկեն, նանկկեն), -հար (-ահար՝ դիվա-
հար, կայծակնահար), -մած (-ամած՝ ամպամած, ծխամած), -յա (եր-
կաթյա, բավշյա. կապուտաշյա. եռոտնյա, երկօրյա, գեղափնյա, ծով-
Եզրյա, օտարերկրյա), -իկ (բարդ հիմքերի գեղքում՝ դեղնավորիկ, կար-
նատիկ), -իմ (ուշիմ), -ին (կարգին), -յան (առավոտյան, մայիս-
յան. բազմադարյան, երկլեզվյան. լենինյան), -ոտ (բրդոտ, բախճոտ),
-ոխ (խելոխ), -վար (-ավար՝ հողմավար), -վարի (հաղափավարի):

Միանցից «գուտ» գործածական բնույթի ածանցները հազվադեպ
են՝ -ական, -ալին, -յան, որոնց իմաստը կարող է մեկնաբանվել գեր-
բայական ձևով՝ «վերաբերող» կամ կապալին զուգորդությամբ՝ «հետ
կապված»՝ գլուղական «գլուղին վերաբերող, գլուղի հետ կապված»:
Միանցից առաջին երկուսը ավելի ընդհանուր բնույթի են, կարող են
հանդիպել ամենատարբեր հիմքերի մոտ և երբեմն փոխարինել իրար,
-յան-ը գրվում է գերազանցապես ժամանականիշ հիմքերի վրա՝ Բեն
արմատական բայահիմքերից հետո՝ -ական-ը և -ալին-ը հանդիպում
են գրեթե հավասար չափով, բայց նկատելի է, որ հ₂ ախյի գոյակա-

նակերս ածանցներով օժտված հիմքերի գեպքում ոչ անձնանիշ հիմքերի մոտ գործածական է -ային-ը՝ անձնանիշների մոտ՝ -ական-ը. լնակային, սարավանդային, մեղվաճեղային, քղթապանակային, ծառաստանային, քեյարանային, ակնարկային և այլն, բայց նավաստիական, ֆաղաֆցիական, ծովակալական, գեղջկական, ծերունական և այլն: Սրանով է բացատրվում, որ բայահիմքերից ածանցված գոյականների մոտ, որոնք, բնականաբար, մեծ մասամբ անձնանիշ են, գերակշռում է -ային-ը: Կան դեպքեր էլ, երբ զմվար է առավելություն տալ մեկնումեկին, ինչպես, օրինակ, -(ա)պան-ով բառերի գեպքում՝ պարտիզպանական — պարտիզպանային:

Ածականակերտ ածանցները գերակշռող մեծամասնությամբ արտահայտում են դերբայական զանազան իմաստներ, մասնավանդ որ դրանք զգալի մասով ծագում են բայական արմատներից և արմատահիմքային ձևերից՝ -ագ «գիշերող», -անի «ունեցող», -անոց «պարունակող», -առու «առնող», -ավետ «ունեցող», -ավոր «ունեցող», -աբար «սնող», -ացու «պատճառող, հարուցող», -գար «վնասված», -դի «եղող», -ե «-ից կազմված, պատրաստված», -արիմ/-երիմ «սլահող, ունեցող», -եղեն «-ից կազմված», -մետ «լցված», -ի «պարունակող, ունեցող», -խար (-անխար) «զարկված, խփված», -մած «պատած, ծածկված», -յա «-ից կազմված, պատրաստված», -իկ «ունեցող», -իմ «ունեցող», -ին «ունեցող, պահպանող», -ո՛վ «ունեցող», -վար «վարվող, քշվող»: Մի խումբ ածանցների գեպքում «ունեցող» իմաստն ուղեկցվում է «շատ» լրացուցիչ իմաստով՝ -(ա)ցին, -եղ (հմմտ. նաև -եղեն), -եղի, -ոտ:

Մի շարք ածանցներ ունեն նկարագրական բնույթի իմաստներ՝ հաճախ կապված սերող (ծնունդ տվող) ձևերի արտահայտած իմաստների հետ՝ -արդ «ձևի, ձև ունեցող», -մեռ «բայ գույնի», -կեն «ձևի, նման, հիշեցնող»:

Ի տարբերություն համասեռ կաղապար ունեցող բառերի՝ առաջնային տարասեռ կաղապարը չպետք է տա երկածանց և եռածանց տիպեր, որովհետև յուրաքանչյուր ածանցային բաղադրիչ ածական է կերտում գոչականական հիմքից. սակայն աճ- ժխտականը նախ, ինչպես կտեսնենք, կարող է երբեմն գրվել ածականների վրա և սրկորոգ՝ աջ տիպի ածանցները երբեմն երկգործառույթ են, ուստի հնարավոր է երկնախածանց տիպը: Այսպիսով, կունենանք հետևյալ տիպեր.

S (ածականացվող գոյական)՝ քար (սիրտ).

a₁S՝ անտուն.

a₂S՝ համաձև.

Sa₃՝ անտառային.

a₁a₂S՝ անհավիտառ:

Գոյականական հիմքերից բայահիմքերի ածանցման առաջնային տարասեռ կաղապարը ածականների համապատասխան կաղապարի համեմատությամբ ավելի սակավանդամ է՝

S(v):

Կաղապարի V բաղադրիչը իրանում է առաջին հերթին դրո ածանցով, այսինքն՝ գոյականական մի շարք հիմքեր կարող են անմիջականորեն հանդես գալ որպես բայական հիմքեր և ստանալ ինչպես զերբայական ու այլ կարգի ածանցներ, այնպես էլ բայական վերջավորություններ (հմմտ. պատ—պատել), ընդ որում ոչ միշտ է հնարավոր որոշել գոյականի և բայահիմքի առաջնային լինելը (հատկապես գործողություն և վիճակ ցույց տվող գոյականների դեպքում):

Կաղապարի V բաղադրիչն իրանում է երկրորդ հերթին —ան— (չեզոք բայերի դեպքում) և —ացն— (ներգործական բայերի դեպքում) ածանցների օգնությամբ, որոնք գործում են նաև բուն բայական հիմքերի կաղապարներում՝ առաջ բերելով սեռային տարբերություններ (իման—իմաց—). հմմտ. եղբայր—ան—(ալ), ծով—ան—(ալ) և եղբայր—ացն—(ել), ծով—ացն—(ել): Նշենք, որ այս —ացն—ը, բաղարկվելով օտաբաղգի —ացի(ա) ածանցի հետ, հնարավորություն է տալիս սրանով օժտված գոյականներից բայահիմքեր կազմել՝ մոբիլիզացիա—մոբիլիզացն—(ել):

Կաղապարի V բաղադրիչը երկրորդաբար կարող է իրանալ ածականական այնպիսի ածանցների միջոցով, որոնք ստանում են բայական ինքնուրույն ածանցների արժեք՝ «գոյականական հիմք→(ածական→)բայական հիմք» սխեմայով: Այսպիսին է առաջին հերթին —ավոր—() ածանցը՝ քն—քնավոր—քնավոր—(ել), բայց և կոմպլեկտ—կոմպլեկտավոր—(ել) (չկա կոմպլեկտավոր միջակա ձևը): Այս նույն ձևով էլ գործում է —ատ— ածանցը՝ գլուխ→գլխատ→գլխատ—(ել), բայց և մաս—մասնատ—(ել), տող—տողատ—(ել) (չկան մասնատ, տողատ ածականները): Նկատելի է, որ —ավոր—ը և —ատ—ը արտահայտում են կազմի կարգի երկու հակադիր եզրերի իմաստ՝ առաջինը՝ հավելում, օժտում (կզ→), երկրորդը՝ բացառում (կզ←):

Ավելորդ չենք համարում նշել, որ, ինչպես ածականների դեպքում, բարդությունների՝ բայահիմքերով ներկայացված երկրորդ բաղադրիչները կարող են ընկալվել որպես ածանցներ (ածանցականության արժեք ունենալ). այս դեպքում դրանք կարող են դիտվել որպես վերևում բերված «գոյականական հիմք→(ածական→)բայահիմք» կաղապարի իրացումներ. այդպիսիք են հատկապես —հար բայահիմքով կազմությունները՝ ցուրտ→ցրտահար→ցրտահար—(ել), բայց, առանց ածականական օղակի, հարուստ→հարստահար—(ել), սլազ→սլոզահար—(ել) և

այլն. այս արժեքն ունի նաև -կալ բայահիմքը՝ նարպ→նարպակալ-(ել), մաղ→մաղակալ-(ել), շաֆար→շաֆարակալ-(ել) և այլն:

Գոյականական հիմքերից մակբայներ կարող են կերտվել, բնականաբար, միջնորդված կերպով՝ ածականների և բայահիմքերի միջնորդությամբ: Ածականների միջնորդությամբ կերտվող մակբայների մասին խոսք կլինի ստորև՝ երկրորդային տարասեռ կաղապարների քննության կապակցությամբ: Այստեղ խոսենք այն կաղապարի մասին, որ արտաքինապես ունի S(a^v) տեսքը: Սակայն իրականում այստեղ տեղի ունի կամ ածականի փոխկաղապարային անցում մակբայի, կամ S-ը միաժամանակ բայահիմք է, կամ գործում է S(v(a^v)) բանաձևը, որտեղ v-ն առկա է ենթադրելի (իմպլիցիտ) կերպով (ըստ հին քերականների տերմինի՝ «գործությամբ»), այսինքն՝ ենթադրվում է գոյականի հետ միասին նրա վիճակը, գործողությունը, վարքը և ընդհանրապես բայական որևէ միջնորդված իմաստ: Այսպիսով, գոյականական հիմքերից մակբայներ կամ մակբայատիպ վերաբերական բառեր են կերտվում մի շարք ածանցների միջոցով, որոնք գալիս են հոլովական նախկին վերջավորություններից, մասամբ էլ ունեն «ձևով, նըման, կերպով» իմաստը: Սրանցից -(ա)գին-ը և -վարի-ն երկգործառույթ են՝ կերտելով հավասարապես և՛ ածականներ, և՛ մակբայներ. հոմա. ուժգին հարված և ուժգին հարվածեց, փաղափալարի մարդ և փաղափալի ասաց: Մյուս ածանցներն են՝ -ա-բար (գազանարար, ընկերարար, հեռաբար), -անց (երեսանց, սրտանց, շապկանց), -ավ (բընավ, իրավ), -ա-պես (մարմնապես, նյութապես, պաշտոնապես), -աբեմ/-երեմ (հունարեմ, շինարեմ, հայերեմ, վրացերեմ. ինչպես նշվել է, սրանք կարող են գործածվել նաև ածականաբար և գոյականաբար), -աց (կամաց), -որեմ (ասպետորեմ, բնազդորեմ, հրապարակորեմ), -ոք (իրոք, մտոք), -ս (ծառս), -ու (ամոքու), -ուր (մանկուր), -ուստ (երկուստ):

Այս ածանցները, գոյականական հիմքերի գործառական փոխկաղապարում կատարելով հանդերձ, արտահայտում են մի շարք լրացուցիչ իմաստներ, որոնք հավասարապես են կապային և հոլովական իմաստներին: Քանի որ կապերի իմաստային վերլուծության արդյունքները հրապարակված են առանձին հոգվածով [Ջանուկյան, 1985] և բերված այս գրքի առաջին մասում, դրանք հանգամանորեն չեն քննվի: Ինչ վերաբերում է հոլովական իմաստներին, ապա դրանց վերաբերյալ ռադիկալ կարգին համառոտ տեղեկություններ:

Վերևում բերված ածանցների մեջ արտահայտված են, մասնավորապես, պնտ (կերպ, ձևով) կապի և բացառական ու գործիական հոլովաձևերի իմաստներ. առաջինը ունի ձևի համեմատության միջին

եզրի արժեք (ձՀմ→—), այսինքն՝ արտահայտում է հատկություն ընդհանրությունը. այս արժեքը կարելի է վերագրել առաջին հերթին —ա—բար, —ուրեն ածանցներին՝ (գազանաբար—գազանի պես, ասպետորեն—ասպետի պես), որոշ վերապահությամբ նաև —ս—ին, որը ծագումով հոլովական վերջավորություն է, և —արեն/—երեն—ին, որի իմաստը մասնավորվել է՝ հայերեն՝ հայի պես→հայի լեզվով: Մնացած ածանցներից —ա—պես—ը իր բնույթով պետք է նման իմաստ արտահայտեր, բայց փաստորեն արտահայտում է կախման հարաբերություն, հատկապես նշանային կախման կախյալը (նշկխ←)՝ «վերաբերմամբ, առումով» իմաստով՝ մարմնապես—մարմնի նկատմամբ, մարմնի առումով: Մյուս ածանցներն արտահայտում են գերադանցապես բացառական և գործիական հոլովների, երբեմն սրանցով դրվող կապերի իմաստներ: Նշենք, որ բացառականը հիմնականում արտահայտում է ուղղություն կարգի անջատման եզրը (ուղղ←), գործիականը՝ նույն կարգի միջին (ուղղ→) կամ, երբեմն, համատեղող եզրը (ուղղ↔), ընդ որում սրանց հետ կարող են հանդես գալ նաև այլ զուգորդված իմաստներ. —անց «-ից կամ -ով» (սրտանց=սրտից կամ սրտով, շապկանց=շապիկով), —ավ «-ուլ» (հետագա վերաիմաստավորմամբ՝ բնավ, հարկավ), —աց «-ով» (կամաց—կամով, իմա՛ր ըստ կամաց «իր կամքին թողնելով»՝ իմաստափոխությամբ՝ «դանդաղ»), —ո՛ւ «-ով» (մտո՛ւ=մըտո՛ւմով), —ու «-ից» (ամոքո՛ւ=ամոքից, լրացուցիչ պատճառական առումով՝ սլ→), —ուք «-ից» (մանկուք=մանկուց՝ լրացուցիչ ժամանակային առումով), —ուստ «-ից» (երկնուստ=երկնից):

Ինչպես կտեսնենք ածականների քննության ժամանակ, գոյականական հիմքերից կերտված ածականներից կարող են կերտվել նոր գոյականներ կամ մակբայներ՝ ըստ A(S/a^v) բանաձևի: Որպես գոյականակերտ S ածանց կարող է հանդես գալ —ուրյուն—ը, որ, այսպիսով, ըստ դիրքի կհամընկնի համասեռ կաղապարի S₃-ի հետ. հմմտ. գավառական—գավառականություն, լեզվանի—լեզվանիություն, բուրավետ—բուրավետություն: Ածականական հիմքերից մակբայներ է կերտում գերազանցապես —ուրեն ածանցը՝ ուժգին—ուժգնորեն, երկերեսանի—երկերեսանիորեն, երկդիմի—երկդիմորեն և այլն: Առանձին դեպքերում այդ դերը կատարում է —ա—պես—ը՝ մասնավոր—մասնավորապես:

7. ԱՍՏԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻՑ ԱԾԱՆՅՎԱԾ ԲԱՌՆՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՅՈՒՄԸ

ա. Համասեռ կաղապարներ

Ածականական հիմքերից կերտվող ածանցավոր ածականներն ունեն հետևյալ կաղապարը.

$$(a_1) \wedge (a_2):$$

Կաղապարային a բաղադրիչը ներկայացված է սակավաթիվ նախածանցներով՝ ան- ժխտականով և գեր- ու, խիստ մեծ վերապահության, քեր- ածանցներով, որոնք կարող են դրվել միայն սահմանափակ թվով ածականական հիմքերի վրա. այս դեպքում ան-ը, հակառակ գոյականական հիմքերին նախորդող ան-ի, արտահայտում է ոչ թե բացառում («առանց»՝ կաղմ←), այլ ամբողջական ժխտում և հավասարազոր է ոչ-ին՝ ազատ—անազատ (= ոչ ազատ). ան-ի այսպիսի գործածությունը հատուկ է գրքային ոճին: Գեր- նախածանցը արտահայտում է որակի հավելականություն, քեր-ը՝ սակավություն. սրբանք համազոր են համեմատության → և ← եզրերին. գեր-ի այս գործողությունը գերազանցապես օտարադգի կաղապարի պատճենման արդյունք է (հմմտ. ռուս. архисовременный—գերժամանակակից)՝ գերազնիվ, գերաբազ, գերնոր և այլն: Համեմատարար քիչ է տարածված հակադիր իմաստով քեր-ի գործածությունը՝ քերառույջ, քերերշանիկ. ավելի սովորական է այս իմաստով կիս(ա)— ածանցակերպի գործածությունը՝ կիսաքեթե, կիսախավար, կիսաերշանիկ և այլն: Գույների դեպքում գեր-ը և քեր(ա)-ն փոխարինվում են մուգ ածականով և բաց ածանցակերպով՝ մուգ կարմիր, բաց-կարմիր:

Կաղապարային a_2 բաղադրիչը իրացվում է հետևյալ ածանցներով՝ -ակ (կլորակ, այլև հաջողակ, ձախողակ), -ական (անմահական, արդիական, իգական, նվազական, մտերմական), -ակի (շեղակի, ուղղակի), -աշ (աղվաշ, քրվաշ, մառդաշ), -ավոր (կեղծավոր, զգուշավոր), -ավուն (երկարավուն, կանաչավուն, կարմրավուն), -աւար (բարեւար, կեղծարար, նորարար), -արծի (թավարծի), -դիկ (շլդիկ), -եմի (վաղեմի), -մեռ (-ա-մեռ՝ կապտածեռ, կարմրածեռ), -մեռ (-ա-մեռ՝ նենգածեռ), -իկ (լավիկ, լսիկ, մանրիկ, մաերմիկ), -ին (դժվարին, դյուրին), -լիկ (կաղիկ, հաստիկ, չաղիկ), -նի (գաղտնի), -շի (բոլորշի, լայնշի), -ոգ (նորոգ), -ոտ (հիվանդոտ), -ութի (սնոտի, օտարոտի), -որակ (ղեղնորակ, սառնորակ, սևորակ), -որդ (ձախորդ), -ոք (բարձոք, բորբոք), -չտին (խավարչտին), -ո-իկ (հաստիկ), -ուլ-իկ

(կարճովիկ), -ուկ (երկարուկ, կամացուկ, տափուկ), -ունկ (խորունկ), -ունչ (ամտերունչ):

Այս ածանցները միարժեք չեն. 1) մի մասը ցույց է տալիս ածականական հիմքով արտահայտվող որակի ամփնի կամ սակավ լինելը (հմ→ և հմ←) և այս տեսակետից մոտենում է համեմատության աստիճաններ արտահայտող ձևերին. մասնավորապես հավելական կամ ուժեղացնող արժեք են տալիս -եմի, -ին, -չտին, -ունկ, -ունչ ածանցները. սակավական-փոքրացուցիչ արժեք են արտահայտում նաև գոյականական հիմքերի վրա դրվող ածանցները՝ -ակ, -իկ, -ուկ, այլև -աչ, -ավուն, -մեռ, -շի ածանցները. 2) ինչպես -ակ, -իկ, -ուկ, այնպես էլ սրանց հիման վրա կազմված -դիկ, -լիկ, -ուլիկ ածանցները արտահայտում են դրական («փաղաքշական»), -դիկ-ը՝ բացասական վերաբերմունք. այս դեպքում մենք ունենք նշանային արժեքներ (զգացական արժեք՝ նշանային պատճառ՝ ← եզրով՝ լրացուցիչ գնահատողական իմուլթներով. 3) մի շարք դեպքերում ածանցելի ածականի և ածանցյալ ածականի միջև պետք է ենթադրել միջնորդված գոյականական իմաստ՝ երբեմն հենց ածանցելի ածականի բաղադրի վրա կազմված (վերացական) գոյականին ածանցային համապատասխան իմաստի հավելումով՝ -աբար (նորաբար=նոր բան անող՝ ստեղծող), -արծի (քավարծի=քավ մագերով պատած), -մեռ (նեկագմեռ=նեկգուրջան հակված), -ուռ (հիվանդուռ=հիվանդուրյուն ունեցող, հիվանդանալու հակում ունեցող), -որակ (դեղնորակ=դեղին որակ ունեցող). 4) մի շարք դեպքերում ածանցը ցույց է տալիս այն կրող գոյականի բնույթը և փոխում ածանցելիի կապակցելիությունը՝ -ակ (հաշոլ գործ—հաշոլակ մարդ), -ական (անմահ մարդ, մտերիմ մարդ — անմահական ջուր, մտերմական վերաբերմունք), -ակի (ուղիղ գիծ—ուղղակի հարված), -որդ (ծախ կողմ—ծախորդ մարդ), 5) -ոգ-ը տալիս է գերբայական արժեք՝ նորոգ—նորոգված. 6) առանձին դեպքերում ածանցների գործածությունը պայմանավորված է ածանցելիի բնույթի միագրմամբ (հմմտ. գաղտնի) կամ առաջ է բերում ոճական արժեքի տարբերություններ:

բ. Տարասեռ կաղապարներ

Ինչպես մասամբ երևաց բայական և գոյականական հիմքերի ածանցման տարասեռ կաղապարների քննությունից, ածականական հիմքերից կերտվում են մի կողմից՝ գոյականներ, մյուս կողմից՝ մակբայներ ըստ բառակապակցության անդամների փոխկաղապարման $M \leftarrow M$ կամ, որ նույնն է, $a^v \leftarrow a \leftarrow S$ բանաձևի նկատի

ունենանք, որ ածականը ստորոգելիական դիրքում տարբերվում է բայից նրանով, որ շունի ընթացայնության հատուկ դրսևորում, այլ արտահայտում է երևույթը որպես յուրատեսակ մշտական հատկանիշ, ապա պարզ կլինի, որ բայանալու համար նա պետք է ստանա ընթացայնության հատուկ նիշեր՝ «դառնալ» բայի իմաստին համարժեք. այսպիսով, ածականի տարասեռ կաղապարը կարող է ունենալ և բայական հիմք կերտող գործառական ածանց: Ի մի բերելով այս բոլորը՝ կարող ենք սահմանել ածականական հիմքերից կերտվող այլ խոսքի մասերի հետևյալ տարասեռ կաղապարը՝

$$A (s/a^v/v):$$


Կաղապարային S բաղադրիչը ածականական հիմքերի դեպքում իրանում է հետևյալ ածանցներով՝ ալ (որձալ, ոլորալ, այլև ներհնալ, սահնալ), -իֆ (չարիֆ՝ բարիֆ-ի համարանությունը), -որդ (երկրորդային ածականական հիմքերի դեպքում՝ սուաշնորդ), -ուրյուն (ամբուրյուն, դամանուրյուն, նորուրյուն), -ուկ (կարմուկ, կոշտուկ), -ուտ (քալուտ, խալարուտ), -ուց (նեղուց, սպիտակուց, այլև դեղնուց), -ֆ (երկայնֆ, լայնֆ, խորֆ, հումֆ): Սրանցից միայն -ուրյուն-ը և մասամբ ֆ-ն են (երկայնֆ—երկայնություն, լայնֆ—լայնություն), որ կերտում են համապատասխան վերացական անուններ, այսինքն՝ ցույց են տալիս ածականի նշանակած հատկությունն ինքնին՝ գոյականացված ածականը որպես փոխկաղապարման (փոխակերպման) արդյունք: Մնացած դեպքերում ածանցներն արտահայտում են

տվյալ որակական հատկանիշով բնութագրվող առարկա (իր և անձ), հազվագեղ նաև տվյալ հատկանիշով բնութագրվող առարկայի տեղ (հմտ. քալուտ) կամ տվյալ հատկանիշով բնութագրվող տեղ (հմտ. խալարուտ), այսինքն՝ առկա է կրկնակի փոխկաղապարում (փոխակերպում): -ուրյուն-ի և մասամբ -ֆ-ի դեպքում տեղի է ունենում նախադասության և բառակապակցության անդամների՝ առարկան լայն է→(առարկայի) լայնֆը տիպի, իսկ մյուս ածանցների դեպքում՝ առարկան կոշտ է→կոշտ առարկան→կոշտուկը տիպի փոխկաղապարում: Եթե նախադասության ենթական նշանակենք R_1 -ով, ստորոգելին՝ R_2 -ով, հանդուցը՝ r -ով, բառակապակցու-

R_1
↓
(m)

r

R_2
↓
M



թյան լրացումը՝ Մ-ով, լրացյալը՝ Մ-ով, ապա կունենանք փոխկադու-
պարման հետևյալ սխեմաները.

Կադապարային α^v մակբայական բաղադրիչն իրանում է հե-
տևյալ ածանցներով՝ -աբար (արիաբար, հանդգնաբար), -ակի (քեթև-
կի, համառուակի, շեղակի), -(ա)պես (մեծապես, սառուգապես), -որեն
(խիզախորեն). սրանք ունեն «ձևով, կերպ» իմաստը և արտահայտում
են համեմատության միջին եզրը՝ միատեսակություն (հմ→—):

Կադապարային v բաղադրիչը, ինչպես գոյականների մեծ մասի
դեպքում, իրանում է -ան- ածանցով՝ չեզոք, և -ացն- ածանցով՝ ներ-
գործական բայերի համար:

Երկրորդային տարասեռ կադապարների կարող են կազմվել միայն v
ածանցի առկայության դեպքում՝ բայահիմքերին հատուկ առանձնա-
հատկություններով. հմմտ. մեծանալ, մեծացած, մեծացող, մեծանա-
լիս, մեծացածություն և այլն:

8. ԹՎԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻՅ ԱԾԱՆՑՎԱԾ ԲԱՌՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ԵՎ ՆՐԱՆՅ ԻՐԱՅՈՒՄԸ

ա. Համասեռ կադապարներ

Գործառական առումով հիմնականում համընկնելով ածականների
հետ՝ թվականները, հատկապես քանակական թվականները, հանդես են
բերում մի շարք առանձնահատկություններ, որոնք իրավունք են տա-
լիս դրանք քննելու առանձին. 1) գոյականի լրացումների մեջ տար-
բերվում են ածականներից իրենց կադապարային դիրքով՝ նրանց հետ
միասին հանդիպելու դեպքում զբաղեցնելով նախորդող դիրք. հմմտ.
երկու գեղեցիկ տուն. 2) որպես բառակազմական հիմքեր ունենում են
նաև միայն իրենց հատուկ ածանցներ. 3) ի տարբերություն ածական-
ների և մինչև այժմ քննված այլ խոսքի մասերի՝ նախաածանցներ չեն
ստանում, այլև չեն կարող անմիջաբար ստանալ, բացի մի և երկու
թվականներից, -ություն վերջածանցը. 4) առանձին դասերում ունեն
ածանցական արժեքի այնպիսի միավորներ, որոնք միջին դիրք են զրա-
վում հիմքերի և բուն թվականակերտ ածանցների միջև: Այսպիսով,
կարելի է սահմանել թվականական հիմքերից ածանցվող թվականնե-
րի հետևյալ կադապարը.

$$N(n_1)(n_2):$$

Կադապարի n_1 բաղադրիչն իրանում է առանձնակի չգիտակցվող,
ածանցի արժեք ստացած և երեք-ից ինը թվականներին կցվող -սուն/

-ասուն ածանցով, որ ունի «տաս անգամ» արժեքը և կերտում է տասնավորներ. ՈՈՒ-ը կունենա երեսուն, հիսուն (= *հինգսուն), վաքսուն (= *վեցսուն), ուքսուն, իննսուն (-սուն-ով) և քառասուն, յոթանասուն (-ասուն-ով) իրացումները:

Կաղապարի ՈՅ բաղադրիչը կունենա -բորդ/-երորդ (երկրորդ, երրորդ; չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և այլն)² և -ակի (երկակի, եռակի, քառակի և այլն), -ա-պատիկ (երկպատիկ, եռապատիկ, քառապատիկ) իրացումները, որոնք արտահայտում են կարգային անցում. առաջինը թվի կարգը փոխանցում է դասի, երկրորդն ու երրորդը՝ հաճախանություն կարգի «անգամ կատարված՝ եղած՝ դարձած» իմաստով:

ՈՈՒՈՅ տիպի իրանում է -երորդ ածանցի (ուքսուներորդ) և -աւ-պատիկ ածանցակերպի (ուքսունապատիկ), բայց ոչ -ակի ածանցի դեպքում:

բ. Տարասեռ կաղապարներ

Թվականական հիմքերից կերտվող բառերի տարասեռ կաղապարների մասին կարելի է խոսել միայն որոշ պայմանականությամբ. նախ՝ թվականական հիմքը բոլոր դեպքերում պահպանում է իր թվականական արժեքը, և, այսպես կոչված, տարասեռ կաղապարների դեպքում նկատի է առնվում բառերի միայն գործառական և ոչ բուն իմաստային արժեքը. երկրորդ՝ թվականը գործառական հարաբերակից է ածականին, և խոսել թվականներից ածականներ կերտելու մասին՝ նրշանակում է նկատի առնել մի կողմից՝ կաղապարային դիրքի տարբերությունը, մյուս կողմից՝ ածանցների՝ այլ դեպքերում դրսևորած՝ բուն ածականակերտ արժեքը: Ստացվում է փաստերի երկակի գնահատում, որ մեր կողմից որոշ դիջում է ավանդույթանք. ածական բառը գործածվում է մասամբ զուտ գործառական, մասամբ գործառու-իմաստային արժեքով որպես առարկայի որակական հատկության նշանակում: Այս վերապահումներով կարելի է տալ թվականական հիմքերի ածանցման հետևյալ առաջնային տարասեռ կաղապարը՝

$$N(s/a/a^v/v):$$

Կաղապարի S բաղադրիչն իրանում է -անոց (հնգանոց, տասանոց), -յակ (հնգյակ, տասնյակ), այլև մեկ դեպքում -ուրյուն (երկվուրյուն) ածանցի միջոցով: Սրանցից առաջինը, բացի գործառական արժեքից, արտահայտում է նաև թվականներով նշվող միավորներից կազմված

² Ավելորդ չէ նշել, որ տաս-ը բացի տասներորդ ձևից, ունի նաև տաս(ա)նորդ հին ղոյականացված ձևը:

ամբողջություն (կազմ)». —անոց—ը այս իմաստը մասնաւորում է սովորաբար դրամական և խաղաթղթային միավորների համար:

Կադապարի 2 բաղադրիչը իրանում է —ական և, որոշ վերապահությամբ, —ավոր ածանցների օգնությամբ, որոնք, ինչպես ցույց է տրվել, բառեր են կերտում ածականական և, ավելի լայն շահով, գոյականական հիմքերից. —ական—ը, որ քերականության դասագրքերում սովորաբար գնահատվում է որպես բաղական ածանց, ցույց է տալիս ամբողջությունների (կազմ) բաղադրիչների (կազմ.) հավասարաթվություն (թվհմ—), այսինքն՝ բոլոր ամբողջությունների՝ նույն թվով բաղադրիչները (մասերը, տարրերը)՝ երկուական «նկատի առնվող բոլոր ամբողջությունների մեջ նույն երկու թիվը կազմող բաղադրիչներունցող».—ավոր ածանցը դրվում է տաս անգամով նախորդից բարձր նշանակող թվականների վրա՝ տասնավոր, հարյուրավոր, հազարավոր, բյուրավոր և այլն՝ արտահայտելով «պարունակող» (մասնագիտորեն՝ ներառյալ նաև հիմքի թիվը, այլ դեպքերում՝ հիմքի նշած թվից ավելի):

«Թվական+գոյական» տիպի բարդ հիմքերը ստանում են լրացուցիչ —անի (երկերեսանի, չորհոսանի), —ի (երկդիմի) ածանցները՝ «ուներցող» իմաստով՝ —ավոր—ին մոտ արժեքով:

Կադապարի 2՝ բաղադրիչն իրանում է —իցս (երկիցս, երիցս = երկու անգամ, երեք անգամ), —կին (միայն կրկին = երկկին բառի մեջ) անարտադրողական ածանցներով, որոնք արտահայտում են հաճախչություն կարգի՝ մեկից ավելի դեպքերի կոնկրետ դրսևորումները:

Կադապարի V բաղադրիչն իրանում է ընդհանրապես անվանային հիմքերից բայահիմքեր կերտող —ան— և —ացն— ածանցների օգնությամբ՝ երկուան—(ալ), երկուացն—(ել). —ապատիկ—ով բառերի դեպքում —ան—ի փոխարեն կարող է հանդես գալ զրո ածանց՝ եռապատիկ—→եռապատկ—(ել):

Երկրորդային տարասեռ կադապարներ կարող են լինել թվականական հիմքերից կերտված գոյականների, ածականների և բայերի, բայց ոչ մակբայների համար:

Թվականական հիմքերից կազմված գոյականները կարող են վերածանցվել ածականական —ային ածանցի օգնությամբ՝ *հնգանոցային, *տասանոցային, հնգյակային, տասնյակային:

Թվականական հիմքերից կազմված ածականները կարող են վերածանցվել գոյականական —ուրյուն ածանցի օգնությամբ. այսպիսի կազմությունները հաղվադեպ են խթանում՝ *երկուականուրյուն, *տասնավորուրյուն: Ավելի սովորական է «Թվական+գոյական» հիմքերից ածականներ կազմող —անի— ածանցով բառերի վերածանցումը՝ երկերեսանիություն, երկդիմություն (*երկդիմություն):

Թվականական հիմքերից կերավող բայահիմքերից գոյականներ, ածականներ և թվականներ են կազմվում բայահիմքերի ածանցման սովորական կանոններով. հմմտ. եռապատկ-ել, եռապատկ-ում, եռապատկած և այլն:

9. ՄԱԿՐԱՅԱԿԱՆ ՀԻՄՔՆԵՐԻՑ ԱԾԱՆՑՎԱԾ ԲԱՌԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՅՈՒՄԸ

ա. Համասեռ կաղապարներ

Արմատական բնույթի մակբայական հիմքերը, ինչպես ցույց է տրվել զրբի առաջին մասում, սակավադեպ են, և սրանց սահմանադատումը ոչ միշտ է հնարավոր: Այստեղ գեր են խաղում մի շարք հանգամանքներ. 1) ոչ բոլոր դեպքերում է հնարավոր գծել արմատական մակբայների և արմատական ածականների սահմանը. արմատական շատ հիմքեր երկգործառույթ են, այսինքն՝ կարող են հաղնաժրապես գրվել և՛ գոյականների, և՛ բայերի վրա. մասնավորապես՝ շատ մակբայներ առանց ձևի փոփոխության կարող են գրվել համապատասխան բայանունների վրա. հմմտ. արագ, դանդաղ, ուղիվ և այլն. 2) որդի վիճակով որպես արմատական գիտակցվող շատ հիմքեր ֆարացած հոլովաձևեր և բաղադրյալ բառակազմական ձևեր են, սրանց դեռագրումը արմատական մակբայական հիմքերի մեջ որոշ պայմանականությամբ ունի. հմմտ. այժմ, արդեն, իսկույն, հանախ, հազիվ, վաղը, նախ, վաղուց և այլն. 3) մակբայների մեջ գրվող մի շարք բառեր գործածվում են որպես սպասարկու բառեր ու նույնիսկ նախածանցների, և սրանց զետեղումը մակբայների մեջ նույնպես պայմանական է. հմմտ. արդ, հեռու, հեռո, մոտ, ներս, շուրջ, վեր և այլն: Այսուհանդերձ ածականների և մակբայների սահմանադատման համար հիմք է տալիս համընդհանուր լեզվաբանական տեսությունը, ըստ որի ածականական իմաստները բնութագրվում են հիմնականում գոյորոշ կարգերով, մակբայականները՝ հիմնականում առգոյորոշներով (ժամանակ, հաճախանություն և այլն):

Ինչպես բազմիցս նշվել է, ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության՝ բառակաղապարության՝ կաղապարը բնութագրվում է բաղադրիչների՝ «լրացյալ↔լրացում↔ենթալրացում» ($M \leftrightarrow m \leftrightarrow m_1$) անցումներով, ուստի և մակբայի համար հնարավոր է ածանցման երկու հիմնական ուղղություն՝ «մակբայ→մի ալ մակբայ» և «մակբայ→ածական». երկրորդաբար ածականից կարող է կերտվել գոյա-

կան (ածականը կարող է գոյականանալ): Գոյական և ածական անունների կաղապարների քննությունը ցույց տվեց, որ գոյականներից գոյականներ և ածականներից ածականներ կերտող ածանցները, որոնք իմաստափոխական կամ իմաստահավելական արժեք ունեն, սովորաբար նախորդում են գործառական արժեք ունեցողներին: Այս ընդհանուր կանոնից բացառություն չի կազմում նաև մակբայական հիմքերի ածանցումը: Սրան ավելացնելով այն, որ մակբայներին նախածանցումը հատուկ չէ (ժխտումը տեղի է ունենում ոչ բառի օգնությամբ՝ աբազ—ոչ աբազ, հաճախ—ոչ հաճախ, հեռու—ոչ հեռու և այլն), կարող ենք տալ մակբայական հիմքերից նոր մակբայների ածանցման համասեռ կաղապարի հետևյալ բանաձևը.

$$A^{\vee}(a^{\vee})(a^{\vee}_1);$$

Կաղապարի $a^{\vee}$ բաղադրիչն իրանում է -ալի, -յաև, -ուկ, -ուստ ածանցներով, որոնք գործածության սահմանափակություն ունեն՝ դրվելով միայն որոշակի հիմքերի վրա. դրանցով կազմվող ամենատարածված $A^{\vee}a^{\vee}$ տիպի հիմքերը հետևյալներն են՝ հանկարծակի, հաճախակի, հավիտյան, կամացուկ, վերուստ: Նշված ածանցներից առաջին երկուսը, կարելի է ասել, հատուկ իմաստափոխական արժեք չունեն և շեշտում են հիմքերի գործառական արժեքը. ուկ—ը որպես ընդհանուր փոքրացուցիչ ածանց սակավացնում է հիմքի իմաստային արժեքը (համեմատության կարգի ← եզր), -ուստ—ը արտահայտում է ուղղության կարգի ← եզրը, այսինքն ցույց է տալիս ելակետ և համարժեք է հոլովական -ուց վերջավորությանը վաղուց բառի մեջ:

Կաղապարի $a^{\vee}$, բաղադրիչն իրանում է -աբար, -ապես, -որեն և, միայն մեկ հիմքի դեպքում, -ին ածանցներով: Սրանցից առաջին երեքը փաստորեն հավելուրդային են (իմաստային հատուկ փոփոխություն չեն կատարում) և, ինչպես նախորդները, դրվում են միայն որոշակի հիմքերի վրա. $Aa^{\vee}$, տիպի հիմքերից նշենք հախապես, արագորեն, ղանդաղորեն. $Aa^{\vee}a^{\vee}_1$ տիպի հիմքերից՝ հավիտենաբար, հավիտենապես, հանկարծակիորեն, հաճախակիորեն, հավիտենորեն: -ին—ը մակբայ է կերտում վերուստ հիմքից՝ տեղային իմաստը փոխելով հաճախանության իմաստի (հճ՞)՝ վերստին «կրկին, դարձյալ, երկրորդ անգամ». վերստին բառի համար փաստորեն գործում է համասեռ մակբայների կազմության՝ վերևում բերված կաղապարային բանաձևի մասնակի $A(a^{\vee}(a^{\vee}_1))$ կաղապարային բանաձևը, այսինքն՝ -ին—ը մակբայակերտ արժեք է ըստանում միայն -ուստ ածանցի դեպքում (հնարավոր չէ որպես մակբայ

վերին ձևը, որ ունի ածականի արժեք և, հետևաբար, տարասեռ կաղապար):

բ. Տարասեռ կաղապարներ

Ըստ վերևում բերված կախման բանաձևի՝ մակբայներից, որպես ենթալրացական բառերից, կարող են ածանցվել առաջին հերթին լրացական բառեր, հատկապես ածականներ, այսինքն՝ կունենանք մակբայներից կերտված բառերի

$A^v(a)$

առաջնային տարասեռ կաղապար:

Ըստ հիմքի բնույթի՝ հնարավոր է երկու տիպ՝ արմատական մակբայների դեպքում՝ $A^v a$ և ածանցավոր մակբայների դեպքում՝ $A^v a^v a$:

Կաղապարային a բաղադրի ը $A^v a$ տիպի մեջ իրանում է -ական (հաճախական, հավերժական, մշտական), -ի (արդի), -կոտ (դանդաղկոտ), -ոշ (դանդաղոշ), -որդ (նախորդ) ածանցներով: Սրանցից -կոտ-ը և -ոշ-ը, բացի գործառական արժեքից, ունեն նաև լրացուցիչ նշանային արժեք՝ դրվելով անձ ցույց տվող բառերի վրա՝ հակառակ դանդաղ հիմքի. հմմտ. դանդաղ ընթանալ→դանդաղ ընթացք և դանդաղկոտ մարդ, դանդաղոշ մարդ: Ածանցակերպի արժեք է ստացել նաև -ա-կա-ն, որի կա-ն գալիս է բայական կա- արմատահիմքից՝ մշտա-կա, մոտակա, շրջակա:

Ածանցավոր մակբայների դեպքում ($A^v a^v$) a -ն իրանում է -ական ածանցի միջոցով՝ հավիտենական՝ հավիտյան-ից:

Մակբայական հիմքերից կերտված ածականները կարող են վերածանցվել վերջիններիս համար բնորոշ $s/a^v/v$ բաղադրիչներով, այսինքն՝ տալ as , aa^v , av ածանցական բաղադրիչները: Սակայն մի կողմից՝ շնորհիվ որոշ մակբայների ածականական գործառության, մյուս կողմից՝ ըստ լեզվի խնայողական կարողության (միջին օղակի ղեղչման) հնարավոր է գոյականակերտ և բայակերտ ածանցի անմիջական հաջորդումը մակբայական հիմքին. այլ կերպ ասած՝ փոխտնակ ածանցական բաղադրիչների ($a(s)$) կամ ($a(v)$) հարաբերության փաստորեն առկա է (a) (s) կամ (a) (v) հարաբերությունը. հմմտ. արագ-ուրջուն և հաճախուրջուն (փոխանակ հաճախականություն): Նկատի ունենալով այս հանգամանքը և հաշվի չառնելով, որ ածանցավոր մակբայներին խիստ հաղվադեպ են անմիջաբար միանում նոր մակբայական ածանցներ, մենք կարող ենք տալ երկրորդային տարասեռ կաղապարի ոչ թե $A(a(s/a^v_1/v))$, այլ

բանաձևը:

Կաղապարի s բաղադրիչը բոլոր դեպքերում իրանում է -ուրյուն ածանցի միջոցով. ա) A^vs տիպ՝ արագուրյուն, զանգաղուրյուն, հավերժուրյուն, շատուրյուն, քուրյուն. բ) A^va^vs տիպ՝ հանկարծակիւրյուն, հանախակիւրյուն, հավիտենուրյուն. գ) A^vas տիպ՝ հանախականուրյուն, հավերժականուրյուն, զանգաղկանուրյուն, զանգալուչուրյուն. գ) A^va^vas տիպ՝ հավիտենականուրյուն:

Կաղապարի a^v բաղադրիչն իրանում է -արար, -ալես, -ոլեն ածանցների միջոցով, որոնք տալիս են գերազանցապես հավելուրդային կազմութուններ՝ ա) A^vaa^v տիպ՝ հանախականորեն, հավերժականորեն, մշտականորեն, զանգաղկուտարար, ֆղանգալուչարար. բ) A^va^vaa^v տիպ՝ հավիտենականորեն:

Կաղապարի v բաղադրիչը, ինչպես գոյականների և ածականների դեպքում, իրանում է մասամբ զրո ածանցով, մասամբ -ան- (չեզոք բայերի դեպքում) և -ացն- (ներգործական բայերի դեպքում) ածանցներով՝ խեթ-(ե), հանախ-(ե) և արագան-(ալ), արագացն-(ե), հանախացն-(ե), ընդ որում բայահիմքեր կարող են կերտվել ոչ բոլոր մակբայներից. մակբայական հիմքերից ածանցավոր մակբայներից ընդհանրապես բայահիմքեր չեն կերտվում. բացի արմատական տիպից, հնաբազմոր են ա) A^vv՝ արագան-(ալ), բ) A^va^vv՝ հանախակիւրան-(ալ), գ) A^vav՝ հանախականան-(ալ), դ) A^va^vav՝ հավիտենականան-(ալ) տիպերը: Բայական այս ձևերը կարող են վերածանցվել բային հատուկ կաղապարներով՝ տալով նաև երրորդային տարասեռ կաղապարներ:

10. ԳԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻՅ ԱԾԱՆՅՎԱԾ ԲԱՌԵՐԻ ԿԱԶԱՊԱՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ԻՐԱՅՈՒՄԸ

Լինելով ցուցա-իրադրական և ոչ անվանողական բառեր՝ գերանունները հազվադեպ են հանդես գալիս որպես ածանցելի հիմքեր: Այդպիսի արժեք ունեն անձնական ես, սուղացական յուր, ցուցական նույն, հարցահարաբերական ուր, երբ, ինչ, Լանի գերանունները: Ավելի որոշակի է ամբողջ, ամեն, այլ բոլոր, ինքն/ը և ինչ-ով բաղադրված ոչինչ բառերի բառակազմական արժեքը [Աբրահամյան Ս., 1956, 251—260], բայց դրանք մենք հանել ենք բուն գերանունների թվից:

Բառակազմական արժեքի տեսակետից գերանունները անմիօրինակ են, և նրանց համար հնարավոր չէ տալ բառածանցական մեկ

միասնական կաղապարային բանաձև: Եթե նկատի առնենք դերանվանական հիմքերը ըստ գործառական արժեքի, ապա գոյականական (լրացլալային), ածականական ու թվականական (լրացական) և մակբայական (ենթալրացական) դերանունների համար կարելի է սահմանել համապատասխան խոսքի մասերին հատուկ կաղապարային բանաձևեր՝ դերանուններին բնորոշ յուրահատկություններով: Դրանք կարելի է գնահատել որպես տարասեռ կաղապարներ: Գոյականական ես դերանվան համար գործում է բառածանցական $SP(a)(s/a^v)$ կաղապարային բանաձևը, որտեղ SP -ն գոյականական դերանունն է: SPa տիպի a բաղադրիչը սովորաբար իրանում է –ական ածանցի օգնությամբ՝ եսական (հմմտ. նաև ինֆն/ը, ոչինչ բառերի համար՝ ինֆնական, ոչնչական): SPs տիպի s -ն իրանում է –ուրյուն ածանցի միջոցով՝ եսուրյուն (հմմտ. նաև ինֆնուրյուն, ոչնչուրյուն): SPA^v տիպի a^v -ն իրանում է սովորաբար –աբար ածանցով՝ եսաբար (ինֆն/ը բառի դեպքում՝ նաև –ին ածանցով՝ ինֆնաբար, ինֆնին. հմմտ. նաև ոչնչաբար): $SPas$ տիպի a -ն և s -ն իրանում են վերևում բերված –ական և –ուրյուն ածանցներով՝ եսականուրյուն (հմմտ. նաև ինֆնականուրյուն, ոչնչականուրյուն): Վերջապես, $SPaa^v$ տիպի a -ն և a^v -ն իրանում են –ական և –որեն ածանցների միջոցով՝ եսականորեն (այս տիպը չի գործում ինֆն/ը, ոչինչ բառերի դեպքում):

Ածականական և թվականական արժեքի նույն, ինչ, ֆանի դերանունների համար ևս կարելի է տալ գոյականական դերանունների համար սահմանված $AP(a)(s/a^v)$ հիմնական բանաձևը՝ հիմքերի նրկատմամբ անհավասար և ածանցների փոքր-ինչ տարբեր իրացումով: APa տիպի a -ն այս դեպքում ևս իրանում է հիմնականում –ական ածանցի միջոցով՝ նույնական, ինչական, ֆանիական. յուր հիմքի դեպքում գործում է –ային-ը՝ հետագա գոյականացմամբ՝ յուրային: –ական-ի գործածությունը հարաբերակից է համապատասխան ածականական և թվականական հիմքերի հետ նրա ունեցած գործածությունը: APs տիպի s -ն ևս իրանում է –ուրյուն ածանցի միջոցով, բայց ոչ բոլոր հիմքերի դեպքում՝ նույնուրյուն. ինչ-ը կարող է ստանալ պատասխանելու բառի ածանցը՝ ինչանոց, ինչացու: APA^v տիպի a^v -ն իրանում է տարբեր հիմքերի համար տարբեր ածանցներով՝ –աբար (նույնաբար), –ովին (յուրովին). ինչ-ը այս դեպքում էլ կարող է ստանալ պատասխանելի բառի ածանցը՝ ինչերեն: $APas$ -ի a -ն իրանում է –ական, s -ն՝ –ուրյուն ածանցներով՝ նույնականուրյուն: $APaa^v$ տիպի a -ն իրանում է –ական, a^v -ը՝ –որեն ածանցներով՝ նույնականորեն:

Մակբայական դերանվանական հիմքերից երբ-ը և ուր-ը կարող են ստանալ, ըստ A^vPa^v կաղապարի, այժմ որպես ածանցներ գի-

տակցվող -եմն (երբեմն, ուրեմն) և -եմ (երբեմ, (ամեն)ուրեմ) մաս-
նիկները, որոնք հիմքերին տարբեր արժեքներն են հաղորդում. -եմն-ը
երբ-ին տալիս է հաճախականություն — եզրի («քիչ (մի քանի) անգամ»),
ուր-ին՝ նշանակալին պատճառականության — եզրի (հետևանքի) արժեք³.
-եմ-ը երբ-ին տալիս է ժխտական արժեք՝ ժամանակի նկատմամբ կի-
րառված («ոչ մի ժամանակ»), ուր-ին՝ նշանալին անորոշություն, ընդ-
որում ուրեմ-ը նոր գրական լեզվում առանձին չի գործածվում:

11. ՕՏԱՐԱԶԳԻ ՀԻՄՔԵՐ ԵՎ ԱԾԱՆՅՆԵՐ

Հայոց լեզվի զարգացման ժամանակակից փուլում մեծ շափերի է
հասել, այսպես կոչված, միջազգային բառապաշարի և հատկապես դի-
տալեխնիկական տերմինաբանության ներհոսքը: Այս կապակցությամբ
ստեղծվել են ածանցավոր ու անածանց ձևերի զգալի թվով հակադիր
զույգեր, և ածանցական մի շարք բաղադրիչներ սկսել են իմաստավոր-
վել: Եթե նախածանցների բնագավառում այդ իմաստավորումը՝ դեռ
թույլ է և սահմանափակվում է փոքրաթիվ զույգերով, ապա նույնը
չի կարելի ասել վերջածանցների մասին: Այս հանգամանքը նկատի
ունենալով էլ մենք օտարազգի նախածանցավոր կազմությունները զը-
րել ենք արմատացանկի մեջ, մինչդեռ վերջածանցավոր ձևերը միա-
վորել ենք համապատասխան հիմքերի հետ: Մյուս բոլորով հանդերձ՝
օտարազգի ածանցները հայերենում իսկական բառակազմական արժեք
ձեռք չեն բերել՝ այդպիսի արժեք նրանք կարող էին ձեռք բերել միայն
այն դեպքում, եթե դրվեին հայերեն հիմքերի վրա և ստեղծեին բա-
ռակազմական յուրատեսակ հնթահամակարգ: Սակայն օտարազգի ա-
ծանցները հայերեն հիմքերի հետ խիստ հազվադեպ են գործածվում: ✓

Ստորև ամենից առաջ բերենք օտարազգի նախածանցների այն-
պիսի օրինակներ, որոնցով կազմված բառերի մեջ առկա են ածանցա-
վոր և անածանց ձևերի հակադրություններ.

ամֆի- «շուրջը, երկու կողմից»՝ ամֆիթատրոն — թատրոն.

անտի- «հակա-»՝ անտիկաթոդ — կաթոդ, անտիցիկլոն — ցիկլոն
(հմտ. հակացիկլոն).

դե- «ապա-»՝ դեմոնտաժ — մոնտաժ.

դեդ- «ապա-, ան-, սխալ»՝ դեդինֆորմացիա — ինֆորմացիա.

էքս- «նախկին»՝ էքս-չեմպիոն.

³ Ուրեմն-ի գործառական տարբերությամբ. այն սովորաբար դիտվում է որպես-
շաղկապ և ոչ որպես մակրայ. այս տեսակետից հմտ. -աբար մակրայակերտը հե-
տևաբար բառում:

կո- «Համա-», հետ, միասին»՝ կոոպերատիվ — օպերատիվ, կոսինուս — սինուս, կոսանդենս — տանգենս.

կոն- «Համա-», հետ, միասին»՝ կոնֆեդերացիա — ֆեդերացիա.

կոնսեր- «Հակա-»՝ կոնսերվացիա — պահպանում. կոնսեր- «ենթա-», փոխ-՝ կոնսեր- ազմիրալ — ազմիրալ.

հիպեր- «գեր»՝ հիպերծայն — ծայն.

հոմո- «Համա-»՝ հոմոսեքսուալիզմ — սեքսուալ (= սեռական).

ուլտրա- «չափազանց, գեր-», օյնկոլոյա՝՝ ուլտրաժամանակակից — ժամանակակից, ուլտրամանուշակագույն — մանուշակագույն:

Այժմ բերենք հայերենում գործածվող օտարազգի բառերի մեջ համախառն հանդիպող վերջածանցական մասնիկները. սրանց մեջ գերակշռում են միջազգային տերմինաբանության տարրերը, հազվադեպ են ազանձին լեզուների ածանցներ (ուսա. — նիկ, թուրք. — ազր. — չի): Այս կապակցությամբ նշենք, որ բերվող նախածանցների գիտակցման վիճակը հայ խոսողների կողմից միատեսակ չէ. գրեթե բոլոր հանուր գիտակցում ունեցող ածանցների կողքին քիչ չեն աչիպիսիները, որոնք գիտակցվում են համեմատաբար նեղ շրջաններում և հատկապես մասնագետների կողմից.

ազ՝ լիմոնազ (հմմտ. լիմոն), ալլե մարմելադ, շոկոլադ, բրիգադ. — ած՝ կարճամետրած, կիլոմետրած, սակավալիտրած, ալլե մոնտած, շանտած.

ալ (տե՛ս և -իալ)՝ ինտերնացիոնալ, լիբերալ, կոմունալ, ռեզիտնալ, ֆորմալ.

անալ-ենա՝ դիվերսանա (հմմտ. դիվերսիա), էքսկուրսանա (հմմտ. էքսկուրսիա), կոնսուլտանա (հմմտ. կոնսուլտացիա), պրակտիկանա, սիմուլյանա, սպեկուլյանա, օկուպանա, տապիրանա, դիսլոմանա, լաբորանա, դոկտորանա. լեյտենանա, սերժանտ. ագենտ, ասիստենտ, պրեզիդենտ. կոնտինգենտ.

առ՝ ժողկոմատ (պատմական արժեք ստացած հապավված հիմքերի վրա՝ առժողկոմատ, լուսժողկոմատ, հոլժողկոմատ). գեկանատ, ռեկտորատ. չեմպիոնատ, քիմիկատ. ագրեգատ, կոմբինատ, սինդիկատ. ռեֆերատ.

առիվ/-իալիվ/-տիվ (-առիվ/-իալ/-տ և -իվ)՝ ագմինիստրատիվ, սպեկուլյատիվ, ֆեդերատիվ, օպերատիվ, պրիմիալիվ. կոլեկտիվ, կոնսորցիատիվ. նորմատիվ.

առոր/-իաոր/-տոր՝ անալիզատոր, կատալիզատոր, մեխանիզատոր, պրոդուկտոր, ռադիատոր, ինկվիզիտոր, կոմպոզիտոր, դիրեկտոր, կոնսորցիատոր, ռեկտոր.

-ատորրիա (տն՝ս -ատորր և -իա)՝ ամբուլատորիա, լաբորատորիա, կոնսերվատորիա.

-ար՝ լեզենդար, պլենար, ստացիոնար. կոմիսար, կոմունար.

-արիում՝ ակվարիում, հերբարիում, պլանետարիում.

-ացիա/-իցիա/-ցիա՝ ագիտացիա (հմմտ. ագիտատոր), դիսերտացիա (հմմտ. դիսերտանտ), կոնսուլտացիա, կոոպերացիա, ռեֆորմացիա, սպեկուլյացիա, օկուպացիա. էքսպեդիյիցիա, կոմպոզիցիա, միլիցիա. արատրակցիա, կոնցեսյացիա, ռեուլյուցիա.

-ացիոն/-իցիոն/-ցիոն՝ ագիտացիոն, դիսերտացիոն, օկուպացիոն. էքսպեդիցիոն. ռեուլյուցիոն.

-ես՝ կաբինետ, կվարտետ.

-եր՝ միլիոներ, միլիարդեր.

-իա՝ ագրեսիա (հմմտ. ագրեսոր), արիստոկրատիա, բյուրոկրատիա, գինեկոլոգիա (հմմտ. գինեկոլոգ), դեմագոգիա, դեմոկրատիա, էքսկուրսիա, լոգոպեդիա, հեգեմոնիա, սեմինարիա, ստրատեգիա, ֆիզիոլոգիա.

-իալ՝ կոլեգիալ, (վարչա)տերիտորիալ, պոտենցիալ.

-իդ՝ բրոմիդ, սուլֆիդ, քլորիդ.

-իզատոր (հմմտ. -ատոր)՝ մեխանիզատոր, ռացիոնալիզատոր, ստաբիլիզատոր.

-իզացիա՝ լեգալիզացիա, մեխանիզացիա, նացիոնալիզացիա, ռացիոնալիզացիա.

-իզմ՝ բանդիտիզմ, դեմոկրատիզմ, իդեալիզմ, լիբերալիզմ, կոլեկտիվիզմ, մատերիալիզմ, ռացիոնալիզմ, սոցիալիզմ, ֆեոդալիզմ, ֆեալիզմ. մեխանիզմ, օրգանիզմ.

-իկ՝ ակրոբատիկ, դեմագոգիկ, հիգիենիկ, հիերարխիկ, մեկանիստիկ, պոլիտեխնիկ, սիմֆոնիկ, սխոլաստիկ, մեխանիկ, տեխնիկ.

-իկա՝ ակրոբատիկա, գրաֆիկա, դոգմատիկա, էսթետիկա, թեմատիկա, հոնտորիկա, պրակտիկա, սինթետիկա, սխոլաստիկա.

-իկոս՝ ակադեմիկոս, մաթեմատիկոս, քիմիկոս, ֆիզիկոս.

-իոն՝ դիվիդիոն, դոմինիոն, էքսկուրսիոն, կոմիսիոն, մեդալիոն. չեմպիոն, սարգիոն, ստագիոն, տրեդշոնիոն, տպադիոն.

-իոներ և -(ա)ցիոներ (տն՝ս -իոն և -եր)՝ ակցիոներ, կոնդեսիոներ, միլիցիոներ, ռեակցիոներ, ռեուլյուցիոներ, սեկեցիոներ.

-իստ՝ անարխիստ, բասկետբոլիստ, իդեալիստ, իմպերիալիստ, կապիտալիստ, մատերիալիստ, նացիոնալիստ, նովելիստ, պրոպագանդիստ, ռացիոնալիստ, ռեվոլյուցիստ, սոցիալիստ, տրակտորիստ, ֆելիետոնիստ, ֆուտբոլիստ, թառիստ, քամանչիստ.

-իւ՛լ՝ ագրեսիւ՛լ, ինտենսիւ՛լ, պրոգրեսիւ՛լ.

-իտ՝ ապենդիցիտ, բրոնխիտ, միոկարդիտ. դրանիտ, մետեորիտ, ֆոսֆորիտ, երևանիտ, նաիրիտ, սևանիտ.

-իում՝ ամոնիում, կադմիում, կալցիում, լեկտորիում, պրեզիդիում.

-յոր՝ մոնայոր, ուսպորտյոր.

-նիկ՝ դիպլոմնիկ, շինովնիկ, ֆիզկուլտուրնիկ. թիշնիկ.

-ոզ՝ գլշուկոզ, ցելշուկոզ, ներոզ, սկլերոզ, տենդենցիոզ.

-որ՝ ագրեսոր, պրոֆեսոր, սենատոր.

-չի՝ զուռնաչի, թալանչի, բոստանչի.

-ում (լատ. վերջավորություն՝ ստացած ածանցիւթ)՝ մինիւմում, պլենում, տիսնիկում, ուլտիմատում.

-ուրա՝ ասպիրանտուրա, գոկտորանտուրա. կուլտուրա, մանուֆակտուրա, ցինզուրա:

Ավելորդ համարելով խոսել միջազգային տերմինաբանական այն տարրերի մասին, որոնք գալիս են բառերից, բայց ստացել են ածանցականերանքի արմիք (հմմտ. -լոզ «-տ-բան, -ա-գետ», -լոգիա «-ա-բանություն, -ա-գիտություն», -մա «-ա-սեր, -ա-մոլ», -ոկի «ա-կերպ» և այլն)՝ կանգ առնենք օտարազգի վերջածանցավոր կազմությունների մեջ հիմքականացման, ածանցների բաշխման և իմաստադրածածության հիմնական առանձնահատկությունների վրա⁴:

Հայերնում հանդիպող օտարազգի որոշ հիմքեր ունեն կազմության յուրահատկություններ, հանդես են գալիս այնպիսի տարրերակներով, որոնք արտացոլված են մեր կազմած արմատների ցանկում և կարիք են դգում հատուկ նշման. այստեղ նկատի չունենք այն դեպքերը, որոնք պայմանավորված են հայերենի հիմքակազմության առանձնահատկություններով և զրահորվում են ոչ միայն օտար հիմքերից հայերեն հիմքերով ու ածանցներով բառեր կազմելու, այլև հենց օտարազգի բառերի բառակազմության ժամանակ, եթե, իհարկե, բաղադրիչները գիտակցվում են. հմմտ. մոդա—մոդայսուեր—մոդայսուկան (չ. ուլ հիմք) և մոդա—մոդայիկ.

1) առանձին դեպքերում առկա են հավելաաարրով հիմքեր. -ե-ով և -մա-ով վերջացող բառերի դեպքում հանդիպում է հավելաաարրային -տ-ն՝ բյուշե—բյուշետային, սյումե—սյումետային, դոգմա—դոգմատիկ, սխեմա—սխեմատիկ.

2) -առ, -իտ, -տ-ով վերջացող հիմքերը հաջորդ -ի+ձայնավոր կապակցության դեպքում ենթարկվում են ա/ց հերթագայության՝ դե-

⁴ Սրանց հանգամանալից քննությունը օտարազգի բառերի բառարանի և միջազգային տերմինաբանության տարրերի հավաքածուի խնդիրն է:

լեգատ—դեփագացիա. ինֆորմատիվ—ինֆորմացիա, ինֆորմացիոն. կոնսուլտատիվ—կոնսուլտացիա, կոնսուլտացիոն և այլն. կան նաև ազգ-լի բիշ հանդիպող այլ կարգի հերթագայումներ, ինչպես զ/տ՝ անալիզ—անալիտիկ, սինթեզ—սինթետիկ և այլն:

3) -իա-ով վերջացող բառերի ա-ն ձուլվում է հաջորդ -ական ածանցի -ա-ի հետ և փաստորեն հանդես գալիս որպես սղատարրային հիմք՝ Անգլիա—անգլիական. երբեմն էլ -իա-ն կարող է ամբողջովին սղվել՝ Գերմանիա—գերմանական. ինչպես նշվել է, -ացիա-ով վերջացող բառերի աց-ն էլ կարող է ձուլվել հայերեն -ացն— բայական մասնիկի -աց-ի հետ և օտարազգի հիմքերից կերտել ներգործական բայեր՝ մոբիլիզացիա—մոբիլիզացն-(ել), օկուպացիա—օկուպացն-(ել):

Օտարազգի վերջածանցների մեծ մասը գոյականական և փոքր մասը ածականական արժեք ունի. այլ խոսքի մասերի հատուկ ածանցներ չկան: Գոյականական ածանցները արտահայտում են հայերեն համապատասխան ածանցներին համարժեք իմաստներ և գործառույթների՝ գործող կամ զբաղվող անձի (-ող-ի և իշ-ի արժեքով՝ -անտ, -ատոր/-իտոր/-տոր, -իզատոր, -իկոս, -իոներ, -իստ, -յուր, -նիկ, -որ, -չի), բայանունների և վերացական անունների (-աժ, -իա, -ացիա, -իզացիա, -իզմ, -ուրա), տեղի (-ատորիա, -արիում) և այլն: Ածականական ածանցները, որոնք երբեմն կարող են գոյականական արժեք ստանալ, հետևյալներն են՝ -ալ, -ատիվ/-իտիվ/-տիվ, -ար, -ացիոն/-իցիոն/-ցիոն, -իալ, -իկ, -իոն, -իվ:

Օտարազգի ածանցների կաղապարային բաշխման քննությունը դուրս է մեր նպատակներից, բայց հայերենում առկա օրինակների հիման վրա դժվար չէ ցույց տալ, որ այս դեպքում էլ կան առաջնային, երկրորդային ու այլ կարգի ածանցներ, և դրանց գործառական բաշխումը հիշեցնում է հայերենի համապատասխան ածանցների բաշխումը. գոյականական հիմքերից հետո սովորաբար հանդիպում են գոյականական և, միջնորդված կամ անմիջաբար, ածականական, ածականական հիմքերից հետո՝ գոյականական ածանցներ՝ $S(s)(a)$ և $A(s)$ կաղապարներով, թեև, իհարկե, սրանց բաղադրիչների փոխհարաբերությունը հայերենում ոչ բոլորի կողմից և ոչ բոլոր դեպքերում է գիտակցվում:

Օտարազգի բառերից և բառահիմքերից հայերեն ածանցներով կազմվող բառերը կաղապարների բնույթով և կաղապարային բաղադրիչների բաշխմամբ չեն տարբերվում հայերենի համապատասխան կազմություններից. գոյականներից կարող են կազմվել նոր բառեր $S(a)(s/av)$, ածականներից՝ նոր բառեր՝ $A(s/av)$ կաղապարներով, թեև այս դեպքում բնականաբար, առկա են որոշ սահմանափա-

կումներ՝ հօգուտ տարածված և արդյունավետ ածանցների. ձ-ն իրանում է -ական, s-ն՝ -ուքյուն, ձ՝ -ը՝ -աբար, -որեն ածանցների միջոցով.

Sa՝ ասպիրանտական, լիկվիդատորական, ռադիոնալիզատորական, ալադեմիկոսական, կոմունիստական.

Ss՝ ասպիրանտոլթյուն, լիկվիդատորոլթյուն, ալադեմիկոսոլթյուն.

Sa՝ կոմունիստաբար.

Sas՝ լիկվիդատորականոլթյուն.

As՝ ախտիվոլթյուն, կուլեգիալոլթյուն.

Aa՝ ախտիվորեն, ռեուլյուցիոնաբար, ինտենսիվորեն:

12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ածանցման կաղապարների և նրանց իրացումների մինչաժմյան քննությունը ցույց տվեց հայերենի արմատական հիմքերի գործառական (խոսքիմասային) խմբերի ածանցման ընդհանուր հնարավորությունները: Համեմատելով այդ խմբերի ածանցման քննության արդյունքները՝ անենք ընդհանուր բնույթի երկու եզրակացություն:

1) Ըստ բառածանցման կաղապարների մեջ ածանցների քանակական բաշխման մենք ունենք հետևյալ պատկերը. ա) համասեռ կաղապարները չեն կարող պարունակել երեք ածանցից ավելի, ընդ որում բայական ածանցի չի հիմքերի դեպքում դրանք բաղկացած են լինում ձրկու նախածանցից և մեկ վերջածանցից, գոյականի դեպքում՝ մեկ նախածանցից և երկու վերջածանցից. մնացած խոսքի մասերի համասեռ կաղապարներն ավելի փոքրանգամ են՝ երկու կամ մեկ ածանցով. բ) առաջնային տարասեռ կաղապարները չեն կարող պարունակել երեք միատեսակ ածանցից ավելի, ընդ որում այդ էլ հնարավոր է միայն գոյականական հիմքերից կերտված ածականների դեպքում՝ ոչ միաժամանակյա իրացմամբ. գ) երկրորդային տարասեռ կաղապարները չեն կարող պարունակել երկու ածանցից ավելի. դ) եթե նկատի առնենք սահմանափակումները, ապա կարելի է ասել, որ հայերենում ոչ մի ածանցավոր բառ չի կարող ունենալ վեց ածանցից ավելի:

2) Ըստ գործածականության և արտադրողականության առանձնանում են հատկապես ան- նախածանցը և գոյականական -ուքյուն, ածականական -ական ու -ա-յին և մակբայական -ա-բար, -ա-պես ու -որեն վերջածանցները. վերջիններս հիմնականում գործառական արժեք ունեն և կարող են հանդես գալ ինչպես առաջնային, այնպես էլ ոչ առաջնային դիրքերում:

1. ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ ԸՍՏ ՀԱՄԱՐՆԵԶԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Բառաժանցման հիմնական հասկացությունների քննության ժամանակ մենք համառոտակի բնութագրեցինք ածանցման և բարդության փոխհարաբերությունը: Այստեղ կանգ առնենք հատկապես բարդության վրա և խոսենք բառաբարդման հիմնական հասկացությունների ու բարդության ընդհանուր տիպերի մասին՝ ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության:

Բարդությունը որպես նյութական կազմություն բնութագրվում է, ինչպես նշվել է, նյութականության հատկանիշով որոշվող շորս կարգերով՝ կազմ, թիվ, կախում, դաս. սրանցից առաջին երկուսը վերաբերում են բարդության իբրև ամբողջական կառուցվածքի, վերջին երկուսը՝ նրա բաղադրիչների փոխհարաբերությանը:

Բարդությունն ամենից առաջ բնութագրվում է բաղադրիչների մեկից ալելի թվով (թի՝ «ոչ մեկ»): Սակայն բարդության, հատկապես հայերենի բարդության, բնական տիպը երկբաղադրիչությունն է. եթե բարդ բառն իր կազմում ունենում է երկուսից ալելի արմատական բաղադրիչ, ապա դրանք բաղադրվում են ոչ թե միաժամանակ, այլ երկանդամորեն, այսինքն՝ եռաբաղադրիչ բարդությունը կազմված է լինում մեկ արմատական և մեկ բարդ, քառաբաղադրիչը՝ երկու բարդ կամ մեկ պարզ և մեկ եռաբաղադրիչ միավորից և այլն: Այսպիսով, մենք կարող ենք ունենալ (A)B՝ (երկաթ)ուղի, ((A)B)C՝ ((երկաթ)-ուղա)գիծ, (A)B(-)(C)D՝ (ծրա)գիր-(ուղե)ցույց և այլն: Երկուսից ալելի բաղադրիչ ունեցող բարդ բառերը կոչվում են հարաբարդ կամ բաղմաբարդ:

Կազմի կարգի առումով՝ բառերն ըստ բարդության հետ ունեցած հարաբերության լինում են պարզ (լրացուցիչ բաղադրիչ չունեցող՝ կզ←) և բարդ (լրացուցիչ բաղադրիչ ունեցող՝ կզ→): Բարդ բառերն ըստ բաղադրիչների նույնության և ոչ նույնության (տարբերության) լինում են կրկնություններ (կզ→—՝ AA) և տարաբաղադրիչ բարդություններ (կզ→—AB):

Ըստ դասի կարգի՝ կարող են տարբերակվել բարդության առաջին (դաս→) և վերջին (դաս←) բաղադրիչներ:

Հիմք ընդունելով առաջին բաղադրիչը՝ կարելի է ըստ կախման կարգի տարբերել բարդության չորս տիպ՝ 1) առաջին բաղադրիչը կախորդն է (կախման մեջ դնող անդամը) կամ լրացյալը (կխ→). 2) առաջին բաղադրիչը կախյալն է կամ լրացյալը (կխ←). 3) առաջին բա-

աղադրիչը երկրորդից փոխադարձ կախման մեջ է (կխ $\longleftrightarrow$), 4) առաջին և երկրորդ բաղադրիչները կախման մեջ չեն (կխ $\nleftrightarrow$): Ընդունված է կախման առաջին երկու տիպերը կոչել ստորադասական, վերջին երկուսը՝ համադասական: Ստորադասական բարդությունն երկու տիպերից հայերենի համար, ինչպես կտեսնենք, բնորոշ է երկրորդը:

2. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենը հարուստ է կրկնություններով, որոնք բնութագրվում են ծագումնային և հնչակաղապարային տարատեսակությամբ:

Ծագումնային առումով ժամանակակից հայերենի կրկնությունները բազմաշերտ են՝ գալով ժամանակագրական տարբեր փուլերից: Հնդեվրոպական շրջանից եկող և դրանց նմանակությամբ հետհնդեվրոպական շրջանում կազմված բառերի համար բնորոշ է մասնական կրկնությունը, որ հաճախ ուղեկցվում է ձայնորդային հերթագայությամբ և երբեմն վերջահավելական տարրերով՝ ածականներով՝ ծիծեռնակ, քիթև, քիթեղ, բուլբուլ, տրտունջ, գրգիռ, քրթիռ, բարբառ և այլն: Հնագույն և հին շրջաններից եկող բարդությունների համար բնորոշ են նախդրավոր և այդ շրջաններին հատուկ հոլովածներով կազմությունները՝ հետզհետե, մերթնդմերթ և այլն: Սակայն այս տիպի կրկնությունները մասամբ գալիս են ուշ շրջանից ու բարբառներից և համարանական կազմություններ են:

Առաջին հայացքից կարծես թե կրկնության անդամները հավասարաթիվ են, սակայն իրականում դրանցից մեկը կրկնության հիմքն է, մյուսը՝ նմանակը: Կոչենք կրկնության հիմնական անդամը կրկնյալ, նմանակը՝ կրկնորդ: Կրկնությունների գերակշռող մեծամասնության մեջ կրկնյալն առաջին բաղադրիչն է, բայց մի շարք դեպքերում իբրև այդպիսին հանդես է գալիս երկրորդ բաղադրիչը. այսպիսով, առկա է կրկնության երկու տիպ՝ AA₁ և A₁A, որոնց մեջ A-ով նշանակված է կրկնյալը, A₁-ով՝ կրկնորդը: Ի տարբերություն ածանցումների և բարդությունների՝ կրկնությունների մեջ սովորաբար փոփոխության է ենթարկվում ոչ թե հիմքային բաղադրիչը՝ կրկնյալը, այլ հավելական բաղադրիչը՝ կրկնորդը:

Ժամանակակից հայերենում կրկնության գործուն և արտադրողական տիպը AA₁-ն է: Այն լինում է նույնական կամ անփոփոխ կրկնորդով և փոփոխվող կրկնորդով: Անփոփոխ կրկնորդով կրկնությունները բավական հաճախագեղ են և սովորաբար գրվում են գծիկով՝ արագ-արագ, մեծ-մեծ, շուտ-շուտ և այլն: Ավելի սերտ միացումները, հատկապես բայահիմքային և ածանցահիմքային կրկնությունները, գրվում

են միաձուլվ՝ փափառում, սրբսրբալ և այլն: Փոփոխվող կրկնորդը ըսկրդբում սովորաբար ունենում է մ հնչյունը, որ բաղաձայնական սկզբբի ղեկայրում փոխարինում է առաջին բաղաձայնին՝ հաց-մաց, սուր-մուր, տուն-մուն, վոք-մոք և այլն, իսկ ձայնավորական սկզբի ղեկայրում ավելանում է ձայնավորից առաջ՝ ալյուր-մալյուր, բնկեր-մբնկեր և այլն: Եթե կրկնյալն սկսվում է մ-ով, և այսպիսի տարբերակումը հնարավոր չէ, ապա տեղի է ունենում ձայնավորի փոփոխություն՝ կրկնորդի ձայնավորը դառնում է ու՝ մանր-մունր, մարդ-մուրդ: Հազվագեկ մ-ի փոխարեն կարող է հանդես գալ ուրիշ բաղաձայն՝ պարապ-սարապ, սուսիկ-փուսիկ, սուտ-փուտ և այլն, այլև կարող են հնչյունափոխության ենթարկվել մ-ով չսկսվող բառերը՝ ծակ-ծուկ, նայ-նույ և այլն:

Այս տիպի կրկնությունները մասամբ ժառանգված են հնից, մասամբ համեմատաբար նոր կազմություններ են. նրանք գրվում են ինչպես միաձուլվ (հատկապես հին կրկնությունների դեպքում), այնպես էլ զծիկով: Այս կրկնությունների համար բնորոշ է, ինչպես նշվեց. կրկնությունների հին շերտի բնութագրման կապակցությամբ, Այ բազադրիչի մասնակցությունը և կամ հնչյունափոխվածությունը. հմմտ. բարբառ, գրգիռ, թրթիռ, այլև կաս-կարմիր, շիփ-շիտակ, առոփ-փառոփ: Վերջիններիս մի դրսեորումն է ածանցվոր բառի արմատական մասի նախակրկնությունը՝ դուռ-դրկից, կալ-կավոր [հմմտ. Աղայան, 1984, 235]:

Կրկնություններն ունեն այն առանձնահատկությունը, որ նրանց արտահայտության պլանը որոշ զուգահեռություն ունի բովանդակության պլանի հետ. հնչակրկնությունը հաճախ արտահայտում է նաև իմաստային կրկնություն՝ այս բառի լայն առումով, այսինքն՝ զոյականների դեպքում՝ շատություն (ի→), գործողությունների դեպքում՝ հաճախականություն՝ շատ անգամ (մի քանի անգամ) կրկնվելը (հճ→). այս իմաստներին կարող են միանալ «բոլորը միասին» (կղ→), «և նմանները» (հմ→) և այլ իմաստներ:

Նշենք, որ զգալի թվով բառեր գործածվում են միայն կրկնավոր ձևով՝ կկու, խոպոպ, տրտունջ և այլն: Կան բառեր, հատկապես բայեր և ձայնարկություններ, որոնց դեպքում բառակրկնությունը գրեթե համարժեք է արմատի բաղաձայնի կրկնությանը՝ շոշո-(ալ)→շրոո-(ալ):

Կրկնությունը ըստ իր բաղադրիչների հետ ունեցած գործառական փոխհարաբերության (խոսքիմասային գործառության) կարող է լինել համագործառական և փոխգործառական (համակաղապարային և փոխկաղապարային): Առաջին դեպքում կրկնությունն ունի խոսքիմասային

այն արժեքը, ինչ նրա բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը: Երկրորդ գեպքում առկա է խոսքի մասային փոխանցում՝ առկա չարժ մի խոսքի մասից մյուսը:

Կրկնությունը կարող է համագործառական լինել բոլոր խոսքի մասերի գեպքում.

1) գոյական՝ աման-չաման, արդուզարդ, քուֆումուր, լակոտ-լուկոտ, լորի-փորի, ծակուծուկ, ծուխ-մուխ, ձեն-ձուն (ձայն-ձուն).

2) ածական՝ մասամբ մակբայական գործածության մեջ՝ զիզի-պիզի, լիպի, խառնիխառն, կաս-կարմիր, մեծամեծ (մեծ-մեծ), նորանոր, շիփ-շիտակ, ջերմուջերմ, փոփ-փոփ և այլն.

3) մակբայ՝ արագ-արագ, հետ-հետ, խեղ-խեղ, հագիվհագ, հեռու-հեռու, մերթնդմերթ, շտապ-շտապ, շուտ-շուտ, վերսվեր, ֆիշ-ֆիշ.

4) բայ՝ քափքափ-(ել), ծակծկ-(ել), ֆաշֆշ-(ել) և այլն. բնածայնական գոգո-(ալ), խոխո-(ալ), կոկո-(ալ), վոքվոք-(ալ), փրքփրք-(ալ) և այլն:

Փոխգործառական կրկնությունը հանդես է գալիս հետևյալ տեսակներով.

1) գոյական→ածական՝ գույնզգույն, քել-քել, տեսակ-տեսակ և այլն.

2) գոյական→մակբայ՝ զունդազունդ, երամ-երամ, խումբ-խումբ և այլն.

3) ածական→մակբայ (երբեմն նաև ածականական արժեքի պահպանմամբ)՝ մեծ-մեծ, տափ-տափ և այլն.

4) ածականական թվական→մակբայական թվական՝ մեկ-մեկ, երկու-երկու, երեք-երեք և այլն (բաշխական իմաստ):

3. ՀԱՄԱԳԱՍԱԿԱՆ ԲԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշել ենք, համադասական բարդությունների բաղադրիչները կապված են համադասական հարաբերության մեջ, այսինքն՝ կամ իրար նկատմամբ կախման մեջ չեն գտնվում (կիս→), կամ գտնվում են փոխընդդիմական կախման մեջ (կիս←→): Այսպիսի բարդությունների կազմավորումները կրկնում են համապատասխան համադասական կամ փոխընդդիմական բառակապակցությունների կազմավորումները:

Ըստ բաղադրիչների ինքնուրույնության աստիճանի կարելի է տարբերել համադասական բարդությունների երկու տեսակ՝ վերլուծական և համադրական: Վերլուծական բարդությունները տարբերվում են սովորական բառակապակցություններից նրանով, որ համեմատա-

բար կայուն բնույթ ունեն և հանդես են գալիս բաղադրիչների ավելի փերտ միասնությամբ: Նրանց ձևավորման մեջ զգալի դեր են խաղում ռիթմը և բաղաձայնույթը (ալիտերացիան)՝ լուռ ու մունջ, խնդն ու կրակ, հայր ու մայր, շենք ու շնորհիմ, օր ու գիշեր և այլն: Համադրական բարդությունների դեպքում բաղադրիչների միջև վերանում են սահմանային ազդանշանները, և դրանք գրվում ու արտասանվում են իրեն մեկ բառ՝ անցուղարձ, առևտուր և այլն: Յուրատեսակ միջին դիրք են գրավում վերլուծական և համադրական բարդությունների միջև առաջ համադասական բարդությունները, որոնց բաղադրիչները գրության մեջ միանում են գծիկով՝ աշխ-ունք, գիշեր-ցերեկ և այլն:

Գոյականական համադասական բարդությունները վերլուծական տիպերի դեպքում կարող են հոլովվել կամ երկու մասով (հայր ու մայր—նոր ու մոր), կամ միայն վերջին բաղադրիչով (շենք ու շնորհիմով): Համադրական տիպերի դեպքում դրանք հոլովվում են իբրև մեկ բառ (անցուղարձ—անցուղարձով): Կարող են լինել միայն հոլովված ձևերով միացած բարդություններ՝ ձևովով—ոսովով:

Բայական համադասական բարդությունները խոնարհվում են երկու մասով էլ, ընդ որում բաղադրյալ ձևերի դեպքում ունենում են միայն մեկ օժանդակ բայ (եփում—քափում է, եփեց—քափեց):

Ըստ արտաքին ձևավորման համադրական բարդությունները կարող են լինել հավելատարրային՝ ու, և շաղկապներով ու սրանց փոխարինող հոդակապով (անցուղարձ, առևտուր, ազգատոհմ), և անհավելատարրային՝ անմիջական միացմամբ կամ գծիկով (առևտեղ, պտուղ—բանջարեղեն):

Համադասական բարդությունները մնացած տիպի բարդություններից, ինչպես նաև ածանցավոր բառերից, գործառապես տարբերվում են նրանով, որ այս դեպքում հակասություն չկա բաղադրիչների և ներանցով կազմված բաղադրությունների խոսքիմասային (գործառական) պատկանելիության միջև, այսինքն՝ գոյականները կազմվում են գոյականներից, ածականները՝ ածականներից և այլն: պետք է նշել միայն, որ գոյականական բարդությունները կարող են կազմված լինել արմատական այնպիսի բայահիմքերից, որոնք փաստորեն գոյականացել են՝ երբեմն առանց ինքնուրույն գոյականական գործածության՝ անցուղարձ, առևտուր, ասուլիս և այլն:

Ահավաստիկ խոսքիմասային տարրեր կարգերի պատկանող համադասական բարդությունների օրինակներ.

1) գոյականներ՝ այբուբեն, անցուղարձ, առևտուր, առուտուր, ասուլիս, բառուբան, Եկամուտ, Ելումուտ, Ելեկ, Երբեկ(ուրյուն), խաղուպար, կերուխում, կողուկուշտ, նիստուկաց. ազգատոհմ, ամառ-

ձմեռ, աշիւ-ունիք, բանվոր-բանվորունի, գիշեր-ցերեկ, դուռ-դրկից, ընկեր-բարեկամ և այլն.

2) ածականներ՝ ամբաստան, բացահայտ, լայնարձակ, խառնափնրոր, մեծավիթխար, ջանիկ-ջիվան և այլն. եթե իրար միանում են միեւնոյն ածանցող երկու ածական, ապա առաջինի ածանցը զեղչվում է՝ պատմական և համեմատական→պատմահամեմատական, հարավային և արեւելան→հարավարեւելան և այլն.

3) թվականներ՝ մեկ-երկու, երկու-երեք, երեք-չորս, չորս-հինգ և այլն. տասնմեկ, տասներկու, քսանչորս և այլն:

4) բայեր՝ ասում-լսում է, գնում-գալիս է, եփում-քափում է և այլն. սրանց բաղադրիչները փոխկաղապարվում են (փոխակերպվում գոյականների կամ ածականների) միաժամանակ՝ գնալ-գալ, գնացող-եկող և այլն, ընդ որում գոյականների կամ գոյականացած ձևերի գեղարքում հոլովվում է միայն երկրորդ մասը, այսինքն՝ բարդութունը դիտվում է որպէս մեկ ամբողջութուն՝ գնալ-գալու, գնալ-գալուց, գնացող-եկողի, գնացող-եկողից և այլն:

Համադասական հարաբերությունն ընդհանրապես արտահայտում է հովելման իմաստ (կղ→), բայց կարող է արտահայտել նաև լրացուցիչ այլ իմաստներ՝ ամբողջության (կղ↗), հասանելիության (չ→—), և այլն. թվականների միացությունն արտահայտում է չափ՝ «-ից մինչև» (չ←→) կամ մոտավորություն՝ նշանայնություն հասկանալի (նշչ←՝ խոսողը մատահ չէ քանակի ճշգրտության մեջ): Բայական համադասական բարդութունների գեղարքում երբեմն մեկ բաղադրիչն արտահայտում է հիմնական իմաստ, մյուսը՝ քերականական իմաստներին մոտ իմաստներ՝ անցնել-գնալ, գալ-հասնել, մեռնել-պրծնել և այլն:

4. ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ա. Համադրական ձևեր

Ստորադասական բարդութունը բարդության ամենատարածված տեսակն է, որի դերը բառակազմական առումով պակաս կարևոր չէ, քան ածանցմանը: Ըստ արտաքին ձևավորման ստորադասական բարդութունները կարող են լինել հոգակապավոր, այսինքն՝ ունենալ հատուկ հովելական —ա— տարրը (հմմտ. քեռնակիր), և անհոգակապ (հմմտ. ջրիչ): Հայերենի համար բնորոշ են երկբաղադրիչ, հազվագեղ հոտբաղադրիչ բարդութունները: Երկբաղադրիչ բարդութունների մեջ սովորաբար հիմքային արմէր ունի երկրորդ բաղադրիչը, հոտբաղադրիչ

բարդությունների մեջ՝ երրորդը. այսինքն՝ որպես բարդության հիմք (լրացյալ) հանդես է գալիս վերջին բաղադրիչը: Այն հազվագյուտ դեպքերում, երբ առկա է հակադարձ հարաբերությունը (հունական ձևերի հին պատճենմամբ)՝ արժանահավատ, արժանապատիվ, մայրաֆաղաֆ, բարդության բաղադրիչները մասամբ իմաստավորվում են սովորական հարաբերությամբ (մայրաֆաղաֆ «մայր քաղաք» և ոչ «քաղաքների մայր», մասամբ դիտվում որպես արժանի հավատի, արժանի պատվի բառակապակցություններից ստացված ձևեր [հմմտ. Աղայան, 1984, 279]: Այսպիսով, կառուցվածքային առումով երկբաղադրիչ բարդությունների համար կունենանք կաղապարային (B)A, եռաբաղադրիչ բարդությունների համար ((C)B)A բանաձևերը հմմտ. երկաթուղի «երկաթյա ուղի» և երկաթուղագիծ «երկաթուղու (=երկաթյա ուղու) գիծ»:

Գործառական առումով ստորադասական բարդությունները կրկնությունների նման կարող են լինել երկու տեսակ՝ համագործառական (համակաղապարային) և փոխգործառական (փոխկաղապարային): Առաջին դեպքում բարդությունն ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա հիմքային (իմա՝ վերջին) բաղադրիչը (հմմտ. երկաթուղի), երկրորդ դեպքում՝ նրանից տարբեր գործառություն՝ դերբայական ածանցի կամ դերբայի լրացուցիչ գործառական արժեքով (հմմտ. ջրկիր «ջուր կրող», ռսկելաբս «ռսկի վարս ունեցող»):

Առաջին տիպի բարդությունները նույնությամբ կրկնում են բառակապակցության կաղապարների համապատասխան հատվածները՝ խոսքիմասային նույնական արժեքներով: Այսպես, հայերենի գոյականական բառակապակցության ընդհանուր կաղապարն է ((A^v)A)S, որտեղ S-ը բառակապակցության գլխավոր անդամն է՝ գոյականը, A-ն՝ լրացումը՝ ածական կամ թվական (A₁ և A₂), A^v-ը՝ լրացման լրացումը կամ ենթալրացումը՝ մակբայը լայն առումով (հատկապես մականականը և մակթվականը): Այստեղից երկբաղադրիչ կաղությունների համար հնարավոր են՝ 1) «ածական+գոյական→գոյական», 2) «թվական+գոյական→գոյական», 3) «մակբայ+ածական→ածական», 4) «մակբայ+թվական→թվական» տիպերը. հիշ սրանց միացնենք լրացական (ածականական) և մակլրացական (մակբայական) դերանուններով կաղմմող, 5) «լրացական դերանուն+գոյական→գոյական», 6) «մակլրացական դերանուն+ածական→ածական» տիպերը, ապա կարելի է ասել, որ տեսականորեն հնարավոր է 6 երկբաղադրիչ տիպ: Սակայն գործածական է միայն առաջին տիպը, իսկ մնացած տիպերը կամ չեն հանդիպում, կամ հազվագեղ կեն հանդիպում:

«Ածական+գրչական→գոյական» (Ա.Գ→Գ. կամ AS→S) տիպի հա-

մար հմմտ. աղվամագ, ամփոփագիր, աջակողմ, բազմամարտ, բարձ-
րավանդակ, բքամատ, գաղտնագիր, քրվասեր, խառնամբոխ, ծած-
կանուն, ծածկագիր, կարմրախտ, հնադար, մանրէ (է=լակ) (միկրոբ
բառի պատճենում), միջնախուշ, միջնաշերտ, միջնապատ, միջնորմ,
մոլախոտ, ներհնագգեստ, որձափար, սևահող, վերնագգեստ, վերնաշա-
պիկ և այլն:

Կիսա-ով բարդությունները միջին տեղն են զբաղում թվականով
և ածականով բարդությունների միջև՝ կիսագունդ, կիսակոշիկ, կիսա-
մուշտակ, կիսաշրջան: Այսպես է նաև բազմամարտ բառը, որի հետ
միասին կան նաև բուն թվականներով կազմություններ՝ երկամարտ,
եռամարտ, հնգամարտ, ընդ որում այստեղ առաջին բաղադրիչը կա-
րելի է մեկնել նաև նկարագրորեն՝ «հինգ ձևից (տեսակից) բաղկացած»:
Մենատնեսս եռաբաղադրիչ բարդության հիմքում ընկած է «մենակ
տնտես» նախակաղապարը, թեև բարդությունը կարելի է մեկնաբանել
«մենակ տնտեսություն վարող»:

«Մակրայ (մակածական) + ածական → ածական» (ՄԱ → Ա կամ
 $A \rightarrow A \rightarrow A$) կաղապարի համար հմմտ. մշտա- և կրկնա- բաղադրիչնե-
րով՝ մշտադալար, մշտալուրջ, մշտագոյ, մշտաչեւմ և կրկնաճառակի,
կրկնամեծ, կրկնապիղծ. շատ և քիչ մակրայներով կազմությունները
սովորաբար փոխարինվում են բազմա- և սակավա- բաղադրիչներով
կազմություններով՝ բազմաչեւմ, սակավաչեւմ:

Քանի որ ածականը կարող է ունենալ խնդրառու բառ ու հանդես
գալ որպես ստորոգելի, ուստի և այդ տիպի բառակապակցության բա-
ղայի վրա հնարավոր է «գոյական + ածական → ածական» (ԳԱ → Ա կամ $SA \rightarrow A$)
կաղապարը, որի գոյականական բաղադրիչը կարող է ուղիղ ձևով
արտահայտել հոլովակապային տարբեր իմաստներ. հմմտ. ալխառն,
անդնդախոր, աշալուրջ, արտասվախառն, գրկախառն, հեզնախառն,
ձեռնունայն, մտամոլոր, ջրառատ, սանմանալիակ, սաղարթախիտ և
այլն:

Ինչպես հայտնի է, գոյականական բառակապակցության բուն
ածականական բաղադրիչը կարող է փոխարինվել գոյականով, որ հայ
քերականների կողմից մեկնաբանվում է որպես որոշիչ (ոսկի պատ),
հատկացուցիչ (ոսկու պաշար) կամ բացահայտիչ (ուսուցիչ Հակոբյանը):
Այս գեպքում տեղի է ունենում փոխկաղապարում, այսինքն՝ գոյակա-
նը կաղապարի մեջ փոխում է իր բուն տեղը՝ հանդես գալով ածակա-
նի համար բնորոշ կաղապարային դիրքում (ածականի գործառույթով).
այսպես, օրինակ, բարի սիրտ տիպի բուն կաղապարային կապակցության
մեջ ոսկի գոյականը կարող է զբաղեցնել բարի-ին հատուկ տեղը՝ ու-
կի սիրտ: Եթե նկատի ունենանք, որ փոխկաղապարումը տեղի է ունե-

նում ոչ թե բարդության, այլ նրա համար հիմք հանդիսացած բառակապակցության մեջ, ապա կարող ենք ասել, որ շատ բարդություններ կարող են կազմվել բառակապակցության փոխկաղապարման ենթարկված կամ, այսպես կոչված, տարասեռ տիպից: Հայերենում լայն տարածում ունեն մասնավանդ հատկացական տիպի բարդությունները, որոնց բաղադրիչների միջև առկա է հատկացուցիչ-հատկացյալի փոխհարաբերությունը: Այս տիպի բարդությունների առաջին բաղադրիչը մի շարք դեպքերում կարող է հանդես գալ հենց սեռական-տրականի ձևով, մասնավանդ հերթագայությամբ կազմվող հոլովաձևերի դեպքում (սրանք մասամբ նոր ձևեր են, մասամբ նույնությամբ ժառանգված են հնից)՝ հոդակապով կամ առանց հոդակապի, այլ դեպքերում կարող է առնվել սովորական հիմքային ձևով՝ ա հոդակապով հանդերձ. հմմտ. մի կողմից՝ եղբորորդի, հորաֆույր, հորեղբայր, տագերկին, տանտեր, ֆնոուրդի «քրոջ որդի» և այլն, մյուս կողմից՝ առամնաշար, բերհափափ, դիմանկար, գինեգործարան, լեռնալանջ, հողամաս, նաշասեղան, նավափոր, ռազմամբերք, օրակարգ և այլն: Այսպիսի բարդությունների մեջ հատկացուցչի գործառույթ կարող են կատարել նաև գոյականակերտ զանազան ածանցներով կազմված, այդ թվում՝ անորոշ դերբայի ձևերը՝ գրելաձև, պատմելաձև, վարվելակերպ, ֆսելանյութ և այլն:

Բայական այն բառակապակցությունները, որոնց կաղապարը հաճախակի ընդօրինակվում է բարդությունների մեջ առանց գործառական փոփոխություն, առաջին հերթին «մակբայ+բայ» կապակցություններն են՝ A^vV կաղապարով: Ընդամեն, եթե A^vV կաղապարը նախադասության մեջ հաճախ կարող է փոխարինվել V A^v հակադարձ կաղապարով՝ ըստ տրամաբանական շեշտի (մակբայի կարևորության), ապա բարդության մեջ այն պարտադրական բնույթ ունի՝ առաջ դիմեց/դիմեց առաջ→առաջադիմ-(ել): Նշենք, որ A^vV տիպի բարդությունների և բայական նախածանցավոր կազմությունների սահմանը միշտ չէ, որ որոշակի է. նախածանցավոր կազմությունների մեջ մենք դրել ենք գերազանցատես այն ձևերը, որոնց նախաբաղադրիչները կամ ինքնուրույն մակբայական գործածություն չունեն, կամ համապատասխան մակբայներից իմաստով տարբերվում են. այսպես, վեր մակբայի իմաստը տեղային է, վեր(ա)՝ ածանցյալ՝ ժամանակային: Այսուհանդերձ կան ձևեր, որոնց մեջ նախածանցը կարող է դիտվել և որպես բարդության մակբայական բաղադրիչ: Ընդհանուր առմամբ նշենք, որ նախ՝ նախածանցական շատ իմաստներ լրացվում են համապատասխան մակբայական իմաստներով՝ կազմելով հակադրական գոյգեր. երկրորդ՝ նախածանցները հաճախ համանիշային շարքեր են կազմում մակբայների հետ. երրորդ՝ որոշ մակբայներ միաժամանակ գործած-

վում են նաև որպես նախդիրներ և փաստորեն հանդես գալիս որպես բայական նախածանցներ (նախաբայեր). չորրորդ՝ մակերայա-բայական կապակցությունները զգալի թվով դեպքերում կարող են փոխարինվել մակերայա-բայական բարդություններով և նախածանցավոր կազմություններով՝ երբեմն իմաստային նուրբ տարրերակմամբ. հմմտ. դեմ դնել և դիմադրել, առաջ դիմել և առաջադիմել, մեջ մտնել և միջամտել, դուրս բերել և արտաբերել, ներս դնել և ներդրել և այլն: Բարդություններ կարող են կազմել ոչ բոլոր մակբայները. հմմտ. առաջ՝ առաջադիմ-(ել), առաջադր-(ել). հետ՝ հետադարձ-(ել), հետադիմ-(ել), հետաձգ-(ել). կանուխ՝ կանխադր-(ել), կանխագուշակ-(ել), կանխագգուշ-(անալ). կրկին՝ կրկնագր-(ել), կրկնադատ-(ել). շատ՝ շատախոս-(ել). շուրջ՝ շրջապատ-(ել), շրջափակ-(ել). ուղիղ՝ ուղղագր-(ել), ուղղադր-(ել), ուղղախոս-(ել): Սրանցից առաջ-ը և հետ-ը կարելի է դիտել նաև որպես ածանցակերպներ:

Մակբայներին երբեմն կարող են փոխարինել մակբայի գործառույթով հանդես եկող ածականները, որոնցով կազմված ձևերը, սակայն, հաճախ կարելի է մեկնաբանել որպես համապատասխան բայահիմքերով բարդված ածականների և գոյականների բայացում ձևեր՝ ամրապնդ-(ել), բռնագրավ-(ել), երկարաձգ-(ել), զրպարտ-(ել), ծանաբեռն-(ել), կարևաբան-(ել), համառոտագր-(ել) և այլն:

Ի տարբերություն «մակբայ+բայ→բայ» կազմապարի՝ ավելի հաճախացել են «գոյական+բայ→բայ» կազմապարիով կազմված բարդ բայերը, որոնց մեջ գոյականական լրացումը կարող է կատարել ամենատարբեր շարահյուսական պաշտոններ. վերջիններիս մեջ գերակշռում է ուղիղ խնդրի պաշտոնը: Ընդհանրապես ժամանակակից հայերենը աչքի է ընկնում այս կարգի բարդ բայահիմքերի առատությամբ, թեև հին հայերենին էլ դրանք խորթ չէին: Ահավասիկ առատով սկզբով աչսպիսի բայերի օրինակներ՝ ակնոծ-(ել), ախտահան-(ել), ախտորոշ-(ել), ակնահատ-(ել), ակնած-(ել), ակնկալ-(ել), անաբեկ-(ել), ամուսնավործ-(ել) (-ուրջունի՝ սղմամբ՝ «ամուսնությունը լուծել»), աչսահար-(վել), անդամագր-(ել), անդամահատ-(ել), անդամահեղձ-(ել), անվանակոչ-(ել), անտառապատ-(ել), արդյունահան-(ել), արծնապատ-(ել) և այլն: Հաճախ դժվար է սահման դնել այս տիպի բարդ հիմքերի և բայական հիմքերով կազմված գոյականներից ու ածականներից երկրորդաբար կազմված բայերի միջև. այսպես, անաբեկ-ը կարող է մեկնաբանվել կամ որպես անաբեկ ածականի բայացում ձև, կամ դիտվել որպես անո՞վ բեկ-ել բառակապակցությունից ստացված բարդություն. այսպիսի դեպքերում հարկավոր է ստուգել, թե արդյոք բարդ հիմքը անկախ չի՞ գործածվում որպես ածական կամ գոյական. անա-

զանգ—անագանգ—(ել), ատենախոս—ատենախոս—(ել), արծաքապատ—
արծաքապատ—(ել) և այլն:

Փոխգործառական (փոխկաղապարային) բարդությունները ժամանակակից հայերենում լայն տարածում ունեն. ինչպես նշել ենք, այս դեպքում բարդության հիմքային երկրորդ բաղադրիչը խոսքիմասային այլ արժեք ունի, քան ամբողջ բարդությունը: Սրա հետ կապված՝ բարդության կաղապարն ինքնուրույն արժեք է ստանում, և նրանով համաբանորեն կազմվում են բարդ բառեր՝ անկախ բարդության կաղապարի համար հիմք ծառայած բառակապակցությունների կաղապարներից:

Գոյականական բառակապակցության կաղապարից սերվող բարդության բաղադրիչները չեն տարբերվում համագործառական (համակաղապարային) բարդությունների բաղադրիչներից. այստեղ նույնպես առկա են «ածական+գոյական», «գոյական+գոյական» բաղադրիչները, բայց ածականի գործառությամբ, այսինքն՝ «ածական÷գոյական→ածական», «գոյական+գոյական→ածական» գործառական տեղաշարժով և «ունեցող» հավելական արժեքով. երկրորդ դեպքում գոյականը սեռական-տրականի ձևով հանդես չի գալիս. հմմտ. 1) ԱԳ→Ա կամ AS→A տիպ՝ բարձրահասակ («բարձր հասակ ունեցող»), բքամիտ, զանգ-րանեռ, քավամազ, խորիմաստ, հաստամարմին, նրբակազմ, շարամիտ, փափկամոք, փոփրահասակ և այլն. 2) ԳԳ→Ա կամ SS→A տիպ՝ առյուծաբաշ, խաչան, ծիրանագույն, մանկահասակ, մոխրագույն: Առաջին տիպի կաղապարով կարող են հանդես գալ նաև թվականները՝ կազմելով ԹԳ→Ա կամ NS→A տիպի բարդություններ՝ միաժամանակ, միամիտ, միատեսակ, երկսայր, եռահարկ և այլն, ընդ որում այս դեպքում հնարավոր է նաև «թվական+գոյական→ածական/մական» գործածությունը. հմմտ. միաբերան բացականչեցին, փռատուփ սլացալ և այլն: ԹԳ→Ա կամ NS→A տիպի բառերը երբեմն հավելորդայնությամբ ստանում են ածականական ածանց՝ երկհարկանի, եռամսյա, եռամյա և այլն:

Ժամանակակից հայերենի համար շատ տիպական են բայական բառակապակցությունների բաղադրյալ վրա սերված «մական բայ կամ մականաբար գործածվող ածական+բայահիմք→ածական» (ՄԲ→Ա կամ A^v V → A) և «գոյական+բայահիմք→ածական» (ԳԲ→Ա կամ SV→A) տիպերը, որոնցից երկրորդի գոյականական բաղադրիչը կարող է ունենալ խնդրային և պարագայական ամենաբազմազան պաշտոնների զրբ-սևորումներ և երբեմն հանդես գալ կրճատ ձևով՝ առանց գործառական ածանցի (օր.՝ առանց —ուրթուն—ի). հմմտ. 1) արագախոս, լիակալաշարժ, մեծախոս, փափկակյաց և այլն. 2) առձաքահունչ, բնօնատար, քիթնղաձածկ, կարկտահատ, մարգարտաշար, մոխրաքավալ, մտասույզ,

ռսկեզօծ, սրտաբուխ և այլն: Թվարկել այս բարդությունների գոյակա-
նական բաղադրիչների ունեցած գործառական արժեքները՝ կնշանակեր
թվարկել նախադասութեան անդամները՝ օժտված հոլովական և կապա-
յին համապատասխան իմաստներով. ահալմասիկ մի քանի օրինակ. են-
թակայի արժեքով՝ լեղապատառ, հուսահատ, սրտացավ, ուշագնաց և
այլն. ուղիղ խնդրի արժեքով՝ ապրանքատար, աշխատասեւ (= աշխա-
տանք սիրով), հոգատար, սրտամաշ և այլն. բացառականով խնդրի կամ
պարագայի արժեքով՝ սրտաբուխ, վշտաբեկ և այլն. գործիականով խնդ-
րի կամ պարագայի արժեքով՝ ասեղնագործ, նկարագար, պարսպապատ,
վաշտաշեն և այլն. ներգոյականով խնդրի կամ պարագայի արժեքով՝
մոխրաբալլ, մոռսույզ և այլն. կապային խնդրի կամ պարագայի
արժեքով՝ արծաթանուէշ (արծաթահնչուն = արծաթի պես հնչող) և այլն:
Խնդրի կամ պարագայի տիպը որոշելիս կարևոր է բացահայտել խնդրա-
ռական արժեքի որոշումը, որովհետև բարդութեան առաջին և երկրորդ
բաղադրիչները սովորաբար գտնվում են խնդիր-խնդրառուի հարաբե-
րութեան մեջ:

Այս ածականները, մասնաւանդ անձերի վերաբերելիս, երկրորդա-
բար կարող են գոյականանալ, աչիներն՝ ենթարկվել «գոյական-բա-
լահայր-ածական-գոյական» կրկնակի փոխկաղապարման՝ գործա-
կատար, գրավաճառ և այլն:

Կան հնից ժառանգված մի շարք բարդություններ, որոնց բաղա-
դրիչներից մեկնումեկը կամ դադարել է անկախարար գործածվելուց,
կամ էլ հայերէնում բնութանրապես այգայիսի անկախ գործածութեան
չի ունեցել (փոխառութեանների դեպքում)՝ խաշտարդնա, խոնկուր, մա-
ռախսով, հաստաբնատ, վարսավիր և այլն:

Բարդութեանների քննութեանն ավարտենք, այսպես կոչված, հիբ-
րիցային կազմութեանների մատնանշմամբ, որոնց մեջ առաջին բա-
ղադրիչը օտարազգի ծագում ունի և հաճախ ինքնուրույնարար չի գոր-
ծածվում՝ միկրոաշխարհ, մոտոփարշ, մոտոռավար և այլն: Սրանք
սովորաբար կիսափոխառութեան-կիսապատճենումներ են:

բ. Վերլուծական ձևեր

Ստորադասական բարդութեանների համար բնորոշ են համադրա-
կան ձևերը: Սակայն հանդիպում են նաև վերլուծական ձևեր՝ հատկա-
պես բայերի դեպքում: Ինչպես նշվել է, կազմութեան եղանակով սը-
րանք հարաբերակից են վերլուծական այն բայաձևերին, որոնք քննվե-
ցին ածանցմանը նմիրված հետմիջում, և հայ քերականութեան մեջ
ընդհանուր անունով կոչվում են հարադրական բայեր: Տարբերութեան

այն է, որ այս դեպքում հիմնական իմաստն արտահայտվում է ոչ թե բաշի, այլ, այսպես կոչված, հարադրի միջոցով որպես յուրատեսակ հիմքի. բուն բայական մասն արտահայտում է միայն ընթացայնության վերացական իմաստներ: Այս կարգի վերլուծական ձևերը կարող են ունենալ համադրական զուգահեռ ձևեր՝ կամ ընդհանուր բաղադրիչով բայեր, որոնց մեջ հարադիրը հանդես է գալիս որպես բայահիմք՝ մութըն կնկնել—մրնել, պատասխան տալ—պատասխանել և այլն, կամ էլ պարզապես համանիշներ՝ մոխի անել—նայել: Սովորական կայուն կապակցությունների հետ միասին շատ են դարձվածային կապակցությունները: Հարադրավոր բայերի գոյությունը մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ հարադիրն ինքնին չի կարող հանդես գալ որպես բայահիմք, և վերլուծական ձևը լրացնում է լեզվի բացը:

Ըստ անկախության հարկավոր է տարբերել հարադիրների երկու տեսակ՝ բուն հարադիրներ, որոնք գործածվում են միայն իբրև հարադիրներ, և հարադիր բառեր, որոնք կարող են գործածվել նաև սովորական բառական այլ գործառույթներով: Բուն հարադիրներից կարելի է նշել երևան (բերել, գալ, հանել), գանց (առնել), քաֆ (կենալ), իմաց (անել), թիկն (տալ), խույս (տալ), հույլ (տալ), կոտր (ընկնել), կոլ (գնալ), կանգ (առնել), նախ (առնել), ման (ածել), մոխի (անել), շաղ (տալ), շուռ (գալ), պոկ (գալ), տեղի (տալ, ունենալ), ֆա(ր)շ (գալ) և այլն [հմմտ. Մարգարյան, 1966, 102—103]:

Սրանց մի մասը նույնությամբ կամ տարբեր ձևով հանդես է գալիս որպես բայահիմք և առաջ բերում զուգահեռ ձևեր՝ մասամբ իմաստային ու քերականական, մասամբ միայն ոճական տարբերությամբ՝ քաֆ կենալ—քաֆնվել, իմաց անել—իմացնել, թիկն տալ—թիկնել, կոտրը ընկնել—կոտրվել, կոլ տալ—կլանել, կանգ առնել—կանգնել, նախը առնել—նախել, պոկ գալ—պոկվել և այլն:

Հարադիր բառերը գերադանցապես գոյականներ են, հատկապես բայահիմքային գոյականներ, մասամբ նաև ածականներ, դերանուններ, ձայնարկություններ, խիստ հազվադեպ թվականներ:

Գոյական հարադիրները կարող են լինել ինչպես սլարդ, այնպես էլ բաղադրյալ, հանդես գալ ինչպես ուղիղ, այնպես էլ թեք հոլովածեղներով, կազմել ինչպես սովորական, այնպես էլ դարձվածային կապակցություններ, ընդ որում որպես բայական մաս հանդես են գալիս գերադանցապես ածել, անել, առնել, բերել, գալ, գործել, դարձնել, դնել, ընկնել, մոնել, տալ, ֆաշել բայերը. հմմտ. աշխ ածել, պտր ածել. ականջ անել, զրույց անել. դադար առնել, երես առնել. գլուխ բերել, շնորհ բերել. գլուխ գալ, ուշքի գալ. քոխ գործել. մուտք գործել. երես դարձնել, ուշադրություն դարձնել և այլն: Ինչպես բուն հարադիրների, այնպես էլ

գոյականական հարադիրների դեպքում կարող են հանդես գալ վերլուծական և համադրական զուգահեռ ձևեր. հաճախագեպ են այդպիսի զուգահեռ ձևերը մանավանդ բայանունների դեպքում՝ ալմուկ անել—ալմրկել, առարկություն անել—առարկել, բոիչ՝ գործել—քոչել, մուտ՝ գործել—մտնել, փաշ տալ—փաշել և այլն:

Ածականները համեմատաբար քիչ են հանդես գալիս որպես հարադիրներ, ընդ որում այս դեպքում հաճախագեպ են բարդ ածականները. հմմտ. անտես առնել, անպատիվ անել և բնաջինջ անել (= բնաջնջել), խայտառակ անել (= խայտառակել), կայծակնափար լինել և այլն:

Հաղվադեպ են նաև դերանուն հարադիրները՝ իրար անցնել, իրենով անել և այլն:

Խիստ հաղվադեպ են թվականական հարադիրները՝ երկու անել:

Բաղական հաճախագեպ են հարադիր ձայնարկությունները՝ ախ փաշել, վայ տալ, օֆ անել և այլն:

Բնածայնությունները կարող են մասամբ հանդես գալ և՛ որպես հարադիրներ, և՛ որպես բայահիմքեր՝ տրզզ անել—տրզզալ, մասամբ միայն որպես հարադիրներ՝ փիշտ անել:

5. ՀԱՊԱՎՈՒՄ

Հապավումը գոյականական բառակապակցության բաղադրիչների կրճատմամբ կազմված բառաբեկության միավոր է, որ պահպանում է բառակապակցության կաղապարը և հիմնական բաղադրիչի խոսքիմասային արժեքը, այսինքն՝ հանդես է գալիս գոյականական դործառություններ: Հապավումը կարող է լինել տառային, վանկային և վանկաբառային: Տառային հապավումը կազմվում է բառակապակցության բաղադրիչների (բառերի) առաջին տառերից՝ ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, ԳԴՀ—Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն, ԵՊՀ—Երևանի պետական համալսարան, ՄԱԿ—միավորված ազգերի կազմակերպություն, բուն—բարձրագույն ուսումնական հաստատություն և այլն. սրանցից ձայնավորով օժտված և մեկ վանկի արժեք ունեցողները (հմմտ. ՄԱԿ, բուն) արտասանվում և հղովմվում են սովորական բառերի նման (ՄԱԿ-ի, ՄԱԿ-ից և այլն), մնացածները արտասանվում են ըստ առանձին տառերի (բացի նախորդող ձայնավոր ունեցողներից) և հատկացուցչի պաշտոնում հնչվողական վերջավորություն չեն ստանում (հմմտ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, բայց ԽՍՀՄ-ից): Վանկային հապավումները, ի տարբերություն տառայինների, կազմված են բառակապակցության բաղադրիչ

բառերի առաջին բնորոշ տարրերից՝ ներառյալ վանկարար տարրերին հաջորդող բաղաձայնները. հմմտ. փաղկոմ—փաղափային կոմիտե, շրջ—կոմ—շրջանային կոմիտե և այլն: Վանկաբառային հապավումների մեջ վերջին բաղադրիչը բերվում է ամբողջությամբ՝ կալոնտեսություն—կոլեկտիվ տնտեսություն, մանկինստիտուտ—մանկավարժական ինստիտուտ և այլն:

Կան նաև փոխառյալ հապավումներ, որոնք հայերենում ընկալվում են որպես ինքնուրույն բառեր՝ զագս, գէս:

6. ԸՆԻՇԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Բարդության տիպերի առանձնակի քննությունից հետո նրանց մասին մի քանի ընդհանուր դիտողություն անենք:

1) Ինչպես հայտնի է, բացի ածանցավոր և բարդ բառերից, տարբերվում են նաև, այսպես կոչված, բարդ ածանցավոր բառեր: Վերջիններս ըստ սերման երկբնույթ են, այսինքն՝ ածանցավոր բառերը կարող են բարդվել (կալաբանատուն), և բարդ բառերը կարող են ածանցվել (գեղարվեստական): Այսպիսով, բարդ ածանցավոր բառերի բնույթը հասկանալու համար պետք է պարզել՝ ածանցը պատկանում է ողջ բարդությանը, թե՞ նրա մեկ բաղադրիչին:

2) Ըստ բաղադրիչների դասակարգմանային փոխհարաբերության տարբերություն կա ոչ միայն համադասական և ստորադասական բարդությունների, այլև վերջիններիս համադրական և վերլուծական տիպերի միջև. եթե բուն համադասական բարդության բաղադրիչների մեջ դժվար է առանձնացնել հիմնական ու երկրորդական բաղադրիչներ, և եթե կրկնությունների մեջ իբրև հիմնական կարող է հանդես գալ ինչպես առաջինը, այնպես էլ վերջինը, ապա ստորադասական բարդությունների մեջ հիմնական (հիմքային) բաղադրիչի առանձնացումը որոշակի բնույթ է կրում, և այդ բաղադրիչի դիրքը կայուն է. համադրական ձևվերի մեջ հիմքային բաղադրիչը զբաղեցնում է վերջնային դիրք, վերլուծականների մեջ այն նախորդում է վերջինին:

3) Ստորադասական բնույթի համադրական բարդությունները տարբերվում են համադասական բարդություններից բառային բաղադրիչների թվային սահմանափակության աստիճանով. ստորադասական բնույթի համադրական բարդությունները, ինչպես նշվել է, սովորաբար երկու բառային բաղադրիչ ունեն. երեք բառային բաղադրիչ ունեցողները հազվադեպ են. ահավասիկ ամենից ավելի սովորականները՝ ազ-

զագրագետ, աշխարհագրագետ, ասլանֆաշրջանառություն, երկաթուղագիծ, լրագրավանդ, հեռագրալար, հեռագրասյուն, հեռագրատուն, տրնտեսագիտություն, ֆալաֆատնոեսություն, օդանավակայան, օդերևութաբանություն [Հմմտ. Անառյան, 3, 1957, 161]։ Համադասական բարդությունները թեև ընդհանրապես երկանդամ են, բայց անդամներից յուրաքանչյուրը կարող է երկու կամ երեք բառային բաղադրիչ ունեցող բարդություն լինել, այսինքն՝ Համադասական բարդությունների մեջ հնարավոր է չորս կամ հինգ բառային բաղադրիչի զուգորդում։ Հմմտ. արդյունաբերական-գյուղատնտեսական։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԵՐԵՆԻ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԸ (ԱՐՄԱՏԱՀԻՄՔԵՐԸ) ԵՎ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԸ

ա-	ագուռ	ազոխ ²
ա-	ադա	ազոտ
աբա	ադաթ	ազրայել
աբասի	ադամ-	աթարեգ/կ
աբբա	ադամանդ	աթար
աբեթ	ադեն	աթեն-
աբեղա	ադիբուդի	աթ/տլետ
աբով	ադմինիստր-	աթոռ
աբրա	ադմիրալ	-աթուր
աբրեշում	աերո-	աթուրմա
աբուռ	ազաբ/սլ	աթաշա(կ)
ագ-	ազազ- ²	աթ(ն)
ագահ	ազան	ալ
ագապ	ազատ	ալաբաստր
ագավա	ազար ²	ալամ
ագաու/թ (ակատ)	ազարին	ալանի ³
ագար	ազարտ	ալաշուխ
ագարակ	ազբ	ալար
ագարիկոն	ազբեստ	ալաի
ագի	ազգ	ալրում
ագիտ-	ազդ	ալելու
ագլո-	ազդ-	ալիբի
ագնոստ-	ազդր	ալիգատոր
ագլումեր-	ազի	ալիմենտ
ագոավ	ազիդ	ալի-թ ² (ալեն-)
ագր(ար-, -ի-, -ո-)	ազիմուտ	ալլահ
ագրեգատ	ազն-	ալլո
ագրես-	(ազնիվ)	ալկալ-

ակկիոն
 ակկոհոլ
 ակմանախ
 ակմաս(տ)
 ակյուփն
 ակյուր (ակր-)
 ակոճ/ջ
 ակոջ
 ակչու
 ակպ(ի(ն))-
 ակվան
 ակտ
 ակտր-
 ակր- տ. ակրուր
 ակուշա
 ակ(ուց)-ք
 ակք
 ակքիմի-
 ակֆա
 ակֆոնս
 ակխ
 ակխ
 ակազ
 ակս(ա)ր
 ակսլա-
 ակսլակ
 ակսկ
 ակսմախ
 ակսոյան
 ակսոռ
 ակսործ
 ակսպեր տ. եղբայր
 ակստ
 ակսրիզան
 ակծ-
 ակծկ- (ակծիլ-)
 ակծիկ
 ակծու

ակծուխ (ակծխ-)
 ակկ (ական-, ակն-)
 ակկ (ակն-)²
 ակկադեմ-
 ակկադձ
 ակկամա
 ակկան²
 ակկանջ
 ակկար
 ակկաջիա
 ակկալ
 ակկիշ
 ակկոնիտ
 ակկոս
 ակկորդ
 ակկոա
 ակկուկ-
 ակկվալանդ
 ակկվար-
 ակկտ
 ակկր
 ակկրատ
 ակկրեդիտիվ
 ակկրորատ
 ակկրոստիքոս
 ակկուլթ
 ակկումբ (-կմբ-)
 ակկումուլ(յ)-
 ակկուստիկ
 ակկքան
 ակհ
 ակհ
 ակհա
 ակհակ
 ակղ
 ակղ-
 ակղա
 ակղալ
 ակղախին (-խն-)

ակղաղ
 ակղաղակ
 ակղամոդ
 ակղանդ
 ակղանդեր
 ակղանձ
 ակղաշ-
 ակղավաղ
 ակղավն-ի
 ակղատ-
 ակղարտ-
 ակղբ
 ակղբյուր
 ակղե- տ. ակղիք
 ակղեղ (-ն-)
 ակղետ
 ակղերս
 ակղի-ք (ակղե-)
 ակղծ-
 ակղճատ
 ակղմուկ (-մկ-)
 ակղյուս
 ակղոթ-
 ակղոտ
 ակղորի-ք
 ակղջամուղջ (-մղջ-)
 ակղջի(կ) (-ղջկ-)
 ակղվես
 ակղտ
 ակղտոր
 ակղու (-ղվ-)
 ակղուր
 ակղի-
 ակղթատ
 ակճ
 ակճապար-
 ակճառ
 ակճպ-

ամ-
 ամագոն-
 ամալգամ
 ամայ-
 աման
 ամանաթ
 ամանակ
 ամաշ-
 ամառ (-ոն-, -ար-)
 ամբառն- (-րծ-)
 ամբաստան-
 ամբար
 ամբարիշտ (-շտ-)
 ամբարձավաճ
 ամբարտակ
 ամբարտավան
 ամբիոն
 ամբոխ
 ամբողջ
 ամբրոս
 ամբուլատոր
 ամենթիստ
 ամեհ-
 ամեն
 ամեն-
 ամենրիկ-
 ամիակ
 ամիս (-մս-, -մսե-)
 ամիրա
 ամինիստիա
 ամոթ
 ամոլ
 ամոն-
 ամործ-
 ամորտիզ-
 ամորթ
 ամոր-
 ամպ
 ամպեր

ամպլիտուդա
 ամպրոպ
 ամռն (-մլ-)
 ամռախն (-մն-)
 ամռը
 ամռը (ամր-)
 ամռըի
 ամրոպի
 ամֆի-
 ալբ
 ալգ
 ալգի
 ալդ
 (ալմ-)
 ալլ
 (ալլանդակ)
 ալծ (էծ, իծ-)
 ալն
 ալո
 ալպ
 ալք²
 ալտ
 ալր
 ալր (ար-, առն-)
 ալր-
 ալրի
 ալց
 (ալցիկ-)
 ալն²
 ալսագ
 ալսագորույն
 ալսալիզ (-լիտ-)
 ալսալոգ
 ալսանուկ
 ալսապակ
 ալսապատ
 ալսարխ-
 ալսամ
 (ալսալտ)

անգղ
 անգուստ
 անդ
 անդամ
 (անդորր)
 անդր-
 անդրանիկ
 անդրի
 անկը
 անկըս-
 անկծ- (անիծ-)
 անկնդ
 անկոլոգիա
 անիծ
 անիլ (անիլ-)
 անծնդ
 անկ- առ. քնկ-
 անկյուն
 (ան)հեթեթ
 (ան)հողողող
 անծ (-ծն-)
 անծուկ
 անծրն
 (ան)հոռնի
 անոդ
 անոթ
 (ան)ոստ ու. նոստ
 (ան)պաճույճ (-ուճ-)
 անջատ
 անջուղետ
 անսամբլ
 անտանտ(ա)
 անտառ
 անտիկ
 անր- (տարար)
 անց(-)
 անուն (անվան-)
 անուշադ(ի)ր
 անուր (անր-)

անուրջ (-րջ-)
 աշ(ա)կերտ
 աշիրաթ
 աշխատ-
 աշխարհ
 աշխես
 աշխույժ (-խուժ-)
 աշկարա
 աշորա
 աշտանակ
 աշտարակ
 աշտե
 աշուղ
 աշուն (աշնան-)
 աորտա
 աշառ-
 աշ(ք)
 ապ(ա)- (ապի-)
 ապա
 ապալեր(կ)
 ապական
 ապակի
 ապահարդան
 ապահով
 ապառաժ
 ապաստ(ան)
 ապաւինն
 ապատ
 ապար
 ապարանք
 ապարանջան
 ապարատ
 ապարոշ
 ապաքեն (-քին-)
 ապերասան
 ապի
 ապիրատ
 ապսպ(ա)ր-

ապստամբ
 ապտակ
 ապր- տ. ապուր
 ապրիլ
 ապուր
 աջ
 առ-
 առ(ա)-
 առաւելատ
 (առակ)
 առաջ
 առաւելան
 առասպել
 առատաւ
 առաւիոտ
 առատ
 (առաք-)
 առաքին-
 առեղ
 (առէջ)
 առիթ
 առյուծ
 առն- տ. այր
 առնետ
 (առնչ-)
 (առողան-)
 (առողջ)
 առվույտ (-ուտ-)
 առու (առվ-)
 (առույդ)
 աս-
 ասամբլետ
 ասեղ (ասղ-, -ղն-,
 ասղն-)
 ասիմիլ(յ)ատ/ց-
 ասիստենտ
 ասկետ
 ասկլար

ասորտիմենտ
 ասող/ատ/ց-
 ասպ-
 ասպանդակ
 ասպատակ
 ասպար
 ասպարեղ
 ասպետ
 ասպիրանտ
 ասպնջ-
 ասվ- տ. ասր
 աստ
 աստատ
 աստիճան
 աստղ (-տեղ-)
 աստված
 աստրո-
 ասր (-սվ-)
 ասուպ
 ասֆալտ
 ավադ
 ավաղ
 ավաղակ
 ավաղան
 ավաղ
 ավան
 ավանդ
 ավանս
 ավանտյուր-
 ավատ
 ավար
 ավարտ
 ավել
 ավել-
 ավետ
 ավեր
 ավիա-
 ավիշ (-վշ-)

ավյուն
 ավտո-
 ավտո- տ. ավտոմոբիլ
 ավտո(մոբիլ)
 ավտոմատ
 ատ-
 ատաղձ
 ատամ (-մն-)
 ատյան (-տեն-)
 ատեստ-
 ատլաս²
 ատոլ
 ատոմ
 ատոք
 ատր-
 ատրակց-
 ատրիբուտ
 ատրճանակ
 ատրոպին
 ատրուշան
 ար
 արագ
 արագիլ (-գլ-)
 արած-
 (արահետ)
 արանք
 արատ
 արար տ. ան/ր-
 արբ- տ. հարբ-
 արբանյակ
 արբիտր
 արբուն-ք
 (արգահատ-)
 արգանակ
 արգանդ
 արգաս-
 արգավանդ
 արգել-
 արգո²

արգումենտ
 արդ²
 արդար
 (արդեն)
 (արդյոք)
 (արդյուն-)
 արդն
 (արդուկ)
 արեգ(ակն) (-ական)
 արենա
 արթուն (-թն-)
 արժ-
 (արժան)
 (արի)
 արի տ. գ(ա)-
 արիշ
 արիշտա (-րշ-)
 արիստոկրատ
 արխ
 արխայուղ
 արխա(յ)-
 արխային
 արխիվ
 արծաթ
 արծարծ-
 արծիվ (-ծվ-)
 արծն
 արկ²
 (արկած)
 արկղ
 արկտիկա
 արհամարհ
 արհավիր-ք (-վր-)
 արհեստ
 (արծագանք)
 արծակ
 արծան
 արճիճ (-ճճ-)
 արմ տ. արմատ

արմ- (ան-)
 արմավ
 արմատ (-մտ-)
 արմունկ (-մնկ-)
 արյուն (-րեն-, -րն-)
 (արշալույս)
 արշավ
 արշին
 արշիպելագ (-րիս-)
 արշտ-
 արոս²
 արոտ
 արոր
 արջ
 արջն-
 արվարձան
 արվեստ
 արտ
 արտ(ա)-
 արտասուք (-սվ-)
 (արտաք- (ս-))
 արտեզ-
 արտել
 արտիճուկ
 արտիստ
 արտոն-
 արտուր-
 արտույտ
 արցունք տ. արտա-
 սու-ք
 (արու (-րվ-))
 արույր
 արուսյակ
 արփ(ի)
 արք-ա
 արև
 ացետ-
 առվ
 առևտրագիտ

ափ
 ափ (ափն-)
 (ափեղցփեղ)
 ափիոն
 ափսե
 ափսինթ / դ
 ափսոս
 ափու
 աք-
 աքաղաղ
 աքար
 աքիս
 աքլոր
 աքսիոմ (ա)
 աքսոր
 աքցան
 աֆեր-
 աֆորիզմ

 - բա
 բաբաթ
 (բաբախ-)
 բաբան
 բագած
 բագին
 բագ
 բադամ
 բադրիջան (- դիր- ,
 - դին-)
 բազա
 բազազ
 բազալտ
 բազար
 բազե
 բազիս
 բազմ- տ. բազում
 բազմ-
 բազրիք
 բազուկ²

բազում
 բած
 բածակ
 բածան
 բածին (- ժն-)
 բալ²
 բալ- ա
 - բալա
 բալախ
 բալանս
 բալասան
 բալաստ
 բալետ
 բալուլ
 բախ-
 բախտ
 բակ
 բակ տ. բաք
 բակալալոր
 բակլա
 բակտեր (ի)-
 բահ
 բահրա
 բաղ
 բաղ (ա)-
 բաղ (ա) նի-ք (- ղնե-)
 բաղարջ
 (բաղեղ)
 բաղձ-
 բաճկոն
 բամբ
 բամբակ
 (բամբաս-)
 բամբիշ
 բամբիռ (- բռ-) տ.
 փանդիռ
 բամբուկ
 բամիա
 բամփ-բ-

բայ
 բայ-
 բայաթի
 բայդարկա
 բայկա
 բայլուշ
 բայց
 բան
 բան- (- բան)
 բան/ց-
